

891.8544

00 AUG 2010

1-4 3K



ՀԱՆԴԻՍ ՄՇԱԿՈՅԹԻ ԵՒ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

2

— 4 —

ՅՈՒԼԻՍ - ՕԳՈՍՏՈՍ

Փ Ա Ր Ի Ձ

1934



“V E M,”

REVUE BIMESTRIELLE ARMÉNIENNE

Directeur : S. VRATZIAN

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՎԱՀԱՆ ՄԻՆԱՆՈՐԵԱՆ. — Փոքորիկից առաջ	1
Յ. ԻՐԱԶԵԿ — Եւ մի հին քաղաքի մասին	21
ՅՈՎՀԱՆՆԵՍ ԶԱԽՐԵԱՆ. — Սայեաք Նովա	38
ԶՕՐ. Գ. ՂՈՂԱՆԵԱՆ. — Հայաստանի Հանրապետությունը եւ Պետությունները	54
ԱՐՇԱՄ ԽՈՆԴԱՐԵԱՆ. — Օպորիցիան Հանր. Հայաստանում	73
ՍԱՄՍՈՆ. — Հայաստանի Անդրանիկ Դեսպանը Պարսկաստանում	96
ՊՐՈՖ. Զ. ԱԻԱԼՈՎ. — Բաքուի հարկադրվածությունը	104
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՐԶԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ	113
ՆՈՐ ԹՈՒՂԹԵՐ. — Կովկասում Համադաշնակցության Ուխտը	124
ԿԵԱՆՔ ԵՒ ՄՇԱԿՈՅԹ. — Հայ քաղաքական գրականությունը, Բ. Թաշեան. — Սայեաք Նովայի անտիպ տաղերը. — Մի քանի գլուխներ, Ռ. Արրահամեան	127
ԳԻՐԳ ԵՒ ՄԱՄՈՒԼ. — «Հայրենիք», «Անահիտ», «Սիոն»	134
ԳՐԱԽՈՍԱԿԱՆ. — Dictionnaire Diplomatique, Ս. Վ.	137
ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ. —	139
ՅԱԻԵԼԻԱՆ. — Վախում եւ. Մանկունի, «Գեորգ Գ. եւ իր ժամանակը»	81-96

ՆՈՐ ՏԱՐԻԱՅ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Ամերիկա, Բրիտ. Կայսրություն, Եգիպտոս, Իտալիա՝ տարեկան 70 ֆրանկ  
 Ֆրանսա եւ մնացեալ երկրները, տարեկան՝ 60 ֆրանկ  
 Ռումանիա, Բուլղարիա, Յունաստան Սլովակիա, եւ Պարսկաստան՝ 50 ֆրանկ  
 Հասցե՝ նամակների, դրամի, յօդաձևների եւ ուրիշ ամէն տեսակ տտաֆումների համար. —


S. VRATZIAN — 13, Rue des Platanes, Cité Jardins de Plessis-Robinson (S.)

Gérant : V. Hampartzoumian

Imp. ARTISTIQUE, 42 Rue de la Jonquière, PARIS (17<sup>e</sup>)

03.05.2013

00 AUG 2010



ԵՐԿԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԵՍ

ՄՇԱԿՈՅԹԻ ԵՒ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Խմբագիր՝ Ս. ՎՐԱՅԵԱՆ

Բ. ՏԱՐԻ, ԹԻԻ 4

1934

ՅՈՒԼԻՍ — ՕԳՈՍՏՈՍ

ՎԱՀԱՆ ՄԻՆԱՆՈՐԵԱՆ

Փ Ո Ւ Ր Ի Կ Ի Յ Ա Ռ Ա Ջ

(Պատերազմի 20 ամեակի առթիւ)

I


ՖՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Համաշխարհային պատերազմով ազդերի նորագոյն պատմութեան մէջ սկսում է մի նոր դարաշրջան: Իբրեւ հետեւանք պատերազմի փոխեցին առանձին երկրների սահմանները, ծնունդ առին նոր պետութիւններ: Ժողովուրդների մէջ «առաջինները դարձան յետին, յետինները՝ առաջին»: Ծնունդ առին տնտեսական — քաղաքական, մտաւոր — բարոյական նոր հարցեր: Կեանքը բոլորովին նոր կերպարանք ստացաւ:

Տեղի ունեցած փոփոխութիւնների կարեւորութիւնը, ապրած արհաւիրքների չափը մանաւանդ շատ մեծ է մեզ համար. հայ կեանքը բոլորովին շեղւեց իր բնականոն ընթացքից եւ մինչեւ օրս էլ չի կարողանում գտնել ուղիղ ճանապարհը: Պատերազմի սկզբնաւորութեան երրորդ տասնամեակին ենք թեւակոխել արդէն եւ սակայն մեր կեանքը դեռ լի է անհաշիւ հիւանդ երեւոյթներով, այնքան, որ պատերազմը կարծես երեկ է տեղի ունեցել:

Բոլոր այս հիւանդ երեւոյթների վրայից կարելի էր անցնել առանց ուշադրութիւն դարձնելու, եթէ նրանք այսքան անյուսալիօրէն երկար չտեւէին, եթէ խնդիրները տարբերէին եւ նոյն ձեւով չբացատրէին նաեւ հայ կեանքի խոշորագոյն հարցերը, նրա դերագոյն թշուառութիւնը՝ ջարդերը, պատերազմին մասնակցելը:

584



500-2001



«Ստուգված փաստ պէտք է համարել, որ արեւմտահայերի դէմ էին կամաւորական շարժման: Նրանք պարզ էին պատկերացնում այդպիսի մի գործի հետեւանքները», գրում է Բ. Բորեանը («Հայաստանը, Միջագոյսիմ Դիւանագիտութիւնը եւ Խորհրդ. Ռուսաստանը» հատ. ա. էջ 362): Եւ, հակառակ «արեւմտահայ զանգւածներէ չեղտած կամքին», որ արտայայտւել է Էրզրումի «աղգային» ժողովում, Դաշնակցութեան Պոլսոյ կոմիտէն եւ Արեւելեան Բիւրօն, այնուամենայնիւ «որոշել են մասնակցել պատերազմին»:

Գալով այն հետեւանքներին, որ առաջ է բերել կամաւորական շարժումը, Բորեանը, յիշատակելով Գիւրնսի, Գուրկո-Կրեմիւնի այն տողերը, որոնց մէջ նրանք մեղադրում են երիտասարդ թիւրքերին ջարդերի առթիւ, «մեծահոգութեամբ» բացականչում է. —

«Ո՛չ, այդ գործի մէջ թիւրքերը չէին կարող հերոսներ լինել: Իմպերիալիստական պետութիւնների Ֆինանսական կապիտալի հաւաքական կամքով, ցարական Ռուսաստանի թելադրութեամբ, Դաշնակցութեան նենդ դաւաճանութեան շնորհիւ եւ դերմանական դահիճների ձեռքով է ոչնչացել արեւմտահայ ժողովուրդը» (Անդ, էջ 368):

Այսպիսով, հայ յեղափոխական դէմոկրատիան՝ ի դիմաց Հ. Յ. Դաշնակցութեան՝ նախ մեղադրում է «պատերազմ յայտարարելու» մէջ, ապա՝ այդ պատերազմին «կամաւորական շարժման» ձեւ տալու եւ, վերջապէս, նաեւ ... ջարդերի մէջ:

Ահա մի ուրիշ, աւելի իրազեկ մարդու կարծիք: Հանդուցեալ Լէօն նոյն հարցի մասին գրում է. —

«Պատերազմի յայտարարումից մի քանի օր առաջ Դաշնակցականների ընդհանուր ժողովին էր Էրզրումում: Երիտասարդ թիւրքերի կուսակցութեան կողմից յատուկ ներկայացուցիչ է դալիս եւ առաջարկում է Դաշնակցութեան սկսող պատերազմի ժամանակ միանալ թիւրք-դերմանական դաշնակցութեան, ապստամբութիւն յարուցանել Կովկասի հայութեան մէջ ռուսների դէմ: Փոխարէնը խոստանում էր հայկական ինքնավարութիւն ռուսական Հայաստանի սահմաններում: Այս դերմանական ծրագիր էր, որի նպատակն էր Անդրկովկասեան բոլոր ազգութիւնների — վրացիների, հայերի եւ թիւրքերի ընդհանուր ապստամբութեան միջոցով վտարել ռուսներին Կովկասեան գլխաւոր շրջանի հիւսիսային կողմը, այնպէս որ այդ շրջան դառնար սահմանը թիւրքիայի եւ Ռուսաստանի մէջ, իսկ երեք ապստամբւած ազգութիւնները կը կազմէին ինքնավար նահանգներ թիւրքիայի հովանաւորութեան տակ: Վրաստանի հետ բանակցութիւնները համարեա միաժամանակ էին սկսւած եւ նրանց

մէջ գտնեցին տարրեր, որոնք երկու ձեռքով բռնեցին այդ առաջարկութիւնը եւ նոյնիսկ դաշնադրութիւն կնքեցին թիւրքիայի հետ որ հրատարակեց ռուսական ցարիզմի անկումից յետոյ:

«Էրզրումի կուսակցական ընդհանուր ժողովը երիտասարդ թիւրքերի առաջարկութեան առթիւ կայացրեց մի վճիռ, որ միակ կարելին էր սալի եւ կռանի մէջ տրուող մի փոքր ազգութեան համար: Նա չընդունեց երիտասարդ թիւրքերի առաջարկութիւնը՝ յայտարարելով, որ Դաշնակցութիւնը ծագող պատերազմի մէջ իրեն չէզոք կը պահէ: Բայց բարձր մարմնի այս որոշումը մնաց մեռած տառ թղթի վրայ: Հարցը վճռողներ հանդիսացան Կ. Պոլսի կոմիտէն եւ Կովկասի Արեւելեան Բիւրօն: Դաշնակցութիւնը չէզոք չէ, այլ միանում է ռուսներին եւ տալիս է նրան այն, ինչ մերժել էր թիւրքերին — կամաւորական խմբեր պատերազմ մղելու համար եւ ապստամբութիւն թիւրքաց Հայաստանում:

«Եւ փաստեր շատ ունեւ պնդելու համար, որ այդ ոճրագործ որոշումը կայացել էր ոչ միայն առանց բուն երկրի գիտութեան, այլեւ հակառակ նրա ցանկութեան: Իր տեղում ես կը պատմեմ այդ փաստերը, այստեղ միայն այն կասեմ, որ ժողովուրդը Կ. Պոլսի եւ Թիֆլիսի պոռոտախօսներից շատ լաւ էր հասկանում իր դրութիւնը եւ միայն մի բան էր ցանկանում — որ իրեն թոյլ տուի անցկացնել պատերազմական փոթորիկը, ինչպէս ինքը կարող էր: Այսպէս չեղաւ, դժբախտաբար: Այդ ժողովուրդը՝ անմեղ եւ անեղու մի ամբողջ՝ «փրկիչներ» չափազանց շատ ունէր եւ նրա համար, դրա հետեւանքով, փրկութիւն չէր մնում այլեւս» («Անցեալից» էջ 285-6):

Այս խնդրի մասին գրել են ուրիշ շատերը, բայց ոչ ոք այնպէս մանրամասնօրէն չի արտայայտել իր մեղադրանքները, ինչպէս Լէօն: Լէօնի ակնարկած «փաստերը» ոչինչ չեն աւելացնում նրա ասածների վրա եւ ըստ էութեան մնում են նոյն մեղադրանքները, ինչոր տարրեր ձեւով կրկնում է Բորեանը եւ ուրիշները:

Պատերազմի սկզբնաւորութեան հետ կապւած դանազան «պատասխանատուութիւնների» խնդիրը ժամանակակից — դրականութեան մէջ քննութեան է առնում փաստաթղթերի կամ վէճ չվերցնող դէպքերի հիման վրա: Մեր մէջ ընդունւած է հարցի լուսաբանութեան «պարզ» ձեւը: Եւ հայ յեղափոխականների դէմ ուղղւած մեղադրանքների հիմնաւորման համար ոչ փաստաթուղթ կայ, ոչ անվիճելի դէպք: Բորեանը իր ասածները հիմնաւորելու համար կարիք է զգացել դիմելու իր «անձնական արխիւի» օգնութեան եւ յիշատակում է մի փաստաթուղթ, որը իբր թէ Հ. Յ. Դաշնակցութեան «գինւորական մարմնի» ներկայացուցիչի ղեկուցումն է եւ որի մէջ



այդ ներկայացուցիչը Բորեանի համաստիացումով Շահրիկեանի հետ միասին, «արեւմտահայ» դարձնելով նաեւ Զորեանին, նրանց անուանով, բողոքում է «արեւելահայերի» քաղաքականութեան դէմ...

Լէօն գրում է «ապստամբութեան», «պատերազմ յայտարարելու» մասին, որոնք փաստօրէն տեղի չեն ունեցել՝ դէպքերից առաջ: Իսկ ընդհանրապէս շատ տարածւած է այն մեղադրանքը, որը դուրի է նաեւ այս նշագրողին հիմնաւորումներից: Այս ընդհանրացած ձեւով խօսւում է «կամաւորական շարժման» եւ նրա հետեւանքով առաջացած ջարդերի մասին...: Խնդիրը ներկայացւում է այնպէս, որ կարծես մարդիկ առանց պատճառի «կամաւորական շարժում» սարքեցին: Ոչ ոք չի նշմարում, որ «կամաւորական շարժում» ասածը ինքնին անքննադատ, համաժողովրդական շարժում էր, որ չէր կարող առանց խորունկ եւ շեշտած պատճառների առաջ գալ: Մարդիկ ճգնում են այդ ազգային շարժումը սեղմել, կրճատել, դուռնաւորել այնպէս, որ դուրս գայ, թէ դաշնակցականներից բացի ոչ մի հայ երբեք կամաւոր չի եղել եւ այդ շարժման էլ չի համակրել: Հարցը անգամ այս ձեւով չի պարզում խնդիրը:

Ըստ էութեան Թիւրքիոյ հպատակ բոլոր ազգերի կեանքի մէջ տեղի ունեցած անհաշիւ ջարդերը բնաւ արդիւնք չեն այդ ժողովուրդների «կամաւորական շարժման»: Մասնաւորապէս հայ կամաւորական շարժումը սկիզբ է առել դէպքերից յետոյ, եւ մեզ հասած տրական շարժումը սկիզբ է առել դէպքերից յետոյ, եւ մեզ հասած թշուառութիւնը կարելի է «գայլի ու զառան» առածի եղանակով թշուառութիւնը կարելի է «գայլի ու զառան» առածի եղանակով պարզաբանել: Մնաց որ կամաւորական շարժումը այդ օրերին միայն հայերին յատուկ չէր. Թիւրքիայում իսլամ վրացիները 11 հազար-նոց մի կամաւորական բանակ կար, որ դառնում էր տրապիզոնցի Մուրադ բէյի ղեկավարութեան տակ եւ պէտք է կուէր ուսանելի դէմ: Պիւսուղսկին իր լեհական լէգիոնով կուռում էր գերմանացիների բանակում: Արաբ կամաւորները կուռում էին անգլիացիների կողքին եւ այլն:

Այսպիսով՝ խնդիրը ոչ թէ կամաւորական շարժման մէջ է, այլ այդ շարժման ծնունդ տուող պատճառների: Հայ յեղափոխականների քննադատները խնդիրը այս ձեւով չեն դնում, որովհետեւ լաւ գիտեն, որ նման հարցադրութիւն տրամաբանօրէն պէտք է յանդիսանայ ազատագրական դարաւոր շարժման հիմքերին, հայ քաղաքական օրիէնտացիայի հարցին, որոնք հայ յեղափոխականները չեն ստեղծել...:

Դէպքերին իրադեկ քննադատները «կամաւորական շարժումը» կապում են պատերազմի սկզբնաւորութեան հետ. այդ շարժման տա-

լիս են «պատերազմ յայտարարելու» ձեւ, որի իմաստը այս դէպքում պատերազմին մասնակից լինելու մեղադրանքն է:

## II

### ԹԻՒՐԳԻԱՅԻ ԶԵՁՈՒԹԻՅԱՆ ՀԱՐՑԸ

Մեծ պատերազմը այժմ յիշողութիւնների շարքն է անցնում, մօտ ապագայում «պատմական անցեալ» դառնալու համար: Ըստ երեւոյթին միայն այդ դէպքում կը լուծւեն պատերազմի հետ կապւած բարդ խնդիրները: Մեզ համար այժմ պարզ է, որ հրդեհը ծագելով չորս պետութիւնների մէջ՝ տարածւեց ամէն կողմ եւ լափեց ինչ որ կարող էր. պատերազմին լծուող պետութիւններից մեծերը միայն դերիշխան էին: Իտալիան, Ամերիկան, Ճաբոնիան ինքնակամ կերպով յարեցին պատերազմին եւ եթէ ցանկանային՝ կարող էին մնալ չէզոք: Փոքր պետութիւնների պատերազմին մասնակցելու խնդիրը կախւած չէր իրենց կամքից: Նրանցից ոմանք պատերազմի մէջ ընկան դէպքերի զարգացման բերումով, բայց մեծ մասը՝ իր ազգային քաղաքականութեան հետ միասին, հարկադրւած էր հաշի առնել եւ իր ընթացքը ճշտել դրսի մեծ ուժերի մղման թափից դուրս դրած: Այս տեսակէտով բոլորովին բացառիկ դրութեան մէջ էր Թիւրքիան:

Ինչ վերաբերւում է պատերազմող պետութիւններին հպատակ այն ժողովուրդներին, որոնք նոր պէտք է կազմաւորւէին, երկիր, պետութիւն դառնային, նրանք առանց բացառութեան պատերազմի մէջ մտան իրենց կամքից անկախ՝ մեծ ուժերի կամ դէպքերի մղումով, թելադրութեամբ, հարկադրանքի տակ եւ այլն: Անտարակոյս, այդ ժողովուրդներից իւրաքանչիւրը ունէր իր քաղաքական ձգտումները, յոյսերը, ակնկալութիւնները պատերազմից: Բայց այդ չէր, որ վճռական դեր կատարեց նրանց պատերազմին մասնակցելու խնդրում, այլ տիրող ազգերի, կառավարութիւնների բռնած դիրքն ու ընթացքը: Աւելորդ է ասել, որ այդ ժողովուրդներից իւրաքանչիւրի քաղաքական բախտը կապւած մնաց տիրող երկրի բախտի հետ: Այսպիսով՝ երբ անգլիական ու Ֆրանսական զէնքի յաջողութիւնը ապաստարան մի շարք ժողովուրդներ, նոր պետական կեանք ըստեղծեց նրանց համար. ուստիական զէնքի պարտութիւնը, աննախընթաց դժբախտութիւնների ենթարկելով մեղձ կէս դարով յետ մղեց հայ քաղաքական կեանքը:

Պատերազմի յայտարարութեան հէնց առաջին օրից կովկասահայութեան անելիքը շատ պարզ էր: Անկախ Տաճկահայաստանում ըս-







դէպքում թիւրքերոյ հողերը կը մնան անձեռնմխելի այս մեծ պատե-  
րազմին մէջ» :

Բոլոր այս ենթադրութիւնները, տրամադրութիւնները թիւրքերոյ  
մասին, ի հարկէ, հիմքերից զուրկ չէին : Բայց կան նաեւ հակառակ  
ուղղութեամբ փաստեր, որոնք պարզում են, թէ անհնարին չէր նաեւ  
չէզոքութիւն պահպանելը, թիւրքերոյ համար նպաստաւոր մի ձեւով :  
Նախ եւ առաջ թիւրքերոյ չէզոքութեան կողմնակից էին Ֆրանսան եւ  
Անգլիան . առաջինը վախենում էր վտանգել իր խոշոր տնտեսական  
չահերը, երկրորդը՝ առիթ տալ ռուսներին զէնքով դրաւելու Պոլի-  
սը : Ապա նոյնիսկ իրենք ռուսները, երբ հասկացան դերմանական  
ռազմանաւերի՝ Գեօրգէնի եւ Բրեսլաուի նեղուցներում ապաստանե-  
լու վտանգը եւ զգացին դերմանական զէնքի առաջին հարածները  
Արեւելեան Պրուսիայում, սկսեցին աւելի լուրջ վերաբերմունք ար-  
տայայտել դէպի թիւրքերոյ խնդիրը : Այսպէս, օրինակ, օգոստ. 2(15)-  
ին Սազոնովը հեռագրում է ռուսական դեսպան Բենկենդորֆին Լոն-  
դոն . «Ֆրանսական կառավարութեան առաջարկի համաձայն, բարի  
եղէք Գրէյի եւ Կամբոնի հետ միասին քննութեան առնել անհրաժեշտ  
միջոցները, թիւրքերոյ կողմից Գեօրգէնը զնելու առթիւ ստեղծած դը-  
րութեան մասին : Իմ կողմից հնարաւոր եմ համարում ներկայացնել  
հետեւեալ առաջարկութիւնները .-

«1) Իր չէզոքութեան անկեղծութիւնը ապացուցանելու համար  
թիւրքերան ձեռնարկում է բանակների ցրման :

«2) Դրա փոխարէն երեք պետութիւնները երաշխաւորում են  
թիւրքերոյ հողային անձեռնմխելիութիւնը եւ այդ առթիւ պատրաստ  
են քննութեան առնել ամէն մի առաջարկ :

«3) Թիւրքերան ստանում է Փոքր-Ասիոյ մէջ Գերմանիոյ ունեցած  
բոլոր տնտեսական, երկաթուղային եւ այլ ձեռնարկութիւնները եւ  
նրա այդ իւրացումը երաշխաւորւում է հաշտութեան դաշնագրով :

«Ցանկալի ենք դռնում, որ Պոլսի երեք դեսպաններին շտապ  
ցուցմունքներ տրւին : Միաժամանակ պատրաստ ենք քննութեան առ-  
նել ամէն մի առաջարկ, ինչպէս նաեւ ձեռք առնել հարկադրական  
միջոցներ՝ եթէ պարագաները պահանջեն» (Ադամով, էջ 61) :

Բայց որքան թիւրքերը պատերազմի սկզբին ահաբեկած էին, զուրկ  
ոեւէ յաւակնութիւնից, այնքան յաջորդաբար համակեցին ռազմական  
տրամադրութիւններով, և համաձայնութիւնը գտարացաւ ու վիժեց :

### III

ԹԻԻՐԲ - ՌՈՒՍԱԿԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Եթէ թիւրքերոյ պատերազմին մասնակցելը անխուսափելի էր,

նշանակում է հիմքից վերացում է եւ արեւմտահայութեան «չէզո-  
քութեան» խնդիրը : Սրա հետ միասին կարելի է ասել, որ գալիք  
հայկական աղէտը առարկայօրէն այլեւս հնարաւոր էր եւ կախած  
էր միայն այն հարցից, թէ որի՞ հետ եւ որի՞ դէմ պէտք է պատե-  
րազմէր թիւրքերան : Կասկած չկայ, որ եթէ թիւրքերան պատերազ-  
մէր համաձայնական պետութիւնների կողքին, չէր կարող իրագոր-  
ծել բնաջնջման դիւալին ծրագիրը : Ռուս պատմաբան Տարլէն խօսե-  
լով հայկական ջարդերի մասին՝ ասում է . «Ձեռնարկութիւնը տե-  
սականօրէն խիստ յանդուգն էր, բայց դործնականապէս իրագործելի  
պատերազմի ընթացքում» : Նա նկատի ունի թիւրքերոյ կղզիացու-  
մը, որը անհրաժեշտ նախադրեալներ ստեղծեց նման մի յանդու-  
գին» ծրագրի դործադրութեան համար : Այդ նախադրեալների ար-  
ժէքը պարզելու համար բաւական է ասել, որ Բերլինի վեհաժողովից  
ի վեր մեծ պատերազմը միակ առիթն էր, երբ հայն ու թիւրքը դէմ  
առ դէմ էին գալիս առանց «երրորդ» կողմի, երբ թիւրքերը կարող  
էին դանց առնել բոլոր դիւանագիտական կաշկանդումները, միջա-  
մրտութեան վախերը, մի խօսքով՝ ա՛յն ամէնը, որ մէկ կողմից ա-  
ռիթ էր տալիս Համիդին ջարդեր սարքելու, միւս կողմից խանգա-  
րում էր բնաջնջումի լրիւ ծրագրի դործադրութեան : Դաշնակից պե-  
տութիւնների հետ միասին պատերազմին մասնակցելու դէպքում,  
թիւրքերան պէտք է մնար Եւրոպայի նախկին աղղեցութեան տակ եւ,  
ի հարկէ, խօսք չէր կարող լինել հայերի բնաջնջման դիւալին ծրա-  
գիրը իրագործելու մասին : Ինքնին հասկանալի է, որ այս դէպքում  
մի նազազոյն լուծում կը ստանար նաեւ հայկական հարցը՝ կամ  
արդէն որոշած բարենորոգումների դործադրութիւնով, կամ որեւէ  
«օճախ» ստեղծելով թիւրքերայում : Իսկ այդ նշանակում էր վերացը-  
նել կամ թուլացնել հայերի բնաջնջման հիմնական պատճառը : Այս  
պարագային Ռուսաստանն ու թիւրքերան, բոլոր վիճելի հարցերի  
հետ մէկտեղ, որոշ համաձայնութեան եղը կարող կը լինէին գտնել  
նաեւ Հայաստանի նկատմամբ : Վերջապէս երկու Հայաստանների  
շուրջ երեք միլիոնի հայութիւնը բաւական պատկառելի ոյժ էր, որը  
կարելի կը լինէր պատերազմի ընթացքում լաւագոյն կերպով օգտա-  
գործել թիւրք-համաձայնական պետութիւնների շահերի համար,  
քան թէ ոչնչացնել . մի բան, որ հակառակ տիրող կարծիքների, ոչ  
մի ձեւով չէր կարող օգտակար լինել ռուսների համար :

Պորհուրդների հրատարակած դադտնի փաստաթղթերի ընթեր-  
ցումից կարելի է գալ այն եզրակացութեան, որ այս կարգի  
քաղաքական մի դրութեան դոյութիւնը անհնարին չէր : Պոլսոյ դես-







Յուլ. 30 (օգ. 12-ին) Պետրոգրատի թրքական դեսպան Ֆահր-էդ-դինը նոյնպէս յարուցանում է Ռուսիոյ հետ դաշնակցելու խնդիրը, հետեւեալ հիմքերով. —

«Թիւրքիան հողային նւաճումների ոչ մի ձգտում չունի, բայց ցանկանում է իր հողային անձեռնմխելիութիւնը ապահովել: Նա իր բանակը դնում է Ռուսաստանի տրամադրութեան տակ, եթէ այս պատերազմի մէջ դրա կարիքը զգացւի: Թիւրքիոյ վարձատրութիւնը կարող է կայանալ Գերմանիոյ փոքր-ասիական երկաթուղային եւ այլ առանձնաշնորհումների իւրացման մէջ: Բացի այդ, Թիւրքիան կը ցանկանար, որ Ռուսաստանը խօսք տայ չղաշտպանել հայկական աղղային հոսանքների պահանջները, որովհետեւ Թիւրքիան վախ ունի Ռուսաստանի հայկական շրջանների նկատմամբ ունեցած ձեռնարկների առթիւ»:

Հետաքրքրական է, որ Սադոնովը, յայտնելով Գիրսին թրքական դեսպանի առաջարկութիւնները, իր կողմից ընդունելի է համարում բոլոր պայմանները, բացի հայկական բարենորոգումներին վերաբերող կէտից...: Հետագայում, երբ Ռուսաստանը նւաճեց Հայաստանի մեծ մասը, պարզեց, որ Սադոնովը միտք ունի գոհանալու հայերին «գլորեցական-եկեղեցական ինքնավարութիւն» շնորհելով (Ադամով, էջ 209):

Ինչպէս երեւում է Գիրսի յաջորդ գրութիւնից, Ֆահր-էդ-դինը արտայայտում էր Պոլսոյ մէջ աւելի առաջ եղած տրամադրութիւնները եւ իրազեկ չէր տեղի ունեցած փոփոխութիւնների մասին: Սադոնովը Ֆահր-էդ-դինի այս ուշացած յայտարարութիւնից էր մեկնում օգ. 2 (15)-ին Բենկենդորֆին ուղղած իր հեռագրին մէջ: Միւս կողմից ժամ առ ժամ տեղի ունեցող փոփոխութիւններին տեղեակ Գիրսը այլեւս յայտնում է. —

«Այստեղ ամբանում է այն կարծիքը, թէ Թիւրք-գերմանական համաձայնութիւնը արդէն կայացել է: Դէպի Անատոլիա զօրքեր ձամբելը կարծես թէ հաստատում է այդ բանը»...

#### IV

##### Հ. Յ. Գ. ԷՐԶՐՈՒՄԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Կարծում ենք պարզ է, որ ահաւոր դէպքերի կազմաւորման, մեծ ուժերի յարաբերութեան այս ճակատադրական շրջանում, հայ յեղափոխականների «կամեցողութիւնները» էական արժէք չունէին: Եւ սակայն հայ կեանքի ժամանակակից քննադատները շնչապատառ չարունակում են մօտ քսան տարի առաջ սկսած արշաւը...: Ռուս-թրքական բանակցութիւնների ընթացքում երբեմն թւում է, թէ



Հ. Յ. Գ. ԷՐԶՐՈՒՄԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ



Համաձայնութիւնը գլուխ գալու վրա է : Իսկ այդ պարագային պարզ է, որ ինչ որոշում էլ կայացնելու լինէին «Պոլսոյ կոմիտէն» եւ «Արեւելեան Բիւրօն», արեւմտահայութեան կեանքն ու բախտը տարբեր ընթացք կը ստանար :

Քննութեան առնելով համաձայնութեան խնդիրը՝ Տարւհն դը-  
րում է։-

«Էնկերը տալիս էր վճռական եւ անմիջական երաշխիքներ, ինչպէս օրինակ զերման սպաների հեռացումը եւ կովկասեան սահմաններում եղած զօրքերի յետ քաշելը: Հաղիւ թէ այդ բոլորը միայն խորամանկութիւն էր: Յամենայն դէպս, Ռուսոստանի շահը ուղղակի թերադրում էր պահանջել Էնկերի առաջարկած միջոցների անյապաղ դործադրութիւնը. է՞նչ որ այդ դէպքում վտանգւում էր միայն Թիւրքիոյ դրութիւնը»:

Բայց այդպէս չպատահեց, որովհետեւ միապետութեան դիւանադիտութիւնը չկարողացաւ ժամանակին հասկանալ իր իսկ դրութեան լրջութիւնը: Եւ այն օրերին, երբ Գրէյը զանուա՛նէր յիշէ «ուժեղ լարման անհրաժեշտութիւնը Գերմանիոյ դէմ պահանջում է թիւրքիոյ հետ ընդհարւելուց խուսափել», Ռուսաստանում մտածում էին օր առաջ Պոլիսը նւաճելու մասին:

Պետերբուրգում թիւրքիան հարկաւոր չէր դաշնակցի դերով, թէկուզ եւ ամենահամեստ եւ ամենախոնարհ վիճակով։ Առհասարակ, Ռուսաստանին անհրաժեշտ էր ոչ թէ թիւրքիան, այլ Պոլիսը, որը նւաճելու լաւագոյն միջոցը թիւրքիոյ հետ սլատերազմելն էր», դը-բում է Զայոնչկովսկին («Համաշխարհային Պատերազմը», Մոսկւա, 1931, էջ 156) :

Գիւտանադիտական մեծ սպայքարի այդ օրերին գնալով ուժեղա-  
նում է թիւրք-բուլղարական համաձայնութեան հաւանականութիւնը։  
Միաժամանակ Գերմանիան ամէն կերպ աշխատում է թիւրքիան իր  
ձեռք առնել։ Գեօրգէնի ու Ռեսայուսի եւ նրանց զօրական կազմի շը-  
նորհիւ օրէյօր աճում էր գերմանացիների աղղկեցութիւնը թրքա-  
կան ծովային եւ ցամաքային ուժերի վրա։ Գերմանական դիւանա-  
պետութիւնը դուրս էր գալիս իր կաշւից ապահովելու համար թիւր-  
քիոյ զինակցութիւնը, որ նրան հարկաւոր էր շատ տեսակէտներով։  
Ռուսաստանը նեղուցիների միջոցով դաշնակիցներից զատելու, նոր  
ճակատ ստեղծելով նրա ուժերը ջլատելու, թրքական հում նիւթերով  
իրեն ապահովելու համար եւայլն։ Եւ կատարւող աշխատանքները,  
որոնք ապահովելու համար եւայլն։ Եւ կատարւող աշխատանքները,  
որոնք ապահովելու համար եւայլն։ Եւ կատարւող աշխատանքները,



կողմնակից հոսանքը այլևս տիրող էր հանդիսանում եւ համաձայնութեան խնդիրը դրական լուծում էր ստանում :

Այս պարագաների մէջ էր, որ սկիզբ առին էրզրումի բանակցութիւնները :

Հ. Յ. Դաշնակցութեան էրզրումի ընդհանուր ժողովը՝ նոր էր ձեռնարկել իր աշխատանքներին, երբ վրա հասան պատերազմի շարժումները (լուրերը\*) : Ժողովին մասնակցում էին Դաշնակցութեան հին փորձած եւ նոր լաւագոյն ուժերը : Մեղ թւում է, որ այդ ժողովի կազմի, տրամադրութիւնների, ձգտումների յայտարարը հանդուցեալ Ռոստոմն էր, որը եւ հրաւիրել էր ժողովը : Ռոստոմը էրզրումում թիւրքերի հետ հաստատել էր սերտ բարեկամական յարաբերութիւն եւ նրանց կողմից մեծ յարգանք էր վայելում : Այդ կարգի բարեկամական տրամադրութիւններով էր օժտւած նաեւ ժողովին եկած պատգամաւորների ստաւրագոյն մասը : Ժողովը գումարել էր այլ նպատակների, այլ տրամադրութիւնների, այլ յոյսերի, այլ ձգտումների համար : Եւ այդ պատճառով, երբ մարդ յիշում է այդ ժողովի սկիզբն ու վախճանը, դիւրութեամբ հասկանում է խաբւած ու նահատակւած հայ ժողովուրդի ողբերգութիւնը . . . :

Պատերազմի մասին ստացւած հեռագրական լուրերի հետեւանքով, այդ հեռաւոր վայրում ստեղծւեց մանրամասն տեղեկութիւնների կարիքը : Այդ պատճառով, հեռագրւեց, որ հանդուցեալ Արմէն-Գարօն անմիջապէս մեկնի էրզրում : Պատասխան ստացւեց, որ Գարօն մեկնել չի կարող, նրա ներկայութիւնը խիստ անհրաժեշտ էր՝ Պոլսում : Արդէն վայրի հեռաւորութիւնը, չուրջ երկու շաբաթւայ ճանապարհ կտրելու անհրաժեշտութիւնը դէպքերի այդ արագ դարձացման շրջանում անիմաստ էր դարձնում դիմումը :

Ստեղծւած պայմաններում չէր կարող խօսք լինել ժողովի բնականոն զբաղմունքների մասին : Այդ պատճառով, ամփոփելով մինչեւ այդ եղած աշխատանքները, անհրաժեշտ համարւեց քննութեան առնել ստեղծւած դրութիւնը եւ անցնել պատերազմի հարցին : Այս առթիւ ժողովականների ստաւր մեծամասնութիւնը արտայայտւում էր այն մտքով, թէ հայ ժողովուրդը Կովկասում եւ Տաճկահայաստանում անկաշառ կերպով պէտք է կատարէ իր քաղաքացիական պարտականութիւնները՝ համապատասխան պետութիւնների նկատմամբ : Նախապէս երեք-չորս հոգի հակառակ էին այդ կարծիքին եւ առա-

\*) Էրզրումի ընդհանուր ժողովին եւ մասնակցել եւ «Խիւրի» հանգամանքով Զանկի Լ. Յ. Դ. շրջանային ժողովի եւ Պոլիս եղած դաշնակցական ընկերներից Սարգիս Բաբսեղեանի հրաւերով. Վ. Մ. :

ջարկում էին Արեւմտեան Հայաստանում ձեռնարկել ապստամբութեան (Սաադի երկու պատգամաւորները, խմբապետ Համադասպը եւ Եւրոպայի ուսանողական միութեան պատգամաւոր Տիգրան Խաչիկեանը) : Բայց վիճաբանութեան ընթացքում նրանք էլ միացան մեծամասնութեան բանաձեւին, բացի հանդուցեալ Համադասպից :

Յուլիսի վերջերին (հ. տ.) ընդհանուր ժողովի պարապմունքները արդէն ընդհատւած եւ պատգամաւորների մեծ մասը ցրւած էր : Ժողովի կողմից ընտրւել էր 9 հոգինոց մի յանձնաժողով, որը պէտք է զբաղէր առկա մնացած հարցերով :

Օգոստոսի սկիզբներին էրզրում հասան թիւրք յայտնի հոնտոր Նաճի բէյը եւ Իթթիհադի զլխաւոր քարտուղար Բահաէդդին Շաքիրը : Մի քանի օր առաջ էրզրում էր եկել նաեւ հանդուցեալ Վառնանը, որը փաստօրէն եւ վարում էր բանակցութիւնները մնացած ընկերների, յատկապէս, Ռոստոմի եւ Ակնունու, հետ համախորհուրդ :

Յիշում եմ Վառնանի մի ղեկուցումը բանակցութիւնների մասին, աւելի ճիշտ, ընկերական մի զրոյց, որ տեղի ունեցաւ Սանասարեան վարժարանի այգու անկիւններից մէկում : Ներկաներից յիշում եմ Ակնունուն, Ռոստոմին, Ս. Վրացեանին, Տէր-Մինասեանին : Վառնանի ասածներից շատ պարզ էր, որ թիւրքերը համակւած են խիստ բարձր տրամադրութեամբ եւ այդ պատճառով ամէն մի խօսակցութիւն թիւրքիոյ չէզոքութեան, պատերազմից խուսափելու մասին դիտւում էր աւելորդ :

Թիւրքերը վստահ ղեկմանական գէնքի յաջողութեան վրա՝ չամոզւած էին, որ թիւրքիան պատերազմից դուրս կը դայ նպաստաւորւած : Նրանք վստահ էին, որ Ռուսաստանի յարձակման դէպքում իրենց կը յաջողի ոտքի հանել Անդրկովկասի, Հիւսիսային Կովկասի, Միջին Ասիոյ, մինչեւ իսկ Հնդկաստանի իսլամութիւնը եւ զբանով նեղը լծել ոչ միայն Ռուսաստանը, այլ նոյն իսկ Անգլիան : Այդ նկատումներով նրանք առաջարկում էին, որ Դաշնակցութիւնը կազմակերպւած ձեւով հանդէս դայ միաժամանակ թիւրքիայում, Կովկասում եւ արտասահմանում : Առաջարկում էին թիւրքիայում հայ կամաւորական բանակ կազմել եւ գործօն մասնակցութիւն ունենալ թիկունքային աշխատանքներում : Ռուսաստանում եւ Կովկասում պայքար մղել միապետութեան դէմ եւ նպաստել ռուսների կովկասեան թիկունքը քայքայելու : Արտասահմանում հանդէս գալ հայ թիւրքական համադործակցութեան իմաստով եւ մի անգամ ընդմիջող ձեռք քաշել դրսի ուժերի միջամտութիւնից : Մի կողմ թողնել բոլոր ներքին խնդիրները, որոնք պատշաճ լուծում կը ստանան պատերազմից յետոյ :







բարեբաժնի առաջին նշանն այն եղաւ, որ ոստիկանութիւնը պահանջեց ընդհանուր ժողովին մասնակցած ընկերների ցանկը: Բոլորի համաձայնութեամբ Ռոստոմը ներկայացրեց էրզրումի մէջ մնացած ընկերների անունները: Այնուհետեւ բոլորն էլ հսկողութեան տակ ընկան, այնպէս որ ամէն մարդ ճանաչում էր իր յետեւից պտտող գաղտնի ոստիկանին: Արդէն ձերբակալել էին Բոլբար. պատգամաւորին: Բալաջանի տեղեկութիւններով նրան բանտում չարչարում էին, հասկանալու համար, թէ ինչպէս է պարսկական անցագիր ձեռք բերել: Նոյն օրերին ձերբակալեցին Ակնունուն եւ ինձ: Անձամբ իմ ձերբակալութեան մէջ, ի հարկէ, զարմանալու բան չեմ գրտնում, բայց Ակնունու ձերբակալութիւնը բոլորովին անպատեհ էր եւ ի թիւհատի վերաբերմունքի տեսակէտով նշանակալից: Էրզրումից Պոլիս մեկնելուց առաջ Ակնունին պահանջեց ձերբակալող ոստիկանից նախապէս մեզ տանել Բէհաէդդին Շաքիրի մօտ: Բայց երեւելայ բարեկամը Ակնունուն չընդունեց. իբր թէ «բացակայ» էր: Թէեւ նոյն օրը երեկոյեան մեզ արձակեցին, բայց երկու օր յետոյ նորից ոստիկանութիւն տարին եւ պահանջ դրին 24 ժամայ ընթացքում հեռանալ էրզրումից՝ Ակնունին Պոլիս՝ ես՝ Սամսոն, սպանալով, հակառակ պարագային, աքսորել:

Երեւելայ հաշտ բարեկամական յարաբերութիւնների այս փոփոխութեան համար ոչ մի առիթ չկար եւ «նոր» վերաբերմունքը այնքան տարօրինակ, այնքան անհասկանալի եւ անստույգ էր թուում, որ Ռոստոմը առաջարկեց չենթարկուել եղած կարգադրութեան, որպէսզի կառավարութեան ընթացքը վերջնականապէս պարզւի: Յաջորդ օրը որոշւած ժամին, ի հարկէ, մեզ կառք դրին եւ ճամբայ հանցին դէպի Տրապիզոն...

Ընդամենը մի ամիս առաջ մեր տեսած կենսութիւնը Տրապիզոնը այժմ սմբել ու կծկւել էր: Կարծես թէ մարդ չէր մնացել քաղաքում: Իջել էինք «Պալաս Օտելը»: Հակառակ եղած դժուարութիւններին, Ակնունին տեղական ընկերներից ոմանց հրաւիրեց ժողովի: Հիւրանոցում հաւաքւել էին ութը-ինը հոգի: Ակնունին զեկուցեց ընդհանուր ժողովի որոշման եւ թիւրքերի հետ եղած բանակցութիւնների մասին, վերը բերւած իմաստով: Յիշում եմ, որ խիստ տրհաճ տպաւորութիւն թողեց ներկաների վրա «քաղաքացիական պարտականութիւնները» որոշումը: Ժողովականներից մէկը, դերձակ Արչակը, այս առթիւ այնքան յուզւեց, որ կիսատ թողեց Ակնունու զեկուցումը եւ զայրութիւն հռացաւ: Այստեղ ընդհանուր տրամադրութիւնը ի նպաստ ապստամբութեան էր եւ յանկարծ՝ «քաղաքացիական պարտականութիւններ»...: Առհասարակ այդ երկու բառե-

րից աւելի անժողովուրդական մի հասկացողութիւն երեւի երբեք չի եղել արեւմտահայութեան մէջ: Ասում եմ այդ նրա համար, որովհետեւ նոյն ձեւի ընդունելութիւն գտաւ նաեւ իմ զեկուցումը Սամսոնում: Թէեւ ծովեղբրքում տիրող մտայնութեամբ չեմ ուզում եղբակացութիւններ հանել երկրի ժողովուրդի տրամադրութիւնների մասին, բայց տարակոյս չկայ, որ դրութեան անտեղեակ մարդկանց այն հաւաստիացումը, թէ արեւմտահայութիւնը դէմ էր, իսկ կովկասահայութիւնը կողմնակից ապստամբութեան՝ առնւազն միակողմանի է: Այսպէս թէ այնպէս, այդ տրամադրութիւնները չէին, որ լուծում էին ճակատագրական հարցերը...

Այդ նոյն օրերին, ինչպէս տեսնում ենք եղած փաստաթղթերից, դրութիւնը Պոլսում գնալով յըջանում էր: Բոլոր գործերը կեդրոնանում էին զինուորականների ձեռքը, որոնք, գերմանացիների ճնշման տակ, ամէն կերպ աշխատում էին Ռուսաստանի դէմ պատերազմի մղել թիւրքիս: Գերմանական զէնքի յաջողութիւնները ու ժեղացնում էին պատերազմի կողմնակիցների դիրքը: Օգ. 14 (27)-ին Գիրսը իր հեռագրին մէջ Սաղոնովին ասում էր՝

«Գերմանական զօրքերի Փրանսական ճակատում ունեցած յաջողութիւնների շնորհիւ, թիւրքերը մեզ միանալու համար յատուկ անհամբերութիւն չեն արտայայտում այլեւս» (Ադամով, էջ 68)...

Միւս կողմից, ըստ Տարլէի, ղեռնւած օգոստ. 3-ին արդէն կնքւած էր թիւրք-գերմանական գաղտնի համաձայնութիւնը:

Երկրի մէջ գերմանացիների համարումը տարածուն բնոյթ էր ստանում: Օգոստոս 31-ին նրանք գրաւեցին Ամիէնը, Սեպտ. 4-ին՝ Ռէյմսը, երեք օր յետոյ՝ Մոբեժը...

Արեւմտահայութեան հորիզոնը ըստ երեւոյթին ամէն տեղ սկըսում էր մթաղնել: Եւ նշանները արտայայտում էին նաեւ Սամսոնում, որի խաղաղ հայութիւնը անցեայում թիւրքերի հետ ապրել էր բարի դրացիական յարաբերութիւնների մէջ եւ կարողացել էր դերձ մնալ մինչեւ իսկ 1895-96 թ. ջարդերից: Իշխանութիւնը ազգային խորհրդի միջոցով պահանջում էր հայկական թաղի զէնքերը:

Քաղաքի մէջ եղած փոքր ի շատէ աչքառու հայերը արդէն հրակողութեան տակ էին: Հեղահամբոյր ծխախոտավաճառ հայերը հրակողութեան տակ էին: Հեղահամբոյր ծխախոտավաճառ հայերը հրակողութեան տակ էին: Սեպտեմբերի վերջերին դրութիւնը աւելի վատացաւ. մէկ-երկու տեղ եղան խուզարկութիւններ...

Փոթորիկներով յղի եւ անստույգ այդ օրերին թրքական մի նաւեկաւ խարսխեց Սամսոնի նաւահանգստում: Նաւազնացութիւնը այլեւս հազադիւտ էր և ուշադրութիւն էր դրաւում: Իմացեց, որ նաւը



հասել է Տրապիզոնից և մեկնում է Պոլիս: Դրանից դատ ոչ ոք ուրիշ ոչինչ չգիտէր: Մի ժամ յետոյ, սակայն, Գարահիսարցի բժիշկ Հինդլեանի միջոցով իմացայ, որ Ռոստոմը այդ նաւի մէջն է եւ ուզում է մէկն ու մէկի հետ տեսնել: Մի կերպ յաջողեցայ գնալ նաւ: Ռոստոմը, ըստ երեւոյթին, այլեւս չէր սպասում ոչ ոքի: Նրան դրտայ երկրորդ յարկի հիւրասենեակում նստած մի խումբ զինւորականների, ոստիկանների մէջ: Առաջին տպաւորութիւնը այն էր, որ կարծես թէ ձերբակալւած է, եւ ըստ էութեան այդպէս էլ էր, միայն թէ անպաշտօն կերպով: Ռոստոմը ինձ տեսնելուն պէս վեր ցատկեց տեղից: Դուրս ելանք վերեւ եւ նաւի մէկ անկիւնը քաշեցանք: Երբեք նրան այդպէս չէի տեսել՝ դունատ, գրեթէ հիւանդ դրութեան մէջ: Նա խօսում էր սաստիկ աճապարանքով եւ ասածների իմաստը այս էր. —

Ընկերներից ոմանք նախապէս հեռացան, ոմանք ձերբակալւեցին եւ ոմանք քշւեցին էրզրումից: Քաղաքում եւ շրջաններում սկսւել են ձերբակալութիւններ, խուզարկութիւններ. ժողովուրդը զինաթափում են: Գիւղերում եղել են կոտորածներ: Կողոպուտների, բռնադատումների դէպքերը անհաշիւ են: Այդպիսի տեղեկութիւններ կան նաեւ Վանի, Մուշի, Բիթլիսի շրջաններից: Ընդհանրապէս դրութիւնը շատ վատ է եւ նշաններ կան զանգւածային ջարդերի: Ամէն միջոց պէտք է ձեռք առնէք, որքան կարելի է շուտ Սամսոնից իմաց տալու Ամասիայի, Մարդւանի եւ Սըւազի ընկերներին, որ ըզդոյշ լինեն, ոչ մի ձեռով առիթ չտան թիւրքերի դրզութեան, որովհետեւ շատ եւ շատ վատ է դրութիւնը...:

Նաւը մեկնելու վրա էր, բաժանւեցինք:

Սամսոնում դրութիւնը գնալով բարդացաւ: Հայկական թաղի փողոցներում երեւացին նոր մարդիկ՝ Ռումէլիի մուհաճիւրները, որոնք առաջ գտնւում էին գիւղերում, յոյների շրջաններում: Նորեկները բնակութիւն էին հաստատում հայերի բակերում, տների պատուհանների տակ...: Հայկական թաղի ապագայ բնակիչներն էին սրանք: Թաղը զգոյշ էր, աւելի քան զգոյշ: Եւ սակայն տեղի ունեցան առաջին ձերբակալութիւնները...

Քիչ չանցած թաղը խաղաղ կծկւեց ու մեկուսացաւ աշխարհից. պատերազմը սկսւել էր...:

Բեկրադ.



Է. ԱԿՆՈՒՆԻ



Յ. ԻՐԱԶԵԿ

## ԵՒՍ ՄԻ ՀԻՆ ԹԱՏԵՐԳՈՒԹԻՒՆ

(«Լէյք»)

Ա.

«Վէմ»-ի թիւ Բ.-ում լոյս տեսած յօդածով՝ («Հայ Անդրանիկ Թատերգութիւնը») մենք նպատակ ունէինք ասացուցանելու, որ մեր առաջին տպագիր Թատերգութիւնը ԺԹ. դարում ո՛չ թէ Մխիթարեան Հ. Պետրոս վարդ. Մինասեանի «Խոսրով Մեծն» ողբերգութիւնն է (Վենետիկ, 1845 թ.), ինչպէս ընդունւած է մեզանում, այլ 1821 թ. Կալկաթայում հրատարակւած «Խորադիմայ Դժողութիւն» կատակերգութիւնը:

Յիշեալ յօդածին մենք կցել էինք եւ մի բաւական ընդարձակ նախաբան, ուր ընդհանուր դժերով ներկայացրել էինք հայ թատրոնի, մասնաւորապէս հայ Թատերգութեան պատմութիւնը - սկսած ամենահին ժամանակներից, Արտաւազդ արքայի օրերից, մինչեւ վերջին ժամանակները: Չէինք մոռացել, մանաւանդ, յատկապէս շեշտել Լվովի (Լեհաստան) Թէատրինեան կրօնաւորների պատւաւոր դերը այդ ասպարէզում եւ նրանց Թատերգութիւնները դեռ ԺԹ. դարում: Բայց «Վէմ»-ի խմբագրութիւնը, համարելով այդ ամենը շատ ծանօթ բաներ, դուրս էր ձգել: Որով յօդածից այն տպաւորութիւնըն էր ստացւել, որ իբր թէ մենք, մեղանչելով պատմական ճշմարտութեան դէմ, անարդար յայտարարութիւն ենք արել՝ ասելով, թէ հայոց անդրանիկ Թատերգութիւնը - ընդհանուր իմաստով վերցրած - «Խորադիմայ Դժողութեան»ն է, եւ ուրեմն հնդկահայերին է պատկանում առաջնութեան պատիւը հայ Թատերգութեան մարդում:

Եւ գտնւեցին ընդդիմախօսներ, որոնք ամենախիստ կերպով դատաւարաբեցին մեզ, վերագրելով մի շարք մեղքեր, որոնք մեզանից յամենայն դէպս շատ հեռու էին: Յիշենք նրանից Հ. Ե. Փէշկեանին, «Բաղմալէպ»-ի հմուտ խմբագրապետին, որ իր հանդէսում ստորագրելով մէկ յօդած - պատասխան՝ «Հայկական թատրոնի ծագումը» վերնագրով (թ. 1, 1934) մեզ մեղադրում էր երկու յանցանքի համար. -







տարեանին, թէ վրացիներին նախանձեղով՝ իրենք էլ ուզում են թիֆլիզում մի հայերէն ներկայացում տալ: Նշանակում է՝ հայերէն թատերգութիւններ կային, որ ուզում են հայերէն ներկայացում տալ:

Բայց, այդ թատերգութիւններից եւ ո՛չ մէկը — որքան մեղ յայտնի է — տպագրւած չի եղել: Նրանք գրւել են, խաղացւել ձեռագիր. մնացել են ձեռագիր եւ ձեռքից-ձեռք անցնելով՝ կամ կորել, ոչնչացել են, եւ կամ ո՞վ գիտէ ո՛րտեղ, ո՛ր անկիւնում փոշիների տակ թաղւած՝ անյայտութեան են մատնւել:

Երջանիկ բացառութիւն է նրանց թուում «Լէյլին», որը, ինչպէս ասացինք, հրատարակւած է Կալկաթայում, այն էլ ո՛չ թէ տպագիր, այլ վիմաւոր: Նրա հաղագիրտ մի օրինակը գտնուում է Նոր-Ջուղայում, Ամենափրկչեան վանքի մատենադարանում, որից եւ օգտւել ենք մենք:

Գիրքը սովորական տետրակի ծաւալով է. թուղթը սեւաւուն, բայց լաւ. գրութիւնը շատ մաքուր, գեղեցիկ ու պարզ: Ընդամենը 121+1 (վրիպակներ) էջ: Առաջին երեսը կամ ճակատն է. «Լէյլի, Կատակերգակի Ի հինգ գործս Կատակերգութիւն է աշխարհ որոց խորհին, եւ որոց զգան՝ եղերերգութիւն, Կալկաթա, 1832»:

Հեղինակը, դժբախտաբար, յայտնի չէ եւ համեստութեամբ անյայտութեան քօղի տակ է ծածկել իրեն: Թերեւս դրա մէկ պատճառն էլ այն է, որ գրւածքի նիւթը իրական կեանքից վերցրած լինելով՝ նրա հեղինակը, անշուշտ, պիտի շահէր շատ թշնամիներ: Եւ ուրեմն աւելորդ գլխացաւանքից ազատւելու լաւագոյն միջոցը անյայտութեան մէջ մնալը կարող էր համարւել:

Գրւած է տաղաչափութեամբ (ոտանաւորով) եւ հնդկահայոց բարբառով, որը էապէս Նոր-Ջուղայի բարբառն է, աղաւաղւած մի քանի հնդիկ եւ անգլերէն բառերով: Իսկ բացատրութիւնները կամ հեղինակի խօսքերը մաքուր գրաբառով են:

Մի-երկու տեղ էլ թունդ գրաբառ է խօսում գործող անձերից Արգոսը, մանաւանդ երբ տխուր է կամ փրկիստփայլում է: Օրինակ, երբ լսում է, որ իրեն խոստացւած եւ իր սիրած Լէյլին տւել են մէկ ուրիշին, կեղծ — դասական թատերգութեանց հերոսների նման՝ տխուր-տրտում գնում է գետի ափը ու իր վշտերը գետին գանգատում գրաբառ մենախօսութեամբ. —

Երանի՛ քեզ գե՛տ, այո՛, երանի՛,  
Զի չունիմ յուզմունք արդ ի քեզ տեղի,  
Ժըպտանք ու ծիծաղ եւ քաղցր բերկրութիւն  
Զքո կերպարանս նկարին փայլուն.

Ոչ կուին ալիքն, ոչ ձայն ամբոխի,  
Եւ ոչ խիստ հոգմով տարութեր լինի.

Պատերազմն կարի հեռի բընակէ,

Խոր խաղաղութիւն անդ քագաւորէ:

Մնացած զէպքերում նա էլ միշտ խօսում է աշխարհաբառով, հնդկահայոց բարբառով:

Բ.

«Լէյլի»-ի նիւթը առնւած է Կալկաթայի հայոց, մանաւորապէս առեւտրական դասակարգի կեանքից: Հեղինակը ամէն ինչ տխուր է տեսնում այնտեղ, ո՛չ մի միջիթարական երեւոյթ: Մէկ իսկական ճահիճ քաղքենի կրքերի ու յարաբերութիւնների: Մանր ինտրիգների անհրապոյր աշխարհ, ուր ամէն ինչ հիմնւած է դրամի ու անձնական շահերի վրա:

Մանաւանդ շատ անմխիթար է ներկայացնում մարդկային փոխադարձ յարաբերութիւնների պատկերը — ոտքից գլուխ կեղծիք: Արտաքին «բարեկամական» քօղի տակ թաղնւած անսահման շահախնդրութիւն, ուխտադրութիւն եւ դաւաճանութիւն: Անգամ ընտանիքի անդամները իրար հանդէպ անկեղծ չեն եւ իւրաքանչիւրը իր անձնական հետաքրքրութիւնները, անձնական կիրքն ու շահը գերադասում է ամէն բանից:

Ահաւասիկ օրինակի համար Ղովտի ընտանիքը՝ ինքը Ղովտը եւ կինը, տիկին Պըվըն: Ո՛չ մի մաքուր, մարդկային զգացում չի կապում իրար հետ այդ ամուսիններին: Կինը մարդուց է դժգոհ, եթէ աւելին չասենք, մարդը կնոջից: Իսկ վերաբերմունքը դէպի միմեանց եւ խօսակցութիւնները՝ կոպիտ, գոեհիկ, միանգամայն զզւելի:

Բերե՛նք մի նմոյշ. —

Ղովտ. Անգգա՛մ, լսի՛ր, էլ շատ մի՛ խօսեր,

Դու քեզ նամաչի՛ր, խելիդ վերայ բե՛ր.

Յառաջ գաքիդ՝ 1) վարքն բոլո՛րն մտածի՛ր,

Ապա իմ վերէն էսպէս բան խօսիր:

Պըվըն. Զաքս մի՛ վերուր, անամօ՛ք, լօթի՛,

Զոր ինչ գործելաս յայտ է աշխարհի.

Զախիր 2) է՞ս ինչայ — դու անաստւածաս, 3)

Որոք 4) մի պակաս ինձնում գտէ՞լաս,

Որ ես տան նստած՝ այլոց հետնէ՛նաս:

1) Զաք-տոհմ, ցեղ. 2) Զախիր-ախար. Զուղայի բարբառում ձայնաւորով, մանաւանդ ա-ով սկսող բառերը յաճախ սկզբից յ են առնում:

3) Զուղայի բարբառում օժանդակ բայի եմ, ես, է դառնում են ամ, աս, այ:

4) Որոք — որեւէ:



«Լէյլի»-ի կենտրոնն են կազմում երկու քաղաքների ընտանիքներ, արդէն դրամի համն առած եւ իրենց բնական շաղկից շեղւած, կանգնած իրար դէմ դրած: Մէկը՝ Զիտուի ընտանիքը, Սարինէ կնոջով ու Լէյլի աղջկանով, իսկ միւսը՝ Մենոնէսի ընտանիքը, Շամիրամ կնոջով եւ Պեղիկատուր որդով:

Առաջնում իշխողը ընտանիքի հայրն է՝ Զիտուն, տանը ամէն ինչ կատարում է նրա՝ հրամանով: Երկրորդում իշխողը կինն է՝ Տիկին Շամիրամը, որի կամքին ու հրամաններին ենթարկւում են եւ ամուսինը, եւ որդին՝ Պեղիկատուրը:

Ահա այդ երկու ընտանիքների շուրջն էլ պտտւում է թատերգութեան ամբողջ բովանդակութիւնը — իր դէմքերով ու դէպքերով:

Զիտունը Խոտարախչենց տանը թէյի ժամանակ հանդիպում է Արգոսին, որը «սափարից» (ճանապարհորդութիւնից) նոր էր վերադարձել ու կրկին պիտ մեկնէր: Շատ հաւանում է նրան եւ որոշում է իր դուստր Լէյլիին անպայման կնութեան տալ նրան, որովհետեւ «իրաւի շատ լեւ<sup>1)</sup>» վաստակաւորայ, ընտիր վարք ունի ու շատ համեստայ»:

Նա այնքան առաջ է գնում իր այդ մտադրութեան մէջ, որ վրձնում է թէկուզ մէկ օտար եկեղեցում կատարել տալ նրանց պսակը, եթէ հայոց եկեղեցին որեւէ պատճառով հրաժարւի դրանից: Հեշտութեամբ իր կնոջը՝ Սարինէին էլ համոզում է այդ բանում եւ պատահում «միշտ սիրալիր, քաղցր լինել Արգոսի հետ եւ վերադառնալ տեղիք չտալ», որովհետեւ չպէտք է այդպիսի յարմար երիտասարդին ձեռքից բաց թողնել:

Աւելի. նա ուղղակի դողդողում է Արգոսի վրա եւ վախենում, թէ մի գուցէ վատ մարդիկ յանկարծ որո՞մ ցանեն ու գործը փչացնեն: Ուստի կնոջը, աղջկանը, ամենքին զգուշացնում է, որ չլինի թէ որեւէ ձեռով նրա սիրտը կոտրեն —

Դռքա շատ սիրեմ, իրաւ լիւ անձնայ,  
Կտրիչ, չափաւոր, վաստակաւորայ.  
Բայց էլ վախմանամ դուք որումն ցանէք,  
Մի կամ միւս կերպ դուք վիրաւորէք:

Արգոսը իբրեւ փեսացու մի որոնւած գանձ է համարւում Զիտուի ազգակիցների համար եւս: Նրանք էլ քափ ու քրտինքի մէջ են՝ այդ գանձին տիրանալու եւ ձեռքից չտալու համար: Նոթոսը, օրինակ, որ Զիտուի մօտիկ ազգականներից է, հետապնդում է Արգոսին եւ բոլոր միջոցներով ճգնում է նրան տրամադրել դէպի Լէյլին:

1) Լիւ — լաւ:

Գետի ափին, ուր Արգոսը ա լա Զայլդ Հարողը շրջում էր մեղամաղձոտ եւ իր տխրութիւնը նրան յայտնելով, գրաբառ լեզուով կեանքի զառնութիւնների ու մարդկանց անազնութեան վրա փրկիստփայլում, Նոթոսը յանկարծ բռնում է նրան եւ «բարեկամ մարդու» վստահեցնում թէ «մտերմաբար» հաղորդում —

Փոքր օրով յառաջ Զիտուն քո մասին  
Գովասանութիւն շատ տվեց առանձին.  
Էն հատն, <sup>1)</sup> որ ասաց, Նաթոս, ջանացիր,  
Արգոսի վարքն քեզ օրինակ դիր.  
Ոչ ոք քո ընդդէմ մի բան չի ասում,  
Նաեւ Սաբինէն քեզ շատայ գովում:  
Եթէ մեր տան կողմն որոք միտք ունես. <sup>2)</sup>  
Յուսամ, բնաւին դու յետ չփաշվես:

Արգոսն ու Լէյլին հանդիպում են իրար եւ երկուսն էլ համաձայն են: Նրանք իրար փոխադարձաբար սիրում են եւ մի տեսակցութեան ժամանակ նոյն իսկ բացատրում ե իրենց սէրը միմեանց յայտնում —

Արգոս. Որովհետեւ դու հաւաստի առնես,  
Սրտիս ծածուկն կը բանամ ես քեզ.  
Ասա՛, զի՞նչ գգաս դու վասն Արգոսի,  
Պատմեա՛ բերանով գոյ սիրտդ խօսի:  
Լէյլի. Իմ սիրտն միայն սիրովայ շարժման,  
Դրիստ <sup>3)</sup> սիրումամ եւ քեզնից սիրման:  
Արգոս. Մի՛ս, <sup>4)</sup> միամիտաս, բայց ո՛չ սխալիս,  
Այո՛, հաւատա՛, սերտ սիրով սիրիս:  
Լէյլի. Յուսամ մեր սէրն մշտատեւ լինի,  
Եւ հաւատմանամ այսպէս կը լինի:  
Արգոս. Հաւատարմութեանս մասին ինչ չասեմ,  
Բայց միայն գործով քեզ կը ցուցանեմ.  
Ասացի, ասեմ քեզ սրտով սիրեմ,  
Այս միայն բաւ է, հաւատաս, գիտեմ:  
Լէյլի. Ես ինքս ասացի, քեզնից սիրմանամ,  
Հաւատարիմաս, ես լիւ տեղեկամ.  
Միայն յուսովամ, որ շուտով լինի,  
Կանուխ մեր սրտինն կատար հասանի:

1) Էն հատն — այնքան. 2) Այսինքն՝ եթէ մեր տան հետ բարեկամանալու միտք ունիս: 3) Դրիստ — ուղիղ, միշտ. 4) Միս — անգլիքէն՝ օրիորդ.



Յետի յետիասս <sup>1)</sup> մեր տունն գովման, <sup>2)</sup>  
Բայց քեզնից իմ սէրը չէ ինչ պակասման:

Գ.

Բայց թէ Լէյլին եւ թէ Արգոսը դեռ չգիտեն, թէ ի՞նչ անյաղ-  
թելի արդեւքներ կան իրենց սիրոյ իրականացման ճանապարհին:  
Լէյլիի հայրը՝ Ջիտուն արտաքուստ միշտ քաղցր, միշտ սիրալիլ ու  
չողոքորթ՝ Արգոսի հետ՝ նրան իր ձեռքում պահելու համար, որո-  
նում է մի ուրիշ փեսացու աւելի լաւը, աւելի յարմարագոյնը: Եւ  
իր այդ քայլը արդարացնում է իր խղճի եւ ամենքի առջեւ նրանով,  
որ ինքը հայր է եւ իր հայրական պարտականութիւնն է այդպէս  
պահանջում, բայց իրօք, իր հոգու անպիտանութիւնը եւ անսահման  
չահամոռութիւնն էին այդ պահանջում:—

Որպէս հայր ես նպատականի, <sup>3)</sup>  
Որ երջանկութեան դստերս հետեւի,  
Զգուշ պահելով ձեռնումս Արգոսին:

Ու նա շուտով գտնում է իր որոնած յարմարագոյնը: Դա Մենո-  
նէսի որդի Պեդեկատորն է, որի հետ Լէյլիի ամուսնութիւնը աւելի  
չատ բան էր խոստանում նրան: Մենոնէսը Կալիաթայում ճանաչած  
մարդ է իր բարեկեցիկ վիճակով եւ ուրեմն նրա հետ խնամիրութիւնը  
աւելի շահաւէտ ու պատւաբեր կարող էր լինել Ջիտուի համար: Մա-  
նականը Արգոսը «ազնւարիւն» հնդկահայ էլ չէր, այլ դրսեցի, այն  
էլ, ինչպէս Շամիրամն է ասում, «Խէրն Հայաստանցի» էր: Իսկ  
հնդկահայերը, ինչպէս նաեւ ջուցայեցիք, ի հնուց անտի մինչեւ  
այսօր, արհամարհական վերաբերմունք ունեն հանդէպ այն բոլոր  
հայերի, որոնք գտարիւն հնդկաստանցի կամ ջուզայեցի չեն: Իրենք  
միմիայն իրենց համարելով «ընտրեալ» հայր՝ միւսներին համարում  
են հեթանոս եւ «դուսցի» անարգական անունով նրանց բոլորին մը-  
կըրտում:

Մենոնէսի տանը, մի խնճոյքի ժամանակ, Ջիտուն նրա կենացն  
է խմում մի քիչ ջերմ ու չողոքորթ խօսքերով: Այս «պատահական»  
դէպքը ճակատագրական նշանակութիւն է ունենում Լէյլիի եւ Ար-  
գոսի համար: Մենոնէսը իր շնորհակալութիւնը յայտնելով, նաեւ  
առաջարկում է, որ վատ չէր լինի, եթէ իրենց տները բարեկամա-  
նան իրար հետ, իր խօսքով եթէ ասենք՝ «ընտանանան»: Ջիտուն,

1) Յետի յետիասս գովման — ուշ-ուշ ես գալիս: 2) Գովման, սիրման, շարժման  
եղն. Զուգայի բարբառում նշանակում են՝ գալիս, շարժում, սիրում եղն:

3) Պարտականի, հետեւի եղն. անց. անկատար — պարտական էի, հետեւի էի եղն.

որ իր սրտի խորքում հէնց այդ էր ուզում, անմիջապէս համաձայ-  
նում է:—

Մենոնէս. Մեծապէս գոհ ես գգէն, Սիրելի,  
վասն ասութեանցդ. Աստուած քեզ լսի:  
Ի՞նչ վատ կը լինի, քէ ընտանանամբ,  
Պեդիկատորին փոյոյ Լէյլուն տամբ:  
Ջիտու. Մի՞քէ ես ասեմ, ոչինչ վատ կելնի,  
Իմ սրտինն ասես, շատ լէ կը լինի:  
Յուսամ բերանիդ Աստուած կը լսի,  
Եւ էս քո խօսքն հաստատուն կելնի:  
Մենոնէս. Զոր ինչ ասացի, հաստատ կը մնայ,  
էս բանին ոչով խափանող չկայ:

Ջիտուն ցնծութեամբ վերադառնում է տուն եւ այժմ էլ, ինչ-  
պէս առաջ Արգոսի համար էր դողում, աւելի մեծ յափշտակութեամբ  
Պեդիկատորի դովքն է երգում: Կնոջ, ամենքին նորից պատւիրում է,  
որ իրենց վարմունքների մէջ դէպի նոր խնամիրները շատ զգոյշ լի-  
նեն, մինչեւ որ դործը դուրս գայ. ապա թէ ոչ՝ իրենց մանած թելը  
կրկին բամբակ կը դառնայ: Պատւիրում է լաւ վարել մանաւանդ  
Ղովտի ու իր կնոջ՝ Պրվընի հետ, որոնք Լէյլիի գովասանքը Մենո-  
նէսի մօտ անելով, երախտագիտութեան արժանի էին:

Պիտի դոցա հետ յըլդայ <sup>1)</sup> լէ վարվի,  
Յաւէտ Պրվընի կամքն աշխատել,  
Որ էս բանին էլ մին խոչ վեր չկայ,  
Ինչ որ մանելամբ էլ բամբակ դառնայ:  
Ի սէրն Աստուծոյ միաբան վարվէք,  
Մինչեւ էս բանի վերջն խաւանէք:

Կալիաթայի հայ գաղութի մէջ իսկոյն տարածում է Պեդիկա-  
տորի եւ Լէյլիի նշանի լուրը, որը ինչպէս մի խիստ կարեւոր դէպք  
խորապէս յուզում է հայ քաղքենիական կեանքը եւ կենդանի եռու-  
ղեռ առաջացնում: Ամենքը հետաքրքրւում են կատարւածով եւ ի-  
րենց դործին վերաբերմունքը հրապարակ բերում: Ոմանք ուրախ են,  
կողմնակից. միւսները՝ հակառակ եւ պատրաստ կատարւածը քան-  
դելու:

Ու իրար յետեւից դալիս են շնորհաւորելու «բարեկամները», նը-  
րանցից ոմանք էլ չափազանց դժկամած, որ եթէ այդպիսի բան  
կար, ինչո՞ւ նախապէս իրենց էլ չէին յայտնել:—

1) Յըլդայ — այժմ, հիմա:



Ահաւասիկ լրախոյզը .-

Յէրէկի <sup>1)</sup> ուրախ, լէւ լուր լսեցի,  
Յուսամ լսածս նշմարիտ կելնի.  
Ջիտուի դոտերն, ասեմ, ուզում էք,  
Ձեր որդւոյ համար ամուսին շինէք.  
Բայց գարնամանամ՝ գոլով տնեցի,  
Ոչինչ չյիշեցրիք, երբ յէրէկ աստի:

Սակայն կատարւածի դէմ է Պեղիկատորի մայրը՝ Շամիրամը.  
մի տղէտ կին, բայց շատ մեծամիտ, ինքնահաւան ու հպարտ: Քաղ-  
քենիական հովերով տարւած՝ Լէյլին նա յարմար չի համարում իր  
որդու համար: Նա ուզում է, որ իր հարսը հեռւից դայ եւ անծա-  
նօթ լինի տեղացիներին, որովհետեւ մեր ժողովրդի ասածին պէս՝  
հեռաւոր սուրբը զօրաւոր կը լինի:

Մանաւանդ նա շատ զայրացած է Ջիտուենց դէմ, որ այդ լուրը  
իբր թէ նրանք են այդպէս տարածել: Ու վրդովւած խօսում է տիկ-  
Պըվընին, որը նոյնպէս չնորհաւորանքի էր եկել .-

Իրաւ գարնանայ էս լրի մասին,  
Դոր <sup>2)</sup> էսպէս շուտով դոքա դուս տուին:  
Էս լուրն հոչաբել հարկ չէր Ջիտուին,  
Քէֆով լինելով <sup>3)</sup> մին քան ասացին,  
Էն խօ չպեց, փոքր ինչ սպասին,  
Եթէ հաստատ էր, վերստին կասին:  
Որդիս դեռ պիտի ուսում սաւորի, <sup>4)</sup>  
Որ ապագայ ինքն քշուստ չլինի.  
Ուզն <sup>5)</sup> կրակին յըլդայ դադման չի,  
Թո՛ղ ըսօր չելնի, միւս օր լինի,  
Չո՛ւմ <sup>6)</sup> պիտի ունայն իմ որդին քանդվի:

Ու շարունակում է .-

Մենք ներկայ, խաթո՛ւն, <sup>7)</sup> ոչինչ միտք չունեմք,  
Որ էսպէս շուտով նորա պսակեմք,  
Խնդրեմ, Ջիտուին եթէ հանդիպես,  
Էս բանի մասին նմա նւս յիշես,  
Որ իւրեանց դստերն ասկայ <sup>8)</sup> չպախեն,  
Մեր յապով <sup>9)</sup> չկան, յետոյ փնովեն: <sup>10)</sup>

1) Յէրէկի - երէկ. 2) Դոր - ինչպէս. 3) Քէֆով լինելով - խմած լինելով.  
4) Սաւորի - սովորել. 5) Ուզ - իւր. 6) Չո՛ւմ - ինչո՛ւ. 7) Խաթուն - տիկին.  
8) Ասկայ տալ կամ ասկայ պախել - սպասեցնել. 9) Յապով - յուսով. 10) Փնո-  
վել - նախատել.

Նամանաւանդ նա վախ ունի, որ Լէյլին, լինելով տեղացի եւ  
ունենալով ծնողներ ու ազգականներ, իրենց տան գաղտնիքները կը  
յայտնի նրանց .-

Եթէ Լէյլուն ոտն էս տունն մըտէր,  
Մեր բոլոր ծածուկն իսկոյն դուս կըտէր.  
Թէպէտեւ այլոց նա ոչինչ չասէր,  
Իւր խօրն ու մօրը դեռեւս կյայտնէր.  
Բայց էն աղջիկն <sup>1)</sup> ոչ ում ծանօթ չի,  
Որոք քան տեսնի՝ ո՛ւմ պիտի ասի.  
Ջոր ինչ կը տեսնի, էն կը սաւորի,  
Մեր բոլոր վարուցն հետեւող կելնի:

Շամիրը կարողանում է իր ամուսնուն՝ Մենոնէսին եւս համո-  
զել, որ պիտի յետ առնուի տւած խօսքը եւ Պեղիկատորի ու Լէյլիի  
նշանը քանդուի: Հէնց այդ միջոցում յանկարծ յայտնւում է Մկրատը  
եւ նրանց աւետում, որ Մալաղայ երկրում մի լաւ աղջիկ կայ, ա-  
մէն բանով գովելի, որը շատ յարմար եւ լաւ հարսնացու կարող է  
լինել Պեղիկատորի համար .-

Մալաղայ երկրումն մի օրիորդ կայ,  
Որ համ տեսօքայ, համ շատ խելօքայ.  
Դրիստ ձեր որդւոյ համեմատ անձայ:

Ու խոստանում է գնալ իսկոյն Մալաղայ, նշանել այդ աղջկան  
Պեղիկատորի համար եւ հետն առնել բերել: Շամիրամի բերանի ջու-  
րը գնում է այդ անծանօթ հարսնացուի մասին լսելով, որովհետեւ  
չէ՞ որ դա համապատասխանում էր իր նպատակներին ու նա երա-  
զում էր մի անծանօթ աղջիկ բերել իր որդու համար, այն էլ հե-  
ռւից: Ու հիացած՝ հարցնում է .-

Դո՛րայ, սիրո՞ւնայ, կերպիւ տե՞սք ունի,  
Ծածուկ պախո՞ղայ, լէւ ձիգ բօ՞յ ունի:

Խնդիրը փակւած է: Մնում է մի կողմից՝ ամուսնուն, Մենոնէ-  
սին եւս համոզել նոր հարսնացուի համար, իսկ միւս կողմից՝ մարդ  
ուղարկել Ջիտուենց յայտնելու, որ իրենց առեւտուրն արդէն քան-  
դււած, վերջացած է: Ի հարկէ, Մենոնէսն էլ իսկոյն համոզւում է:  
Կանչում են Մենտորին՝ Ջիտուի մօտ ուղարկելու համար: Նա էլ սի-  
րով յանձն է առնում, որովհետեւ ներքին ատելութիւն ունէր դէպի  
Ջիտուն:

Գնում է եւ իբրեւ պատգամաւոր՝ շատ չոր ու ցամաք կերպով  
յայտարարում Ջիտուին .-

1) Խօսքը դրսից գալիք հարսնացուի մասին է:



Մեր Մեմոնէսիցն մին փեղամ <sup>1)</sup> ունեմ,  
 Որ տխուրեամբ արդ պիտի քեզ յայտնեմ.  
 Պսակի մասին, որ խօսեցելեք,  
 Նաչի <sup>2)</sup> յարակուն, <sup>3)</sup> դաշնաւորվելիք,  
 Ներկայ տխուրայ, իրաւ տխուրայ,  
 Որ միտք ոչ ունի բնաւ կատար տայ.  
 Քանգի դուք լուրն շուտ հռչակեցիք,  
 Իւր որդւոյ միտքն շփոթ ձգեցիք:  
 Պեղիկատորի դեռ հասակն լի չի,  
 Նա ներկայ պիտի ուսմանց հետեւի:  
 Վասն որոյ խնդրեց, որ ասեմ ես քեզ,  
 Որոք կերպ լէյլուն ատկայ չպախես,  
 Թէ այլիք ոք դուն գոյ, նմա տալ կարես:

Զիտուն շանթահարում է, մանաւանդ որ Արգոսի նման «լէւ ջլան» <sup>4)</sup> փեսացուն ձեռքից թողել էր Պեղիկատորի յուսով: Լեզուն կապում է եւ յուսահատ միայն Աստծուն դիմում: -

Տեսա՛ր ինչ ելաւ. Աստուած ողորմայ,  
 Աստուած, քեզ յուսամ, դո՛ւ մի նար արա՛:

Երբ սթափում է, նորից յիշում է Արգոսին եւ մտածում է նորից իր աղջիկը նրան տալ: Ու նորից սկսում է նախկին շողորթ-թութիւնն ու կեղծ խաղը Արգոսի հանդէպ: Սա էլ, ամէն ինչ մոռացած, անտրտուն ընդառաջ է գնում Զիտուի բոլոր խաղերին:

Մինչ այս մինչ այդ վերադառնում է Մալաղայից Մկրատը - ձեռնոռնայն, յուսախաբ: Նրան չի յաջողւել իր առաքելութիւնը, այն է՝ նշանել Կոնստանդնուպոլիսի Պեղիկատորի համար եւ իր հետ բերել: Չորս ամսւայ անհամբեր սպասումից յետոյ՝ նա վերադառնում է առանց ոչնչի, թէ եւ զնացել էր մեծամեծ խոստումներով:

Այս հարւածը չչմեցնում է մանաւանդ Շամիրամին, որը ոսկի յոյսեր էր կապել Մկրատի ճանապարհորդութեան հետ: Նա չի կարողանում ըմբռնել, թէ ի՞նչպէս եւ ինչո՞ւ համար չպիտի աղջկան տային իր Պեղիկատորին: Ու ընկճւած հարցնում է. -

Զարմանալի իրաւ. չո՞ւմ չընդունեցին,  
 Իմ յոյսս էսպէս դոքա կըտրեցին.  
 Ես մեծ յոյս ունի. ի՞նչ պատճառ բերին:

1) Փեղամ - պատգամ, պատւեր. 2) Նաչ - հաւանաբար խնջոյք, հաւաքոյթ. 3) Յարակուն - իրիկուն. 4) Զլան - երիտասարդ:

Մկրատ. Էն քին <sup>1)</sup> դրիստնայ, ոչինչ չասացին,  
 Որոնք մի յայտնի օգր <sup>2)</sup> չըբերին.  
 Ու անկեղծն ասեմ, ես շատ ջանացայ,  
 Բայց ի գուր ելաւ, ես ավստս եկայ: <sup>3)</sup>

Շամիրամին ու իր ամուսնուն սարսափեցնում է մանաւանդ այն հանդամանքը, թէ լուրը կը տարածւի եւ իրենք խայտառակ կը լինեն ամբողջ աշխարհում: Եւ Մենոնէսը հիւանդանում է ու անկողին ընկնում, մանաւանդ որ ինքն էլ բաւական ծեր էր: Նա այլեւս յոյս չունի ոտքի կանգնելու եւ զգում է իր շուտափոյթ մահը: -

Շունչս գնումայ, ջանս քանդմանայ,  
 Զըրէ՛ս յանդիման մայսս կանգրածայ, <sup>4)</sup>  
 Զըրէ՛ս ելանեմ, պիտի ինձ տանի:

Մենոնէսի տան շուրջը վխտում են մի շարք «բարեկամներ» - Մենտոր, Դորարջի, Պեղոս եւն.: Բայց դժբախտաբար նրանցից եւ ո՛չ մէկը իսկական բարեկամ չէ եւ իւրաքանչիւրը իր անձնական շահն է որոնում բարեկամի կեղծ դիմակի տակ: Եւ ժամանակն էլ շատ յարմար է իրենց մութ նպատակներին հասնելու համար:

Նրանք հիւանդի մահճի շուրջը շարունակ դուրս կոնծին եւ տալիս, ամէն մէկը ոչինչ չխնայելով, որ հիւանդը իրեն նշանակի, իր մահից յետոյ, կառավարիչ իր տան եւ ունեցւածքի:

Ահաւասիկ «բարեկամ» Պեղոսը իր «ազնիւ» մտածութիւններով. -

Դա (Մեմոնէս) մեծացելայ, շուտով կը մեռնի,  
 Ու վերջն ըստից մեծ շախ կը լինի,  
 Թէ Մեմոնէսի բաներն տիրեմ,  
 Ու ամենեցուն իմ ձեռնումն պախեմ:  
 Ես լէւ խբարամ <sup>5)</sup> ինչպէս կը վարվեմ,  
 Բոլոր բան սիրուն կը կառավարեմ:  
 Խայերիցն ոչ ով կերպին տեղեակ չի,  
 Ինչպէս փող շինի, դոր անում խանի:  
 Տե՛ս ընչեր կանեմ, ըստուր կը խաբեմ,  
 Ընտուր կը ներկեմ, խորեր կը բորեմ, <sup>6)</sup>  
 Որ հարստանամ, մեծ անում խանեմ,  
 Ու ազգի գլխին մեծ ոմն նստեմ,  
 Եւ ամենեցուն լէւ կառավարեմ:

Միւս «բարեկամը», Դորարջին սակայն աւելի է առաջ գնում:

1) Քին - ինչ որ. 2) Օգր - պատճառամբ, ներողութիւն. 3) Ավստս եկայ - ցաւեցի. 4) Կանգրածայ - կանգնած է. 5) Խբարամ - գիտեմ, տեղեակ եմ. 6) Կը բորեմ - կը փորեմ:



Այդ ամենի հետ միասին՝ նա ծրագրում է տիրանալ նաեւ Շամիրամին, որ դեռ երիտասարդ է, ու նրա հետ ապրել:

Լէւ հաւատարիմ ինձ կը ցուցանեմ,  
Տան վերէն որպէս սրտցաւ կը լինեմ.  
Նա էլ կը կարծի, քէ մշմարիտայ,  
Ու բոլոր ստատն<sup>1)</sup> իմ վիզն կը տայ.  
Յետոյ Շամիրամն ու ես լուկ ապրեմ:

Բայց Մենոնէսը իր տան կառավարիչ կամ խնամակալ է կարգում Մենտորին: Դօրաբջին ու Պեղոսը դրանից չեն յուսահատուում. ընդհակառակը, նրանք միացած ու ձեռք-ձեռքի տաւած՝ այժմ աշխատում են Մենտորին տապալել. սակայն իւրաքանչիւրն էլ իր մտքում արդէն որոշած՝ Մենտորից յետոյ միւսին տապալել եւ Մենոնէսի հարստութիւնը միայնակ կառավարել:

Եւ խակապէս նրանց միացեալ ջանքերը յաջողութեամբ են պսակում: Նրանք Շամիրամին աւելի անկեղծ բարեկամ ձեւանալով, կարողանում են Մենտորին դահավէժ անել: Տիրուհին արդէն այնքան է լցւած ատելութեամբ ու թշնամութեամբ դէպի Մենտորը, որ ուղղակի դռնհիկ հայհոյանքներով է նրա անունը տալիս. —

Ես խասկացելամ մա ինչպէս անձնայ,  
Ել ինձ մի՛ ասէ՛ք. մա էն շանիցնայ,  
Որ դեռ էլի չի ու գուցէ չելնի.  
Դա մեր տունն քանդեց...

Դ.

Առաջին յաջողութիւնից խրախուսւած՝ Դօրաբջին ու Պեղոսը իրենց երկրորդ ծառայութիւնն են առաջարկում Շամիրամին, կամենալով դրանով իրենց «անկեղծ» բարեկամութիւնը ցոյց տալ նրան: Դա անհրաժեշտ էր իրենց վերջնական նպատակի համար:

Լաւ իմանալով, որ իւրաքանչիւր մայր ցանկանում է օր առաջ պսակել իր որդուն, նրանք խաղում են Շամիրամի այդ թոյլ լարի վրա:

Մօր սիրտն շատ խիստ կերպ կուգի,  
Որ մի օր յառաջ որդին պսակվի.  
Ըստով կարողանիք մրա սիրտն մտնել,  
Եւ գոր ինչ ուզեմք, իսկոյն կատարել:

Նրանք խորամանկութեամբ խորհուրդ են տալիս Շամիրամին՝ Պեղիկատորին չուտով պսակել եւ իբրեւ լաւագոյն հարսնացու մատ-

1) Ստատ — կայք, ունեցւածք:

նանչում են մեղ ծանօթ Լէյլին, որին Շամիրամը մի անգամ այնպէս խայտառակ ձեւով մերժել էր: Եւ նրան համոզելու համար՝ Լէյլիի գովքն են երգում նրա առաջին. —

Եւ ի՞նչաս կարծում, կալկաքայ ո՞վ կայ,  
Որ եղպէս սիրուն, ընտիր իմիկնայ.  
Նրա ծնողքն շատ լէւ ծնունդան,  
Եւ վարքի մասին օրինաւորան:

Լէյլինն առաջարկելով՝ նրանք մի գնդակով կամենում էին երկու որս սպանել — թէ՛ Շամիրամի վստահութիւնը գրաւել եւ թէ՛ վրէժ-խնդիր լինել Արգոսից: Իրենք էլ իրար խոստովանում են այդ — մի քարով երկու ձնձուղ չքար<sup>1)</sup> տանք:

Նրանք սոսկալի թշնամութիւն ունէին Արգոսի դէմ: Եւ ուրեմն Լէյլինն Պեղիկատորի հետ պսակելով, նրան կը խլէին Արգոսից եւ այդպիսով իրենց վրէժխնդրական կրքին յազուրդ տաւ՝ կլինէին: Նրանք ուզում էին, որ Արգոսի «սիրտն յաւիտեան երվի»:

Շամիրամը, ի հարկէ, համաձայնում է նրանց առաջարկին, բայց պայմանով, որ լուրը չուտ չտարածւի: Ապա թէ ոչ՝ Արգոսի «կեռքի տակից» (ատամի տակից) այլեւս չեն ազատւի: Մանաւանդ որ նա տեղացի է, այլ «խէրն Հայաստանցի եւ ինքն էլ աֆատայ»: <sup>2)</sup>

Բայց Դօրաբջին ու Պեղոսը այդ վախից էլ նրան փրկում են: Նրանք դիւրութեամբ համոզում են նրան, որ մարդ թո՛ղ իր շահը պաշտպանի, նրա վրա ի՛նչ ուզում են՝ թող խօսեն: «Թող է՛նքան խօսեն — տկի պէս ուռեն» — առանց քաշելու ասում են նրանք:

Ես ինձ վնասեմ, ինչա՞յ կը խօսեմ.  
Է՛մքան բրբռան, ո՛րքան որ կուզեմ.  
Միայն իմ շախին խափանումն չելնեմ.  
Եթէ մեմք խալիս ունկնդիր ելնեմք,  
Միմ երկու օրում տէրտէր կը կանչեմք, <sup>3)</sup>  
Միմ օրէն միջում իսպառ կը մեռնեմք:

Թէեւ գրեածքում Պեղիկատորի նշանադրութիւնը կամ պսակադրութիւնը Լէյլիի հետ չկայ, չի կատարւում, բայց պէտք է ենթադրել, որ դա տեղի է ունեցել: Այդ երեւում է Գաճաճի խօսքերից, որը ըստ երեւոյթին Արգոսի միակ բարեկամն է, թէեւ նրա հանդէպ ծանր զանցառու էր դառնել:

Գետի ափին նա գտնում է Արգոսին եւ որպէս օրւայ հետաքրքրական նորութիւն, նրան հաղորդում է Լէյլիի ամուսնութեան լուրը.

1) Շփար-պրս. որս. 2) Ափար-պրս. պատուիաս, փորձանք: 3) Այսիմքն կմռնեմք:



—Ձերեկ յարակոն Լէյլին պսակվեց .

—Էդ ի՞նչ Լէյլիայ .

—Ձիտուի աղջիկն .

—Լէյլին որ պէտքեր քեզ խէտ պսակվեր :

Այսպէս, ուրեմն, այնքան տղեղ անցուղարձից յետոյ՝ Շամիրամը, գործիք դառնալով իր երկու չար խորհրդատուների ձեռքին, համաձայնում է իր որդու համար կնութեան առնել Լէյլին, որին մի անգամ խայտառակ ձեռով մերժել էր : Լէյլին հայրն էլ՝ Ձիտուն, իր երկու անգամ խաբած Արզոսին երրորդ անգամը նորից խաբելով՝ նրանից խլում է իր աղջիկը եւ տալիս այն տղային, որի կողմից այնպէս վատ կերպով մի անգամ արդէն մերժել էր ինքը :

Քաղքենի մտայնութեան ու քաղքենի բարքերի հարադատ արդիւնքն է սա : Ուր դրամը եւ անձնական շահն են հարցեր վճռողը — այնտեղ ամէն ինչ հնարաւոր է եւ թոյլատրելի :

Խեղճ Արզոսն էլ, երբ հաւաստիանում է, որ Գաճաճը ո՛չ «արաղայ պատմում» եւ ոչ էլ «խօշտաբայ»<sup>1)</sup> անում — մի երկար մենախօսութիւն է արտասանում, մարդ — արարածի, մանաւանդ կնոջ անպիտանութիւնը խարաղանում եւ յետոյ հաշտում եղածի հետ :

Աւելի. նա դեռ մխիթարում էլ է իրեն, որ դրանից տուժողը «ստախօսները» եւ «ուխտադրութները» պիտի լինեն, այսինքն՝ Ձիտուն ու Լէյլին : Եւ ուրեմն թող նրանք տխրեն ու իրենց մեղքը «լաց լինեն» : Իսկ ի՞նքը... ընդհակառակը. ոչինչ չի կորցրել : «Էս բանումն երբեք ինձ մնաս չելաւ» — ինքնաբաւական կերպով ասում է նա : Մանաւանդ, որ աշխարհում աղջիկը շա՛տ, իր գրպանն էլ լիքը. ում որ ուզի՝ կարող է առնել :

—Ինձ խմար աղջիկն ոչինչ պակաս չի .

Թո՛ղ վարքս ուղիղ, ջիքս լի ելնի .

Ես վաճառական միմ շրջող անձն եմ,

Յուրիշ երկրքում պսակվել կարեմ :

Դրանով էլ վերջանում է թատերգութեան բովանդակութիւնը :

Ե .

Մենք դիտմամբ «Լէյլի»-ի բովանդակութիւնը մի քիչ ընդարձակ ներկայացրինք եւ մէջբերումներով, որովհետեւ նախ՝ ուղեցինք մի որոշ գաղափար տալ նրա մասին, եւ երկրորդ՝ գիրքը շատ հազաւազիւ է, դուցէ միակ եզակի օրինակը, եւ ուրեմն ո՛չ ամենքին մատչելի :

1) Խօշտաբ — պրս. կատակ :

Նրա գրական քննադատութեան վրա կանգ առնել աւելորդ ենք համարում, որովհետեւ որպէս գրական՝ գեղարեւոտական մի երկ, մանաւանդ որպէս թատերգութիւն, շատ թոյլ է. աւելի թոյլ, քան «Խորադիմայ Դժողութեան»-ը, որը նրանից 11 տարի աւելի առաջ է հրատարակած եղել :

Գործողութիւն չկայ, հոգեբանութիւն չկայ, իսկ գործող անձանց ու նրանց գործերի փոխադարձ կապն էլ զուտ արտաքին է, մեքենական :

Բայց «Լէյլին» մեզ համար հետաքրքրական է ո՛չ որպէս գրական — գեղարեւոտական գրածք, այլ այն նպատակով, որ նրա անծանօթ հեղինակը գրել է իր առաջ : Նա իր այդ երկով կամեցել է ներկայացնել հնդկահայ քաղքենի դասակարգի կեանքը, իր բազմաթիւ յոռի երեւոյթներով : Դրա համար էլ նա վերցրել է բազմաթիւ դէմքեր — 30 գործող անձինք — իրենց բազմազան գործողութիւններով, իրար հետ յաճախ օրեւէ կապ չունեցող — որպէսզի աւելի հրաշարաւորութիւններ ունենայ այդ կեանքի բացասական պատկերը ըստ կարելւոյն լրիւ կերպով ներկայացնելու : Այդ պատկերը, ինչպէս ասացինք, շատ մոայլ է, յուսալատական : Հեղինակը ո՛չ մի լուսաւոր բան նրա մէջ չի տեսնում : Մարդկային հասարակութիւնը կամ իր բառով եթէ ասենք՝ մարդկային «ընկերակցութիւնը» հիմքից փտած է : Չկայ անկեղծ վերաբերմունք, չկայ բարեկամութիւն նոյն իսկ ամենամօտիկների միջեւ —

Ես ժամանակումս վտանգաւոր է

Հաւատալ ումեմ՝ քէ բարեկամ է :

Դրա գլխաւոր պատճառը նիւթապաշտութիւնն է, անձնական շահը, որ վարակել է ամենքին : Մարդիկ մինչեւ իրենց ոսկրների ծուծը վարակած են մէկ «հաճելի» ախտով — շահամոլութեամբ եւ պատրաստ են դրամի, շահի համար ամէն ինչ անելու : Մենոնէսը մինչեւ իսկ իր մահաւան մահճում «վաստակի» մասին է մտածում : Եւ այդպէս են ամենքը, մէկը միւսից վատ :

«Լէյլին» մեր թատրոնական գրականութեան մէջ իր պատաւաւոր տեղն ունի նաեւ ուրիշ երկու առաւելութիւնների համար .—

Առաջին՝ որ նա ԺԹ. դարի մեր տպագիր թատերգութիւնների շարքում — ի հարկէ, այսօրւայ տեսչերով — անդրանկագոյններից մէկն է, երկրորդը «Խորադիմայ»-ից յետոյ .

Երկրորդ՝ որ նա՛ էլ իր նիւթը վերցրել է հայ իրական կեանքից . այսինքն՝ բուսել է այն առողջ հողի վրա, ուր հետագայում պիտի կանգնէր ու բարգաւաճէր հայ թատերգութիւնը :

Նոր-Ջուղա .







պէս պարզ վարդապետ: Վերջապէս, Սայեաթ Նովան ինքն էլ վրացերէն այն երգերում, ուր յիշում է իր հոգեւորական լինելը, իրեն անւանում է միշտ վարդապետ եւ ոչ երբեք եպիսկոպոս:

Այս Ասատուրը հաստատում է, որ Ղուկաս կաթողիկոսի եւ իրակի թագաւորի գրաւորութեան մէջ յիշատակող Դաւիթ եպիսկոպոսը ծագումով Ղորղանեանների անշուշտ տոհմից էր: Ղորղանեանները իրակի Բ.-ի թագաւորութեան վերջին շրջանում շատ բարձր դիրք ունէին վրաց արքունիքում: Այդ Դաւիթին էր ուժ-գնօրէն պաշտպանում իրակի թագաւորը, ինչպէս եւ Վրաստանի ողջ արքունիքը: Վրաստանի հայերից Դաւիթ եպիսկոպոսին պաշտպանում էին այնպիսի անձնաւորութիւններ, ինչպէս, Արքեպիսկոպոս Յովսէփ Արղութեանը, իշխան Սողոմոն Արղութեանը, միշկար-բաշ\*) Յովսէփ Ղորղանեանը, միշկարբաշ իշխան Յովսէփ Բեհրու-թեանը, Թիֆլիս քաղաքի մելիք Դարչի (Մնացական) Բեհրութեանը եւ ուրիշներ:

Հախպատի վանքի պատմութեան մէջ, մինչեւ 18-րդ դարը, պատահում են մի քանի Դաւիթ եպիսկոպոսներ: Դրանցից մէկը, Ախ-վերդեանի ասելով, «Հաղպատու առաջնորդում» էր Սայեաթ Նովայի ժամանակները: Այդ եպիսկոպոսներից ոչ մէկը, սակայն, չի համապատասխանում Թումանեանի ասածներին, եւ Սայեաթ Նովայի եպիսկոպոս լինելու պարագան, Թումանեանից դատ ոչ ոքի յայտնի չէ:

Սայեաթ Նովայի եպիսկոպոսութեան խնդիրը հանգամանօրէն քննութեան է ենթարկել եւ Մելիքսէթբեկը եւ յանգել այն եզրակացութեան, որ Ղուկաս կաթողիկոսի գրաւորութիւնը իրակի թագաւորի հետ վերաբերում է ոչ թէ Սայեաթ Նովային, այլ Դաւիթ եպիսկոպոս Ղորղանեանին: Լէոնիձէն իր հերթին տեղեկութիւններ է հաղորդում Դաւիթ եպ. Թաւրիզարեանի գոյութեան մասին, որ ժամանակակից էր Սայեաթ Նովային, եւ Ղուկաս կաթողիկոսի գրութիւնները կարող էին վերաբերել նրան:

Ինչպէս արդէն ասել ենք, Սայեաթ Նովայի հոգեւորական անունը Ստեփաննոս էր. այդ անունը պէտք է պահւած լինէր եւ վանքում: «Կալմաստբա»-ն վկայում է, որ 1800-801 թ. Եոնա խելաշվի-լին տեսել է Սայեաթ Նովային Հախպատի վանքում իրրեւ հասարակ վարդապետ:

Այս ամենը հիմքից հերքում է Յ. Թումանեանի տեսութիւնը Սայեաթ Նովայի եպիսկոպոս լինելու մասին: Մեր բանաստեղծը ե-

\*) Միշկարբաշ - պալատական բարձր պաշտօն. grand veneur

ղել է սովորական վարդապետ եւ, որպէս այդպիսին, ոչնչով աչքի չի ընկել ուրիշ վարդապետների շարքում: Լուսարար անունը, որ տրւում է նրան, եպիսկոպոսներին յատուկ բարձր անուն չէ - այդ դէպքում կասէր «աւագ լուսարար», «մեծն լուսարար» - այլ վանական կեանքում համեստ մի պաշտօն: Եւ բանաստեղծը ինքն էլ այդ իմաստով է ներկայացնում իր «լուսարար» կոչումը:

Հաղպատու լուսարար Սայեաթ Նովին եմ,  
Մէ կանթեղիս վարելու ձեք չունեմ:

## XIX

### ՍԱՅԵԱԹ ՆՈՎԱՅԻ ԸՆՏԱՆԻՔԸ

Սայեաթ Նովայի սիրահարութիւնը, որի մասին խօսեցինք Ժ2. գլխում, տեսեց բաւական երկար, մինչեւ 1759 թ. կէսերը, երբ տեղի ունեցաւ վերջնական խզումը սիրահարների միջեւ: Խզումի պատճառը, ըստ երեւոյթին, պէտք է փնտրել սիրուհու հոգեկան անկա-ճառը, ըստ երեւոյթին, պէտք է փնտրել սիրուհու հոգեկան անկա-յուն յատկութիւնների մէջ. նա, ինչպէս տեսանք, սէր էր բաշխում ոչ միայն մեր բանաստեղծին, այլ միաժամանակ եւ ուրիշներին: Սայեաթ Նովան այդ տեսնում էր եւ սրտի ցաւով ու հոգեկան բարդ ապրումներով աստիճանաբար եւ դանդաղ հեռանում էր սիրուհուց, մինչեւ որ վերջնականապէս լքեց նրան:

Վրացերէն երգերի մէջ տրւած է խզումի պատճառների բացատրութիւնը, իսկ հայերէն երգերում ներկայացւած են բանաստեղծի հոգեկան ապրումները: Ահա մի քանի հատուած՝ յօրինւած խզումի օրերին: 1758 թ. № 22,5 երգում Սայեաթ Նովան ասում է.

Մերմելուս համար չի'մ հսկում, ցիգի համա իմ լալու:  
Նոյն 1758 թ. մայիս 10-ին, № 46,4 երգում բանաստեղծը այսպէս է արտայայտւում.

Ով որ ինձ շինից դիվանա,  
Սուրբ կարապետէն խիվանա,

Այսինքն՝ ով ինձ խելահան արաւ, թող Սուրբ կարապետից ա-նիծւի:

Բայց Սայեաթ Նովայի այդ օրերի տրամադրութիւնները ամե-նից լրիւ կերպով արտայայտւած է 1759 թ. սկզբին յօրինւած № 34 հայերէն երգում, որից առաջ բերենք ամենից ցցուն կտորները.

Աշխարհս՝ մի փանջարա է, - քաղերումէն բեգարիլ իմ,  
Էրեգ լաւ էր կանց վուր էսօր, - վաղերումէն բեգարիլ իմ:  
Մարք համաշա մէկ չի՛ ըլի, - խաղերումէն բեգարիլ իմ:  
Գուզիմ քոչի բըլբուլի պէս, - բաղերումէն բեգարիլ իմ:



Ղուրթըս էնդու ֆամփու չէ՝ գնում՝ շատացիլ է խալխի սուրն,  
 Բըսանըն՝ մէ դուլ չի՛ն պահում, աղէքումէն՝ քէգարիլ իմ:  
 Դօստիրըս՝ դուշման ին դարի - եաղէքումէն\*) քէգարիլ իմ:  
 Սայեաթ Նօվէն ասաց՝ դարդըս կանց մէ ֆարին\*\*)  
 Զունիլ վաղվան ֆաղցըր փառֆն, հիմի դառն շատացիլ է.  
 Բըլբուլի պէս էնդուր կուլամ՝ վարքիս եարըն շատացիլ է,  
 Զի՛ն քօղնում վարտին բացվելու, - ֆաղէք(լ)ումէն քէգարիլ իմ:

Այս տողերի մէջ ներկայացած պատկերը, անշուշտ, վկայում է Սայեաթ Նովայի հոգեկան ծանր ապրումների մասին: Բանաստեղծը հիասթափւած՝ պատրաստ է խզելու ամէն կապ անցեալի հետ: Նրան այլեւս ոչինչ չի հրապուրում՝ ո՛չ սիրուհին, ոչ սաղանդարի պաշտօնը երեւելի մարդկանց մօտ, ոչ իսկ իր տաղերը. նա փնտրում է կեանքի նոր բովանդակութիւն, նո՛ր կեանք:

Եւ ահա, այս ապրումների ազդեցութեան տակ, Սայեաթ Նովան սկսում է մտածել ընտանիքի մասին, եւ արդէն 1759 թ. վերջերը, յամենայն դէպս, ոչ ուշ քան 1760 թ. սկիզբը ամուսնանում է: Նրա կինը, ըստ երեւոյթին, Թիֆլիսեցի էր, Մարմառ անունով, ինչ որ Շավերդի դուստրը՝ Շավերդէնց աղջիկը: Մելիքսէթընէն թաղրում է, որ այս Շավերդը իքսատցի էր, այսինքն՝ նոյնպէս վրաստանցի հայ:

Սայեաթ Նովայի ամուսնական կեանքը երկար չտեւեց. 1768 թ. Մարմառը մեռաւ եւ թաղեց Խոջիվանքի գերեզմանատանը: Ախվերդեանը 1852 թ. առաջ տեսել է նրա տապանաքարը գերեզմանատան հին մասում. քարի վրա գրած է եղել վրացերէն. «Բրօնիկօնի 45ի (1768 թ.) էս գերեզմանում կամ Սայեաթ Նովու կողակից Մարմարն. ինձ ողորմի ասէք»:

Մեզ չի հասել եւ ոչ մի տեղեկութիւն այն մասին, թէ ինչպէս է դաստորեւ Սայեաթ Նովայի ընտանեկան կեանքը, բայց պէտք է ընդունել, որ ամուսնութիւնը մեծ չափով ազդեց բանաստեղծի ստեղծագործութեան վրա: Յայտնի է, որ Սայեաթ Նովայի ձեռքով գրած հայերէն եւ թիւրքերէն երգերի մէջ չկայ ոչ մէկը, որ 1759 թ. յետոյ նշանակած լինի: Այս փաստից Գ. Ասատուրը եզրակացնում է, որ 1759 թ. Սայեաթ Նովան բոլորովին թողել է սաղանդարութիւնը եւ հոգեւորականութիւն է ընդունել, մինչդեռ հիմք կայ կարծելու, թէ Սայեաթ Նովան վրաց արքունիքը թողել է 1762 թ.:

\*) Եաղի - բշմամի: \*\*) Հարի - վտակ:

Անձնապէս ինձ թւում է, որ Սայեաթ Նովայի ստեղծագործութեան մէջ ամուսնութիւնից յետոյ կատարւել է խորունկ բեկում: Նա այլեւս չէր ձգտում արժանանալ սիրուհու փոխադարձ սիրոյ, է՛լ նախանձի զգացմունք էր մնացել, չէր վախենում կորցնել սիրուհուն, սիրային ստեղծագործութեան մղումներ դոյութիւն չունէին այլեւս, այդ պատճառով բանաստեղծն իր հետագայ երկերի մէջ Դաւթարում արձանագրելու արժանաւոր բան չի գտել: Նա երգում էր հին երգերը եւ եթէ նոր երգ էլ էր յօրինում, դրանք հին եղանակների կրկնութիւններ էին: Ամուսնութեան բերած ներքին հոգեկան անդորրութիւնը զրկեց նրան ստեղծագործական թռիչքից: Նրա գլխին եկաւ նոյնը, ինչ որ ուրիշ բանաստեղծների հետ էլ է պատահում: Այդ այն հոգեվիճակն է, որ այնպէս գեղեցիկ կերպով արտայայտել է Բայրոնը՝ «Դոն - Ժուան»-ում.

Think you, if Laura had been Petrarch's wife,

He would have written sonnets all his life,

(Կարծում ես դու, որ եթէ Լաուրան լինէր Պետրարքայի կինը, իր ամբողջ կեանքում նա հնչակնե՞ր կը գրէր):

Այս ամուսնութիւնից Սայեաթ Նովան չորս զաւակներ ունեցաւ. անդրանիկը՝ Մելիքսէթ՝ ծնւեց 1760 թ.: Երկրորդը՝ Օհան (Իվան)՝ մեռաւ Պետերբուրգում 1823 թ.: Երրորդը՝ Սառա: Զորրորդը՝ Մաւրիամ: Երկու որդիներն էլ ընդունեցին հօր գրական անունը. Օհանը կոչւում էր Սէյիդով, իսկ Մելիքսէթը եւ իր յաջորդները՝ Սայեաթնով: Մելիքսէթը ունեցաւ զաւակներ, որոնցից մէկը Թիֆլիսում յայտնի քահանայ էր՝ Տէր-Մովսէս Սայեաթնեան, որից Ախսում յայտնի քահանայ էր՝ Տէր-Մովսէս Սայեաթնեան, որից Ախսում տեղեկութիւններ: Տէր-Մովսէսը ունէր մի որդի՝ երկրաչափ պաշտեղեկութիւններ: Տէր-Մովսէսը ունէր մի որդի՝ երկրաչափ պաշտեղեկութիւններ: Տէր-Մովսէսը ունէր մի որդի՝ երկրաչափ պաշտեղեկութիւններ: Տէր-Մովսէսը ունէր մի որդի՝ երկրաչափ պաշտեղեկութիւններ: Տէր-Մովսէսը ունէր մի որդի՝ երկրաչափ պաշտեղեկութիւններ:

Սայեաթ Նովայի երկու որդիներն էլ բանաստեղծական որոշ շնորհք են ժառանգել հօրից: Անդրանիկ որդին՝ Մելիքսէթը, (թւում է թէ քահանայ եղած պիտի լինի) իր հետը Մովզով է տարել հօր Դաւթարն ու սաղը եւ մտերիմների շրջանում երգում ու նաւագում էր: Օհանը նախապէս առանց յաջողութեան առեւտրով էր զբաղւում հիւսիսային Կովկասում, ապա վրաց արքայազնի հետ տեղափոխւեց Պետերբուրգ եւ մնաց նրանց մօտ իբր սաղանդար: Նա յիշողութեամբ



գրի առաւ հօր երգերը մի երկրորդ Դաւթարի մէջ, որ պահւած է Պետերբուրգի Գիտութեանց ձեմարանի Ասիական Թանգարանում:

Բացի այս հատուկուր տեղեկութիւններից Սայեաթ Նովայի ընտանիքի մասին, կայ նաեւ մի յուզիչ պատկեր բանաստեղծի անդրանիկ որդի Մելիքսէթի (վրացերէն կրճատ՝ Մելքօ) կեանքից, որ պրոֆ. Մելիքսէթեզը հանել է Սայեաթ Նովայի հիմնական Դաւթարից:

Այդ Դաւթարը առաջ պահւում էր բանաստեղծի կնոջ մօտ: Վերջինիս մահից եւ Սայեաթ Նովայի կուսակրօնութիւն ընդունելուց յետոյ երեխաները ապրում էին իրենց պապի՝ (վրացերէն) Շաւերդա պապոյի մօտ: Երբ փոքրիկ Մելքիսէթը-Մելքօ սկսեց գիր-կարդում սովորել, պապը երբեմն նրան տալիս էր հօր Դաւթարը, որի լուսանցքների վրա մանուկը վարժութեան համար գրեր էր գրում: Այդ գրերի մօտ կան պապի մականգրութիւնները՝ Թիֆլիսի վրաց բարբառով, խօստ անգրագէտ ձեւով: Առաջին երկու մականգրութիւնները վերաբերում են Մելքօին, իսկ վերջին երկուսը ուղղւած են Մելքօի հօրը՝ մեր բանաստեղծին, որ այն ժամանակ երեւի արդէն վարդապետ էր:

Ահա այդ մականգրութիւնները.

- 1). Եղիբ բարօր, Մելքօ:
- 2). Քո պապի (պարոն) Շաւերդի դոյզ աչքերի լոյս աչակերպ Մելքօ, հէնց որ իմացաւ, իսկոյն ցոյց տւեց իմացած լինելը:
- 3). Թո՛ղ բարօր լինի քո որդի Մելքօն, ով տէր Յիսուս Քրիստոս:
- 4). Թո՛ղ բարի յիշեն քո որդի Մելքօին:

Այս կցկտուր ու պարզունակ խօսքերի մէջ, Դաւթարի լուսանցքների վրա, այնպէ՛ս կենդանի, երեւում են թէ խելացի մանուկը, թէ նրա գորովալից ու քնքոյշ պապը եւ թէ հեռու տեղ ապրող հայրիկը, որին կարօտով յիշում են ուրախութեան վայրկեաններին:

## XX

### ՍԱՅԵԱԹ ՆՈՎԱՅԻ ՄԱՀԸ

Սայեաթ Նովայի մահւան պարագաները եւ ժամանակը առանձին վէճի առարկայ չեն եղել: Բոլոր հետազոտողները աւելի կամ պակաս չափով ընդունել են Գ. Ախվերդեանի դեռ 1852 թ. առաջարկած վարկածը: Միայն 1930 թ. Գ. Լէոնիձէն եւ պրոֆ. Լ. Մելիքսէթեզը, իրարից բոլորովին անկախ, քննութեան ենթարկեցին այս հարցը եւ եկան այն եզրակացութեան, որ Ախվերդեանի տեսա-

կէտը սխալ է: Լէոնիձէն ենթադրում է, թէ Սայեաթ Նովան մեռել է բնական մահով 1801 թ., կամ աւելի ուշ: Իսկ Մելիքսէթեզը կարծում է, թէ Սայեաթ Նովան ոչ թէ սպանւել է Թիֆլիսի գերաման ժամանակ, 1795 թ., այլ մեռել է աւելի ուշ, Հախպատում, հաւանաբար, 1801 թ., ինչպէս ասում է Պլ. Իոսելիանին:

«Շատին յայտնի է Թիֆլիզում», գրում էր 1852-ին Գ. Ախվերդեան, «որ Սայեաթ Նովէն՝ լսելով Աղա-Մահմէդ-խանի հեծելազօրի Վրաստանի սահմանին մօտենալն, միտ է բերում իր զաւակներուն ու գալիս է Թիֆլիզ: Էս տեղաց ուղարկում է նրանց Մօղզօկ, ուր սրանք զցում են իրանց բնակութիւնն: Սայեաթ Նովէն դնում է իր զաւակներուն ճանապարհ թէ չէ, Պարսիկքն մտնում են Թիֆլիզ: Հաղպատու առաջնորդարանն հէնց բերդի տակն ըլելով՝ թշնամիքն տուն են ընկնում եկեղեցու դաւիթն, ու կցում են կոտորելն ու կոտորելն: Սայեաթ Նովուն վրայ են հասնում եկեղեցում աղօթք անելիս: Սրանից պահանջում են դուրս գալն ու հաւատն ուրանալն բայց կրօնաւորն Պարսից թրերու տակն աւանդում է հոգին՝ ասելով.

Չըխմանամ քլիսադան, դօնմանամ իսադան»\*)

«Էսպէս խալիսի նօքարն նահատակում է որպէս ծառայ Աստուծոյ սեպտեմբեր ամսին 1795ին:

«Մէքանի օրից՝ Պարսից Թիֆլիզէն դուրս գնալուց յետոյ, վեր են առնում նրա մարմինն ու թաղում են Մեծ բերդի եկեղեցու հիւսիսային փոքր դրան առջեւ: Թէպէտ Սայեաթ Նովու գերեզմանն չունի քար զցած, բայց էսպէս պատմում են նրա թաղման պատահողներն»:

Սայեաթ Նովայի մահւան այս պատմութիւնը, Ախվերդեանը առել է Թիֆլիսում շրջան անող աւանդութիւնից («Շատին յայտնի է Թիֆլիզում») եւ, իրր թէ, Սայեաթ Նովայի յուղարկաւորութեան ներկայ գտնւած ծերերի պատմածներից: Կենսագրութեան այս ձևը այնուհետեւ նւիրադործւեց եւ աւելի կամ նւազ ձեւափոխութիւններով կրկնւում էր Սայեաթ Նովայի մասին խօսող բոլոր հեղինակների գրածքներում, ինչպէս Պոլոնսկիի, Մթաժմինդելիի, Քիշմիշեանի, Պոտտօի, Յ. Թումանեանի, պրոֆ. Պանանիշվիլիի, Վալ. Բրիւսովի, պրոֆ. Կեկելիձէի, Գրիշաշվիլիի, Լէօի եւ ուրիշ շատերի: Ոմանք հաւաստիացնում էին, որ Սայեաթ Նովան մեռցւել է ե-

\*) Լէօնիձէն առաջարկում է կարդալ երկտող ռտմաւորի ձեւով -

Իսա - դամ դօմ - մամամ

Քլիսա - դամ չըլս - մամամ



կեղեցում, աղօթելիս, ուրիշներ՝ թէ սպանւել է կեղեցուն շնորհիւ, սաղ նազելիս և երգով Թիֆլիսի խաղաղ բնակիչներին վերաբերմամբ դուրս ու ներողամտութիւն խնդրելիս, եւայլն: Իսկ Լէօն նոյն իսկ պնդում է, թէ Սայեաթ Նովան սպանւել է ոչ թէ կեղեցում, այլ ճանապարհին՝ դէպի շահի բանակատեղին, ուր գնում էր խնդրելու համար, որ Թիֆլիսի խաղաղ բնակչութիւնը խնայել:

Իսկորովին առանձին տեղ է զբաղում Պլատոն Իոսելիանիի պընդումը, թէ Սայեաթ Նովան վախճանւել է 1801 թւին: Իոսելիանին՝ Իրակլի Բ. և Գէորգի ԺԳ. թագաւորների տաներէցի որդին՝ ծն. 1809 թ., իր հօրից ստացել էր շատ տեղեկութիւններ վրաց արքունիքի կեանքի մասին: Նրա հաղորդած տեղեկութիւնները առհասարակ ճիշտ են: Իր «Գէորգի ԺԳ. թագաւորի կեանքը» վրացերէն գրքում նա յայտնում է, որ Սայեաթ Նովան մեռել է 1801 թ.:

Իր առաջ բերած աւանդութեան որոշ հաստատութիւն է տեսնում Ախվերդեանը և աշուղ Շամչի Մելքոյի մուսքագադի (երգի տեսակ) մէջ, ուր նկարագրւում է Թիֆլիսի զբաղումը պարսիկներէց: Շամչի-Մելքոյն ժամանակով Սայեաթ Նովայի ամենից մօտիկ աշուղներից էր, նրա եռանդուն հետեւորդը, թերեւս աշակերտը: Ժամանակակից էր Աղա Մահադ խանի արչաւանքին, որին զոհ տւեց իր հօրը, մօրը, եղբորը և երկու քոյրերին: Շամչի Մելքոյի այն երգում, որ ամբողջապէս տպւած է Միանսարեանի «Քնար Հայկական»-ում (էջ 564-5), ի միջի այլոց ասւած է.

Վարդապիտմիր կոտորեցին, լէշիր էր ածած տէրտէրի:

Շամչի Մելքո սպանւած վարդապետների և տէրտէրների անուն չի տալիս, որ Ախվերդեանին հնարաւորութիւն է տալիս ենթադրելու, թէ կոտորւած վարդապետների թւում եղել է և Սայեաթ Նովան:

Ժամանակի ընթացքում երեւան եկաւ և մի ուրիշ աղբիւր, որ խօսում է նոյն դէպքի մասին: Այդ Սերովբէ Գրիչն է, որ նկարագրել է Թիֆլիսի զբաղումը Աղա Մահադ խանի ձեռքով: Այդ տեղ, ի միջի այլոց, ասւած է հետեւեալը.

«Միանգամայն գերծաւ և Մոդնու սուրբ Գէորգեայ հրաշալի մասն, որոյ սակի մահու չափ չարչարեցաւ աւագագոյն քաղանայն նոյն կեղեցուն ընթացքով և խոհեմամիտ տէր Գրիգորն Տէր-Շմաւոնեանց, որ և գրեթէ կենդանի նահատակ իսկ եղեւ ի փառս Աստուծոյ՝ և ի պատիւ սրբոյ Գէորգեայ որ լիցի միջնորդ առ Աստուծոյ» և ի պատիւ սրբոյ Գէորգեայ որ լիցի միջնորդ առ Աստուծոյ:

տրուած զսոյն հաւատարիմ ծառայէն գրել զանունն ի դպրութեան կենաց. ամէն»<sup>\*</sup>.)

Իր համառօտ պատմութեան մէջ Սերովբէ Գրիչը մանրամասնօրէն ներկայացնում է Թիֆլիսի զբաղման և աւերման պարագաները: Հաղորդում է նաեւ անունը այն տէրտէրի, որի «լէշիր էր ածած»: Դա տէր Գրիգոր Տէր Շմաւոնեանն է, բայց սպանւած վարդապետների անուն չի տալիս և ոչ էլ յիշում է նրանց մասին: Մինչդեռ շատ տեղին էր, որ այդ հանգամանօրէն արւած պատմութեան մէջ չիւէր և Սայեաթ Նովայի հաւատի համար նահատակւելը, որ յար և նման էր տէր Գրիգորի նահատակութեան: Եթէ Սայեաթ Նովան սպանւած լինէր Թիֆլիսի զբաղման ժամանակ, դժւար թէ Սերովբէ Գրիչին յայտնի չլինէր, հետեւաբար և տեղ կը բռնէր նրա պատմութեան մէջ:

Հայերէն մի աղբիւր էլ՝ Կայ Հախպատի միաբանների սպանութեան մասին Աղա-Մահադ խանի արչաւանքի ժամանակ: Դա Հախպատ և Սանահին վանքերի նկարագրութիւնն է Ղրիմեցի Յովհան վարդապետի<sup>\*\*</sup>) ձեռքով, ուր պատմում է, թէ ինչպէս պարսիկները վարդապետի հախպատի առաջնորդարանը Թիֆլիսում, բերդի թագրւում: Այդտեղ ասւած է հետեւեալը. «Երբ Աղա-Մահադ խանը արչաւեց Վրաստանի վրա, Հախպատի վարդապետները պահեցին Թիֆլիսում: Պարսիկ յառաջապահ զօրամասը, որ բաղկացած էր մազանդարանցիներից, քաղաքը զբաղելիս, ամենից առաջ մտաւ բերդի մեծ կեղեցին, ուր թաղեւած էին հախպատի վարդապետները: Թշնամին կոտորեց վարդապետներին, կեղեցին թալանեց, իսկ վանահօրը գերի տարաւ Գանձակ»:

<sup>\*</sup>) Սերովբէ Գրիչ. «Համառօտ պատմութիւն աւիրեցման փայտակարան Մայրապետիս ի խանէն Աղա-Մահադի 1795 և ի 11 սեպտեմբերի». «Դիւան Հայոց Պատմութեան» Գիրք Ժ., էջ 353-374:

Սերովբէ Գրիչը, ի միջի այլոց, ասում է, թէ այդ օրերին ռուսական զօրքերը որ 1783 թ. դաշնագրով պարտաւոր էին պաշտպանել Թիֆլիսը պարսիկներից և քիւրդներից, հեռացան վրաստանից կովկասեան ռուս բանակի հրամանատարի կարգադրութեամբ, որ կաշառւած էր պարսիկներից. նոյնը պնդում է և վրաստանի վերջին քաղաքապետ Դաւիթը:

<sup>\*\*</sup>) Մի մասը ռուսերէն քարգմառութեամբ և փրանսերէն հակիրճ ամփոփումով հրատարակւած է Brosset "Memoire de l'Académie des Sciences S.P.B." VI, N 6 հատորում: Միւսը Տէր-Աւետիսեանը՝ Նոր-Ջուղայում պատրաստել է այդ վաւերագիրը հրատարակութեան համար: Լէոնիձէն, որից փազում ենք այս պատմութիւնը, օգտւել է Ս. Տէր-Աւետիսեանի դեռ անտիպ ձեռագրից:



Այս վկայութեամբ Շամշի Մեղքօի երկրորդ տեղեկութիւնն էլ հաստատուում է, այստեղ էլ սպանւած վարդապետների շարքին Յովհանն Դրիմեցին չէ տալիս Սայեաթ Նովայի անունը: Լէոնիձէն իրաւամբ զարմանում է, թէ ինչպէս Յովհանն Դրիմեցու նման «հախպատցի մի հայրենասէր» լուծեամբ է անցնում Սայեաթ Նովայի պէս մի ժողովրդական երգչի հաւատի համար յանձն առած նահատակութեան վրայից: Եւ Լէոնիձէի զարմանքը, ի հարկէ, անտեղի չէ:

Նմանապէս լուռ են անցնում Սայեաթ Նովայի նահատակութեան վրայից եւ ուրիշ երկու հայ ահանատեսներ, որոնք անում են Թիֆլիսի դրաման եւ աւերման պատմութիւնը: Առաջինը Յովհաննէս աւագ քահանայ Ոսկերչեանցն \*) է: Նրանից յետոյ գալիս է Յարութիւն Արարատեանը, որ թողել է իր կենսագրութիւնը, որի մէջ մանրամասնօրէն նկարագրւած է Թիֆլիսի աւերումը պարսիկների կողմից:\*\*) ....

Գ. Լեոնեանը, որ Գ. Ասատուրի հետ միասին, խորապէս վերդուլած է Գ. Լէոնիձէի եւ Լ. Մելիքսէթբեգի կատարած հետազոտութիւնների առթիւ, որ սրանք ոչնչացնում են Սայեաթ Նովայի նահատակութեան գեղեցիկ պատմութիւնը, բոլորն կերպով յարձակում է երկու հետազոտողների վրա, պնդելով, թէ Յ. Արարատեանի գրածքը ճանաչւած է կեղծ\*\*\*): Գ. Լեոնեանի այս պնդումը ճիշտ է մասամբ միայն, որովհետեւ այնտեղ, ուր խօսւում է ոչ անձնական բնոյթ կրող նիւթերի մասին, Արարատեանի արած պատմութիւնները բաւական ճիշտ են: Մնաց որ Արարատեանի գրածքը առաջ է բերում սոսկ իրրեւ երկրորդական տւեալ, լրացնելու համար հիմնական փաստերը:

Թիֆլիսի դրաման ժամանակակից վրացիների հաղորդած տեղեկութիւնները է'լ աւելի նիւթ են տալիս կասկածելու Ախլերդեանի

\*) Ոսկերչեանցի պատմութեան հայերէն բնագիրը տպւած է «Կոունկ Հայոց Աշխարհ»-ում, 1862 թ. № 2 եւ 8: Ֆրանսերէն քարգմանութիւնը՝ Klaproth, "Mémoires relatifs à l'Asie", Paris, 1824: Ռուսերէն հատւածներ՝ «Կաւկազական Ստարինա», 1873, Ալ. Երիցեանի քարգմանութեամբ:

\*\*) «Արտեմիյ Արարատսկու կեանքը, գրւած իր ձեռքով, քարգմանւած հայերէնից ռուսերէն»։ Ս. Պետերբուրգ, 1813, հատ. I, II.

\*\*\*) «Յարութիւն Արարատեանի կեղծիքը», պարզեց Ա. Կ. Ս., Բաբու, 1894: Արիստ. Եպ. Սեդրաբեանի գրքոյկը, ուր մանրամասն քննութիւններով ու համեմատութիւններով ցայց է տրւած, որ Արարատեանի գրածները իր մասին ճիշտ չեն:

առաջ բերած աւանդութեան մասին: Դրանք Վրաստանի վերջին թագաւոր Գէորգի ԺԳ.-ի երեք որդիներն են, արքայազն Դաւիթը, Թէյ-մուրադը եւ Իոանը: Պէտք է ի նկատի ունենալ, որ Սայեաթ Նովայի հոչակը մնաց անաղարտ վրաց արքունիքում: Նրա երգերը երգում էին հետագայ սլաւտական աշուղները, նրան հետեւում էին բանաստեղծներն ու երգիչները, նրա անունը ամենքի բերանին էր: Արքայական ընտանիքի անդամների յափշտակութիւնը Սայեաթ Նովայի երգերով այնքան մեծ էր, որ երբ Վրաստանի անկախութեան անկումից յետոյ արքայական ամբողջ տունը տարագրւեց Ռուսաստան, թագաւորի որդիները իրենց մօտ բերին Սայեաթ Նովայի որդի Իվան Սէյիդովին, որի միակ պարտականութիւնն էր երգել հօր երգերը: Բոլոր այդ արքայորդիները շատ լաւ գիտէին, թէ ով էր Սայեաթ Նովան, զնահատում էին շատ բարձր նրա ստեղծագործութիւնը եւ չէին կարող չլիչել իրենց սիրելի անձնաւորութեան ողբերգական մահը, եթէ այդպիսի մահ տեղի ունեցած լինէր:

Արդ՝ երեք կղբայրներից անդրանիկը՝ արքայազն Դաւիթը թողել է «Նիւթեր Վրաստանի Պատմութեան» գրւածքը,\*) ուր Թիֆլիսի դրաման պատմութեան նւիրւած էջերում մանրամասնօրէն խօսւում է Թիֆլիսի մօտ եղած ճակատամարտի մասին, արւում է սլաւտական սաղանդար հայադղի Աղաջան Ղուլամանաշվիլիի գերի ընկնելու պատմութիւնը, յիշում են քաղաքի դրաման ժամանակ սպանւած քիչ-շատ յայտնի քաղաքացիների անունները, վերջապէս, տրւում են Կիտա Ամբարդանաշվիլիի\*\*) հարսի նահատակութեան մանրամասնութիւնները՝ նա գերի էր տարւել Թաւրիզ եւ մերժելով ընդունել մահմեդականութիւն՝ գրւել էր տոպրակի մէջ եւ դաշունահար սպանւել էր: Նրա գերեզմանը Թաւրիզում ուխտավայր էր, ուր գալիս էին բժշկութիւն խնդրող հիւանդները եւ յաճախ հեռանում էին ասպաքինւած: Աւելի յարմար տեղ կարելի չէ պատկերացնել՝ յիշելու համար եւ Սայեաթ Նովայի նահատակութիւնը, մի անձի, որ շատ աւելի մօտիկ էր հեղինակի սրտին, քան Ամբարդանաշվիլիի հարսը, բայց ոչ մի խօսք չկայ այդ մասին: Հէնց միակ այս փաստը բաւական է կասկածի տակ դնելու Ախլերդեանի աւսածը:

\*) Հրատարակւած 1906 թ. Թիֆլիսում: Ֆրանսերէն քարգմանութիւնը՝ Brosset, "Histoire de la Géorgie", I. II, 2ème partie.

\*\*) Հայ Ամբարտանաշվիլիի տոհմը Վրաստանում ժառանգաբար կառավարում էր պետական պահեստները:



Արքայազն Թէյմուրազն էլ գրել է Աղա-Մահմադ խանի ար-  
չաւանքի եւ Թիֆլիսի գրաւման մասին:\*) Նրա մանրամասն եւ  
խիստ հետաքրքրական պատմութեան մէջ յիշուած է, ի միջի այլոց,  
Թիֆլիսի քաղաքացիները, այսինքն՝ հայերը կաղմակերպած կամա-  
ւորական խմբի փայլուն մասնակցութիւնը Թիֆլիսի պաշտպանու-  
թեան դործում: Խմբի հրամանատարն էր ոմն Մաշաբեկը, Իրակ-  
լիի արքունի նւագախմբի վարիչ եւ գերատան, կամ, ինչպէս կոչուած  
է Թէյմուրազը, մուսիկի դա կոմպոզիտոր: Կամաւորների այդ խում-  
բը մի քանի անգամ յարձակւել է թշնամու վրա՝ Մաշաբեկի ուրախ  
ու զւարթ երգերի եւ նւագի ընկերակցութեամբ: Նոյն իսկ ինքը Ա-  
ղա-Մահմադ խանը խոստովանել է այդ խմբի աչքի ընկնող քաջու-  
թիւնը:

Նոյն Թէյմուրազը իր գրքերի եւ ձեռագիրները մեզ արդէն ծանօթ  
ցանկում հաղորդում է մի շարք կենսագրական տեղեկութիւններ  
Սայեաթ Նովայի մասին եւ դարձեալ ո՛չ մի խօսք, ոչ մի ակնարկ  
անգամ՝ բանաստեղծի նահատակութեան մասին: Թէյմուրազը ամե-  
նից մօտն էր Սայեաթ Նովային: Նրա հրամանով էր, որ բանաստեղծի  
որդի Օհանը գրի առաւ հօր երգերը: Այս պայմաններում դժւար է  
ենթադրել, որ Թէյմուրազը չէր կարող չգիտնալ Սայեաթ Նովայի  
եղերական վախճանի մասին եւ գիտնալով հանդերձ՝ լռէր ու չար-  
ձանագրէր մի գէպք, որ է՛լ աւելի պիտի զեղեցկացնէր իր սիրած  
բանաստեղծի բարոյական պատկերը:

Վերջապէս, երրորդ եղբայրը՝ արքայազն Եոանը հեղինակն է  
կամ խմբագիրը՝ պատմական - խրատական «Կարմատորա» վէպի,  
որի մասին յիշել ենք մէկից աւելի անգամներ: Այդ տեղ նա ամե-  
նայն մանրամասնութեամբ պատմում է, թէ ինչպէս Սեւաշվիլին  
տեսնւել է Սայեաթ Նովայի հետ, Հախպատում, Գէորգի ժ. Գ.-ի  
թագաւորութեան վերջին տարիները, այսինքն՝ Աղա-Մահմադ խանի  
արչաւանքից յետոյ, 1800 թւին:\*\*)

Այսպէս, ուրեմն, Վրաստանի վերջին տարիների պատմութեան  
մասին խօսող երեք արքայորդիների երկուսը, հնարաւորութիւն եւ

նոյն իսկ անհրաժեշտութիւն ունենալով հանդերձ յիշելու Սայեաթ  
Նովայի եղերական վախճանի մասին, ոչ մի բառով չեն յիշում իսկ  
երրորդը՝ Եոանը՝ առում է, թէ Սայեաթ Նովան 1800 թ. աշնանը  
գեռ ողջ եւ առողջ էր: Այս փաստերը իրաւունք են տալիս ընդունե-  
լու, որ Պլատոն Եոսելիանի հաղորդած տարեթիւր Սայեաթ Նովա-  
յի մահւան մասին, այսինքն՝ 1801 թ., ճիշտ է:

Սակայն, կայ մի շատ կարեւոր հանգամանք, որ Գ. Ասատու-  
րին էլ, Գ. Լեւոնեանին էլ ստիպում է պաշտպանել աւանդական  
տարեթիւր: Բանաստեղծի որդի Իվան Սէյիդովը իր հօր երգերից մի  
քանիսի տակ գրել է ծանօթութիւններ, որոնց մէջ հօր մասին ա-  
ռում է՝ «Հանգուցեալ» (մեցվալէ, մեցվալեբուլի), այնպէս՝ ինչ-  
պէս սովորաբար խօսում են բնական մահով մեռած մարդկանց մա-  
ւին, իսկ ծանօթութիւններից մէկում, որի հայերէն թարգմանու-  
թիւնը հրատարակել է Գ. Ասատուրը («Աղգ. Հանդէս», X էջ 100)  
եւ որ դրւած է միայն Իվան Սէյիդովի ժողոված տեղ գտնուող հա-  
յերէն մի երգի տակ - «Խաբար գրնաց բուլբուլի մօտ» - առած է  
ուրիշ կերպ: Այդ ոտանաւորը վերջանում է հետեւեալ երկտողով.

Աշխաբուլբու Բանի սաղ եմ, Սայեաթ Նովի գերեզմանը  
Շահաբասի լալի նրման շահի վէր գալուն մընում է:\*)

Ահա Իվան Սէյիդովի այդ մակագրութիւնը.

«Այս մուխամբազը Սայեաթ Նովան յօրինեց, որ շահը (Աղա-Մահ-  
խան, աւելացնում է Գ. Ասատուրը) պէտք է գայ մեծ ժխորով նրա  
զերեղմանի վրա. այս էր պատճառը, որ նրան մաս մաս արին...»  
Օհանը, չարունակում է Գ. Ասատուրը, ուղում է ասել, թէ Սա-  
յեաթ Նովան այս երգով դուշակել էր, թէ ինչ մահով պիտի մեռնի:

Սակայն, Օհանի այս կարծիքը, թէկուզ խիստ զգուշութեամբ  
արտայայտւած, բնաւ չի կապում իր իսկ Դաւթարում հօր մասին  
ամէն քայլափոխին դրւած, «Հանգուցեալ», բայց ոչ «սպանւած»

\*) Վերջերս, Գ. Ախվերդեանի քրքրի մէջ Գ. Ասատուրին յաջողւել է գրո-  
նել այս երգի մի նոր փոփոխակ, որ կը հրատարակւի «Վէմ»-ում: Այդ փոփո-  
խակում մեզ հետաքրքրող տողերը բերւած են հետեւեալ ձեւով.

Հինչանը էլի դուն սաղ ըլիս, ջուրն տանէ Սայեաթ Նովին.

Շահաբասի լալի նման շահն վրէթ դալուն մընում է:

Այս տողերը, ինչպէս տեսնում ենք, ուղղւած են ոչ թէ իրեն՝ Սայեաթ Նո-  
վային, այլ սիրուհուն: Այդ պարագան մեզ չպետք է զարմացնէ. իր որդու Օհանի  
վկայութիւնից էլ յայտնի է, որ Սայեաթ Նովան յաճախ մայր երգը տարբեր  
պայմաններում երգում էր տարբեր բովանդակութեամբ:

\*) Պրամսերէն քարգմանութեան հետ հրատարակւած էվիմաստիպ - Brosset,  
"Mémoires inédits, relatifs à l'histoire de la Géorgie", Արտատպիլ է Զուրիմովը իր  
«Վրացերէն Քրիստոմատիա»-յի մէջ t. I., p. P. 175-197:

\*\*) Նախընթաց օրը Եսիւշվիլին այցելել է Սանահունի իշխան Սաղոմոն Արզու-  
րեանին եւ հետը խօսակցութիւն ունեցել Վրաստանում Գէորգի ժ. Գ. բազմաւորու-  
թեան վերջին ամիսներին, այսինքն՝ 1800 թ. աշնանը ծագած դէպքերի մասին:



կամ «նահատակ» արտայայտութեան հետ: Նա հակասում է նաև «Կարմասորա»-յում հաստատուած փաստի հետ, որ 1800 թ. աշնանը դեռ Սայեաթ Նովան ողջ էր: Օհանի յայտնած կարծիքի պատճառը, թերեւս, այն էր, որ 19-րդ դարու 20-ական թվականներին, երբ Օհանը գրի էր առնում հօր տաղերը, արդէն Պետերբուրգ էր հասել Սայեաթ Նովայի նահատակութեան մասին թիֆլիսում ստեղծուած գեղեցիկ աւանդութիւնը: Այդ աւանդութիւնը շոյում էր Օհանի ինքնասիրութիւնը, եւ նա վախճվելով, կարծես պատահաբար, բաւական անորոշ ձեւով, ընդամենը մէկ անգամ միայն յիշում է իր Դաւթարի մէջ: Հաստատ կերպով նա չէր կարող արձանագրել հօր ըստ պանաւած լինելը պարսիկներից, քանի որ արքայորդիները, որոնց համար նա գրի էր առնում երգերը, շատ լաւ ծանօթ էին Սայեաթ Նովայի մահւան պարագաներին:

Բայց ի՞նչ հիմք կար Սայեաթ Նովայի մահւան մասին նման աւանդութեան ստեղծելուն: Աղա-Մահմադ խանի արշաւանքից եւ թիֆլիսի գրաւումից ու աւերումից յետոյ Ժողովրդի մտքում մընացել էին հետեւեալ փաստերը.

ա). Մողնու Սուրբ Գէորգ եկեղեցու շէմքում նահատակւել էր Տէր-Շմաւոնեանց քահանան:

բ). Հախսատի վանքի թիֆլիսի առաջնորդարանը, որ գտնւում էր բերդի Սուրբ Գէորգ մեծ եկեղեցու կողքին, թալանւել էր պարսիկ զինուորների ձեռքով եւ վարդապետների մի մասը սպանւել:

գ). Պալատական սաղանդար Մաչաբելին, իբրեւ թիֆլիսցի կամաւորների հրամանատար, հռչակւել էր պարսիկների դէմ մղած կրօնական պայքարի, իսկ մի ուրիշ պալատական սաղանդար Աղաջան Ղալա-մաշվիլին գերի էր ընկել պարսիկների ձեռքը:

դ). Սայեաթ Նովան հեռացել էր թիֆլիսի կեանքի հորիզոնից եւ խաղաղ ապրում էր Հախսատի վանքում, ուր եւ վախճանեց 1801 թւին: Եւ վանական պայմանները այնպէս էին, որ նրա վանքում լինելու կամ մահւան մասին որեւէ մէկին լուր տալու պէտք չկար:

Այս փաստերը բաւական էին, որպէսզի հանրային երեւակայութիւնը ստեղծէր Սայեաթ Նովայի նահատակութեան աւանդութիւնը: Թիֆլիսի աւերումից յետոյ Սայեաթ Նովան այլեւս չէր երեւում քաղաքում, նշանակում է նա էլ սպանւել էր Ս. Գէորգ եկեղեցում կոտորուած վարդապետների հետ: Հասարակութիւնը մտածում էր, որ Սայեաթ Նովան չէր կարող կեանքից հեռանալ առանց մի գեղեցիկ խօսք ասելու: Եւ այդ խօսքն գտնւեց.

Իսադամ դօմ – մամամ,  
Քիսադամ չըխ – մամամ:


Մելիքէթբէգը ենթադրում է, որ այս խօսքին իբրեւ նախա-տիպ ծառայել է Սայեաթ Նովայի թիւրքերէն երգերից մէկի (Ախ-վերդեան, էջ Ժա) հետեւեալ տողը.

Սայեաթ Նովա դիմիսի ինֆար էթ-մա՝ էրմանի դուր:

– Սայեաթ Նովան հաւատը չի՛ ուրանայ՝ հայ է:

(ՎԵՐՋ)

Փարիզ.





ԶՕՐ. Գ. ՂՈՐՂԱՆՆԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

## ԵՒ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

### II

#### ՍԵՒՐԻՑ - ԼՈՋԱՆ

ԲԵԼԳԻԱՆ ԵՒ ՅՈՒՆԱՍՏԱՆԸ ՃԱՆԱԶՈՒՄ ԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆ-  
ԿԱՆՈՒԹԻՒՆԸ. — Սեւրի դաշնագիրը իրաւական ամուր հիմքերի վրա  
դրեց Հայաստանի Հանրապետութեան միջազգային դրութիւնը: Դաշ-  
նագրի ստորագրութիւնից անմիջապէս յետոյ մի քանի պետութիւն-  
ներ շտապեցին յայտնել, որ իրենք ճանաչում են Հայաստանի պե-  
տութեան իրաւական գոյութիւնը — *de jure*: Այսպէս, Հիմանսը  
յանուն Նորին Մեծութեան Բելգիայի թագաւորի կառավարութեան  
1920 թ. օգոստ. 27-ին պաշտօնական նամակով Հայաստանի Հանրա-  
պետութեան նախագահին հաղորդեց, թէ՛ «արքայական կառավար-  
ութիւնը որոշել է պաշտօնապէս ճանաչել Հայաստանի Հանրապե-  
տութեան կառավարութիւնը եւ բախտաւոր կը լինի դիւանագիտա-  
կան յարաբերութիւններ պահել նրա հետ»:

Դրանից առաջ, 1920 թ. օգոստ. 23-ին, Յունաստանի Փարիզի  
դեսպան Ռոմանոսը հաղորդել էր Հայաստանի պատւիրակութեան  
նախագահին, որ Յունաց թագաւորի կառավարութիւնը համաձայն  
է, որ Հայաստանը Աթէնքում նշանակէ լիազօր դեսպան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ 1920 թ. ԱՇՆԱՆ. — Սեւրի դաշնագրի վա-  
ւերացումն ու դորձադրութիւնը կարօտ էին ժամանակի, մինչդեռ  
Հայաստանի վիճակը հետզհետէ վատանում էր: Սեւրի դաշնագիրը  
ստորագրել էին Թիւրքիայի Պուլի կառավարութեան ներկայացու-  
ցիչները, այն ինչ քէմալականները ամուր նստած Թիւրքաց Հայաս-  
տանի հողերի վրա՝ մերժում էին ճանաչել Պուլի կառավարութեան  
իրաւասութիւնը յանուն Թիւրքիայի խօսելու եւ դաշնագրեր ստոր-  
գրելու: Դաշնակիցների կնքած զինադադարը Թիւրքիայի հետ 1918  
թ. հոկտ. 30-ին Մուդրոս կղզում չէր նախատեսում Թիւրքահայաս-  
տանի դրաւում դաշնակից զօրքերի կողմից, ոչ էլ զինապահստ-

ների դրաւում ու Թրքական բանակի զինաթափութիւն: Քէմալական-  
ները ձգտում էին դրաւել Կարսի նահանգը, որ խորհրդային իշխա-  
նութիւնը զիջել էր Թիւրքերին Բրեստ-Լիտովսկի դաշնագրով: Հա-  
յաստանը չըջապատւած էր Ադրբէջանի Թիւրքերով, քէմալականնե-  
րով եւ բոլշեւիկներով: Անգլիական դրաւող ուժերը, որ կարող էին  
յետ մղել սպառնացող Թշնամիներին, թողին Անգլիկովկասն ու հե-  
ռացան:

Դեռ 1920 թ. մայիսին բոլշեւիկները փորձեցին ապստամբութիւն  
առաջ բերել Հայաստանում, որ սակայն իսկոյն ճնշեց: Ապստամ-  
բութեան հետեւանքներից մէկը եղաւ տարապայման սովը, որ ա-  
ւելի եւս կնճռոտեց կացութիւնը:

Սեպտ. 23-ին քէմալականները դիմեցին ընդհանուր յարձակման  
ընդդէմ Հայաստանի: Միաժամանակ Հայաստանի վրա սկսեցին յար-  
ձակումներ դործել եւ բոլշեւիկներն ու թաթարները:

Հոգատար պետութեան բացակայութիւնը մի կողմից եւ պե-  
տութիւնների իրաւական ճանաչումը միւս՝ Հայաստանին բնական  
կերպով թելադրում էին իր երկրի անկախութեան ապահովութիւնն  
ու անձեռնմխելիութիւնը փնտրել Ազգերի Դաշնակցութեան մօտ:

ԱԶԳԵՐԻ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԻՆ ԺՈՂՈՎԸ. — 1920 թ. սեպ-  
տեմբ. 25-ին Հ. Հ. Պատւիրակութեան նախագահ Ա. Ահարոնեանը դիմեց  
Ազգերի Դաշնակցութեան նախագահին եւ «ի նկատի ունենալով Սեւ-  
րի դաշնագրի ստորագրելը, որով դաշնակից պետութիւնների կող-  
մից վերջնականապէս ճանաչւում է Հայաստանի անկախութիւնը»,  
մինչդեռ Հայաստանի պետութիւնը անդամ ընդունել Ազգերի Դաշ-  
նակցութեան: Այս խնդիրը պիտի քննէր Ազգերի Դաշնակցութեան  
առաջին ընդհանուր ժողովում:

Միեւնոյն ժամանակ Հ. Հ. Պատւիրակութեան նախագահը հոկ-  
տեմբեր 6-ին, 12-ին, 21-ին դիմումներ արաւ Ազգ. Դաշնակցու-  
թեան Խորհրդին՝ խնդրելով օգնել Հայաստանին եւ երաշխաւորել  
Սեւրի դաշնագրի դորձադրութիւնը: Սակայն, Ազգ. Դաշնակցու-  
թեան Խորհուրդը, իր Բրիւսելի նստաշրջանում, 1920 թ. հոկտեմ-  
բերի վերջին, պատասխանեց Հ. Հ. Պատւիրակութեան, թէ Սեւրի  
Դաշնագիրը ուժի մէջ մտած չէ դեռ եւ թէ նրա դորձադրութիւնը  
պէտք է ապահովեն ստորագրող պետութիւնները: Միաժամանակ  
Ազգ. Դաշ. Խորհուրդը Հ. Հ. Պատւիրակութեան դիմումը յանձ-  
նեց Սեւրի Դաշնագիրը ստորագրող պետութիւններին (Մեծն Բրի-  
տանիային, Ֆրանսային, Իտալիային եւ Ճապոնիային):

Ի պատասխան Ազգ. Դաշն. Խորհրդի այս դիմումի, 1920 թ.  
նոյեմբերին Լոյդ Ջորջն տեղեկացրեց Խորհրդին, թէ դաշնակից պե-



տուրքիւններն ամէն ճիշդ ի դործ դրին օգնելու համար Հայաստանին՝ տալով նրան զէնք, ռազմամթերք, վառելիք, իսկ ինչ վերաբերում է Հայաստանի ապագային՝ նա կարծում է, որ մինչեւ նախագահ Վիլսոնը իր կարծիքը չյայտնէ Հայաստանի սահմանների մասին, Դաշնագրի ապահովութեան ձեւերի մասին խօսելը անօգուտ է:

Նոյեմբեր 15-ին բացւեց Ազգերի Դաշնակցութեան առաջին նրատաշրջանը: Այս նստաշրջանը վճիռ պիտի տար քէմալականների, բոլշեւիկների եւ թաթարների յարձակման ենթակայ Հայաստանի սահմանների եւ անկախութեան ապահովութեան, այլ եւ Հայաստանը Ազգ. Դաշնակցութեան մէջ ընդունելու մասին:

Այդ հարցերից առաջինին Ազգ. Դաշնակցութիւնը նւիրեց իր 17 եւ 22 նոյեմբ. հրապարակային նիստերը: Լորդ Ռոբերտ Սեսիլը յայտնելով, թէ Ազգերի Դաշնակցութիւնը չի կարող լինել հանրային բարոյականութեան պաշտպան, եթէ նա չանէ ամէն կարելին արգելելու համար, որ այդ հին ժողովուրդը մի անգամ էլ ստիպւած լինի ճաշակել նման տանջանքներ», առաջարկեց ժողովին ընդունել հետեւեալ բանաձեւը.

«Սորհուրդը հրաւիրում է քննել անյապաղ Հայաստանի վիճակը եւ ներկայացնել ժողովի վճռին առաջարկութիւններ՝ յետ մղելու համար այն վտանգը, որ ներկայումս սպառնում է հայ ցեղի մնացորդներին, եւ հաստատելու համար այդ երկրում ամուր ու մշտապէս մի վիճակ»:

Իր հերթին Բելգիայի ներկայացուցիչ ծերակուտական Լաֆոնտէնը առաջարկեց ստեղծել վեց հոգուց բաղկացած մի յանձնաժողով եւ սրան յանձնել հայերի եւ թիւրքերի միջեւ մղւող պայքարին վերջ տալու միջոցների քննութիւնը:

Նոյեմբեր 22-ի նիստում, թէեւ բոլոր ճառախօսները միաբան կերպով խօսեցին Հայաստանին անմիջապէս օգնութիւն հասցնելու անհրաժեշտութեան մասին, բայց երբ հերթը եկաւ գործնական միջոցների առաջարկութեան, ճառերից լսւում էր միայն յոռետեսութիւն: Իւզօսլաւիայի ներկայացուցիչ Սպալայկովիչը եւ Շւեդիայի ներկայացուցիչ Բրանստինգը առաջարկում էին ազդեցութիւն բանեցրնել մեծ պետութիւնների վրա. Նանսէնը (Նորվեգիա) անհրաժեշտ էր համարում զինուորական ոյժ ուղարկել Հայաստանի օգնութեան համար եւ համոզում էր յայտնում, որ Հիւս. Ամերիկայի Միացեալ Նահանգներն էլ կը մասնակցին այս ձեռնարկին, եթէ աշխարհին Նահանգներն ուղղւի յանուն Ազգերի Դաշնակցութեան: Բալֆուրը (Անգլիա) մատնանշեց, որ Ազգերի Դաշնակցութեան կազմակերպութիւնը չի նախատեսել այնպիսի զբոսութիւն, որպիսին ստեղծւել է Հա-

յաստանի վերաբերմամբ: Անհրաժեշտ է գտնել մի պետութիւն, որ համաձայնէր ստանձնել Հայաստանի հոգատարութիւնը: Յոյց տալով այդպիսի մի պետութիւն գտնելու դժւարութիւնները, նա առաջ, թէ ժընեւում հաւաքւած բոլոր ազգերը պէտք է մասնակցեն Հայաստանի փրկութեան ընդհանուր գործին: Վիլիամին (Փրանսա) զարգացնելով այն միտքը, թէ Ազգ. Դաշնակցութիւնը այս հարցում անգոր է, առաջարկեց հետեւեալ բանաձեւը.

«Ժողովը կամենալով գործակցել Սորհուրդին՝ որքան հնար է չուտ վերջ տալու համար հայկական ահաւոր ողբերգութեան, հրաւիրում է Սորհուրդին համաձայնութեան գալու կառավարութիւնների հետ, որպէսզի որեւէ մի պետութիւն յանձն առնէ միջոցների դիմել՝ վերջ տալու համար թշնամութեանց Հայաստանի եւ քէմալականների միջեւ»:

Ժողովը միաձայնութեամբ ընդունեց այս բանաձեւը, ինչպէս եւ ծերակուտական Լաֆոնտէնի առաջարկը:

1920 թ. նոյեմբ. 23-ին Սորհուրդը Ազգ. Դաշնակցութեան մաս կազմող բոլոր պետութիւններին, ինչպէս եւ Հիւս. Ամերիկ. Միաց. Նահանգներին հաղորդելով ընդունւած բանաձեւը՝ ջերմօրէն խնդրեց օգնել Հայաստանին:

Միայն երեք պետութիւններ պատասխանեցին Սորհուրդի այս դիմումին.

Նախագահ Վիլսոնը պատասխանեց, թէ ինքը պատրաստ է առաջարկել անձնական միջնորդութիւն իր նշանակած ներկայացուցիչի միջոցով: Սպանիայի կառավարութիւնը պատրաստակամութիւն յայտնեց մասնակցելու բարոյական եւ դիւանագիտական բնոյթ կրող բոլոր քայլերին: Եւ, վերջապէս, Բրազիլիան (1920 թ. նոյեմբ. 30-ին) գտաւ, թէ հարկաւոր է վերջ դնել Հայաստանի զարհուրելի կացութեան:

Այդ պատասխաններն ստանալուց յետոյ, Սորհուրդը դեկտ. 2-ին խնդրեց յիշեալ երեք պետութիւններին յարաբերութեան մէջ մըտնել իրար հետ եւ համաձայնութեան գալ համախորհուրդ կատարելիք քայլերի մասին: Փաստօրէն այդ պետութիւնները ոչ մի միջոցի չդիմեցին:

Նստաշրջանի վերջում, դեկտ. 17-ին, Իոնեսկօն յանուն ռումիական կառավարութեան, բերեց հետեւեալ գործնական առաջարկը.

«Որպէսզի մեռնող հայ ժողովուրդին հասցւի իրական եւ արագ աջակցութիւն, Ռումանիան առաջարկում է ժընեւ հաւաքւած ազգերին կազմել միջազգային էկսպէդիցիօն մի զօրամաս (un corps expéditionnaire), որը պէտք է վերականգնէ կարգն ու անդոր-



բուժիչը Հայաստանում: Այդ միջազգային զորամասը՝ ենթակայ՝ անմիջապես միջազգային ընդհանուր սպայակոյտին՝ կարելի կը լի նէր կազմել Ազգ. Դաշնակցութիւնը կազմող բոլոր երկրներէ զօրա-  
յասերից՝ համաձայն այդ երկրներէ բնակչութեան թւին»:

Ռումանիան պատրաստակամութիւն յայտնեց անմիջապես օգ-  
նութեան հասնել մարդով, նիւթականով եւ դրամական միջոցներով:

Այս առաջարկութիւնը յանձնեց վեցի յանձնաժողովին, որի  
ղեկուցարէր ծերակուտական Լաֆոնտէնը յայտնեց, որ թէեւ ինքը  
վստահ է, որ առաջարկութիւնը համակրանքով կընդունելի բոլոր  
պետութիւններէ կողմից, բայց Հայաստան զօրամաս ուղարկելու  
դժուարութիւնները խիստ մեծ են եւ նախօրօք պէտք է ապահովել  
բոլոր պետութիւններէ գործակցութիւնը: Իբրեւ եզրակացութիւն,  
նա յայտնեց, թէ ինքը Ազգ. Դաշնակցութեան չի յանձնարարում  
ընդունել այդ առաջարկութիւնը, որովհետեւ Ազգերի Դաշնակցու-  
թիւնը խաղաղութեան ազդակ է եւ նրա համար մեծ յաղթանակ ու  
պատիւ կը լինէր փրկել Հայաստանը առանց արիւն թափելու: Վի-  
վիանին աւելացրեց, որ Ազգ. Դաշնակցութիւնը իրաւունք էլ չունի  
իր վրա բանակի կազմութեան պարտականութիւն առնելու:

Դեկտ. 18-ին ժողովը, ճիշտ նոյեմբ. 22-ի նիստի պէս, ընդու-  
նեց հետեւեալ զուտ բարոյական բնոյթ կրող բանաձեւը.

«Ժողովը յիշեցնելով իր 1920 թ. նոյեմբ. 22-ի որոշումը, շա-  
րունակում է գործակցել խորհրդին, որ լիազօրում է, ի հարկին դի-  
մելով եւ Դաշնակցութեան անդամներին, հետեւելու Հայաստանի  
ճակատագրին, որի օգտին Դաշնակցութեան խնդրանք արդէն ար-  
տայայտել է բացի համաշխարհային համակրանքից՝ նաեւ նախա-  
դահ Վիլսոնի, Սպանիայի եւ Բրազիլիայի բարձր միջամտութիւնը»:

ԱԶԳԵՐՈՒ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄՈՒԹԵԱՆ ՀԱՐՅԸ. — Ինչ-  
պէս վերեւ ասացինք, 1920 թ. սեպտ. 25-ին Հ. Հ. Պատուիրակու-  
թեան նախագահը գրաւոր դիմում արաւ Ազգերու Դաշնակցութեան  
նախագահին՝ խնդրելով Դաշնակցութեան կազմի մէջ ընդունել եւ  
Հայաստանը: Ազգ. Դաշնակցութեան առաջին ժողովը նոյեմբ. 20-ին  
նոր պետութիւններ ընդունելու հարցը յանձնեց հինգերորդ յանձ-  
նաժողովի քննութեան, սա էլ իր հերթին Հայաստանի թեկնածու-  
թեան խնդիրը տւեց ՎԵ Ենթադաշնաժողովին:

Երբ խնդիրը քննւում էր Ենթադաշնաժողովում եւ յանձնաժո-  
ղովում, Հայաստանի վիճակը աւելի եւս վատացել էր:

1920 թ. դեկտ. 2-ին Երեւանի կառավարութիւնը ստորագրել էր  
Ալեքսանդրապոլի դաշնագիրը քէմալականների հետ: Թիւրքերի դը-

րաւած շրջաններից, կոտորածից խուսափած 15-57 տարեկան բոլոր  
տղամարդիկ աքսորւել էին Թիւրքիայի ներսերը. քչաւ-տաւած էր  
տաւարը, ցանքսերը փճացած էին: Հայաստանին նոր սով էր սպառ-  
նում:

Միւս կողմից, դեկ. 2-ին Հայաստանի կառավարութեան եւ խոր-  
հրդային ներկայացուցիչ Լըզրանի միջեւ ստորագրւած համաձայ-  
նութեամբ Հայաստանը յայտարարել էր խորհրդային եւ Երեւա-  
նում դեկտ. 6-ին հաստատւել էր Յեղկոմի իշխանութիւնը: Հա-  
յաստանի Հանրապետութեան տեղ բռնել էր Հայաստանի Խորհրդ-  
դային Ընկերվարական Հանրապետութիւնը:

Նոյն դեկտեմբեր ամսի սկզբին նախագահ Վիլսոնը վճիռ արձա-  
կեց Հայաստանի եւ Թիւրքիայի սահմանների մասին: Այդ վճռով  
Հայաստանին անցնում էին Վանի, Բիթլիսի, Էրզրումի եւ Տրապի-  
զոնի վիլայէթների որոշ մասերը՝ մէջը ունենալով եւ Տրապիզոն  
քաղաքը:

ՎԵ Ենթադաշնաժողովը, լսելով Հ. Հ. Պատուիրակութեան նա-  
խագահ Ա. Ահարոնեանին, միաձայնութեամբ որոշեց ընդունել Հա-  
յաստանի Հանրապետութիւնը Ազգ. Դաշնակցութեան մէջ:

Սակայն, Վ յանձնաժողովի կարծիքը այնքան էլ համաձայն չե-  
ղաւ ՎԵ Ենթադաշնաժողովի հետ: Յանձնաժողովի 4 դեկտ. նիս-  
տում լորդ Ռոքերտ Սեսիլը, մատնանշելով հանդերձ այն վտանգը,  
որ կարող է սպառնալ Հայաստանի, Վրաստանի եւ Մերձբալտեան  
պետութիւնների ընդունելութեան մերժումը, մանաւանդ աչքի ա-  
ռաջ ունենալով վերջիններիս թափած յարաճուն ջանքերը իրենց  
անկախութեան ամրապնդման համար, աւելացրեց, որ այդ պետու-  
թիւնների ընդունելութեան գլխաւոր եւ անվիճելիօրէն լուրջ արգել-  
քը նրանում է, որ նրանք հարեւան են անիշխանութեան մէջ գտնւող  
պետութիւնների, որոնց վրա Ազգերի Դաշնակցութիւնը չի կարող  
ազդեցութիւն բանեցնել ոչ բարոյական, ոչ զինուորական, ոչ էլ տըն-  
տեսական միջոցներով: Ուստի լորդ Սեսիլը յանձնաժողովին առա-  
ջարկեց՝ Հայաստանը, Վրաստանը եւ Մերձբալտեան պետութիւննե-  
րը ընդունել Ազգերի Դաշնակցութեան կազմի մէջ այն պայմանով,  
որ այդ պետութիւնների վերաբերմամբ Դաշնակցութեան անդամնե-  
րի վրայից վերցւին Դաշնակցութեան կանոնագրի 10-րդ հատւածից  
բխող պարտականութիւնները:

Այդ առաջարկութիւնը հաւանութիւն չգտաւ յանձնաժողովում:  
Բենէշը (Չեխո-Սլովակիա), Բրանտինը (Շեդիա), Վիվիանին (Ֆր-  
րանսա) կասկած յայտնեցին, թէ արդեօք ժողովը իրաւունք ունի՞  
նման պայմաններով անդամ ընդունելու: Վան-Քարներէկը (Հոլան-



տա) աւելացրեց, թէ 10-րդ հատւածից բխող առաւելութիւնները մերժումը պիտի նշանակէր զրկել այդ պետութիւնները իրենց փրկաւորած ամենէն աւելի արժէքաւոր երաշխիքներէն:

Ի վերջոյ, յանձնաժողովը որոշեց խորհուրդ չտալ ընդհանուր ժողովին յիշեալ պետութիւններն ընդունելու Ազգերի Դաշնակցութեան կազմի մէջ: Յանձնաժողովի կարծիքով, սակայն, այդ պետութիւնները կարող են մասնակցել Դաշնակցութեան ընդհանուր հետաքրքրութիւն ներկայացնող տեխնիկական կազմակերպութիւններին:

Հայաստանի ընդունելութեան հարցը վերջնական քննութեան ենթարկեց Ազգ. Դաշնակցութեան ընդհանուր ժողովի, 1920 թ. 16 դեկտ. նիստում: Ընդհանուր ժողովը ծանօթացաւ յանձնաժողովի կարծիքին. անպաշտօն կերպով նրան արդէն յայտնի էր Անգլիայի, Ֆրանսայի եւ Իտալիոյ արտաքին գործոց նախարարների դեկտեմբերի սկզբին Լոնդոնից քաջած հռազդիրը իրենց ներկայացուցիչներին: Այդ հռազդիրը ասում էր.

«Ֆրանսայի, Իտալիայի եւ Անգլիայի երեք կառավարութեանց ներկայացուցիչները, հաւաքւելով Լոնդոնում, քննելով ժընեւում յարուցած հարցը Հայաստանի ընդունելութեան մասին, միաձայնութեամբ եկան այն եզրակացութեան, որ այժմ անկարելի է դոհացում տալ Հայաստանի խնդրանքին: Սեւրի Դաշնագիրը, որ Հայաստանը վերածեց անկախ պետութեան, տակաւին վաւերացւած չէ: Բացի այդ, Հայաստանի սահմանները, ինչպէս որ որոշւած են նախագահ Վիլսոնից, ի պատասխան պետութիւնների կողմից նրան եղած իրաւարարութեան առաջարկի, ներկայացնում են այնպիսի ընդարձակում, որ Ազգ. Դաշնակցութեան մասնակցող պետութիւնները ներկայ պայմաններում դժարութեամբ պիտի կարողանան պատասխանատուութիւն ստանձնել երաշխաւորելու եւ յարգել տալու նրանց»:

Հայաստանի ընդունելութեան հարցը Ազգ. Դաշնակցութեան ընդհանուր ժողովում քննարկութեան դրեց 1920 դեկտ. 15-ին: Քննարկութեան մասնակցում էին 29 պետութիւններ, 13 պետութիւններ ձեռնպահ մնացին: Դէմ ձայն տուեց 21 պետութիւն, թեր՝ 8 (Քանադա, Պերու, Պորտուգալիա, Ռումանիա, Սալվադոր, Զուիգերիա, Ուրագվայ, Վենեսուէլա): Ժողովը ընդունեց հետեւեալ բա. նաձեւը.

«Ժողովը խորունկ յոյս է յայտնում, որ Միացեալ Նահանգների նախագահի ջանքերը, Սպանիայի եւ Բրազիլիայի ինչպէս եւ Ազգերի Դաշնակցութեան Խորհրդի եռանդուն աջակցութեամբ, կը յաջողեն փրկել հայ ժողովուրդը եւ Հայաստանին ապահովել կայուն մի

կառավարութիւն, որ իշխանութիւնը տարածէ պետութեան ամբողջ հողամասերի վրա, այն սահմաններում, որոնք վերջնականապէս կորուչեն հաշտութեան դաշնագրով, որպէսզի ժողովը կարողանայ իր յաջորդ նստաշրջանում Հայաստանն ընդունել իրբեւ Դաշնակցութեան անդամ այդ ընդունելութիւնից բխող լիակատար իրաւունքներով»:

Հայաստանին թոյլ չտրեց մասնակցելու Ազգ. Դաշնակցութեան տեխնիկական կազմակերպութիւնների մէջ:

1921 թ. յունւ. 24-29-ին, դաշակիցների խորհրդաժողովը Փարիզում որոշեց խորհրդաժողով դումարել Լոնդոնում Թիւրքիայի հետ հաշտութեան դաշնագրի մշակման համար, մասնակցութեամբ քեմալական Թիւրքիայի եւ Յունաստանի:

ԼՈՆԴՈՆԻ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԸ. — Լոնդոնի խորհրդաժողովը տեւեց 1921 թ. փետր. 21-ից մինչեւ մարտ 12:

Փետր. 24-ին քեմալական Թիւրքիայի ներկայացուցիչ Բէքիր Սամի բէյը խորհրդաժողովին ներկայացրեց Թիւրքական պահանջները: Հայաստանի վերաբերմամբ Թիւրքերը պահանջում էին պարպել Կիլիկիան Փրանսական զորքերից, Հայաստանի Հանրապետութեան սահմանների խնդրում Թիւրքերը պահանջում էին, որ այդ սահմանները հաստատւին 1920 թ. դեկտ. 2-ի Ալեքսանդրապոլի դաշնագրի պայմաններով: Իսկ ինչ վերաբերում էր ցեղային, կրօնական կամ լեզուական փոքրամասնութիւնների հովանաւորութեան հարցին, Թիւրքերը պնդում էին, թէ պէտք է հիմք ընդունել Սէն-ժերմէնի, Նէոյիի եւ Տրիանոնի դաշնագրերի համապատասխան տրամադրութիւնները:

24 փետր. նիստում լուրջ Բըրդընը պատասխանեց Թիւրք պատգամաւորներին, որ պետութիւնները ամենագոյն մտադրութիւն իսկ չունին հրաժարւելու միացեալ եւ ամուր Հայաստան կազմելու դադափարից, եւ հէնց Թիւրքիայի իր շահն է պահանջում յստակ կերպով որոշել սահմանագիծը Թիւրքիայի եւ Հայաստանի միջեւ, որով Հայաստանին վերադարձին ի վաղուց անտի նրանից խլած շրջանները:

Նոյն օրը լսեցին Հայ Ազգային Պատւիրակութեան նախագահ Պողոս Նուպար փաշան եւ Հ. Հ. Պատւիրակութեան նախագահ Ա. Ահարոնեանը: Պողոս Նուպարը պնդում էր, որ նոր դաշնագրում պահեն Սեւրի Դաշնագրի Հայաստանին վերաբերեալ մասերը: Ինչ վերաբերում է Կիլիկիային, որի մեծ մասը Սեւրի Դաշնագրով վերադարձւելու էր Թիւրքիային, նրա մէջ պէտք է հաստատել ինքնավար մի ռեժիմ, խառն ժանդարմերիայով:







15-ին ընդունեց լորդ Ռոբերտ Սեսիլի նախագծով վեցերորդ յանձնաժողովի մշակած բանաձևը: Հարցը 6-րդ յանձնախումբ մտցրել էր պրոֆ. Զիրբերտ Մրոչն: Բանաձևը ասում էր:

«Ի նկատի ունենալով, որ առաջին Ժողովը 1920 թ. նոյեմբ. 18-ին յանձնարարել էր խորհրդին հող տանել Հայաստանի ապագայի ապահովութեան մասին, որ 1921 թ. փետր. 25-ին խորհուրդը գըտնելով, որ կացութիւնը Փոքր-Ասիայում այս վայրկեանիս անհնար է դարձնում որեւէ գործ, յանձնարարել էր քարտուղարութեան հետեւելու զէպքերին Հայաստանում՝ նպատակ ունենալով հետագային խորհրդի կողմից տալ նոր որոշումներ, որ այդ միջոցին Գերագոյն խորհուրդը առաջարկել էր ի փոփոխումն Սեւրի Դաշնագրի քննել հայերի համար Ազգային Օջախի ստեղծումը, բացի այդ, հաշի առնելով հաշտութեան դաշնագրի մօտակայ ստորագրութեան մեծ հաւանականութիւնը Թիւրքիայի եւ Դաշնակից պետութիւնների միջեւ, Ժողովը ստիպողաբար հրաւիրում է խորհրդին պնդել Գերագոյն խորհրդի առջեւ, որպէսզի Դաշնագրի մէջ ձեռք առնեն այնպիսի միջոցներ, որոնք պաշտպանեն Հայաստանի ապագան եւ մասնաւորապէս հայերին տան ազգային մի օջախ՝ բոլորովին անկախ՝ օսմանեան տիրապետութիւնից (de donner aux arméniens un foyer national entièrement indépendant de la domination ottomane).

Մենք տեսնում ենք այստեղ, որ մինչ Լոնդոնի խորհրդաժողովը բաց էր թողել «Օջախ»-ի քաղաքական բնորոշումը, Ազգ. Դաշնակցութիւնը գտնում է, որ Օջախը պէտք է լինի բոլորովին անկախ Թիւրքական տիրապետութիւնից:

Փրանսական ներկայացուցիչները յայտնեցին, թէ Ժողովը իրաւասութ չէ Հայաստանի անկախութեան հարցը լուծելու: Այս ճշտումը կցւեց բանաձևին:

Ազգ. Դաշնակցութեան առաջին Ժողովը կանանց ու երեխաների տեղահանութեան հարցը յանձնել էր առանձին քննիչ յանձնաժողովի, որը իր գործունէութեան ընթացքին հանգիպել էր անասելի դժւարութիւնների: Հակառակ դրան, նրան յաջողւել էր յայտնագործել 2300 որբեր: 1921 սեպտ. 23-ի լիազումար նիստում Ժողովը որոշեց Ազգ. Դաշնակցութեան մի գործակալ ուղարկել Կ. Պոլիս, որ համագործակցաբար Փրանսայի, Մեծ Բրիտանիայի եւ Իտալիայի բարձր կոմիսարների հետ կազմակերպէ մի խառն յանձնաժողով՝ գերի տարած հայ կանանց եւ երեխաների յայտնագործման եւ ազատութեան համար:

Սովի գէմ պայքարելու համար Ժողովը ընդունեց մի բանաձև,

որպէսզի «Ռուսաստանի օգնութեան գործը» — (les œuvres de secours à la Russie) — իր գործունէութիւնը տարածէ նաեւ նախկին Ռուսաստանի բոլոր սովահար շրջանների վրա, առանց անտեսելու եւ Հայաստանի, Վրաստանի եւ Ադրբեջանի բնակչութիւնը:

ՖԲԱՆՍ - ԹԻԻՐԻՔԱԿԱՆ 1921 թ. ՀՈԿՏ. 20-ի ՀԱՄԱԶԱՅՆՈՒ-ԹԻԻՆԸ. — 1920 թ. մարտ 9-ին Լոնդոնում կնքւած Փրանս-Թիւրքական համաձայնութիւնը իր ուժի մէջ չմտաւ եւ փոխարինւեց մի նոր դաշնագրով, որ ստորագրուեց 1921 թ. հոկտ. 20-ին, Անգորայում: Այս համաձայնութեամբ Փրանսացիները Կիլիկիայում մի շարք նոր կարեւոր զինուորներ արին Թիւրքերին, ի մասնաւորի ազգերի փոքրամասնութեանց իրաւունքների պաշտպանութեան խնդիրը բոլորովին անտեսեց: Վերացւեց նաեւ Լոնդոնի համաձայնութեան այն մասը, որ վերաբերում էր ազգարնակութեան զինաթափութեան եւ Փրանսական սպաների մասնակցութեամբ ոստիկանութիւն կազմելուն: Այս կէտերի փոխարէն նոր համաձայնութիւնը ասում էր, թէ Թիւրքիայի Մեծ Ազգային Ժողովի կառավարութիւնը յայտարարում է, որ փոքրամասնութեանց իրաւունքը հանդիսաւորապէս ընդունւած է ազգային ուխտի մէջ, եւ կառավարութիւնը նորից կը հաստատէ Դաշնակից պետութիւնների եւ հակառակորդների միջեւ կնքւած համապատասխան դաշնագրերի սկզբունքներով:

Դաշնագիրը նախատեսում էր կատարեալ ներում, բայց հէնց որ դաշնագրի ստորագրութեան լուրը տարածւեց, անասելի խուճապ առաջ եկաւ Կիլիկիայի հայութեան մէջ եւ սկսեց տարերային արտագաղթ դէպի Սիւրիա, Լիբանան եւ ուրիշ երկրներ: Փրանսական իշխանութիւնները զուր ճիգ թափեցին հանգստացնելու համար հայերին. վերջիններս շատ լաւ գիտէին Թիւրքերի «ներման» արժէքը եւ աշխատում էին հեռանալ նախ քան Փրանսական բանակի քաշւելը:

Ստեղծւած կացութեան հետեւանքով Հայ Ազգային Պատերազմութիւնը 1921 թ. նոյեմբ. 5 գրութեամբ դիմեց Փրանսայի արտաքին գործոց նախարարութեան եւ մատնանշելով, որ Կիլիկիայի փոքրամասնութեանց պաշտպանութեան միակ երաշխիքը, որ նախատեսւած էր 1921 թ. մարտ 9-ի համաձայնութեամբ՝ խառն Ժանդարմական մասերի ստեղծումով, վերացւած է, խնդրեց գործադրութեան չդնել նոր համաձայնութիւնը մինչեւ Թիւրքիայի հետ վերջնական հաշտութեան դաշնագրի կնքումը:

Կիլիկիայի հայութեան հեռացման հարցը արծարծւեց եւ Ազգ. Դաշնակցութեան խորհրդում բելգիական կառավարութեան նախաձեռնութեամբ: 1922 թ. յունւ. 14-ի նիստում, Փրանսայի ներկայա-



ցուցիչ Հանոտոն աշխատեց համոզել, թէ ստորագրւած համաձայնութիւնը փոքրամասնութիւններին տալիս է բաւարար ապահովութիւն, եւ որ Ֆրանսան իր կողմից ճիշդ է խնայի անելու համար հրնարաւորը, որպէսզի հեռացողները ընդունեն Սիւրիայում: Բացի այդ, Ֆրանսական կառավարութիւնը փախստականներին օգնելու նրպատակով Սիւրիայի բարձր կոմիտարի տրամադրութեան տակ դրած 20 միլիոն Ֆրանկի դումարը բարձրացրել է 50 միլիոնի:

Հանոտոի բացատրութիւնները լսելուց յետոյ, Ազգ. Դաշնակցութեան Պորհուրդը ընդունեց հետեւեալ բանաձեւը.

«Յիշեցնում է գլխաւոր Դաշնակից պետութիւններին ժողովի 1921 սեպտ. 21-ի իրենց ներկայացուցիչների մասնակցութեամբ ընդունւած բանաձեւը հայ ժողովրդի ապագայ պաշտպանութեան մասին:

«Հրաւիրում է Գլխաւոր Դաշնակից պետութիւնների ուշադրութիւնը ընդ փոյթ անհրաժեշտութեան վրա ընդունելու ամէն միջոց ապահովելու համար փոքրամասնութիւնների հովանաւորութիւնը Օսմանեան Կայսրութեան մէջ եւ պատրաստակամութիւն յայտնել աշխատակցելու բոլոր այն ձեռնարկներին, որոնք պէտք կը տեսնւին այդ նպատակով»:

**ԿԱՐՍԻ ԴԱՇՆԱԳԻՐԸ.**— Նոյն օրերին, երբ Ֆրանսան հեռանում էր Կիլիկիայից, 1921 թ. դեկտ. 13-ին Պորհուրդային Անգրիկոսը կնքեց Կարսի Դաշնագիրը, որով հաստատուում էին 1921 թ. մարտ 16-ին խորհուրդների եւ թիւրքերի միջեւ Մոսկւայում կնքւած դաշնագրի յօդւածները: Այս դաշնագրով էլ Կարսի նահանգը անցնում էր թիւրքերին, իսկ Նախիջևանի գաւառը դրւում էր Ադրբեջանի հովանաւորութեան ներքոյ:

**ՓԱՐՏԻԶԻ ԵՐԿՐՈՐԴ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԸ.**— Որպէսզի վերջ տրւի յոյն-թրքական պատերազմին, Ֆրանսան, Մեծ Բրիտանիան եւ Իտալիան մարտ 22-ին առաջարկեցին պատերազմող կողմերին ղինադադարի պայմաններ, իսկ մարտ 26-ին ներկայացրին հաշտութեան պայմաններ:

Առաջարկւած հաշտութեան պայմաններում կար հայկական հարցին վերաբերող հետեւեալ հատւածը.

«Հայերի վիճակը պէտք է առանձնապէս նկատողութեան առնւի՝ թէ Դաշնակից պետութիւնների պատերազմի ընթացքին ստանձնած յանձնառութիւնների հետեւանքով եւ թէ այդ ժողովրդի կրած դժբնդակ տառապանքների պատճառով: Հետեւաբար փնտրում է Ազգ. Դաշնակցութեան օգնութիւնը՝ փոքրամասնութիւններին տրադերի Դաշնակցութեան օգնութիւնը՝ ապահովելու համար, որպէսզի դոհացւին մաղրւած իրաւունքը՝ ապահովելու համար, որպէսզի դոհացւին հայերի աւանդական բաղձանքները՝ Ազգային օջախի ստեղծման»:

Վերջնականապէս պարզեց, որ «Օջախ»-ը չի կարող լինել անկախ թիւրքական տիրապետութիւնից, որովհետեւ դաշնակիցները պատերազմող կողմերին առաջարկած պայմանների մէջ ճանաչում էին թիւրքիայի կատարեալ գերիշխանութիւնը Անգրիկոսի, Պարսկաստանի եւ Իրաքի սահմաններից սկսած մինչեւ Էգէեան ծովի եղերքները:

Բանակցութիւնների ժամանակ թիւրքերը պահանջեցին, որ յոյները ղինադադար կնքելուց անմիջապէս յետոյ պարպեն Անատոլիան: Այդ պայմանը չընդունեց Աթէնքի կառավարութեան կողմից, եւ փարիզի խորհրդաժողովին էլ խաղաղութիւն չբերեց:

**ԱԶԳ. ԴԱՇՆԱԿՅՈՒԹԵԱՆ ԵՐՐՈՐԴ ԺՈՂՈՎԸ.**— Պետութիւնները հետզհետէ հրաժարւեցին թիւրքիայից անկախ հայկական ազգային օջախ ստեղծելու գաղափարից: Ազգ. Դաշնակցութեան երրորդ ժողովը իր 14-րդ լիագումար նիստում, 1922 թ. սեպտ. 22-ին, ընդունեց յորդ Ռոբերտ Սեսիլի առաջարկած հետեւեալ բանաձեւը այն ուղղումներով, որ մտցրել էր նախնական քննութիւն կատարող յանձնախումբը.

«Ժողովը շնորհակալութեամբ ընդունում է Պորհուրդի բանաձեւը Հայաստանի վերաբերմամբ եւ բաղձանք է յայտնում, որ վարւելիք բանակցութիւնների միջոցին թիւրքիայի հետ աչքից բաց չթողւի հայերի համար ազգային օջախ ստեղծելու անհրաժեշտութիւնը: Ժողովը հրաւիրում է Պորհուրդին դործ դնել այս հարցում օգտակար դատւած ամէն միջոց:

**ԼՈՁԱՆԻ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԸ.**— Յոյն - քէմալական պատերազմը վերջացաւ յոյների պարտութեամբ: 1922 թ. սեպտ. 22-ին քէմալականները դրաւեցին Չմիւռնիան:

1922 սեպտ. 23-ին Անգլիան, Ֆրանսան եւ Իտալիան՝ չահադրդուած խաղաղութեան հաստատման մէջ Փոքր Ասիայում՝ առաջարկեցին Անգորայի կառավարութեան մասնակցել դումարելիք խորհրդաժողովին՝ կնքելու համար հաշտութեան դաշնագիր Դաշնակից պետութիւնների, Յունաստանի եւ թիւրքիոյ միջեւ: Անգորայի կառավարութեան ուղղւած իրենց դիմումագրի մէջ պետութիւնները խոստացան պահանջել յոյներից, որ քաշին առաջուց ուրուած ռազմագծի վրա, եւ բարեկամական վերաբերում ցոյց տան դէպի թիւրքերի ցանկութիւնը՝ դրաւելու Թրակիան մինչեւ Մարիցա գետը եւ Ադրիանոպոլիսը, պայմանով, որ թիւրքերը պարտաւորւին խորհրդաժողովին ընթացքին չէզոք դօտին դօրք չուղարկել եւ նեղուցներն ու Մարմառա ծովը չանցնել: Յեղային ու կրօնական փոքրամասնութիւնների պաշտպանութիւնը դրւում էր Ազգ.



Դաշնակցութեան հովանաւորութեան տակ, իսկ հայկական օջախի մասին լռութիւն էր պահուում:

1922 թ. հոկտ. 4-ին Անգորայի կառավարութիւնը յայտնեց իր համաձայնութիւնը եւ հոկտ. 11-ին Մուղանիայում կնքեց զինադադար:

Քանի որ գումարելիք խորհրդաժողովում մշակուելու էին հաշտութեան նոր պայմաններ, որոնք պիտի փոխարինէին Սելրի Դաշնագիրը, Հ. Հ. Պատւիրակութեան նախագահ Ա. Ահարոնեանը, 1922 թ. հեկտ. 18 գրութեամբ, դիմեց Ֆրանսայի, Մեծ Բրիտանիայի եւ Իտալիայի կառավարութիւններին խնդրելով յանուն Հայաստանի Հանրապետութեան, որ իրեն թոյլ տրւի մասնակցելու խորհրդաժողովին՝ յիշեցնելով միաժամանակ, որ Դաշնակից պետութիւնները Հայաստանը ճանաչել են ազատ եւ անկախ պետութիւն եւ որ այժմեայ դէպքերը չեն կարող փոխել Հայաստանի միջազգային իրաւական վիճակը: 1922 թ. նոյեմբ. 17 գրութեամբ Պուանկարէն պատասխանեց, թէ պետութիւնները ճանաչել են *de jure* - Հայաստանի Հանրապետութիւնը եւ որ խորհրդաժողովը այն դէպքում, երբ պէտք զգայ ծանօթանալու հայերի կարծիքին, կը դիմէ հայկական ազգային պատւիրակութեան, որի մէջ պէտք է ներկայացւած լինեն թիւրքահայերը եւ ուսսահայերը:

Հայկական պատւիրակութիւնները 1922 թ. նոյեմբ. 15-ին խորհրդաժողովին ներկայացրին մի յուշագիր, որի մէջ՝ յիշեցնելով, որ 700,000 հայեր գտնուում են փախստականների վիճակում, որ 73,000 հայ կանայք եւ երեխաներ բռնի պահւած են թիւրքական հարէմներում, որ Ձմիւռնիայում եւ Բալիքէսերում նոր Զարդեր են տեղի ունեցել, որ քէմալական արդելարաններում եւ զօրամասերում կոտորւած են շատ հայ երիտասարդներ, որ հայկական բարենպատակ հաստատութիւնները, դպրոցներն ու եկեղեցիները աւարի են մատնւած, պատւիրակութիւնները խնդրում էին ուղղել այս անօրինակ անարդարութիւնը եւ հայերին տալ ազգային օջախ, ուր նրանք կարողանային ապահովել իրենց գոյութիւնը եւ մշակութային ազատ դարգացումը: Յուշագրի վերջում ասւած էր, որ հայկական հարցը կարող է լուծւել միայն Հայաստանի անջատումով Թիւրքիայից: Այդ լուծումը հնարաւոր է հետեւեալ երեք ձեւերից մէկին ու մէկի գործադրութեամբ. —

ա). Ազգային օջախի ստեղծում թէկուզ Հայաստանի նախագահ Վիլսոնի որոշած հոգերի մի մասում:

բ). Հայաստանի Հանրապետութեան սահմանների ընդարձակում՝ կցելով նրան Թիւրքահայաստանի հոգերի մի մասը:

դ). Ազգային օջախի ստեղծում Կիլիկիայում:

Պետութիւնների եւ Թիւրքիայի վերաբերումը դէպի Ազգային օջախի ծրագիրը պարզեց փոքրամասնութիւնների իրաւունքները որոշող ենթալանձնաժողովի եւ յանձնաժողովի աշխատանքների ժամանակ: Փոքրամասնութիւնների հովանաւորութեան յանձնաժողովի 12 դեկտ. նիստում յանձնաժողովի նախագահ լորդ Բըրզընը յայտարարեց թիւրք պատւիրակներին, թէ հարկադրւած լինելով դիմել պատերազմի, Դաշնակիցները նպատակ էին դրել նաեւ Փոքր Ասիայի քրիստոնեայ փոքրամասնութիւնների ազատագրումը: Դաշնակիցների այս որոշումը ամենից աւելի վերաբերում էր Հայաստանին: Դաշնակիցները նորից պնդում են, որ Թիւրքիան զիջէ ի նպաստ հայերի իր ասիական հոգերի մի մասը, հիւսիս - արեւելեան նահանգներում, կամ Կիլիկիայի հարաւ - արեւելեան սահմաններում, Սիւրիայի կից, ուր նրանք կարենան համախմբւել: Դրանից անկախ թիւրքերը պէտք է լիակատար ներում յայտարարեն, թիւրքիայի քրիստոնեաները պէտք է ազատ մնան զինուորական ծառայութիւնից, վայելեն տեղափոխութեան ազատութիւն եւ երկրից հեռանալու իրաւունք: Այս պայմանների գործադրութեան վրա պէտք է հսկէ Ազգ. Դաշնակցութիւնը:

Լորդ Բըրզընի յայտնած այս բաղձանքներին ոյժ տւին Բարբըր, Վենիգէլսոն, Սպալայկովիչը: Ամերիկեան դիտող դեսպան Չայլդը յայտնեց, թէ ամերիկացիները սպասում են, որ խորհրդաժողովը միջոց կը գտնէ անմիջապէս վերջ տալու մարդկային տառապանքների պատճառներին: Դեսպանը պնդեց նաեւ յանուն ամերիկեան ժողովրդի, որ խորհրդաժողովը Լոզանից չհեռանայ մինչեւ որ չգտնէ միջոց ստեղծելու համար հողային ապաստանարան այն ազգային հաւաքականութիւններին, որոնք չեն կամենայ կապւած մնալ ուրիշ ազգութեան, կրօնի, ցեղի պատկանող մի ժողովրդի հետ: Ըսմէ՞ք փաշան՝ պատասխանելով, թէ քրիստոնեաները միշտ արտաքին սաղրանքներով դրդւել են ապստամբւելու, յայտնեց, թէ փոքրամասնութիւնների զարգացումն ապահովող լաւագոյն գրաւականը թիւրքական ազատամիտ օրէնքներն են, որոնք հաւասար աչքով են նայում բոլոր համայնքներին, պայմանով, որ վերջիններս լինեն օրինապահ թիւրք քաղաքացիներ եւ չխուսափեն կատարել իրենց բաժին ընկած պարտականութիւնները:

13 դեկտ. նիստում, նորից պատասխանելով լորդ Բըրզընի առաջարկութեան, Ըսմէ՞ք փաշան վճռական կերպով մերժեց ազգային օջախի ստեղծումը: Նա ասաց, թէ ազգային օջախի ստեղծումը հաւասար է Թիւրքիայի նոր բաժանման փորձի: Մերժեց նաեւ քրիս-



տոնեաներին զինուորական ծառայութիւնից ազատ կացուցանելու առաջարկը, ինչպէս եւ Ազգ. Դաշնակցութեան հսկողութիւնը փոքրամասնութեանց իրաւունքների գործադրութեան վրա: Նրա ասելով՝ փոքրամասնութիւնների տեղափոխութեան իրաւունքի եւ դոյքի ապահովութիւնը կարգաւորւած է թիւրքական օրէնքներով, իսկ ինչ վերաբերւում է փոքրամասնութեանց իրաւունքի՝ կառավարութիւնը կը կիրառէ նոյն սկզբունքները, որ ընդունւած են Եւրոպայում վերջին տարիները կնքւած դաշնագրերով:

Լորդ Քըրզընի առաւելութիւնները յաջողութիւն չունեցան եւ 14 դեկտ. նիստում Ըսմէթ փաշան ոչ մի ղեկում չարաւ՝ առաջարկելով, որ պետութիւններն իրենք օջախ տրամադրեն հայերին:

Հայկական պատւիրակութեանց ներկայացուցիչները լսեցին փոքրամասնութեանց հարցի ենթալանձնաժողովում: Գ. Նորատունկեանը ասաց, թէ «միայն հայկական ազգային օջախի ստեղծումը, իրեւ երկու տարրերի հաշտութեան իրական խորհուրդ, կօշնէ մոռնալու ողբերգական ցաւոտ անցեալը, ցրելու ատելութիւնը եւ վերացնելու փոխադարձ վստահութիւնը»:

Իր հերթին Ա. Ահարոնեանը ընդգծեց, որ թիւրքերը զրաւելով Հայաստանի Հանրապետութեան կէսը՝ իրենց այդ արարքը արդարացնում են Բրեստ-Լիտովսկի (1918), Բաթումի (1918), Ալեքսանդրապոլի (1920) եւ Կարսի (1921) դաշնագրերով, բայց այդ դաշնագրերը Դաշնակիցների կողմից ճանաչւած չեն, եւ Հայաստանը ըստ ստորագրել է միայն բնաջնջման սպառնալիքի տակ: Պնդելով թիւրքիայում ազգային օջախի ստեղծելու պահանջի վրա՝ Ահարոնեանը մատնանշեց, որ մեծ պատերազմին մասնակցող մեծ ու փոքր պետութիւններից ոչ մէկը չի տառապել այնքան խորը, որքան փոքրիկ հայ ժողովուրդը, որ տւած զոհերը նրան իրաւունք են տալիս պաշտպանելու իր հայրենիքը, որքան եւ փոքր լինի նա:

Դեկտ. 30-ին ամերիկեան ներկայացուցիչը ենթալանձնաժողովին արաւ հետեւեալ յայտարարութիւնը.

«Հայերին ապաստանարան տալու նպատակով ինքնավար հողամասի ստեղծման առաջարկը ամենախորունկ եւ համակրական հետաքրքրութիւն է առաջ բերել Միացեալ Նահանգների քաղաքացիների խմբաւորումների մէջ: Զպէտք է մոռացւի նաեւ, որ Դաշնակից պետութիւնները տարբեր առիթներով յայտարարել են, թէ հայկական օջախը հայերի համար կը լինէր արդարադատութեան եւ ապահովութեան իմաստուն մի միջոց»:

Միաժամանակ ամերիկեան ներկայացուցիչը ենթալանձնաժողովի նախագահին յանձնեց երկու յուշագիր ազգային օջախի մասին.

մէկը ստորագրւած բողոքական եկեղեցիների Դաշնակցութեան խորհրդի ներկայացուցիչներ Բարթոնի եւ Փիթի կողմից, միւսը՝ Հայաստան - Ամերիկա Կոմիտէի կողմից Ռ. Մոնտգոմերիի ստորագրութեամբ:

1923 թ. յունւ. 6-ին, ենթալանձնաժողովում նորից յարուցեց օջախի խնդիրը այս անգամ Իտալիայի ներկայացուցիչ Մոնտանիայի կողմից, որ յայտնեց, թէ անհրաժեշտ է լուծել հայկական հարցը, եւ որ հաւատացնում էր թիւրքերին, թէ խնդիրը անկախ կամ նոյն իսկ ինքնավար օջախի մասին չէ, այլ որ հայ ազգաբնակչութեան հեշտութիւն տրւի միանալու թիւրքիայի որոշ մասում եւ որ այդ հողամասը հայերին հնարաւորութիւն տայ երաշխաւորելու իրենց մշակոյթի եւ լեզուի պահպանութիւնը:

Նոյն իմաստով արտայայտեցին եւ սէր Հորաս Ռեմբոլդը եւ տը Լաքրուան: Թիւրք պատւիրակ Ռիդա Նուրի բէյը մերժեց այդ հարցի մասին վարել որեւէ բանակցութիւն եւ ցուցական կերպով հեռացաւ ժողովից:

Օջախի էութեան մասին Մոնտանիայի իմաստով արտայայտեց եւ լորդ Քըրզընը առանձին յանձնաժողովում, բայց Ըսմէթ փաշան նորից մերժեց:

Այս վայրկեանից օջախի դադափարը բոլորովին մի կողմ դրեց, եւ յուլիս 24-ին կնքւած Լոզանի Դաշնագրի ոչ մի խօսք չի պարունակում հայերի մասին:

Փոքրամասնութիւնների իրաւունքի հարցի վերաբերմամբ Լոզանի Դաշնագիրը սահմանափակւում է միայն վերաբաղեցնելով հայերի կէտերի, որ կան Դաշնակիցների եւ ուրիշ պետութիւնների միջեւ կնքւած դաշնագրերում:

1923 թ. օգոստ. 13-ին, Հ. Հ. Պատւիրակութիւնը պետութիւններին ուղղեց մի բողոքագիր ընդդէմ Լոզանի Դաշնագրի, որը «կընքւած է այնպէս, որ կարծես հայերը բնաւ դոյութիւն ունեցած չլինէին»:

ԱԶԳ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԺՈՂՈՎԸ. 1923 թ. սեպտ. 25-ին Ազգ. Դաշնակցութեան հինգերորդ ժողովը զբաղեց հայ փախստականների խնդրով, որ ներկայացրել էր Յունաստանի պատւիրակը եւ նախապէս քննել հինգերորդ յանձնաժողովում: Զեկուցաբերն էր զը Բրուքէրը (Բելգիա): Ժողովը հանեց հետեւեալ բանաձեւը.

«Ժողովը հաշի առնելով առաջին, երկրորդ եւ երրորդ ժողովների, ինչպէս եւ խորհրդի ընդունած բանաձեւերը ի նպաստ հայերի, կամենալով ցոյց տալ իր համակրանքը այդ ապաքախտ բնակչու-











ըին (զինւորական՝ Յ. Հախվերդեան եւ արդարադատութեան՝ Գ. Պետրոսեան), որոնք ոչ միայն զանգեցնէին իրենց յետեւում, այլ անձնապէս էլ քաղաքական որեւէ արժէք չէին ներկայացնում: Մնում էին մէջ տեղը երեք հոգի՝ Յ. Քաջազնունին, Ս. Կարճիկեանը եւ Արամ Մանուկեանը: Արդ, ինչպիսի բացառիկ յատկութիւններէ տէր էլ որ լինէին այս գործիչները, նրանք երեքով ի վիճակի չէին ապահովելու դաշլիճի համար այն հեղինակութիւնը, որ անհրաժեշտ է խորհրդարանային կարգերում գործող մի կառավարութեան համար:

Եւ, իրօք, Յ. Քաջազնունու առաջին դաշլիճը եղաւ ոչ թէ մի խակական կառավարութիւն, այլ աւելի շուտ մի գործադիր կոմիտէ «պետական իշխանութիւնը ամփոփող» «միակ լիազօր մարմին»՝ Հայաստանի խորհրդին կից: Ուշագրաւ է, որ նաեւ ժողովրդի աչքին առաջին դիրքերում կանգնեց «Պարոն Պարլամենտը» եւ միայն նրանից յետոյ ու, արդէն եւկրորդ գծի վրա, նա տեսաւ կառավարութիւնը: Այս ամենը տեղի ունեցաւ, անշուշտ, առանց որեւէ պայքարի, քանի որ «իրաւագուրկ կողմը» երբեք չառարկեց այս վիճակի դէմ: «Մեմբ որ կանգ պարլամենտի ծառաներն են» — ասում էր խորհրդարանային Յանձնաժողովի նիստում Ֆինանսների նորընտիր նախարար Ա. Էնֆիաջեանը եւ որքան էլ նրա այս խօսքերը համարւէին արդիւնք «մոքալաքութիւնից»\*) նախարարութեան բարձրացած մարդու բնական չփոխադրութեան, ընդհանուր առմամբ, նրանք ճիշտ էին բնորոշում այն փոխարարութիւնը, որ ստեղծւել էր Հայաստանի խորհրդի ու կառավարութեան մէջ:

Ընդդիմադիր կուսակցութիւնները, բնականաբար, գոհ մնացին իրերի այս վիճակից: Դուրս մնալով կառավարութիւնից ու մասնակցելով ամենալայն լիազօրութիւններով օժտւած Հայաստանի խորհրդի աշխատանքներին, նրանք հնարաւորութիւն էին ստանում բաւականին նշանակալից դեր խաղալու պետական կեանքի հետ կապւած ամենակարեւոր խնդիրների լուծման մէջ ու արժեցնելու այսպիսով իրենց պատգամաւորական իրաւասութիւնները:

Իսկ Դաշնակցութիւնը: Ինչ էր նրա վերաբերմունքը վերը մատնանշած երեւոյթի հանդէպ: Ներգործօրէն դրական: Եւ այլ կերպ էլ չէր կարող լինել: Որովհետեւ եթէ անգամ ընդունենք, որ փոքրաթիւ դաշլիճի անհրաժեշտութիւնը բխում էր Հայաստանի այն ժամանակւայ պայմաններից, այնուամենայնիւ անբացատրելի է մը-նում, թէ ինչո՞ւ բոլոր աթոռներն էլ նրա մէջ չգրաւեցին դաշնակ-

\*) Թիֆլիզեցի քաղքեմի, վաճառական:

ցականները: Յանուն կոալիցիայի: Բայց մի՞թէ Յ. Քաջազնունու կառավարութիւնը դառնում էր կոալիցիոն նրանով, որ երկու խեղճ ու կրակ անկուսակցականներ, որոնք իրենց անձից բացի ուրիշ ոչ ոք չէին ներկայացնում, մտնում էին նրա մէջ: Ի հարկէ, ոչ: Գ. Պետրոսեանի եւ Յ. Հախվերդեանի դերն այլ էր: Նրանք կոչւած էին վերացնելու դաշլիճի միատարրութիւնը եւ, նազեցնելով դաշնակցականների դրաւած աթոռների թիւը, պակսեցնելու նաեւ այն պատասխանատւութիւնը, որ բնկնում էր ղեկավար կուսակցութեան վրա: Ինչ վերաբերում է նրան, որ կառավարութիւնը այդպիսի մի կազմով դառնում էր պահաւ աշխատունակ ու նազ հեղինակաւոր, այդ առանձին անպատեհութիւն չէր ներկայացնում, որովհետեւ կար Հայաստանի խորհուրդը՝ «միակ լիազօր մարմինը» ամփոփող իր մէջ Հայաստանի Հանրապետութեան պետական իշխանութեան», որը եւ կառավարում էր երկիրը, ունենալով իր կազմի մէջ բոլոր կուսակցութիւնների ներկայացուցիչներին:

Թերթերով այն շրջանի դաշնակցական մամուլը, եւ պատահեցի մի շարք դրութիւնների, որոնց հեղինակները փորձում են ապացուցանել, որ Դաշնակցութիւնը որպէս թէ հէնց սկզբից դէմ է եղել Հայաստանի խորհրդի բռնած ընթացքին եւ եթէ համակերպւել է դրան, այդ արել է միայն այն պատճառով, որ չէ ցանկացել վաղաժամ կոնֆլիկտներ ստեղծել միւս կուսակցութիւնների հետ ու խանգարել նրանց հետ կնքած թիֆլիզեան համաձայնութիւնը: Այս յօդւածները, որոնք գրւած են առաջին դաշլիճի տապալման օրերին ու նրանից յետոյ, արտայայտում են դաշնակցականների այն տրամադրութիւնները, որ առաջացան այդ երկրորդ շրջանում: Ինչ վերաբերում է կառավարող նախորդող ժամանակամիջոցին, Դաշնակցութիւնը վերը մատնանշած խնդրի նկատմամբ, ինչպէս ասացի, ունէր միեւնոյն վերաբերմունք, ինչ որ միւս կուսակցութիւնները: Դաշնակցականները ոչ թէ ակամայից համակերպւում էին հայ քաղաքական կեանքի ծանրութեան կենտրոնը խորհրդարան փոխադրւելուն, այլ գիտակցաբար ընդառաջում ու մինչեւ իսկ ամէն կերպ օժանդակում էին դրան: Պատճառը այն էր, որի մասին արդէն մէկ անգամ խօսել եմ այս յօդւածաշարքի մէջ: 1918 թւի աշնանը ստեղծւած քաղաքական դժոխային պայմաններում, Դաշնակցութիւնը չէր ուզում ապագայի ամբողջ պատասխանատւութիւնը վերցնել իր վրա մեն մենակ: Նա թէ Թիֆլիզում եւ թէ Երեւանում ամէն կերպ աշխատում էր բաժանել այդ պատասխանատւութիւնը միւս կուսակցութիւնների հետ եւ այդ պատճառով էլ պնդում էր, որ կառավարութիւնը լինի կոալիցիոն: Երբ, ի վերջոյ, այդ բանը չյաջողւեց ու



կառավարութիւնը կազմւեց միայն դաշնակցականներից ու քաղաքականապէս ոչ մի արժէք չներկայացնող անկուսակցականներից, (դատական եւ զինւորական նախարարներ), պետական գերագոյն իշխանութիւնը մարմնացնող ու ամբողջական պատասխանատուութիւնը կրող յայտարարեց Հայաստանի Խորհուրդը, այսինքն՝ այն մարմինը, որ կազմւած էր կոալիցիոն հիմունքներով եւ որի մէջ մասնակցում էին հայ կեանքում գործող բոլոր կուսակցութիւնները: Բարձրագոյն մարմինների մէջ իրաւասութիւնների այս իւրայատուկ բաշխումը այսպիսով մի միջոց դարձաւ իրադրոժելու, թէեւ մի քիչ ուրիշ ձևեր տակ, այն կոալիցիան, որին այդ շրջանում ջերմօրէն ձգտում էր Դաշնակցութիւնը:

Այս պարագան մեծապէս ազդեց հայ կուսակցութիւնների ու մասնաւորապէս ընդգիծադիր կուսակցութիւնների գործելակերպի վրա: Այն չափաւորութիւնը, որ նրանք յայտնաբերեցին իրենց գործունէութեան ընթացքում եւ որի մասին խօսք եղաւ նախորդ յոդւածին մէջ, բացատրւում է նաեւ նրանով, որ, գործելով իւրայատուկ իրաւասութիւններով օժտւած Հայաստանի Խորհրդի մէջ, նրանք առիթն ունեցան ընդհուպ մօտենալու պետական գործերին, մօտիկից ծանօթանալու ստեղծւած կացութեան ու տեսնելու այն դժւարութիւնները, որոնք ծառայել էին վարչական մարմինների առաջ: Հանդուրժող, զիջող ու չափաւոր եղաւ այդ շրջանում նաեւ Հ. Յ. Դաշնակցութիւնը, որ ամէն գնով աշխատեց սրահել գոյութիւնը այն մարմնի, որ մի տեսակ որբան էր հանդիսանում քաղաքական ուժերի համագործակցութեան ու «ազգային միութեան»:

Հայաստանի Խորհրդի ամբողջ գործունէութիւնը յիշեալ շրջանում իր վրա կրեց վերը մատնանշած մտայնութեան կնիքը: Առնենք, օրինակի համար, Խորհրդի նախագահութեան եւ յանձնաժողովների կազմութեան հարցերը: Անգամ բնականոն պայմանների մէջ գտնուող երկրներում այդ հարցերի լուծումը, շատ յաճախ, տեղի է տալիս վէճերի ու բախումների ու հաղադիւս դէպքերում է կատարւում խորհրդարանային բոլոր խմբակների փոխադարձ համաձայնութեամբ ու միաձայնութեամբ: Մենք որ ապրում էինք անասելի պայմաններում, որով եւ շատ աւելի առիթ ունէինք ջղայնոտ ու կուսական լինելու, վերոյիշեալ հարցերը լուծեցինք համերաշխութեամբ ու մի քանի վայրկեանում: Խորհրդի նախագահութիւնը կազմուեց լայն կոալիցիայի հիման վրա եւ ոչ ոք նրա անդամներից հակառակ քէ չստացաւ: Ձախ խմբակներից սոցիալիստ - յեղափոխականները, համաձայնելով մտնել նախագահութեան մէջ ու ստանձնել փոխ-նախագահի պաշտօնը, թեր քէարկեցին թէ Դաշնակցու-

թեան եւ թէ ժողովրդականների ներկայացրած թեկնածուներին (նախագահ եւ փոխ-նախագահ): Նախագահութեան բոլոր անդամները թեր քէ ստացան նաեւ դաշնակցականների, ժողովրդականների, թրքական Փրակցիանների ու անկուսակցականների կողմից: Միայն սոցիալ - դեմոկրատները ձեռնպահ մնացին, երբ քէարկութեան էր դրւած դաշնակցական Ա. Սահակեանի (նախագահ) եւ ժողովրդական Գր. Տէր-Պաշտարեանի (փոխ-նախագահ) թեկնածութիւնը, բայց թեր քէ տւին փոխ-նախագահութեան համար ներկայացրած մեր թեկնածուին (Գ. Զուրեան): Անշուշտ, նրանց կատարածը անկորեկտութիւն էր, որովհետեւ նաեւ նրանց յատկացւեց մի տեղ Խորհրդի նախագահութեան մէջ, աւագ քարտուղարի պաշտօնը տրամադրելով Պետ. Զաքարեանին, որ թէեւ չէր մտնում սոց. - դեմոկրատ Փրակցիայի մէջ, բայց մարքսիստական հակումներ ունենալով, սերտ կապ էր պահում հայ էսդեկների հետ ու համարւում էր նրանց անսրաշտօն թեկնածուն աւագ քարտուղարութեան համար:

Նոյն կոալիցիոն հիմունքներով ու համերաշխ միջոցաւ մէջ կազմւեցան եւ խորհրդարանային յանձնաժողովները, որոնց բոլորի մէջ, - հաշւելով նաեւ զինւորականը, - տեղ ստացան միւս Փրակցիանների ներկայացուցիչների կարգին նաեւ սոց. - յեղափոխականներն ու սոց. - դեմոկրատները:

Գերագնահատել այս փաստերի նշանակութիւնը պէտք է, բայց պէտք է նաեւ թերագնահատել: Եւրոպական որեւէ երկրում նման երեւոյթների մենք այսօր չենք հանդիպում: Համարեա թէ ամէն տեղ էլ, խորհրդարանի մէջ, աջ ու ձախ նստարանների վրա բազմած կան խմբակներ, որոնք մերժում են նոյնիսկ ամենասովորական հարցերի շուրջը համերաշխել կամ ձեւական համաձայնութիւններ կնքել միւս Փրակցիանների հետ: Իսկ մեր դադուժահայ «պարլամենտները»... Ո՞ր մէկը դրանից կարողացել է գործադրել, թէկուզ վերը մատնանշած չափով, այն համագործակցութիւնն ու համերաշխութիւնը, որի մասին ամենքն են խօսում, բայց որը շարունակում է մնալ անհասանելի իդէալ մեր դադուժների կեանքում:

Թողնենք Եւրոպան ու հայ դադութիւնը եւ վերագտնանք կրկին Հայաստանի Հանրապետութեան, առնելով, սակայն, նրա կեանքի երկրորդ շրջանը, երբ Հայաստանի Խորհրդին փոխարինեց Պարլամենտը, արդէն որպէս Բարձրագոյն Օրէնսդրական Մարմին:

Այդ պարլամենտում, ինչպէս յայտնի է, դաշնակցական պատգամաւորներից զատ, կար նաեւ սոց. - յեղափոխականների մի խմբակ՝ ընտրւած ժողովրդի քէներով՝ որը եւ կազմում էր Խորհրդարանի միակ օպոզիցիան: Ի՞նչ եղաւ Դաշնակցութեան վերաբերմուն-







զերը, այդ Փրակցիայի նախագահը Խորհրդի քննարկության դրա-  
հետեւեալ բանաձեւը. «Լսելով կառավարութեան յայտարարութիւ-  
նը, աչքի առաջ ունենալով երկրի ներկայ ծանր պայմանները եւ  
ցանկութիւն ունենալով, որ կառավարութիւնը իր առաջիկայ դուր-  
ծունէութեան ժամանակ՝ յենեաժ ղեկավարատական կազմակերպու-  
թիւնների վրա՝ ղեկավարել Փրակցիաների արած ցուցմունքներով  
(ասել է թէ բոլոր Փրակցիաների. ինչպիսի՞ սրտառուչ ցանկութիւն  
«ազգային միութիւն» հաստատելու՝ Ա. Խ.) տանելու երկիրը դէպի  
գեմոկրատական կարգերը — յօգուտ աշխատաւոր դասակարգերի,  
Հայաստանի Խորհուրդը անցնում է հերթական խնդիրներին»։ Այս  
բանաձեւի ճիշտ զնահատութիւնը տալու համար, յիշենք այստեղ,  
որ նրան դէմ ԲԷ ոչ ոք չուաւ, ոչ իսկ կառավարական կուսակցու-  
թեան պատկանող դաշնակցական պատգամաւորները։ Սրանք, ինչ-  
պէս եւ միւս Փրակցիաները, որոնց թւում նաեւ սոց.—յեղափոխա-  
կանների խմբակը միայն ձեռնպահ մնացին։ Եթէ դաշնակցականնե-  
րի ձեռնպահութիւնը վկայում էր այս բանաձեւի չափաւորութեան  
մասին, մեր ձեռնպահութիւնը իր հերթին ցոյց էր տալիս, որ իս-  
կապէս որեւէ բլոք կամ համաձայնութիւն գոյութիւն չունէր մեր  
ու սոց.—գեմոկրատական Փրակցիայի միջեւ։

Ինչ վերաբերում է ժողովրդականներին, նրանք իրենց գրաւոր  
պատասխանը սկսում էին «գոհունակութիւն յայտնելով կառավա-  
րութեան», որ «որոշել է հետեւել ոչալ քաղաքականութեան եւ  
խոստալիս է ծրագրային ծայրայեղ արտայայտութիւններից»։ Այս  
չարունակութեան մէջ անում էին մի շարք դիտողութիւններ, որոնք  
ոչ այնքան առարկութիւններ էին յայտագրի մէջ յիշատակած ծը-  
րագրի դէմ, որքան մատնանշումներ կառավարութեան կողմից լը-  
նութեան մատնած հարցերի մասին։ Վերջում ժողովրդականները  
խոստանում էին աջակցել կառավարութեան «այն չափով միայն,  
որչապի նա կիրառործէ իր ղեկավարացիայի այն խոստումները, ո-  
րոնց դէմ Փրակցիան առարկութիւն չունի եւ որչապի նա ի նկատի  
կառնէ եւ կաշխատի իրագործել Փրակցիայի դիտողութիւնները»։

Ինչպէս յայտնի է Յ. Քաջաղնունին առարկեց ժողովրդականնե-  
րի այս պայմանի դէմ եւ պահանջեց որ վստահութեան բանաձեւի  
միջից հանւի այն։ Ժողովրդականները համաձայնեցին (չորսը թեր,  
երկուսը դէմ), որից յետոյ քննարկութեան դրեց նրանց ու դաշ-  
նակցականների առաջարկած հետեւեալ բանաձեւը. «Հայաստանի  
Խորհուրդը լսելով կառավարութեան յայտարարութիւնը եւ մինիս-  
տրը-նախագահի բացատրութիւնները այդ յայտարարութեան առի-  
թով եղած դիտողութիւնների մասին, հաւանութիւն է տալիս նրանց

(բացատրութիւններին) եւ անցնում է հերթական խնդիրներին»։

Այս բանաձեւը անցաւ 23 ձայնով (15 դաշնակց., 4 ժողովրդ., 3  
թուրքեր եւ մէկ ուռւ)։ Դէմ ոչ ոք չքննարկեց։ Ձեռնպահ մնացին  
11 հոգի, որոնց մէջ մեր եւ սոց.— դեմ. Փրակցիաների այդ օրւայ  
նիստին ներկայ եղող բոլոր անդամները։

Ահաւասիկ կառավարութեան եւ Խորհրդի առաջին հանդիպման  
արդիւնքները։ Ինչի՞ մասին են վկայում նրանք։ Նախեւառաջ քա-  
ղաքական հասունութեան մասին այն կուսակցութիւնների, որոնցից  
կազմած էր այդ ժամանակւայ օպոզիցիան։ Տեսնելով դաշլիճի թե-  
րութիւնները ու դժգոհ մնալով նրա ներկայացրած յայտագրից,  
ընդդիմադիր խմբակները այնուամենայնիւ ունեցան բաւականաչափ  
քաղաքական իմաստութիւն հասկանալու համար, որ չի կարելի ա-  
ռաջին իսկ օրից տարւել պարլամենտական խաղով ու կառավարա-  
կան ճգնաժամ առաջ բերել։ Յ. Քաջաղնունու դաշլիճի տապալու-  
մը, վերը մատնանշած պատճառներով, թերեւս այնքան էլ մեծ չա-  
րիք չէր, բայց դժւար չէր կուսել, որ նա անդրադառնալու էր  
նաեւ Խորհրդի վրա, խանգարելով այն դոյալիճակը, որ նախա-  
պայման էր այդ Բարձրագոյն Մարմնի արդիւնաւէտ գործունէու-  
թեան։ Այսպէսով իր ձեռնպահութեամբ անհրաժեշտ մեծամաս-  
նութիւնը կառավարութեան համար, օպոզիցիան չուզեց դնալ չը-  
մրտածւած ճանապարհով եւ հնարաւորութիւն տաւ Հայաստանի  
Խորհրդին արագ կերպով փակելու դաշլիճի հարցը ու «անցնելու  
իր հերթական խնդիրներին»։

Ո՞րոնք էին այդ խնդիրները, ես այստեղ չպիտի թեմ։ Վերը  
արդէն աւելցի, որ Հայաստանի Խորհուրդը չէր սահմանափակում  
միայն օրէնսդրական գործունէութեամբ, այլ զբաղւում էր պետա-  
կան կեանքի համարեա թէ բոլոր հարցերի քննութեամբ ու տնօրէ-  
նութեամբ։ Դա իր յատուկ դրոշմն էր դնում նրա աշխատանքների  
վրա։ Օրինագծերի քննութիւնից ու քննարկութիւնից դատ, Խորհուր-  
դի նիստերը նւերում էին շատ յաճախ կառավարութեան ղեկոյցնե-  
րին ու բացատրութիւններին, որոնք տրւում էին պատգամաւորնե-  
րի կողմից ներկայացւած հարցումներին ու հարցապնդումներին ի  
պատասխան։ Այդ նիստերում տեղի ունեցող վիճաբանութիւնները  
երբեմն ընդունում էին շատ բուռն բնոյթ, բայց բնորոշ է, որ նը-  
րանք երբեք չվերածւեցին այնպիսի սկանդալների, որոնցով բաւակա-  
նին հարուստ են եւրոպական պարլամենտների տարեգրութիւնները։  
Յիշատակածս ամբողջ շրջանում Հայաստանի Խորհրդի մէջ չպա-  
տահեց կարգի խանգարման այնպիսի մի դէպք, որ ստիպէր նրա նա-







Հայ պետական կեանքում ստեղծւած վերոյիշեալ գոյավիճակը, արդիւնք էր, ինչպէս ասացի, այն հանգամանքի, որ տւեալ շրջանում մեր քաղաքական կուսակցութիւնները եւ նրանց թւում մանաւանդ Հ. Յ. Դաշնակցութեան գործելակերպի վրա մշտապէս ազդեց մեր ժողովրդին սպառնացող արտաքին վտանգի ու նորակազմ Հանրապետութեան առաջ բացւող մոռացու հեռանկարների գիտակցութիւնը: 1918 թ. հոկտեմբերին, արտաքին աշխարհում տեղի ունեցան առաջնակարգ կարեւորութիւն ունեցող իրադարձութիւններ, որոնք հիմնովին փոխեցին մեր քաղաքական գործիչների ինքնազգացումն ու մտայնութիւնը ու ծնեցրին նրանց մէջ նախկինին հակոտնեայ տեսակէտներ հայ ժողովրդի ու Հայաստանի Հանրապետութեան ապագայի մասին: Սակայն այս լաւատեսութիւնը միեւնոյն թափով չհամակեց մեր բոլոր կուսակցութիւններին, ինչպէս որ համակել էր յոռետեսութիւնը նախկին շրջանում: Հ. Յ. Դաշնակցութիւնը եղաւ շատ աւելի խանդավառ Հանրապետութեան առաջ բացւող հեռանկարների նկատմամբ, քան ընդդիմադիր կուսակցութիւնները եւ մանաւանդ ձախ օպոզիցիան: Հոգեւիճակի ու տեսակէտների այս տարբութիւնը հիմնովին փոխեց նախկին շրջանում ստեղծւած *Statu quo* ն եւ նոր հունի մէջ դրաւ հայ քաղաքական կեանքի հետագայ ընթացքը:

Հոկտեմբերի 5-ին Երեւան եկաւ Խալիլ փաշան: Եկաւ ոչ թէ բանակի գլուխ անցած, ինչպէս սպասում էինք մենք բոլորս գրեթէ ամէն օր, այլ որպէս հիւր իր «հին բարեկամ Արամին»՝ Հայաստանի ներքին գործոց նախարարին: Ողջագուրանքի մեղրածոր խօսքերից, որ նա արտասանեց իր բարեկամին հանդիպելիս, շատ աւելի քաղցրահնչիւն էին այն խոստումները, որ նա տւաւ հրաժեշտի ժամանակ: Խալիլ փաշան խոստացաւ պարպել թուրք զօրքերի կողմից գրաււած Լոռի-Փամբակի շրջանը: Փաստօրէն որեւէ շնորհ չկար այս խոստումի մէջ, քանի որ Հայաստանին վերադարձում էր մի հողամաս, որ նրան էր պատկանում նոյն իսկ Բաթումի դաշնագրով: Բայց չնայած դրան, հայ ղեկավար շրջաններն ու ժողովրդական զանգւածները չէին կարող չփնտռել «խորհուրդ մեծ եւ սքանչելի» այն բանի մէջ, որ առաջին անգամը լինելով այս վերջին մէկ տարւայ ընթացքում, թրքական յարածիւն մակընթացութեան փոխարէն կատարւում էր հակառակ պրոցես՝ տեղատուութիւն:

Անցաւ եւս մի տասնեակ օր ու ամէն ինչ պարզեց մեզ համար: - Պատերազմը վերջանում էր եւ վերջանում էր Թիւրքիայի ու նրա զինակիցների պարտութեամբ: Այդ նախեւառաջ նշանակում էր, որ վերացւում է այն դամոկլեան սուրը, որ կախւած էր Հայաստանի

Հանրապետութեան գլխին: Հոկտեմբերի վերջերին հայ քաղաքական միտքը, իր զանազան ճիւղաւորումներով, արդէն ազատագրւած էր արտաքին վտանգի ճնշումից: Բայց այդ բոլորը չէր: Արտաքին ճակատում տեղի ունեցած փոփոխութիւնները բարեբար ազդեցութիւն էին անելու նաեւ մեր ներքին գործերի վրա: Պարենաւորման տագնապը մեղմելու էր եւ դրա հետեւանքով ցամքելու էր ակն նաեւ այն աղբիւրի, որ սնունդ էր տալիս զանազան դժգոհութիւնների՝ քաղաքական հողի վրա:

Ստեղծւած այս նոր պայմանները, ինչպէս ասացի, հսկայական յեղաշրջում առաջ բերին մասնաւորապէս Հ. Յ. Դաշնակցութեան ինքնազգացման ու մտայնութեան մէջ: Նա ժամը հասած համարեց գործելու նոր մեթոտներով ու նոր նպատակների համար: Իրականութիւն էր դառնում այն, ինչի մասին երազել էին դաշնակցական գործիչներից շատերը: Յիշում եմ մի դէպք մօտիկ անցեալից: Մենք դեռ Թիֆլիզում էինք՝ Արամեանցի տանը: Նոր էին վերադարձել Աղզային Խորհրդի պատւիրակները Բաթումի դաշնագրի բեռը չալկած: Կքած այդ բեռի ծանրութեան տակ՝ մենք փսփսուկով խօսում էինք այն մասին, թէ ի՞նչ պէտք է անենք սրանից յետոյ: «Բայց մի՞թէ պարզ չէ, - միջամտեց Աղզ. Խորհրդի դաշնակցական անդամներից մէկը, - մենք առայժմ պէտք է տալի անքնն, մինչեւ որ տեսնենք, թէ ինչ է լինելու: Բայց հէնց որ հասաւ մեր ժամը, վեր ենք կենալու ու քշշը՛ե՛լու ենք դրանց (թիւրքերին) մինչեւ Դիարբէքը»:

Եւ այժմ ահա վերջացել էր «տափ անելու» շրջանը ու հասել էր ժամը «դէպի Դիարբէքի խոյանալու»: Երբ այս նոր տրամադրութեամբ համակւած՝ Դաշնակցութիւնը նայեց իր շուրջը, նա տեսաւ հայ իրականութիւնը - ներկան ու մօտիկ անցեալը - բոլորովին նոր գոյնով: Եւ է՛ն առաջինը, որ նա նկատեց զարմանքով, այդ մենք էինք՝ Հայաստանի Խորհրդում նստած ընդդիմադիրները: Ո՞վքեր են այս մարդիկ եւ ինչո՞ւ համար են այստեղ բազմել, այն էլ դաշնակցականներին հաւասար թուով: Աւելի մեծ անհեթեթութիւն, քան այդ չէր կարող լինել հայ ղեկավար կուսակցութեան համար: Պէտք էր վերջ տալ այդ անհեթեթութեան, պէտք էր շտկել այն սխալը, որ թոյլ էր տւել Դաշնակցութիւնը անցեալում՝ ձախորդ պայմանների ճնշման տակ: Այժմ, երբ այդ պայմանները փոխւել են, կատարւած զիջումներն էլ դառնում են աւելորդ ու անմիտ: Պէտք է վերանայել անցեալում կնքած համաձայնութիւնը, պէտք է ուժերի այնպիսի մի նոր դասաւորում կատարել, որ Դաշնակցութիւնը ստանայ գերակշիռ դեր հայ պետական կեանքում:







կել եւ անկարող էր անգամ մէկ աւելորդ օր սպասել դրան: Լայն հասարակութեան անծանօթ են Յ. Քաջաղնունու առաջին դահլիճի տապալման պատճառները, եւ ես ստիպւած եմ մի փոքրիկ փակագիծ բանալ այստեղ ու մէջ բերել այդ դէպքի մանրամասնութիւնները:

Հայաստանի առաջին կառավարութիւնը տւաւ իր հրաժարականը նոյեմբերի սկզբին, որովհետեւ նախորդ ամսւայ վերջին նա մնացել էր փոքրամասնութեան մէջ խորհրդի այն նիստում, որտեղ քննուել ու բեկանւել էր ներքին գործոց նախարարի արած մի կարգադրութիւնը Դհլիջանի գեմատվոյի (տեղական ինքնավարութեան) մասին:

Այդ զեմատվոն կազմւել էր դեռ Անդրկովկասեան իշխանութեան ժամանակ սոց. — յեղափոխական մի քանի գործիչների ջանքերով: Մեր այդ ընկերները, 1918ի փետրւարի խառն օրերին կարողացել էին դաւառի այլատարր (հայ, թուրք, ռուս) ազգաբնակչութիւնը միացրնել տեղական ինքնավարութեամբ կառավարւելու դադափարի շուրջը եւ, այսպիսով ստեղծել էին Դիլիջանի զեմատվոն ու նրա միջոցով էլ այդ վիճելի հողամասը հետագայում միացրել էին Հայաստանի Հանրապետութեան՝ խաղաղ ճանապարհով ու բոլոր տարրերի (մէջն առնելով նաեւ թուրքերին) միահամուռ համաձայնութեամբ: 1918ի աշնանը, երբ հիմք դրւեց պետական իշխանութեան, հնարաւոր չեղաւ զեմատվոներ կազմակերպել Հայաստանի միւս գաւառներում, որտեղ, դրա փոխարէն, կարգւեցին նշանակովի գաւառապետներ ու գաւառական վարչութիւններ: Այսպիսով ստեղծւեց մի «անբնական» կացութիւն, որի հետեւանքով Հայաստանի գաւառներից մէկի իշխանութիւնը մնաց էսէռներին ձեռքին, դժգոհութեան մատնելով այնտեղի դաշնակցականներին: Այս վերջինները միշտ ցանկացան դրաւել զեմատվոն, եւ վստահ լինելով, որ ընտրութիւնների դէպքում, յաղթութիւնը տանելու են իրենք, պահանջեցին զեմատվոյի շուտափոյթ ընտրութիւններ, առանց սպասելու, որ լրանայ հնի լիազօրութիւնների շրջանը: Ներքին գործոց նախարարը, ընդառաջ գնալով Դիլիջանի դաշնակցականների ցանկութեան, հրահանգ տւաւ կատարել այդ նոր ընտրութիւնները: Նրա այդ կարգադրութիւնը հակաօրինական էր, քանի որ նախարարը կարող էր ժամանակից առաջ լուծել ընտրովի մի մարմին այն դէպքում միայն, եթէ այս վերջինը ապօրինի որեւէ քայլ էր կատարել: Նման մեղադրանք չէր յարուցւում Դիլիջանի մեր ընկերների դէմ, որոնք, ընդհակառակը, բարի յարաբերութիւնների մէջ էին ներքին գործոց նախարարութեան հետ:

Մեր Փրակցիան, բնական է, չէր կարող չհակազդել այս ապօրինի կարգադրութեան: Ստանալով մանրամասն տեղեկութիւններ կա-

տարւած կարգադրութեան ու նրա դրդապատճառների մասին, մենք ներկայացրինք մի հիմնաւորւած հարցապնդում Դիլիջան գործոց նախարարին: Այս վերջինս տւաւ իր բացատրութիւնները, որոնք անբաւարար նկատւեցին Հայաստանի խորհրդի մեծամասնութեան կողմից: Կառավարութիւնը, մեր Փրակցիայի առաջարկած բանաձեւի քննարկութեան ժամանակ վստահութեան հարց չդրաւ, բայց երբ այդ բանաձեւը չահեց ձայների մեծամասնութիւն, Յ. Քաջաղնունին յայտնեց, որ կառավարութիւնը հրաժարւելու է, որովհետեւ մնացել է փոքրամասնութեան մէջ:

Ամենահետաքրքրականը սկսեց, սակայն, դրանից յետոյ: Ընկերներիս համաձայնութեամբ, միւս օրը ես տեսնեցայ Փինանների նախարար Խ. Կարճիկեանի հետ՝ նպատակ ունենալով պարզելու մեր տեսակէտը տեղի ունեցած քննարկութեան ու նրա հետեւանքով ըստեղծւած նոր կացութեան մասին: Ես նրան յայտնեցի, որ մեր կարծիքով կառավարական տաղնալի մասին խօսք լինել չէ կարող: Նախ բանաձեւի քննարկութիւնից առաջ Յ. Քաջաղնունին վստահութեան հարց չէ դրել, որով խորհրդի քննարկութեան նշանակութիւնը սահմանափակւում է միայն նրա բացասական վերաբերմունքով Ներքին գործոց նախարարի վարչական մի կարգադրութեան հանդէպ: Դահլիճի ընդհանուր քաղաքականութիւնը չօշափող այսպիսի անկարեւոր հարցի շուրջը ստեղծւած տարակարծութիւնները բաւարար հիմք չեն կարող համարւել կառավարութեան հրաժարականի համար: Միւս կողմից, ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ Հայաստանի խորհուրդը, բացի օրէնսդրականից իրագործում է նաեւ վարչական ֆունկցիաներ, անխուսափելի են այս մարդի մէջ տեսակէտների բախումներ նրա եւ կառավարութեան միջեւ, որոնք, սակայն, այս վերջինի կողմից չպէտք է դիտւեն, որպէս անվստահութեան արտայայտութիւններ նրա ընդհանուր քաղաքականութեան հանդէպ եւ հրաժարականների առիթ չպէտք է ծառայեն: Խ. Կարճիկեանը իմ բաժարականների առիթ չպէտք է ծառայեն, որ ինքն էլ նոյն կարգադրութիւնները լսելուց յետոյ, յայտնեց, որ ինքն էլ նոյն կարծիքին է: Ծանօթ լինելով նրա ունեցած ազդեցութեան կառավարութեան ու իր կուսակցութեան մէջ, ես բաժանեցի նրանից այն համոզումով, որ դահլիճի տաղնալը վերացւած է: Որքա՞ն մեծ եղաւ մեր զարմանքը, երբ հետեւեալ օրը յայտնի դարձաւ, որ Յ. Քաջաղնունին, այնուամենայնիւ, որոշել է հրաժարական տալ, եւ արդէն բանակցութիւնների է ձեռնարկել նոր կառավարութիւն կազմելու համար: Ստեղծւում էր, այսպիսով, բաւականին հետաքրքրական մի մար: Ստեղծւում էր, այսպիսով, բաւականին հետաքրքրական մի դրութիւն: Մենք, որ հարցապնդում էինք ներկայացրել ու բանաձեւ անցկացրել, յայտարարում էինք, որ դահլիճի տաղնալ չկայ, որ







նոյնիսկ դահլիճից դուրս մնացած, բայց դանդաճների 90 տոկոսը նւաճած կուսակցութեան կենտրոնի անդամը:

Այս կարեւոր խնդրի շուրջը ընդդիմադիր կուսակցութիւնների մէջ գոյութիւն ունէր տեսակէտների տարբերութիւն, որը եւ պատճառ դարձաւ նրանց կոալիցիայի հանդէպ ցոյց տաւ՝ վերաբերմունքի տարբերութեան: Ս. Վրացեանը իր «Հայաստանի Հանրապետութիւնը» գրքում (էջ 173) հետեւեալ ձեւով է ներկայացնում այդ տարբերութիւնը. «... Հ. Յ. Դաշնակցութեան կողմից արւած առաջարկի վրա սոց. — դեմ. եւ սոց. — յեղ. Ֆրակցիաները դրին ահլընյայտնի կերպով անիրադրոճելի պայմաններ. առաջինները պահանջեցին երկու տեղ եւ անպայման ներքին եւ արտաքին գործոց նախարարութիւնը. վերջինները իրենց համար առանձին պահանջներ չունէին, բայց վճռականապէս դէմ էին, որ արտաքին գործոց նախարարութիւնը յանձնւի ժողովրդականներին եւ ներքինը՝ սոցիալ — դեմոկրատներին»: Այստեղ փաստը ճիշտ է արձանագրւած: Անհատականալի է միայն թէ ինչո՞ւ Դաշնակցութեան համար անընդունելի էին նաեւ մեր պայմանները, որոնց համաձայն վէճի առարկայ եւ զող ներքին եւ արտաքին գործոց նախարարութիւնների հարցը լուծւում էր յօդուտ այդ կուսակցութեան: Մեր դիրքը շատ որոշ էր նոր կառավարութեան ու կոալիցիայի հանդէպ: Մենք գտնում էինք, որ նախկին կարգը պէտք է շարունակել, որ դահլիճի փոփոխութեան հարց չպիտի դրւի: Բայց կանգնած լինելով կատարւած փաստի առաջ եւ ընդունելով առաջարկ մասնակցելու կոալիցիոն դահլիճի մէջ, մենք չքաշեցանք յայտնելու, որ առանձնապէս խանդավառւած չենք ոչ այդ կոալիցիայով եւ ոչ էլ նրա առաջ պարզուող հեռանկարներով: Եթէ խառն դահլիճը որեւէ նշանակութիւն ունէր այդ պահին, ապա միայն որպէս խորհրդանշող «ազգային միութեան»: Դրա համար պէտք էր, որ նրա մէջ մասնակցէին Խորհրդի մէջ ներկայացւած բոլոր կուսակցութիւնները: Երբ սոց. — դեմոկրատների ու ժողովրդականների չափազանցւած պահանջների պատճառով անհնարին դարձաւ ընդհանուր կոալիցիան, բնականաբար վերացաւ նաեւ դահլիճի մէջ մտնելու մեր առաջ դրւած հարցը: Ինձ թւում է, որ Դաշնակցութիւնն էլ առանձնապէս չէր փնտռում ձախ օպորտիւնիստ գործակցութիւնը, եւ դրանով պէտք է բացատրել այն փութկոտութիւնը, որով Յ. Քաջազնունին վերջացրեց մեզ հետ իր բանակցութիւնները եւ ձեռնարկեց կազմել նոր կառավարութիւն միայն դաշնակցականների եւ ժողովրդականների մասնակցութեամբ:

Նոյեմբեր 4-ին այդ նոր դահլիճը ներկայացաւ Հայաստանի Խորհրդին, որտեղ նա ունէր արդէն կայուն մեծամասնութիւն: Ընդ-

դիմադիր խմբակներից մէկը դարձել էր կառավարական կուսակցութիւն եւ օպորտիւնիստ դիրքում մնում էինք այժմ միայն մենք եւ սոցիալ — դեմոկրատները: Ժողովրդականների ներկայութիւնը նոր կառավարութեան մէջ մէկ կողմից եւ այն բոլոր անցուղարձերը, որոնք նախորդեցին այդ դահլիճի կազմութեան միւս՝ ստիպում էին մեզ տարբեր դիրք բռնել կառավարութեան հանդէպ: Եւ մենք լքեցինք ձեռնպահութեան քաղաքականութիւնը ու դէմ քէ տւինք Յ. Քաջազնունու երկրորդ դահլիճին:

Իսկ ի՞նչ ստացւեց այդ խառն դահլիճից: Մեր բոլոր յոռետեսութիւնները արդարացան եւ արդարացան աւելի մեծ չափով, քան որ երեւակայում էինք: Աւելի արդահատելի, եթէ չասենք՝ այլանդակ, պատկեր դժւար է երեւակայել, քան այն, որ պարզեց Հայաստանի առաջին կոալիցիոն դահլիճը: Ոչ կառավարութեան ներսը եւ ոչ էլ Հայաստանի Խորհրդում չստեղծւեց որեւէ միութիւն դաշնակցականների ու ժողովրդականների միջեւ: Նրանք գործեցին, պահեցին իրենց նախկին դիրքերը ու նախկին վերաբերմունքը միմիանց հանդէպ. մի վերաբերմունք, որ, ինչպէս գիտենք, բնաւ բարեկամական չէր: Առանձնապէս մեծ հրասթափութիւն կրեցին ժողովրդականները: Նրանք համոզւեցին, որ սխալ է եղել իրենց այն կարծիքը, թէ դրաւելով մեծ թւով աթոռներ դահլիճում, ձեռք կը բերեն նաեւ մեծ ազդեցութիւն երկրի իշխանութեան մէջ: Նրանք տեսան, որ այն խօսքը, թէ «լինում են այնպիսի քէարկութիւններ երբ ձայները կշռւում են եւ ոչ թէ համարւում», Հայաստանի այն ժամանակւայ պայմաններում, միանգամայն համապատասխանում էր իրականութեան: Բայց տեսնելով այս ամէնը, չկարողացան կամ աւելի ճիշտը չուղեցին հանել այն ճիշտ եղրակացութիւնը, թէ, նախքան դահլիճի մէջ աթոռներ դրաւելը, պէտք է քաղաքականապէս նւաճեն դանդաճների համակրութիւնը, պէտք է նախեւառաջ դառնան ուժեղ կուսակցութիւն: Եւ չուղենալով դալ այս եղրակացութեան, որ նրանցից պահանջում էր տեւական եւ անհաճոյ աշխատանք, իրենց անյաջողութեան մեղքը փորձեցին բարդել Դաշնակցութեան վրա: Ես ոչ մէկ ցանկութիւն չունեմ պաշտպանելու այս կուսակցութեան քաղաքականութիւնը յիշածս ժամանակաշրջանում, սակայն պէտք է յայտարարեմ այստեղ անայլալ, որ Դաշնակցութիւնից շատ աւելի ժողովրդականների վրա է ընկնում պատասխանատուութիւնը այն անյաջողութեան, որ ունեցաւ Յ. Քաջազնունու կոալիցիոն դահլիճը, եւ մանաւանդ այն խաղքութեան, որ զուգորդեց այդ «կոալիցիայի» խղման:

Փարիզ.





## ՍԱՄՍՈՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԱՆԴՐԱՆԻԿ ԴԵՍՊՈՒՆԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

## V

## ԷՆԶԵԼԻԻՑ ԹԷՀՐԱՆ

Ինգլիի հայկական դպրոցը չբեղ զարդարանքի մէջ էր : Ընդհանուր արդ ու զարդի մէջ փայլում էին հայկական եւ պարսկական դրօշները, կողք կողքի : Խոնւած բազմութիւնը, անվերջ «կեցցէ»ներով ու ծափերով իր դեսպանին առաջնորդեց սրահը, ուր քառաձայն խումբը երաժշտագէտ Անտոն Մայիլեանի ղեկավարութեամբ երգեց Յ . Մովսէսեանի յաւուր պատշաճի յօրինած ձօնը, որ ձայնագրել էր ինքը՝ շնորհալի երաժշտագէտը : Ապա Իշխանը յուզած՝ հաղորդեց ներկաներին Հայաստանի Հանրապետութեան ողջոյնները : Հայաստանի Հանրապետութիւն... Սրահը թնդաց «կեցցէ»ներից ու որոտալից ծափերից : Ժողովրդի ողբերգութիւնը անսահման էր : Շատերը հեկեկում էին ուրախութիւնից :

Այնուհետև ղեկավանք մի ամփոփ ճառով, տեղեկութիւններ տը-  
ւեց Հայաստանի վիճակի, Ժողովրդի աստիճանական բարոքման եւ  
պարսկահայերի կատարելիք ղերի ու պարտականութիւնների մա-  
սին: Ճառը ընհատուած էր «Կեցցէ՛ Հայաստանը» բացազանչութիւն-  
ների ու ծափերով:

Նոյն օրը երեկոյեան դեսպանը ընդունեց պաշտօնական այցելու-  
ներին: Եկան ողջունելու դատաւորը, քարոզողարը, ոստիկանապե-  
տը եւ մի շարք պաշտօնեաներ, որոնց յաջորդ-օր Իշխանը գնաց փո-  
խայցելութեան:

Պարսկաստանի բոլոր հայաբնակ վայրերից ստացւեցին բազմաթիւ հեռագիրներ, ազգային մարմիններէից եւ անհատներէից, որոնք ցնծութեամբ բարի գալուստ էին մաղթում իրենց ազատագրւած հայրենիքի անդրանիկ դեսպանին:

Հետևեալ երեկոյեան, Հայկական Ակումբի պերճօրէն զարդար-

97

լած սրահում, տեղի ունեցաւ հացիկերոյթ ի պատիւ հիւրի: Ներկայ էր խումն բաղմութիւն, որի մէջ՝ հողաբարձական կազմը, ընդու-նող յանձնախմբի անդամները, Հ. Յ. Դաշնակցութեան եւ Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան ներկայացուցիչները, Հայ Կանանց Ըն-կերութիւնը, Ծնողական Խորհուրդը, Երիտասարդաց Միութիւնը եւ ուրիշներ: այլ եւ դատաւորը, քարզուղարը, անդլիական քաղաքա-կան եւ զինուորական պետը, քաղաքային բժիշկը եւ ուրիշ պաշտո-նական անձեր:

Հացկերոյթը սկսեց քառաձայն երգեցիկ խմբի երգով՝ «Մեր Հայրենիք» եւ պարսկական աղբալին երգը, որից յետոյ Ի. Բէգ-խանեանը հայ դաղութի եւ Գր․ Եղիազարեանը ընդունող յանձնախմբի կողմից ասեցին ողջոյնի ողեւորւած խօսքեր։ Ապա Իշխանի առաջարկութեամբ խմբեց պարսիկ կառավարութեան կենացը, իսկ դատաւորը բաժակ բարձրացրեց ի պատիւ Հայաստանի կառավարութեան։ Յետոյ, իրար յետեւից յուզւած ճառեր խօսեցին Հ. Յ. Դաշնակցութեան կողմից՝ Ի. Բէգխանեանը, Գ. Եղիազարեանը եւ Ս. Յովսէփեանը, Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան ներկայացուցիչը եւ շատ ուրիշ հանդիսականներ։ Բոլոր ճառերի միտքը նոյնն էր․ անսահման հրճւանք Հայաստանի Հանրապետութեան ստեղծման առթիւ եւ սրտադին համակրանք՝ նրա դեսպանին։

Հացկերոյթը տեսեց մինչեւ գիշերւոյ ժամը 2-ը: Միւս օր ժամը 1-ին դեսպանը հանդիսաւոր դնացքով մեկնեց Ռաշտ, որտեղից հայ համայնքը իբրեւ ներկայացուցիչ ուղարկել էր Մ. Ղազարեանին: Ռաշտում էլ սպասում էին անհամբեր եւ պատրաստութիւններ էին տեսել ընդունելութիւնը կատարեալ դարձնելու համար: Եւ, յիրաւի, այստեղ էլ շատ շքեղ ընդունելութիւն ցոյց տրւեց: Հայոց դպրոցը պճնւած էր ընտիր գորգերով, ծաղիկներով ու դալար կանաչով: Զոյգ դրօշակները ծածանւում էին ամէն կողմ: Ընդարձակ սրահի պատերին կախւած էին ազգային դործիչների պատկերները: Ընդու- նելութեան տեղ էր պատրաստւած եւ քաղաքից դուրս, Շալքու այ- դում, ուր ժամանակից առաջ հաւաքւել էին կառավարութեան ներ- կայացուցիչները, ազգային մարմինները եւ երկսեռ խումբ բաղմու- թիւն: Հ. Յ. Դաշնակցութեան ներկայացուցիչները զնացել էին աւե- լի առաջ: Նրանց կողմից Հ. Յ. Դ. Գիլանի կոմիտէի անգամ Ալ. Խաչատրեանը բարի գալուստի ուղերձ արտասանեց եւ մի ճոխ ծաղ- կեփուռնջ մատուցեց Տիկ. Սաթենիկին:



Հայրենիք»-ը: Ամէն կողմից ծաղկեփնջերի տեղատարաւ. Իշխանի անցած ճամբան ծածկւում էր ծաղիկների գեղեցիկ գորգով: Բոլորի աչքերից արդունք էր երեւում:

Փոքրիկ դադարից եւ պաշտօնական տեսակցութիւններից յետոյ, 41 կառքերից բաղկացած շքերթը դիմեց դէպի քաղաք։ Պաշտօնական ընդունելութիւնը տեղի ունեցաւ դպրոցում, որի մուտքից մինչեւ սրահը շարւած էին տօնական զգեստներ հագած աշակերտ աշակերտուհիները իրենց ուսուցչական կազմով։ Սրահը մտնելիս՝ նւագախումբը նւագեց երկու երկրների ազգային երգերը։ Ապա, սրահում, ողջոյնի խօսք ասաց նահանգապետի ներկայացուցիչը, որին պատասխանեց Իշխանը։ Քաղաքի հայ համայնքի կողմից խօսեց բժ. Իս. Տէրտէրեանը։ Խօսք արին եւ մի շարք ուրիշ ներկայացուցիչներ, որոնց բոլորին պատասխանեց ղեսպանը։

Հանդէսը վերջացաւ հիւրասիրութեամբ եւ մտերիմ զրոյցով, որից յետոյ Իշխանը իր շքածամբով առաջնորդեց վաճառական Սարգիս Զարիֆեանի տունը, ուր այցելութեան եկաւ նահանգապետ Ագրին:

Հետեւեալ օրը, դեկտ. 27-ի առաւօտեան, այցելութեան եկան քարգուղարը, ոստիկանապետը, մէարէֆի ըէխը եւ կառավարական ուրիշ հիմնարկութեանց ներկայացուցիչներ: Իշխանը իր հերթին փոխայցելութիւն տւեց բոլորին: Մէարէֆի ըէխը առաջնորդեց նւրան պետական դպրոցը, ուր ուսուցիչները եւ աշակերտները ընդունեցին մեծարանքով: Իշխանը այցելեց եւ հայկական դպրոցը, ուր ջերմ ընդունելութեան արժանացաւ: Աշակերտական քառաձայն խումբը պ. Միքէեանի ղեկավարութեամբ երգեց ազգային եւ ժողովրդական երգեր: Տեղի ունեցաւ մտերիմ զրոյց ուսուցիչների հետ:

Յաջորդ օրը, դեկտ. 28-ին, գալըոցի հոգաբարձութիւնը եւ ուսուցչական կազմը հանդէս-երեկոյթ ունեցաւ ի պատիւ Հայաստանի Հանրապետութեան ներկայացուցչի, որ տեւեց մինչեւ կէս գիշեր, որից յետոյ, մինչեւ առ. ժամը 4-ը, տեղի ունեցաւ յատկապէս կազմակերպւած խնջոյք:

Մեկնումը Ռաշտից էլ եղաւ խանդավառ ու սրտաշարժ: Յաջորդկայանը Ղազեխնն էր, ուր նոյնպէս պատրաստւած էր փառաւոր ընդունելութիւն: Ազգային մարմինները, հասարակութիւնը, վաճառականութիւնը, գաղթականութեան ներկայացուցիչները այդ աստիճանով խորհրդակցութիւն էին ունեցել, որի ժամանակ վաճառականներից մէկը խնդրեց իրեն թողնել ընդունելութեան ամբողջ ծախքը հոգալու պատիւը, որովհետեւ ինքը վաղուց, դեռ յեղափոխական շարժումների ժամանակ ուխտել էր հիւրընկալել Հայաստանի առա-

Ջին դեսպանին : Մի ուրիշը յայտնեց , թէ ինքը կը հոգայ դեսպանի  
եւ շքախմբի ամբողջ ծախքը որքան որ նրանք մնալու լինեն Ղազարի-  
նում : Եղան նաեւ ուրիշ գիմումներ եւ առաջարկներ : Խորհրդակ-  
ցութիւնը աշխատեց բոլորին էլ , որքան հնար էր , բաւարարութիւն  
տալ :

Երբ Ռաշտից հասաւ անհամբեր սպասող հեռագիրը, թէ՛ «Իշխանը ամսոյս 30-ին, կէս օրից յետոյ ժամը 3-ին, կը լինի Ղազար-նում», հայ համայնքին տիրեց անսահման ոգեւորութիւն։ Մանաւանդ բարձր էր տրամադրութիւնը նրանց, ովքեր անձամբ ճանաչում էին Իշխանին, դիտէին, թերեւս եւ մասնակցել էին նրա յեղափոխական գործունէութեան Թաւրիզում, Սալմաստում, Ուրմիա-յում։ Հակառակ աննպաստ օդի եւ անհանգիստ քամու, ազգային մարմիններն ու մասնաւոր անհատներ կառքերով շտապում էին քաղաքից դուրս, Ռաշտի դուռը։ Այնտեղ խումբ-խումբ հաւաքւում էր եւ երկսեռ բաղմութիւնը։ Գաղթական երիտասարդութիւնը գալիս էր ձիերով, զինւորական կարգապահութեամբ։

Մինչ բազմութիւնը խռնուում էր որոշւած վայրում, երկու ինքնաշարժներ սլանում էին Իշխանին ընդ առաջ: Մէկի մէջ նստած էին հիւրընկալող Աւետիս խան Տէր-Գրիգորեանը իր երկու զաւակները հետ, Հ. Յ. Դ. Ատրպատականի եւ Շահաստանի Կեդր. Կոմիտէներէ ներկայացուցիչը՝ տողերիս զրոյր եւ Ղազինի Հ. Յ. Դ. կոմիտէի ներկայացուցիչ Ղահր. Թամբաղեանը: Միւսում կային Եղր. Թումանեաններէ առեւտրական տան կողմից Միրզա Ամիրջանեանը, հնչակեան Ռաֆ. Մովսէսեանը եւ Ղազինի հայ հասարակութեան ներկայացուցիչ Սմբ. Աստածատրեանը:

Հանդիպումը տեղի ունեցավ քաղաքից մօտ 20 կիլոմետր հեռու Աղա-Ռարա կոչված վայրում։ Իշխանի ինքնաշարժը փչացել էր, այդ պատճառով ուղացել էին՝ անհանգստություն չկարգող սպասողներին։ Յուզված գրկախառնեցինք եւ համբուրեցինք Իշխանի եւ իշխանուհուն հետ։ Նոյն երեւոյն էր՝ եւ նոյն Սաթենիկը՝ 95 - 96 իշխանուհու հետ։ Ծաղիկը, միայն արդէն ծերացած։ Համ-թակահանների Տաջօն եւ օր. Ծաղիկը, միայն արդէն ծերացած։ Համ-թակահանների Տաջօն եւ օր. Ծաղիկը, միայն արդէն ծերացած։ Համ-թակահանների Տաջօն եւ օր. Ծաղիկը, միայն արդէն ծերացած։

Շատ էին ուշացել. արդէն օրը մթնում էր։ Շքախմբի անդամները յետ էին մնացել. նրանց ինքնաշարժն էլ փչացել էր։ Սպասելը ապարդիւն էր։ Տեղաւորւեցինք մեր ինքնաշարժերում եւ ուղեւորւեցինք դէպի Ռաշտի դուռը, ուր բազմութիւնը վաղուց արդէն անհամբերութեան նշաններ էր ցոյց տալիս։ Կառավարութեան ներկայացուցիչները երկար եւ ապարդիւն սպասելուց յետոյ վերա-







րերը հրաւիրեցին ընթրիքի Եղբ. Թումանեանների առեւտրական տան կողմից:

Յաջորդ օրը 1920 յունւարի 1-ն էր: Ղազարին հայ դադութը հոգեկան հրճանքով շնորհաւորում էր իր հայրենիքի զիւանադիտական ներկայացուցիչի նոր տարին: Սումբ - խումբ գալիս էին աւացելունքը՝ բարձր եւ զարթ տրամադրութեան տակ: Բայց ե՞րբ է հայը առանց արցունքի ուրախութիւն վայելել: Ընդհանուր ոգեւորութեան մէջ մէկ էլ մի հեռագիր եկաւ Իշխանին: Կարգաց, մօայլ ստեւր իջաւ ճակատին: Ներկաները անհանգիստ նայում են նրան: Հեռագրի ընթերցումից յետոյ տիրեց մի պահ լռութիւն, ապա -

- Ներսէս Սրբազանը Թաւրիզից հեռագրում է, թէ Վերին եւ Ներքին Ազգութիւնները թալանւել ու կոտորւել էին թիւրքերի կողմից, թէ փախստականների ծայրը արդէն հասել է Թաւրիզ...

Ծանր ու ցնցող լուր: Ամենքը չլսել են անակնկալ աղէտից: Բընաջնջեց եւ Կովկասի այս ամենագեղեցիկ, ամենէն հարուստ ու փարթամ անկիւնը, Գողթան թաղն ու պսակը: Մանրամասնութիւններ չկային, բայց ուր գործում է թիւրք ճիւղի բարբարոս ձեռքը՝ ի՞նչ մանրամասնութիւն:

Վրդովեցուցիչ լուրի տպաւորութեան տակ ամենքն էլ յուզում ու դայրոյթ էին արտայայտում: Յաւ, որ Հայրենիքի անկախութիւնը մթաքնում է նոր աղէտով: Վախ, որ բոթարեր լուրը ստացւեց նոր տարւայ օրը: Լաւ չսկսեց նոր տարին: Եւ ցրեցին բեկւած սրտով: Տէր Եղնիկ քահանան համարում էր լուրը չարագուշակ մեր հետագայ կեանքի համար:

Կէս օրից յետոյ, դեսպանը այցելեց դադթականական դպրոցը եւ դիմաւորեց «Մեր Հայրենիք»-ով: Ուսուցիչ Գաղիկ Ռշտունին ողջոյնի ուղերձ կարդաց եւ տեղեկութիւններ տւեց դպրոցի մասին: Իշխանը հետաքրքրեց դպրոցի վիճակով եւ գոհ սրտով հեռացաւ: Ապա այցելեց դադթականների բնակարանները, ծանօթացաւ նրանց նիստ ու կացին: Հանդիպեց սալմաստեցի եւ ուրմեցի իր հին ծանօթներին, որոնց հետ ունեցաւ մտերիմ խօսակցութիւն: Դիտեց բուժարանը, գրասենեակը եւ մեկնեց գոհ դադթականութեան վրա թափւած խնամքից:

Նոյ օրը երեկոյեան տեղի ունեցաւ տեսակցութիւն Հ. Յ. Դ. տեղական կոմիտէի հետ Ղ. Թամրազեանի բնակարանում: Իշխանը տեղեկութիւններ տւեց Հայաստանի պետական ու կուսակցական կեանքի եւ խորհրդարանի ու կառավարութեան կատարած աշխատանքների, ինչպէս նաեւ Հ. Յ. Դ. Գրդ. ընդհ. ժողովի եւ կադմակերպական ընթացիկ կեանքի մասին: Հետաքրքրեց տեղական

խնդիրներով եւ բացատրեց Պարսկաստանի կադմակերպութեան անելիքները:

Միւս օրը, յունւ. 2-ին, եկաւ Արսէն խան Միքայէլեանը՝ Թէհրանի հայ հասարակութեան կողմից Հայաստանի դեսպանին բարի դալուստ մաղթելու համար եւ տեղեկանալով Իշխանի մեկնելու ժամանակի մասին՝ վերադարձաւ: Երեկոյեան դպրոցի հոգաբարձութիւնը տւեց երաժշտական երեկոյթ ի պատիւ Իշխանի: Ներկայ էր երկսեռ խումբ բաղմութիւն, ինչպէս եւ նահանգապետը, քարդուզարը եւ կառավարական այլ պաշտօնեաներ: Իսկ երեկոյթից յետոյ, մինչեւ ուշ գիշեր, տեղի ունեցաւ հանդիսաւոր ընթրիք Ա. Տէր-Գրդրոբեանի տանը:


Այստեղ յիշենք, որ ճիշտ այդ օրերին Թաւրիզից Ղազարին էին հասել Անդրանիկի խմբի նախկին զինւորներից 40 հոգի, որ գնում էին Բաղուրա իրենց ընտանիքները գտնելու: Մարդիկ բացարձակապէս զուրկ էին նիւթական միջոցներից: Անգլիացիներին ուղղւած դիմումները հանդիպեց չոր մերժումի: Խնդիրը ներկայացւեց Իշխանին: Որքա՞ն եղաւ բոլորի ուրախութիւնը երբ նա յայտնեց, թէ Հայաստանի խնամատարութեան նախարարութիւնը Ատրպատականի դադթականներին յատկացրել է մէկ միլիոն ուլլէ, որից 300 թուման կարող է տրամադրել յիշեալ 40 հոգուն, իսկ մնացեալը պիտի ուղարկէ Ներսէս Արքեպ. Մելիք-Թանդեանին: Այդ գումարով 40 հոգին ճանապարհւեց Համադան: Վերջը պէտք եղաւ 150 թուման եւս հասցնել, որ հասնին Բաղուրա:

Հայաստանի դեսպանի այս առաջին դրամական օգնութիւնը խոր տպաւորութիւն գործեց մասնաւորապէս դադթականների վրա, որոնք առանձին հպարտութեամբ ասում էին, թէ՛ այլեւս անտէր չեն: Կայ հոգատար աղագային մի կառավարութիւն, որ կը մտածէ նրանց մասին: Այսպէս է աշխարհը. «Տէրովին Տէրն է պահել, անտէրին դէլն է տարել»:

Յունւար 3-ի կէս օրին, Իշխանը, Եղբ. Թումանեանների առեւտրական տան տրամադրած երկու ինքնաշարժով մեկնեց Թեհրան: Բաժանումը շատ սրտառու էր: Ահադին բաղմութիւն էր հաւաքւել Թեհրանի դուռը, Ղազարինից երեք վերստ հեռու, անօրինակ խանդավառութեամբ ճանապարհ դրեց իր սիրելի Հայրենիքի անդրանիկ դեսպանին:

Թաւրիզ.

(Շարունակելի)





ՊՐՈՖ. Զ. ԱՒԱԼՈՎ

# ԲԱԹՈՒՄԻ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԸ

ԳԼՈՒԽ Դ.

ՆՈՐ ՈՒՂԻ

10. ՎՐԱՍՏԱՆԻ ԱՆԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Տաճիկների պահանջների հետեւանքով առաջ եկած յուզումները հասել էին ծայրայեղ լարումի, երբ մեր պատերազմական ստա-  
ցաւ զօրավար Ֆ. Լոսովից բարի միջնորդութեան պաշտօնական ա-  
ռաջարկ իբրեւ հետեւանք բանակցութիւնների անյաջողութեան Օս-  
մանեան եւ Անդրկովկասեան ներկայացուցիչների միջեւ (15 մայիս) :  
Մեծամասնութիւնը պնդում էր, թէ անհրաժեշտ է պինդ բռնել այդ  
առաջարկութիւնից : Սակայն մահմեդականները, ինչպէս պարզեց  
պատերազմական խորհրդակցութեան ընթացքին, երկիւղ էին կը-  
րում գերմանական միջնորդութիւնն ընդունելով՝ վերաւորել տա-  
ճիկներին . լաւ կը լինի նախ նրանց հարցնել, եւայն : Հաջինսկու  
կարծիքով, առհասարակ պէտք չէ ձգձգել բանակցութիւնները : «Այս-  
պէս կամ այնպէս, ասում էր նա, պէտք է վերջ տալ : Անդրկովկա-  
սի արեւելեան մասի համար տարակարծութիւնները էական չեն» :  
Բայց այդ տարակարծութիւնները խիստ էական են Վրաստանի եւ  
Հայաստանի համար : Մենք կանգնած էինք խաչճամբին . ոմանց հա-  
մար տաճիկների ճանապարհը ընդունելի էր, ուրիշների համար՝ ոչ :

Յոն Լոսովին պատասխանեց, թէ իր առաջարկն ընդունելի է :

Լուծումը մօտենում էր : Յաղթական Տաճկաստանը, որպէս  
ուժեղ ներգործող ազդակ առաջ էր բերում թոյլ, չկարգաւորւած,  
պատերազմից եւ յեղափոխութիւնից ցնցւած այլատարր Անդրկով-  
կասի կազմալուծումը : Նրանից բնական կերպով պոկում էր Ազը-  
բէջանը, որ գրաւում էր Տաճկաստանի կողմը, վերջինիս մագնի-  
սական ձգողութեամբ : Յեղի ձայնն աւելի զօրաւոր դուրս եկաւ,  
քան թէ շիաների դարաւոր նախապաշարումը սիւնիների դէմ, մա-  
նաւանդ այն կըթւած խաւերում, ուր շիայի ջերմեռանդութիւնը բա-

ւական պաղել էր ռուս-եւրոպական մշակոյթի ազդեցութեան տակ :  
Միակ այս փաստով արդէն Անդրկովկասը զրկւած էր արտաքին միա-  
ցեալ քաղաքականութեան կիրառումից : Նրա իւրաքանչիւր մասը  
պէտք է մտածէր իր մասին :

Որ Վրաստանը իր համեմատական կազմակերպւածութեամբ  
դրան պատրաստ էր, ա՛յդ համոզումով եկանք մենք Բաթում : Որ  
նա պէտք է գործէ առանձին, վերջնականապէս պարզեց, երբ տա-  
ճիկները գրաւեցին Վրաստանի ամբողջ մահմեդական մասը՝ Բա-  
թումից սկսած մինչեւ Բորժոմի կիրճը եւ երբ երեւաց նրանց ան-  
դուսպ ձգտումը դէպի Կասպից ծովի ափերը :

«Իսլամի բանակի» համար լինել փոխանցման կայան, թէկուզ  
եւ ժամանակաւոր կերպով, մեզ չէր հրապուրում : Տաճիկներին ու-  
ժով դուրս քշել՝ մենք չէինք կարող : Միակ ելքը՝ գերմանական  
«երախակալի» քաղաքականութիւնն էր : Բայց դրա համար անհրա-  
ժեշտ էր, որ հանդէս դար անկախ Վրաստանը . համաձայնութիւն  
Գերմանիայի հետ եւ գերմանական որոշ աջակցութիւն :

Օրւայ գործնական վիճակը հարցը ստիպում էր դնել հէնց այդ-  
պէս, բայց կային աւելի խոր պատճառներ, որոնք մղում էին դէպի  
այդ ուղին : Ինչպէ՞ս կարելի էր այդ եզակի վայրկեանին չլսել պատ-  
մական տարերքի եռուղեւոր . ինչպէ՞ս կարելի էր չլսել ձայնը նրանց,  
որոնք վաղու՛ց արդէն չկային . ինչպէ՞ս կարելի էր չմտածել ե՛ւ դա-  
ւիճների մասին : Քանի՜ սերունդներ ստեղծել են վրաց ազգը եւ ի  
զուր որոնել նրա համար ազատ զարգացման պայմաններ, արեւի  
տակ : Ահա անկախութիւնը բախեց դուռը - ինչպէ՞ս ընդ առաջ չվա-  
զել : Եթէ այս վայրկեանը փախցնենք, յետոյ ի՞նչ պատասխան պի-  
տի տանք մեզանից յետոյ եկողներին : Թէ՞ այս ժողովուրդը ծնւած  
է միայն ստրկութեան ենթարկւելու համար, եւ նա վերջնականա-  
պէս պիտի վերածւի «ազգադրական նիւթի», որից, պարագաների  
համեմատ, կաղապարւում են պարսիկներ կամ տաճիկներ կամ  
ռուսներ : Ո՛չ, նա յիշում է, նա կամենում է ընդօստ վեր թռչել եւ  
նորից իր ինքնութիւնը գտնել : Նա չի կամենո՞ւմ : Նա ախ կը քաշէ  
իր բանտի համա՞ր, ինչպէս Բայրոնի «Շիլլոնի կալանաւորը» . թո՛ղ  
այժմ երեւան դայ այդ : Շրջւում է պատմութեան մէկ էջը :

Սակայն նման խորհրդածութիւնների պէտք չկար . ոմանց, քչե-  
րին նրանք վաղուց ծանօթ էին : Ուրիշներ համակեցին աւելի շուտ  
գործնական նկատումներով : Շատերի համար նոյն իսկ նման հարց  
էլ չէր ծագում . կամքը, բնազդը, ենթագիտակցութիւնը նրանց այդ-  
էլ կողմն էր դառնում : Իսկ «չախմատի» խաղը այնքան էլ բարդ չէր :  
Ամենից առաջ, յենեւով Գերմանիայի վրա, պաշտպանւել տաճիկ-







կիցները՝ Չխենկելին, Ժորդանիան արդէն մի տարուց աւելի է որ ընտելացել են յեղափոխական իշխանութեան այդ գնահատելի առանձնաշնորհումներին: Ճորոխի կիրճով դէպի վեր, մինչեւ Աջարիւ - Յիսալիի գետաբերանը: Ինչքա՞ն սքանչելի է այդ դաշտանկարը, այդ հզօր ծառերը աւելի հաճելի են, քան ծովեզրեայ «ենթարեւադարձային» բոյսերը:

Բեռնակիր ջորիները խմբերը իրենց հակերով եւ իրենց առաջնորդները հազիւ թէ տարրեր էին մեր երանելի Գրիգոր Խանդավոցու օրերին, երբ նա այստեղ, մօտերում, Կլարջետիայում, ուրիշ արեղաների հետ աղօթում էր մեր մեղքերի համար - աւելի քան հազար տարի առաջ:

Այդ փախստականներ են, ցրած ուս - տաճկական ընդհարումների պատճառով, որ վերադառնում են տուն:

- Ուշ գիշերին օգնում եմ զօրավարներ Օգիշելիձէի եւ Կորգանովին՝ տաճկական երկու սպաների հետ միասին, քննելու յատուկ ռազմական համաձայնագրի բնագիրը: Ափսո՞ս զօրավարներին:

## 22 Մայիս

Վճռական խորհրդակցութիւն, Անդրկովկասին սպառնացող փրկւումի առիթով, Վրաստանի անկախութեան հռչակման անհրաժեշտութեան մասին: Ծրագիրն այն է, որի մասին վաղուց արդէն ես, որպէս «խորհրդական», սնդում եմ այստեղ եւ որին Չխենկելին եւ միւսները համաձայն են: Վրաստանի անկախութիւնն ու հողային ամբողջութիւնը ապահովւում են Գերմանիայի կողմից: Արեւելեան Անդրկովկասը պահում է գործելու ազատութիւն եւ կարգաւորում է տաճիկների օգնութեամբ: Հայերը նոյնպէս ստիպւած պիտի լինեն հռչակել իրենց անկախութիւնը. ներկայ վայրկեանիս նրանց գլխաւոր մտահոգութիւնը ազգաբնակչութեան կեանքի ապահովումն է տաճկական գործելակերպից: Նրանք աշխատում են ստանալ Գերմանիայի պաշտպանութիւնն ու օգնութիւնը եւ, հաւանօրէն, կը ըստանան: Հետագային նրանք, եւ մենք էլ նայնպէս կարող ենք յուսալ աւելի արդար սահմանադրով Տաճկաստանի հետ: Բայց այդ, ինչպէս Անդրկովկասեան մեր փոխյարաբերութիւնների կարգաւորումը եւայլն՝ ապագայի հարց է:

Գրեցի Վրաստանի անկախութեան յայտարարութեան նախագծի մէկ օրինակը - ժամանակն է ճշտորոշելու, գործելու: Չխենկելին, Նիկոլաձէն, Ժորդանիան, Սուրբուլաձէն հաւանութիւն տւին: Ժորդանիան այդ նախագիծը հետը առաւ Թիֆլիս: Մենք մի տարբեր ձևով էինք սեղմում նրա ձեռքը հրաժեշտի ժամանակ: Նա շատ լուրջ թա-

տերախաղ պէտք է բեմադրէ: Ինչպէ՞ս չմտածել այդ անթիւ կազմակերպութիւնների, խորհուրդների, առաւել եւս Թանճրացած Նախապաշարութիւնների մասին: Սակայն նա, երեւի, արդէն պատրաստել է վերջին գործողութիւնը. մնում է միայն քաշել վարագոյրը:

## 23 մայիս

Ամսամած, տարապայմանօրէն ցուրտ եղանակից յետոյ՝ պայծառ արեւ:

Որոշեցինք, որ ժամանակաւոր համաձայնութիւնը Գերմանիայի հետ, որի վրա փութով աշխատում ենք (աւելի ճիշտ՝ համաձայնութիւններ - մի քանի վաւերագիր կը լինի), համաձայն Բրեստ-Լիտովսկի մոդայի, պէտք է շարադրել երկու լեզուներով՝ գերմաներէն եւ վրացերէն: Այսօր, ի միջի այլոց, կարդում ենք համաձայնագրի նախագիծը, որով վրացական ժամանակաւոր կառավարութիւնը տրամադրում է Գերմանիային՝ օգտագործելու Վրաստանի նաւահանգստներում գտնւած բոլոր նաւերը:

Եթէ պայմանադիր կողմին հաճելի է, ինչո՞ւ չդիջել նրան, ինչ որ գոյութիւն էլ չունի բնութեան մէջ: Ինչպէ՞ս: Համաձայնութիւն վրաց նաւերի մասին: Գերմանիայի հետ:

## 24 Մայիս

Լարւած աշխատանք: Վեդենդոնկի հետ կարգում եմ վերջնական նախագծերը: Շատերը սկսում են գլխի ընկնել, որ բեմի ետեւը խուլ աշխատանք է կատարում, որ բեմադրողերը փոխում են: Երեկոյեան ուշ կազմում եմ հետեւեալ հեռագիրը, որ ուղարկւում է մայիսի 10-ի 25-ի գիշերը, Չխենկելիի ստորագրութեամբ:

«Թիֆլիս, զօրավար Կլիմիտաձէին,

«Հաղորդեցէ՛ք Վրաստանի Ազգային հորհրդի նախագահութեան հետեւեալը. Անկախութեան հռչակման աւելի ուշացնելը կունենայ անուղղելի հետեւանքներ: Գերմանական միջնորդութեան փորձը չյաջողւեց: Մնում է մէկ բան. տանկական արշաւանքին հակադրել անկախ Վրաստանը՝ Գերմանիայի աջակցութեամբ: Նրա ներկայացուցիչը՝ վրացական կառավարութեան մօտ՝ կը լինի կոմս Շուլենբուրգը, որին անհրաժեշտ է քննադատել անյապաղ՝ հռչակումից յետոյ... Արդէն պատրաստւած են ստորագրելու, մի շարք ժամանակաւոր համաձայնագրեր Գերմանիայի հետ... Սպասում եմ շուտափոյթ հաղորդագրութեան ակտի մասին»:

Զօրավար Ի. Զ. Օգիշելիձէն սեփական ձեռքերով ծածկագրեց



այս հեռագիրը: Նա Գեորգեան ասպետ է (դեռ ճապոնական պատերազմից), Սամարղանդի շրջանի նախկին զինուորական նահանգապետ, արեւմտեան ճակատի բանակներից մէկի սպայակոյտի պետ եւայլն: Ի՞նչ օրերի էք հասել, զօրավա՛ր: Իսկ նա ոչինչ, ուրախ է:

## 25 Մայիս

Արագ թափով վերջացնում ենք անդրկուլիսային աշխատանքը: Գերմանացիք երեկոյեան թողնում են Բաթումը և մեկնում «Մին-նա Հօրն»-ով: Վերջին վայրկեանին բնագիրները ստանալու համար եկաւ Ֆոն Լոսովի համհարզը: Տւինք նրան ինչ որ կար պատրաստ: Սուլոյց. «Միննա Հօրն» ճանապարհ ընկաւ — ո՞ւր, ոչ ոք գիտէ: Բայց մենք գիտենք: Միայն թէ անկախութեան հռչակումը չուշանար:

Ուշ գիշերին Զխենկելու և Նիկոլաձէի հետ դրուցում ենք մեր յաջողութիւնների մասին: Թիֆլիսից հեռագիր. անկախութիւնը պիտի հռչակւի վաղը, մայիս 26-ին: Հարցն անցած է բոլոր հաստատութիւններից: Միայն թաթարները խնդրում են մի քիչ սպասել:

## 26 Մայիս

Թիֆլիսի համար մի քանի կարեւոր թղթերի նախագծեր եմ գրում, այլ և զօրավար Ֆոն Լոսովի անունով մի նամակ, որ Փոթի պիտի տանէ Արտուր Լէյստը: Պատւիրակութիւնը սկսում է քայքայել — մեր անդրկուլիսային, գաղտնի աշխատանքը անցաւ անընկաւ: Թւում է թէ, ոչ ոք չի հասկանում, թէ ինչ է լինելու այսօր և վաղը:

Ճաշասեղանի շուրջը՝ սովորական շաղակրատութիւն: Հարեւանըս, Վրաստանի հետ կապած գերմանացի — գրադէտը խօսում է Հոովմի մասին: Հիանալի նիւթ, երբ շուրջը ամէն ոք տրտնջում է՝ մէկը Ախալցխայի համար, միւսը՝ Ալեքսանդրապոլի:

Աւելի ուշ դառնում եմ մի քանի վայրկեան, որպէսզի նստեմ ծովի ափին: Ահա ուղղակի ջրի մօտ, աթոռներն իրար մօտեցրած, մտերմաբար և լուրջ ինչ որ բան են քննում Խալիլը և Վեհիբ փաշան:

Ծովը կապոյտ է ինչպէս երբեք: Լեռնային անտառների կանաչը հազիւ նշմարւում է. նա ծածկւած է կիսաթափանցիկ կապոյտ մառախուղով: Դեպի ջրի գունջը անվերջ դուրս է թռչում ջրից — ինչ կոչու ու թաց է նա: Լողում է ջրագուստը՝ սուղւելով և երկար մնալով ջրի տակ: Աւազափին խումբ — խումբ զբոսնում են պոլսեցի պաշտօնեաներ — երիտասարդներ, պատրաստ հագուստեղէնի խա-

նութիւնների մանրէկէնների տեսքով, տաճկական սպաներ և գերմանացիներ՝ տաճկական համադգեստով, հին ռեժիմի պաշտօնեաներ՝ ինչ որ օտարոտի տեսքով, նրանց քաջամարմին տիկիները, մեր սպաները, որ բնաւ գերիների տեսք չունեն:

Մօտերը նւագում է երաժշտութիւնը՝ ինչ որ միամիտ — դռն-հիւ՛ բան. վերը աղմկեց սաւառնակը, առագաստը պարզած մի նաւակ արագօրէն անցաւ եղերքից...

Եւ այսպէս սեպը սեպով հանիւր, բայց մենք թիւրքերից պաշտպանւում ենք գերմանացիներով: «Պաշտպանութիւնը» աւելի խորհրդանշել է, որովհետեւ նրանք այստեղ զօրք չունին. բայց Նոտաներիւմ արդէն կազմակերպւել է գերմանական մի պահակախումբ (ռազմադերձերից): Հարց է, թէ տաճիկներին քաղաքների մօտիկութիւնը և աւարի յոյսը չի՞ գրաւի:

Ուրիշ ճանապարհ չկայ. մենք կը կազմակերպենք անկախութիւնը: Գերմանիան կը բռնէ տաճիկների փէշից. դրա փոխարէնը մի բան կը ստանայ մեղանից: Ազրբէյջանն առայժմ կը լինի Տաճկաստանի ազդեցութեան տակ: Հայաստանը՝ տաճիկների ճնշման տակ՝ մեղմացած գերմանացիների ներկայութեամբ:

Երեկոյեան ժամը 9-ին ինձ և Նիկոլաձէին կանչում են պատւիրակութեան նախագահի մօտ: Գրութիւն կայ Խալիլ-բէյից: Վերջնագիր-պահանջ՝ 72 ժամուայ ընթացքին ընդունել ամբողջութեամբ մայիս 11-ին մեր ստացած տաճկական պայմանները:

Տաճիկներն այժմ արդէն դրաւել են և Նախիջևանի դաւադր (Երեւանի նահանգ) այսինքն՝ Կարս — Ալեքսանդրապոլ — Զուլֆա երկաթուղագիծը ամբողջութեամբ:

Այս վերջնագրի էութեան մասին մեր մահմեդականները գիտէին դեռ ցերեկը: Նրա հիմնաւորումը դիւրացւած էր թրքական յայտնի շրջաններից բխող գանդառներով. եթէ այժմ Խալիլ բէյին լսէք, մահմեդականներին ամէն տեղ թալանում ու մորթում են, և տաճիկները չեն կարող տալ նրանց՝ ուտելու աւաղակ յեղափոխականներին եւայլն:

Տաճկաստանը նորից գրաւում է Ախալցխայի գաւառը, հին Մեւսիստիան. և Ռիոնի հովիտը հարաւից եզերող լեռնաշղթան, որ այնպէս լաւ տեսնւում է Մարտիկի վանքի մետրոպոլիտի տան պատըշպէս: Ղամբից, նորից դառնում է սահման Իսլամի և Վրաստանի միջեւ...: Վերջնագիր՝ — իսկ մեր համաձայնագրերը Գերմանիայի հետ դեռ ստորագրւած չեն...

... Թիֆլիսից հեռագիրներ են բերում: Գնդապետ Կ.՝ Նոտաների հրամանատարը, շնորհաւորում է... Բայց ահաւասիկ Ն. Ժոր-



դանիայի եւ Ն. Ռամիշիլու հեռագիրը. «Այսօր կէս օրից յետոյ ժամը 5-ին Ազգային Խորհուրդը Վրաստանը յայտարարեց անկախ հանրապետութիւն: Կառավարութեան նախագահն է Ռամիշիլին, արտաքին գործոց նախարարը՝ Չիսենկելին: Անդրկովկասի Սէյմը նախաջեց իրեն լուծւած, եւ անդրկովկասի միութիւնը վերջ գտաւ»:

Այսպիսով, տաճկական վերջնագիրը ստանալուց չորս ժամ առաջ, Անդրկովկասեան հանրապետութիւնը՝ այդ անողնայար վիթխարի մարմինը դադարեց գոյութիւն ունենալուց:

Անմիջապէս կազմուած եմ ինչիւր բէյի անունով մի նամակ՝ յայտնելով, որ Անդրկովկասեան հանրապետութեան կառավարութեան անունով հասցէագրւած վերջնագիրը կարելի չեղաւ յանձնել ըստ պատկանելոյն, նա կազմալուծւած է եւ տեղի է ունեցել Վրաստանի անկախութեան յայտարարութիւնը:

Այդ միջոցին Չիսենկելու սենեակին են դալիս Պատիսեանը, Քալաշնիկին եւ զօրավար Օդիշելիձէն: Այս անգամ «ի՞նչ նորութիւն» հարցը չի մնում առանց պատասխանի: Պատիսեանը տարակուսանքի մէջ է. ապա ի՞նչ է լինելու Թիֆլիսի Դիտարանի, Անդրկովկասեան մանկաբարձական ճեմարանի եւ այլ համաերկրային հիմնարկութիւնների վիճակը: Ընդհանրապէս, Թիֆլիսում վրացիները փոքրամասնութիւն են կազմում եւայլն:

Ինչ մանկաբարձական ճեմարան: Անդրկովկասի երեք ժողովուրդները Դաշնակցութիւն յայտարարեցին նախ քան այդ գումարելիներէն իւրաքանչիւրի կազմակերպւելը: Ճիշտ է, մի շարք հանդարից իւրաքանչիւրի չէնքը կառուցանել կտուրից եւ ոչ հիմքից: Այժմ նոր պայմանները վերադարձնում են մեզ անհրաժեշտ սկզբնաւորութեան, այսինքն՝ Վրաստանի, Հայաստանի եւ Ազրբէյջանի իրրեւ ինքնուրոյն պետական միաւորների կազմակերպութեան, որոնց դաշնակցային միացումը պէտք է իրադրուի առաջին իսկ հնարաւորութեան դէպքում, այսինքն՝ հէնց որ Տաճկաստանը այստեղ դադարի քայքայիչ դործօնի դեր կատարելուց:

Քանի որ հարցը այսպէս է դրւում — այսինքն նա արդէն այսպէս լուծւած է այսօր — Թիֆլիսը կը լինի, ինչպէս միշտ՝ Վրաստանի մայրաքաղաքը, հայերը ունին Երեւան, իսկ թուրքերը կը տեղաւորին Գանձակում, մինչեւ որ ազատեն Բաղուն:

(ՎԵՐՁ)



## ՀԱՅԱՍՏԱՆԻ

### ԽՈՐՀՐԴԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

«Վէմ»-ի ներկայ համարից սկսում ենք հրատարակել Հայաստանի Խորհրդի արձանագրութիւնները: Հետագային կը տանք եւ Հայաստանի Պարլամենտի արձանագրութիւնները: Դժբախտաբար, մեր ձեռքի տակ չկան ոչ Խորհրդի եւ ոչ էլ Պարլամենտի պաշտօնական արձանագրութիւնները: Մենք չգիտենք նոյն իսկ, թէ նրանք, առ հասարակ, գոյութիւն ունի՞ն, թէ ոչնչացւած են բոլշեւիկների ձեռքով, խորհրդային տիրապետութեան առաջին տարիներին: Մեզ յայտնի է, օրինակ, որ 1920-21 թւի ձմեռը Երեւանի կառավարական եւ քաղաքային հիմնարկութիւնների մէջ դիւանական քղաքով վառարան էին վառում: Յայտնի է նոյնպէս, որ 1921 թ. ամառը Երեւանից վագոններով Հայաստանի դիւաններից քղաք էին արտահանում թաւրիգ՝ ծախելու համար իբրեւ ապրանք փաթեթելու թուղթ: Անհաւանական չէ, որ Հայաստանի գերագոյն օրէնդրական մարմնի դիւաններն էլ ենթարկւած լինեն նման ճակատագրի:

Ինչ որ մեր ձեռքը կայ այսօր, Երեւանի ու Թիֆլիսի քերթերում հրատարակւած արձանագրութիւններն ու քղապետութիւններն են եւ պատահաբար մնացած վաւերագրեր: Մեծ դժարութեամբ մեզ յաջողւել է հաւաքել այդ նիւթերը եւ դրանց հիման վրա վերականգնել Խորհրդի եւ Պարլամենտի արձանագրութիւնները: Դժբախտաբար, այս նիւթերն էլ լրիւ չեն. մի շարք նիւթերի արձանագրութիւններ առհասարակ հրատարակւած չեն. մի քանի հրատարակւած արձանագրութիւններ մեզ չյաջողւեց գտնել. մի շարք արձանագրութիւններ էլ հրատարակւած են շատ կրճատ ձեւով: Որով, ձեռագրութիւններ էլ հրատարակւած են ոչ քանակով, ոչ էլ որակի ուրեմն, մեր տւած նիւթը կատարեալ չէ ոչ քանակով, ոչ էլ որակի տեսակէտից: Այնուամենայնիւ, ինչ որ մեր տարագրային պայմաններում կարելի է եղել հաւաքել՝ իրապէս անգին գանձ է Հայաստանի անկախութեան շրջանը պատկերացնելու համար:

Հրատարակւած արձանագրութիւնների մեծագոյն մասը առնւած է Երեւանի «Յառաջ» ու «Հայաստանի Աշխատաւոր» եւ Թիֆլիսի «Հորիզոն», «Աշխատաւոր» եւ ռուսերէն «Կավկասկոյէ Սոլովո» քերթերից: Այս քերթերում տպւած արձանագրութիւնները կազմւել են Խորհրդի եւ Պարլամենտի պաշտօնական արձանագրողների







Կառավարական օթեակում նստած էին վարչապետ Յ. Քաջագնունին իր դահլիճի միւս անդամների հետ միասին — ներքին գործոց նախարար Արամ Մանուկեան, զինւորական նախարար գործ. Յովհ. Հախվերդեան, ելեւմտական նախարար Խաչատուր Կարնիկեան, արդարագատութեան նախարար Գրիգոր Պետրոսեան: Դիւանագիտական օթեակում նստած էին գերման, աւստրիական եւ օսմանեան ներկայացուցիչները, պարսից հիւպատոսը, ռուս, թուրք եւ ուկրաինական ազգային խորհուրդների ներկայացուցիչները: Զինւորական օթեակում կային Հայաստանի Հանրապետութեան առաջին սպարապետ գործ. Թովմաս Նազարբեգեանը, գործ. Սիլիկեանը, Դրօն եւ ուրիշ զինւորականներ: Պարապ էր միայն կաթողիկոսի օթեակը:

Մամուլի ներկայացուցիչներին յատկացւած էր առանձին տեղ: Հասարակութեան համար վերապահւած տեղերը՝ դահլիճի յետեւի մասը եւ վերնաշարիւր զբաււած էին հիւրերով եւ ունկնդիր հասարակութեամբ: Պարապ տեղ չկար:

Ամբողջ սրահը կրում էր խորհրդաւոր բնոյթ. պատգամաւորներն ու հասարակութիւնը ամենքն լուռ էին ու մտահոգ:

Ժամը 11 եւ կէսին ամբիոն բարձրացաւ Հայոց Ազգային Խորհուրդի նախագահ Աւետիք Սահակեանը եւ յանուն Ազգային Խորհրդի բաց արաւ Հայաստանի Խորհրդի անդրանիկ նիստը հետեւեալ ճառով. —

«Քաղաքացիներ, պատգամաւորներ Հայաստանի Խորհրդի:

Գերագոյն Հայոց Ազգային Խորհրդի կողմից ես պատիւ ունիմ այսօր բաց անել անդրանիկ նիստը Հայաստանի Խորհրդի եւ յաջորդաբար, որ այսուհետեւ սա է միակ լիազօր մարմինը՝ ամփոփող իր մէջ Հայաստանի Հանրապետութեան պետական իշխանութիւնը:

Այս օրը կը դառնայ մեզ համար պատմական եւ կը բանայ մի նոր լուսաւոր դարաշրջան, մեր երիտասարդ պետութեան կեանքում, ինքնուրոյն քաղաքական եւ տնտեսական զարգացման:

Այս օրը կը մնայ միշտ յիշատակելի եւ ա՛յն պատճառով, որ առաջին անգամ իրականացած ենք տեսնում մեր նեղ հորիզոնի սահմաններում գեղեցիկ երազներն ու նւիրական տենչը ինքնորոշման, թէեւ անհնարին դժարին պայմաններում:

Ենթադրելով, որ մեր երկրի անկախութեան հարցին շատերը ձեղանից լաւատեղեակ չեն՝ ես յոյժ կարեւոր եմ գտնում այս բարձր ժողովին ներկայացնել այն փուլերը, որոնցով անցել է սկզբից մինչեւ իր վերջին ձեւակերպումը անկախ պետութիւնների գաղափարը Անդրկովկասում:

Մեր հանրապետութիւնը, ինչպէս եւ միւսները հանդէս եկաւ



ԱՎ. ՍԱՀԱԿԵԱՆ



իրրեւ անկախ պետութիւն ա'յն օրից, երբ Անդրկովկասեան Սէյմը մայիս 26-ին իրեն յայտարարեց կաղմալուծւած. վրաց սոցիալ-դեմոկրատ Փրակցիայի նախաձեռնութեամբ եւ առաջարկութեամբ նոյն օրն իսկ Վրաստանը յայտարարեց իրեն անկախ:

Անդրկովկասի ամբողջութեան փլուելուց յետոյ մեր երկիրը թողնըւած էր իր բախտին, ուստի Հայոց Ազգային Խորհուրդը շտապեց իր վրայ վերցնել կառավարութեան բոլոր ֆունկցիաները:

Հէնց այդ ժամանակն էր, որ ստացւեց օսմանեան կառավարութեան բոլորին յայտնի վերջնագիրը նոր հողային գրաւումների մասին եւ սահանջում էր պատասխան 48 ժամայ ընթացքում: Գերագոյն Խորհրդի կողմից անմիջապէս առանձին պատւիրակութիւն ուղարկւեց Բաթում յանձինս Յ. Քաջաղնուհու, Մ. Պապաջանեանի եւ Ա. Խատիսեանի՝ տալով նրանց արտակարգ լիազօրութիւններ բանակցութիւններ վարելու տաճիկ պատւիրակութեան հետ:

Մեր պատւիրակութիւնը յաջողեցրեց որոշ ուղղումներ մտցնել սահմանների մէջ, բայց եւ այնպէս ստիպւած էր ընդունել վերջնագիրը եւ խաղաղութեան դաշինք կնքել Վէհր փաշայի եւ Խալիլ բէյի հետ: Այստեղ առաջին անգամ Հայոց Ազգային Խորհրդի պատգամաւորները պաշտօնապէս ճանաչւեցին իրրեւ ներկայացուցիչներ անկախ Հայաստանի եւ ստորագրեցին յունիս 4-ի դաշինքը:

Մեր պետութեան անկախութեան մասին յայտնի է նոյնպէս Տաճկաստանի դաշնակից պետութիւններին՝ Գերմանիային, Աւստրիային եւ Բուլղարիային: Պոլսում է մեր երկրորդ պատւիրակութիւնը, որի մէջ մտնում են Ա. Ահարոնեանը, Ա. Խատիսեանը եւ Մ. Պապաջանեանը, որոնք ուղեւորւել են այնտեղ Օսմանեան կառավարութեան հրաւերով, բանակցութիւններ վարելու Տաճկաստանի եւ նրա դաշնակից պետութիւնների հետ:

Այսպիսով, բաղմակողմանի քննելով մի կողմից երկրի ուժերը եւ ա'յն հանգամանքները, որոնց մէջ գտնուում է հայ ժողովուրդը, եւ միւս կողմից՝ քաղաքական եւ տնտեսական ստեղծւած դրութիւնը, Հայոց Ազգային Խորհուրդը սեղմեց իր սիրտը եւ անողոք դիտակցութեամբ որոշեց վերջնականապէս ընդունել վերջնագիրը եւ ճանաչել Հայաստանի անկախութիւնը՝ իրեն յանձնելով պատմութեան անաչառ դատաստանին:

Այո՛, մեր հանրապետութիւնը փոքր է եւ նեղ իր սահմաններով. նա զրկւել է իր ամենադնաճատելի երկրամասերից ու չի կարող իր մէջ տեղաւորել ամբողջ ազգաբնակչութիւնը եւ, կարծես թէ, պայմաններ չունի անկախ գոյութեան համար: Բայց ես կարծում եմ, որ երկրի սահմանները քարացած չեն կարող մնալ միշտ. ես հաւա-







Վարչապետ Յ. Բաջազյանի — «Բացառիկ ծանր պայմանների մէջ գործի է անցել իմ կազմած կառավարութիւնը: Նա կոչւած է իրականացնելու գործադիր իշխանութիւն մի պետութեան մէջ, որ դեռ նոր է ծնունդ առել եւ տակաւին դուրս չէ եկել իր կազմակերպման առաջին շրջանից: Կառավարութիւնը չունի ոչ մի յենարան անցեալում. նա չի յաջորդում նախկին կառավարութեան՝ չարունակելու արդէն ընթացքի դրած պետական աշխատանքը. նա նոյն իսկ չի ժառանգում կենտրոնական իշխանութեան կարիքներին յարմարեցրած պատրաստի ապարատներ: Նա հարկադրւած է սկսելու ամէն բան սկզբից. անձեւ քաօսից, եւ աւերակների կոյտից նա պէտք է ստեղծի կենսունակ եւ աշխատունակ մի մարմին:

Միւս կողմից, կառավարութիւնը գտնում է երկիրը այնպիսի վիճակի մէջ, որի բնորոշման համար մի բառ կայ միայն — կատաստրոֆային:

Չորս տարի տեւող պատերազմը, մեծ յեղափոխութիւնը, ռուսական զորքերի անկանոն նահանջը մեր սահմաններից, կայսրութեան տարրալուծումը, պատերազմական ճակատի վրա կրած մեր պարտութիւնը, տերիտորեաների կորուստը, Անդրկովկասի բաժանումը անջատ պետութիւնների — այս խորին ցնցումները չէին կարող չթողնել իրենց յետեւից ահւելի հետքեր: Տնտեսական կեանքի ու Ֆինանսական դրութեան կատարեալ քայքայում, դադարում ապրանքների արդիւնաբերութեան եւ փոխանակութեան, կենսամթերքների ծայր աստիճան պակասութիւն, ամենաանհրաժեշտ առարկաների բացակայութիւն կամ սոսկալի թանգութիւն, ներմուծման բացարձակ ընդհատում, երկաթուղային հաղորդակցութեան դադարում, երթեւեկութեան ուրիշ միջոցների պակասութիւն, ապա հարկւր հազարներով հաշւող անտուն եւ անսնունդ դաղթականութիւն, անապահով կացութիւն սահմանների վրա եւ որպէս անխուսափելի հետեւանք այս բոլորի — անիշխանութիւն: Ահա թէ ինչպիսի ծանր պայմանների մէջ կանչւել է աշխատանքի իմ կառավարութիւնը:

Այս բացառիկ դրութիւնը նախորդում է արդէն կառավարութեան բնոյթը: Նա չի կարող ձգտել բաղմակողմանի եւ լրիւ գործունէութեան, չի կարող ունենալ լայն ծրագիր եւ սահմանափակելու է ամենաանհրաժեշտ ու միանգամայն անյետաձգելի խնդիրներով:

Կասեցնել քայքայման պրոցեսը, հանել երկիրը անիշխանական վիճակից ու ստեղծել պետական շինարարութեան համար անհրաժեշտ պայմաններ — ահա թէ ինչպէս է ըմբռնում իր կոչումը ներկայ կառավարութիւնը:

Համաձայն սրան, կառավարութիւնը դնելու է լուծման հետեւեալ խնդիրները.

Ա. Ներքին գործերի սահմաններում

1) Հաստատել երկրում տարրական իրաւակարգ կեանքի եւ գոյքի ապահովութիւն:

2) Բանալ հաղորդակցութեան ճանապարհները անարգել երթեւեկութեան համար:

3) Վերականգնել սրտտ — հեռադրական նօրմալ հաղորդակցութիւն թէ երկրի մէջ եւ թէ հարեւան պետութիւնների հետ:

4) Եռանդուն միջոցների դիմել կարելոյն չափ մեղմացնելու պարենաւորման տաղնապը:

5) Տնօրինել գաղթականների եւ փախստականների վիճակը՝ մասամբ վերադարձնելով իրենց նախկին տեղերը, մասամբ տեղաւորելով նոր վայրերում:

Եւ 6) Նախապատրաստել Հայաստանի Սահմանադիր Ժողովի հաւաքում, կարելոյն չափ շուտ:

Բ. Ֆինանսների սահմաններում

Հող պատրաստել սեփական դրամական սխտեմի հիմքը դնելու համար: Ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ, որպէսզի երկիրը ապահովի դրամական նշաններով, վերականգնի արդիւնաբերական կեանքը եւ ապրանքների փոխանակութիւնը, ինչպէս նաեւ մշակւի հարկերի առողջ սխտեմ:

Գ. Արդարադատութեան սահմաններում

Յարմարեցնել դատարանը երկրի քաղաքացիական իրաւահասկուցման եւ իրաւական սովորոյթների պայմաններին, միաժամանակ մասնակից անելով քրէական դատավարութեանը ժողովրդի ներկայացուցիչներին:

Դ. Զինուորական գործերի սահմաններում

Վերակազմել երկրի զինուորական ուժերը, նպատակ ունենալով ստեղծել թւով ոչ մեծ, բայց ոգով ու կարգապահութեամբ ուժեղ բանակ:

Ե. Արտաքին գործերի սահմաններում

1) Ամրացնել Օսմանեան Կայսրութեան հետ հաշտութիւնը եւ բարի դրացիական յարաբերութիւններ հաստատել նրա հետ: Ոստիւ կատարել այն բոլոր պարտականութիւնները, որ մենք յանձն ենք ա-



ուել Օսմանեան Կայսրութեան հանդէպ եւ հետեւել, որ Օսմանեան կառավարութիւնը իր կողմից անի նոյնը մեր վերաբերմամբ:

Մասնաւորապէս լուծել Օսմանեան զօրքերի մեր երկրից դուրս բերելու հարցը եւ զաղթականների վերադարձը:

2) Ատրպատականի եւ Վրաստանի հետ փոխադարձ համաձայնութեան դաշտով՝ լուծել Հայաստանի եւ այդ պետութիւնների սահմանների հարցը, հիմք ունենալով էտնիկական սկզբունքը, իբրեւ միակը որ համապատասխանում է ռամկավար պետութիւնների ոգուն եւ նպատակներին:

3) Լիկւիդացիայի ենթաբնիկ՝ համաձայնութեան դաշտով Ատրպատականի եւ Վրաստանի հետ՝ ընդհանուր հիմնարկութիւնները եւ գոյքը, որ մնացել են Անդրկովկասեան հանրապետութիւնից:

Այս է կառավարութեան ծրագիրը: Սա կարող է անւանւել պետութեան գոյութիւնը ապահովեցնող ամենամահաբեշտ գրաւականների ծրագիր: Պարզ է, որ նա չի ընդգրկում երկրի բաղմազան կարիքները իրենց ամբողջութեամբ, որ նրա սահմաններից դուրս մնում են մի շարք շատ կարեւոր եւ արդէն հասունացած խնդիրներ: Բայց կառավարութիւնը չի դնում հերթի այդ խնդիրները, որովհետեւ նրանց լուծումը այսօրւայ պայմանների մէջ համարում է անկարելի: Կառավարութիւնը չի ուզում սխալանքների մէջ գցել երկիրը՝ լայն հեռանկարներով եւ անիրագործելի խոստումներով, չի ուզում վերցնել իր վրա պարտականութիւններ, որոնց կատարումը վեր է իր ուժերից: Կառավարութիւնը համոզւած է, որ առաջադրած ծրագիրը *maximally* է այսօրւայ հնարաւորութեան: Կառավարութիւնը լարելու է իր ամբողջ ուժն ու կարողութիւնը այդ *maximally* հասնելու եւ յոյս ունի յաջողութեամբ լուծելու գրեած խնդիրների գոնէ մի մասը, եթէ իր կողմն ունենայ Խորհրդի անվերապահ վստահութիւնը եւ գործօն աջակցութիւնը»:-

Կառավարական յայտագիրը լսելուց յետոյ, Խորհուրդը միաձայնութեամբ որոշում է նրա քննութիւնը յետաձգել յաջորդ նիստին:

Այս Խորհուրդը ընտրում է մի յանձնաժողով նախարարութեան կազմակերպութեան օրինադիմ մշակելու համար:

Նախագահութեան տրամադրութեան տակ դրւում է 20,000 ռ. առհաշիւ մի գումար:

Հարցապնդում է արւում մշտական ղինւորական միութիւն կազմակերպելու առիթով. հարցի քննութիւնը որոշւում է անել դռնփակ նիստում:


Հարցապնդում է արւում Չարբախ, Սարւանլար, Արբադ, Ալի-դզլար Գէոյքում գիւղերի բերքը մասնաւոր անհատների կապալով

տալու մասին: Այդ առթիւ մահմեդական պատգամաւորներից մէկը աւելացնում է, թէ անհրաժեշտ է նաեւ պարզել թէ այդ չորս գիւղերի շրջանում գտնւած մզկիթապատկան հողերի վերաբերմամբ ի՞նչ կարգադրութիւն է եղած Հայոց Ազգային Խորհրդի կողմից:

Հարցումներ են արւում զաղթականութեան կացութեան եւ պարենաւորման գործի վիճակի եւ կառավարութեան ծրագրած գործունէութեան մասին: Այս առթիւ բացատրութիւններ է տալիս ներքին գործերի նախարար Արամը:

»Հորիզոն», 15 օգ., 1918 թ.

( Շարունակիլի )





## ՆՈՐ ԹՈՒՂԹԵՐ

## ԿՈՎԿԱՍԵԱՆ

## ՀԱՄԱԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՈՒԽՏԸ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ. — «Հին Թուղթեր» բաժնում «ՎԷՄ»-ը տալիս է մեր անցեալ կեանքին վերաբերող նիւթեր: Այսօրանից բացւող «Նոր Թուղթեր» բաժնում պիտի տրւին ընթացիկ կեանքի պատմական նշանակութիւն ունեցող վաւերագրեր: Այս բաժնի նըպատակն է մի կողմից նիւթ հաւաքել ապագայ պատմագրութեան համար, միւս կողմից, կարեւոր վաւերագրերի մէկտեղումով, դիւրացնել գործնական ֆաղափականութեամբ զբաղւողների աշխատանքը: Մեր հրատարակած առաջին վաւերագիրը «Կովկասեան Համադաշնակցութեան Ուխտ»-ն է, որ կնքւած է յուլիս 14-ին Կովկասի երեք ժողովուրդների ֆաղափական գործիչների կողմից:

«Կովկասեան Համադաշ. Ուխտ»-ը կնքւած է այն հոսանքների միջեւ, որոնք խմբւած են, այսպէս կոչւած, Կովկասեան Անկախութեան Կոմիտէի շուրջ: Սա այն Կոմիտէն է, որ կազմեց ուրբ տարի առաջ Պոլսում քիւրական եւ լեհական կառավարութիւնների բարոյական եւ նիւթական ձեռնարկութեամբ: Նրա բերանն է 'Prométhée' ամսագիրը: Նրա մէջ մտնում են վրաստանի Ազգային Կենտրոնի անդամ բոլոր կուսակցութիւնները, Ազգային Մուսաւաթ կուսակցութեան Ռասուլ Զադէի քեւը եւ Կովկասի Լեռնականների մէկ մասը. Հայդար բէկ Բամատը եւ Զերմուրդ դուրս են այդ միութիւնից: Հայերից էլ ներկայացուցիչ չկայ Կոմիտէում: Ուրեմն, Կովկասեան Անկախութեան Կոմիտէն չի ներկայացնում ամբողջ Կովկասը:

Կովկասեան Անկախութեան Կոմիտէն հէնց սկզբից նպատակ էր դրել Անդրկովկասի Համադաշնակցային Միութեան ստեղծումը, բայց ֆաղափական պայմանները արգելի հանդիսացան: Արգելի եղան եւ ներքին սուր անհամաձայնութիւնները, որոնց հետեւանքով Լեռնականների հատուածը բողոքելով դուրս եկաւ Կոմիտէից. (տե՛ս «ՎԷՄ», Դ. էջ 109): Կարելի չեղաւ ապահովել եւ հայերի մասնակցութիւնը: Հայկական ոչ մի հոսանք չյարեց Կոմիտէին:

Այսուհանդերձ, Կովկ. Անկ. Կոմիտէի ներսը, որոշ աշխատանք

կատարում էր Համադաշնակցութեան պատրաստութեան համար: Ներկայ «Ուխտ»-ը համարում է այդ աշխատանքի արդիւնք:

Հարց է առաջ գալիս. ինչո՞ւ այսօր է ստորագրւում «Ուխտ»-ը: Որքան կարողեմք դատել, ներքին ո՛չ մի դրդիչ չկայ. ոչ Կովկասեան պայմանների մէջ հիմնական փոփոխութիւն է տեղի ունեցել, ոչ էլ Կովկ. Անկախութեան Կոմիտէի մէջ առանձին-առանձին, կամ Կոմիտէում հաւաքաբար: Պէտք է եմքադրել, որ «Ուխտ»-ի կնքումը աւելի արտաքին ներշնչման արդիւնք է եւ պայմանաւորւած է գուտօրւայ հաշիւներով: Նման դրդիչներով կատարւած գործը, բնականաբար, այլ արդիւնք չի ունենար, ինչ որ ունեցաւ Կովկասի Անկախութեան Կոմիտէն իր «Պրոմէթէ»-ով:

## «ՈՒԽՏ»-Ի ԲՆԱԳԻՐԸ

«Ազրբէջանի, Հիւսիսային Կովկասի եւ Վրաստանի Ազգային Կենտրոնները,

— Նկատելով, որ ազգերի լիակատար զարգացումը հնարաւոր է միայն կատարեալ անկախութեան պայմաններում,

— Հաւատացած, որ այս նպատակին հասնել կարելի է միայն Կովկասի բոլոր ուժերի միացումով մէկ ընդհանուր սահմանի մէջ,

— Համոզւած, որ Կովկասեան ազգերի կենսական շահերի ապահովութիւնը պահանջում է հաստատել նրանց արտաքին քաղաքականութեան եւ ազգային պաշտպանութեան ընդհանուր ղեկավարութիւն,

— Վստահ, որ նման միութեան միջոցով Կովկասի իւրաքանչիւր ազգ կը զտնէ իրական երաշխիք իր վեհապետութեան, որ հարկաւոր է մտաւոր եւ նիւթական ուժերի լիակատար զարգացման համար,

— Հաստատ համոզւած, որ Կովկասեան Հանրապետութիւնների Միութեան հիմքերն ընդունելով՝ իրենք վայելում են իրենց բոլոր հայրենակիցների հաւանութիւնը,

— Միաձայնութեամբ հաստատելով, որ Համադաշնակցութիւնը, իբրեւ Կովկասեան պետութիւնների քաղաքական մի ձեւ, նախորոշւած է երկրի աշխարհագրական եւ տնտեսական միութեամբ,

Յայտարարում են Կովկասեան Համադաշնակցութեան հետեւեալ հիմքերը.

1. Կովկասեան Համադաշնակցութիւնը, ամբողջապէս երաշխաւորելով Հանրապետութիւններից ամէն մէկի ազգային ընդլայն ու վեհապետութիւնը, արտաքին աշխարհում գործելու է յանուն բոլոր Հանրապետութիւնների, իբրեւ բարձրագոյն կարգի միջազգային մի



միութիւն: Համադաշնակցութիւնը կունենայ քաղաքական եւ մաթ-  
սային մէկ ընդհանուր սահման:

2. Համադաշնակից Հանրապետութիւնների արտաքին քաղաքա-  
կանութիւնը ղեկավարելու է Համադաշնակցութեան ձեռնհաս մար-  
միւնների կողմից:

3. Համադաշնակցութեան սահմանների պաշտպանութիւնը պիտի  
վստահւի Համադաշնակցութեան բանակին, որ բովանդակելու է Հա-  
մադաշնակից Հանրապետութիւնների բանակները՝ մէկ հրամանա-  
տարութեան ներքոյ, ենթակայ Համադաշնակցութեան ղեկավար  
մարմիններին:

4. Համադաշնակից Հանրապետութիւնների միջեւ ծագելիք ամէն  
տարակարծութիւն, եթէ ուղղակի միջոցներով չկարգադրւի, պէտք  
է ենթարկել պարտադիր իրաւարարութեան եւ կամ Համադաշնակ-  
ցութեան Բարձրագոյն Դատարանին: Համադաշնակից Հանրապետու-  
թիւնները պարտաւորուած են առանց առարկութեան ընդունել եւ  
գործադրել նրանց բոլոր որոշումները:

5. Մասնագէտների մի յանձնախումբ ամենակարճ ժամանակում  
պիտի ձեռնարկէ Կովկասի Համադաշնակցութեան Մահմանադրու-  
թեան նախադէի մշակման՝ հաշի առնելով վերեւ ձեւակերպուած  
սկզբունքները. այս նախադիւր հիմք պիտի ծառայէ իւրաքանչիւր  
Հանրապետութեան առաջին Մահմանադիր Ժողովի աշխատանքների:

6. Այս ուխտի մէջ մի տեղ վերապահւած է Հայաստանի Հան-  
րապետութեան:

Կնքւած Բրիւսէլում, 14 Յուլիս, 1934

Ի դիմաց Ագրբէջանի

Մ. Է. Ռասուլ-Ջադէ	Ալի Մարդան Բ. Թովչիբաշի
Ագրբէջանի Ազգային Խորհրդի	Ագրբէջանի Հանրապետութեան
Նախկին նախագահ	Պատւիրակութեան նախագահ
եւ Ագրբէջանի Ազգային Կենտրոնի	եւ Խորհրդարանի
Նախագահ	Նախկին նախագահ

Ի դիմաց Հիւսիսային Կովկասի

Գիբէյ Սունը, Իբրահիմ Չուլիֆ, Թաւսուլթան Շաֆման

Ի դիմաց Վրաստանի

Նոյ Ժորդանիա	Ա. Չխենկելի
Վրաց Հանրապետութեան	Վրաստանի նախկին ղեկավար
Նախկին նախագահ	Ֆրանսայում
եւ Վրաստանի Ազգային	
Կենտրոնի նախագահ	

## ԿԵԱՆՔ ԵՒ ՄՇԱԿՈՅԹ

### ՀԱՅ ԹԱՏԵՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

(Զրոյց Յ. Օշականի հետ)

1. Հայ Թատրոնը՝ Իրբեւ արեւել-  
ցի, մեր ամտաբերութիւնը հանդէպ  
թատրոնին՝ առհասկած է գուցէ:  
Փաստ է, բաւական գորաւոր, որ Արե-  
ւելի բոլոր գրականութիւնները, երբե-  
մըն այնքան գերազանց՝ Արեւմուտի  
մէջ փորձած զանազան սեռերու տեսա-  
կով (ֆնարերգութիւն, դիւցազներգու-  
թիւն), շատ տարրական, չըսելու հա-  
մար նախնական գործողութիւն մը հա-  
զիւ կրցած են ոտի կեցնել բեմի վրա:  
Արեւելի երեք մեծ գրականութիւն-  
ները (հնդկական, չինական, պարսկա-  
կան) թատրոն չունին: Շատ պատճառ-  
ներ կարելի է գտնել այս վրիպման:  
Մեր ժողովուրդը՝ արեւելեան կրթու-  
թեամբ՝ մանաւանդ ճակատագրին բա-  
ցառիկ մէկ կարգադրութեամբ (դարա-  
ւոր գերութիւն), ազատներու պայքարը  
խորհրդանշող արեւստի այդ ձեւին ան-  
հաղորդ մնաց, նոյնիսկ երբ խորտակ-  
ւեցաւ աւանդութեան շղթան:

Կէս դար առաջ, թատերական հարցե-  
րու շուրջ ոգեւորութիւն մը պայմանա-  
ւոր էր հանդէսներու, ցոյցերու, բառի  
եւ բարբառի հանդէպ մեր բնական տը-  
կաւորութեամբ: Օտար էր այդ ոգեւորու-  
թիւնը, քանի որ գործերը չէին մեզի:  
Այսօր՝ մեր տարտղումը, զանգուած  
ազատագրումը եւ ընթացիկ կարգ մը  
նկշումներ (գլխաւորաբար սինեման)  
գրեթէ անկարելի կը դարձնեն մեր մէջ  
ազգային թատերական դիմագծի մը  
գոյութիւնը: Թատրոն մը կը սնանի  
զանգուածով ու անո՛ր է, որ կուղղի:  
Պատերազմին հոգ, Պոլսոյ՝ մէջ վա-  
ղանցով գործունէութիւն մը անկարող

եղաւ թատերական գրականութիւն մը  
ստեղծելու: Եւ, աւելի paradoxal  
վերջին տասնամեակին մեզի եկան բազ-  
մաթիւ թատերական գործեր, երբ մեր  
թատրոնը լուծ էր արդէն: Այնպէս որ  
այդ գործերուն անդամանելի տկարու-  
թիւնը հասկնալի կը դառնայ, երբ ու-  
շադրութեան կանչենք սա՛ կարեւոր պա-  
րագան որ սեղանի ընթերցումի համար  
պատրաստւած այդ ձեռագիրները նկա-  
տի չեն ունեցած թատրոն մը ու զայն  
լեցնող՝ ժողովուրդ մը: Հասարակաց է  
ասիկա բոլոր խաղերուն համար ալ:

2. Մեր Թատերագիրները, - Լեւոն  
Շանթ.- Շանթի թատերական գրակա-  
նութիւնը ինքնաբերաբար կը բաժնի  
երկու շրջանի. առաջին շրջանի լուա-  
գոյն եւ արժէքով գործը կը նկատմ  
«Կայսր»ը, ձգելով «Հին Աստուծներ»ու  
անարժան համբաւը անգիտաց վայելու-  
մին: Պատերազմին առջին՝ Շանթը տը-  
ւաւ գործեր, յաւակնութեանց ընդար-  
ձակ շրջագիծով մը, որոնք չարդարա-  
ցան: Իր «Շղթայածը», ընկերային  
խորքով, symbolique եղանակով, շատ մո-  
տեն կը յիշեցնէ Հաւրթմանի «Ջրասոյգ  
Զանգը» եւ անոր թէքիքը: «Ինկած Բեր-  
դի Իշխանուհին» տխուր է հաստատել,  
որ կուգայ Ալ. Տիւմալէն: Այս անժա-  
մանակ ուսմանքիսմը տեսութիւն միայն  
կարքնցնէ մեր մէջ. այնպէս որ արդի  
թատրոնին ամենէն մեծ վաստակաւորին  
այս վրիպմանը դատաստան մըն է ինք-  
նին եւ մեր մէջ կը խորտակէ ամէն լա-  
ւատես տրամադրութիւն մեր թատրոնի  
ապագայէն: Մեր աշխատանքին շրջա-  
նակը չարտօներ, որպէսզի վերլուծուի



պատմառանքը այս անյաջողութեան:

3. «Կայսր».— «Կայսր»ը իսկական քատե-  
րախաղ է, հակառակ հեղինակի մնայուն  
նիգիին, որով կը յամառի բեմին վրա  
*սէմպոլին* արձակել: Խաղը կազատի  
*սէմպոլին* նմանման եւ վտանգէն, կեղ-  
քոնական մէկ երկու անձերուն իսկա-  
պէս տառապիւի մկարագրովը: Չեմ գի-  
տեր ինչո՞ւ կը տարւիւմ խորհելու, ք-  
ի՞նչ գուրգուրանով արդեօք Լեւոն  
Շանթ յղացած է Հաննայի տիպը, որ  
դժբախտաբար չէր կրնար փրկուիլ, հա-  
կառակ հեղինակին առաջնորդութեան,  
այն պարզ պատմառով որ *սէմպոլին* մարդ  
չէ: Բայց այս եղանակը կը յատկանշէ  
իր ամբողջ քատերական ստեղծագոր-  
ծութիւնը, ուր խոշոր խոշոր գաղա-  
փարներ, քանի մը խանձարուրի մէջ  
առնուելէ յետոյ, քիսմած են մարդոց  
կաշիին մէջ: Այս եղանակը արդէն մե-  
ռած մասն է իր գործին: Բարեբախտու-  
թիւն է որ «Կայսր»ը այնքան քիչ ունե-  
նայ անկէ (Օհան Գուրգէնի մէկ քանի  
պատերը եւ սուրբ Հաննան): Փոխա-  
րէն՝ կենդանի կին մը, դուրս՝ քատե-  
րական շատ շեշտ իրադարձութեանց  
անւաշարքին մէջ: Անով Շանթ փաստը  
կուտայ յուզում մը ստեղծելու, գայն  
դեկալարելու, գագաթելու իսկապէս  
տառապստեղծ իր կարողութեան: Խաղին  
մնացեալ մասերը, բոլորն ալ, իրական  
գետնի վրա փոքր իրենց միջոցներուն  
փոքր նպաստովը կը փրկուին ծուխ ու  
սուրբ ըլլալէ: Մնաց որ փոքր տիպա-  
ներու հետ այս յաջողութիւնը ընդհա-  
նուր յատկանիշներէն մէկն է մեր քատե-  
րոնին, որ ողբալիօրէն անկար է  
protagoniste ոտքի կեցնելու:

4. *Շիրվանզադէ եւ Լեւոն Շանթ*.—  
Շանթ ո՞րեւէ կապ չունի արեւելահայ  
քատերոնի վարդապետութեան եւ որդե-  
գրած սկզբունքներուն հետ: Անկա-  
հիմնովին կուրացւի արդէն արեւելա-  
հայ բնադատներէն, եթէ նկատի չառ-  
նենք «Հին Աստածներ»ու ստեղծած  
*թախալական* արտայայտութիւնները:

Քանի մը զօրաւոր գաղափարներ, որոնց  
գեղեցկութեանը ու արժէքին քաւական  
ուժեղ հաւատք մը կը նկերանայ միշտ:—  
ահա՛ գլխաւոր գաղափարը, որ Շանթը  
մղած է բեմին: Իրեն համար բեմը գե-  
տին մըն է այդ գաղափարները դնելու,  
վիճաբանութեան ենթարկելու եւ *մաս-  
սային* մէջ անոնց քափանցումը կարելի  
ընծայելու: Այս ճարտարանքին համար՝  
անիկա անյարմար գտաւ Լէպի dialogue  
եւ բեմի raccourci ուրիշ արեւտե-  
րէ փոխ առնած ազդու միջոցներու նը-  
պաստովը գայն կենսաւորելու ձգտու-  
մով մարդեր դիմակաւորեց. մինչդեռ  
Շիրվանզադէ գրեց, կեանքը եղածին  
պէս տալու յաւակնութեամբ, ուրանա-  
լով գաղափարներու կշիռը: Շանթի մէջ  
մտածման սարած, Շիրվանզադէի մէջ՝  
իրականութեան բնագոյ. անոնք պէտք է  
մօտեցնեն իրարու, քանի որ այդ մեր-  
ձեցումը տեսակ մը բախում պիտի ըլ-  
լայ, հաւասարապէս խորտակիչ երկու-  
քին համար ալ:

5. *Եղիա Գասպարեան*.— Շանթի ազ-  
դեցութիւնը մէկ կողմէ, արեւմտեան  
քատերոնին մէջ ներկայացուելէ աւելի  
ոնի եւ décor մտահոգութեամբ տար-  
ւած խմբակի մը օրինակը միւս կողմէ:  
մեզի բերին Եղիա Գասպարեանը. Անի-  
կա կը գերապատէ dialogue շնորհը եւ  
գայն միմակը փոխարինող կը կարծէ  
բեմական մարդու միւս տուրքերուն:  
Տխուր է խոստովանիլ, քէ Ե. Գա-  
սպարեան հիմնովին անգիտակ է քատե-  
րական մշակումի պայմաններուն: Չեմ  
կրնար հոս առանձին առանձին քննու-  
թեան ենթարկել իր քատերախաղերը,  
որոնք մեղաւոր են ամէն բանով, բացի  
dialogue չէ: Մինչ իր վարպետը dia-  
logue առաջ ու անկէ աւելի մտահոգած  
է գաղափարներու հարցով, ինք բաւ կը  
համարէ կարծես, որ մարդիկ խօսին  
միայն ու խօսին բանաստեղծօրէն, ցած  
ձայնով, ինչպէս պիտի ընէին արտա-  
սանդղները արձակ քերթած մը կար-  
դալու ատեն: Յատկանշական է, որ

tragique ու պատմական անձնաւորու-  
թիւններ անհանգիստ կըլլան իրմով:  
Գրագիտութեան դասագիրքէ մը միտք  
պահած այդ քելագրանքը, որ արդի  
կեանքը անյարմար կը նկատէ ողբերգու-  
թեան եւ արեւտագէտը կը դրկէ ան-  
ցեալին, պարզ մարգանքէ մը անդին չէ  
անցած. բայց, մինչ արեւտագէտը  
կազմուելէ յետոյ այդ փորձերը կրակի  
կուտայ, Գասպարեան գանձէ կը յանձ-  
նէ մեր ամենընկալ մամուլին: Չեմ  
տեսներ տարբերութիւնը Պէշկէպաշեան-  
նի «Վահան Մամիկոնեան»ին եւ Գա-  
սպարեանի «Տրդատ»ին: Կը համակրիմ  
իր յաւակնութիւններուն, բայց այդչա-  
փը չի բաւեր որպէսզի պատմութենէն  
բռնի հանած ու բեմ նետած մարդեր  
իրենք գիրենք հարկադրեն մեզի: Ար-  
դիական բիւս մը կը բաւարարի իր  
մարդերուն vérité-ով. պատմական  
բիւս մը հաւատարիմ պիտի ըլլայ իր  
ժամանակին, ինչպէս ամբողջ մարդկու-  
թեան: Դրեմ իր մարդերը իրենց շրջա-  
նակին մէջ եւ մտիկ ըրէմ անոնց յե-  
զուն. յուսահատական է տպաւորութիւ-  
նը: Ե. Գասպարեան տարիներու ճիգով  
մը միայն պիտի ազատի իր սկզբնական  
մեղքէն. կըսեմ աւիկա, վասն զի կը  
հաւատամ իր dialogueին: Լեզուի այդ շը-  
նորհէն յետոյ, արեւտի միւս պայման-  
ները նաեւի կընան ըլլալ, բայց ոչ՝  
քերթերու էջերը լեցնելու անապարան-  
քով մը:

6. *Ղեւոնդ Մելիքեան*.— Հինէն կար-  
դացած եւ «Դաւոյի Դաւանանքիւնը»,  
բայց չունիմ ո՞րեւէ տպաւորութիւն: Ժա-  
մանակի փոշին չէ, որ սրբած է հետեւե-  
րը իմ ընթերցումիս, վասն զի անկէ շատ  
աւելի վար շրջանէ գիրքեր ունիմ մտքիս  
մէջ, ամբողջական գծագրութեամբ: Չեմ  
տեսած իր Arménouche-ը որուն համար  
քննադատները գովեստ չգտան շոյալե-  
լու: Այնպէս որ իրմով գրադելու հնա-  
րաւորութիւնը կը պակսի ինծի: Տխուր  
է, որ մէկու մը մասին նոյնիսկ քերու-  
թիւններ չկարենամ ըսել:

7. *Վ. Վալդեան իրր թատերադիր*.—  
Վալդեան շփացած գաւակն է մեր հը-  
րապարակին. մեծածաւալ իր վէպերէն  
ու պատմաժողովներէն ետք, անկարելի  
բան չէր զինքը տեսնել նաեւ բեմական  
մարգէն ներս: Եթէ նկատի ունենամ իր  
վէպերը, որոնք երկարաշունչ խօսուր-  
տութիւններ են, առանց կնիքի եւ բովան-  
դակութեան ու արժէքով ո՞րեւէ տարրի,  
չէմ գարմանար իր խաղերուն ալ հասա-  
րակութեան, քատերական յօրինումէ  
փարսալծներով հեռաւորութեան: Խղ-  
մըտութեան այսքան պակաս, արեւտի  
հանդէպ այսքան անփութութիւն հազիւ  
քէ կը հանդիպինք մեր նորագոյն գրա-  
կան պատմութեան մէջ: Վարժապետե-  
րու եւ նման անպատասխանատու մար-  
դոց երեւումը մեր գրական հանդէսնե-  
րու մէջ ո՞չ միայն ճաշակի աղետաման  
փաստ է, այլ եւ մեր գրականութեան  
խոր անկումին. եւ ասիկա անանկ ա-  
տեն մը, երբ մեր հանդէսները իրենք  
գիրենք կապրեցնեն, առանց մեկեմասի  
մը նպաստին: Երեսուն տարի առաջ,  
գաւառական դպրոցի տնօրէն մը տարե-  
կան հանդէսի համար իր տղոցը երբոր  
dialogue կուտար (կը յիշեմ շատե-  
րուն մէջէն Թլկատեցիին), աւելի համեստ  
էր ու խղճամիտ: Երեսուն տարի ետք,  
մեծագնդ վէպերու տէր եւ հեղինակ  
Վալդեան կը մեղանչէ այդ համեստու-  
թեան ու խղճմտութեան դէմ, իր անու-  
նը գետեղելով այն էջերուն տակ, որոնք  
իր քատեր. գրականութիւն կը հրաւ-  
ցենք մեր հասարակութեան:

8. *Յակոբ Մնձուրիի փորձը*.— Սիրելի  
պիտի ըլլար ինծի Մնձուրիի անունը  
կարդալ պատկերներու եւ պատմաժողով-  
րու տակ, որոնք՝ հակառակ իրենց ձրգ-  
ձրգում նկարագրին՝ իրենց մէջ կը մթե-  
րեն որոշ քանակ մը բարբի ու դիտու-  
ղութեան, տուած բաւական փորձ ար-  
ւեստի մը ընդմէջէն:

Իր քատերախաղը նկարագրներ ու-  
նի, տեղական գոյն, սրամտութիւն, տեղ  
տեղ՝ իսկական բանաստեղծութիւն: Յա-



լալի է, որ չէ մշակւած. ըսել կուգեմ՝ պատկերի եւ պատմածքի իր վարժու-  
թիւններէն չէ հրաժարած եւ քատերա-  
կան դիպախաղը լարելու համար ինկած  
է քաջի եւ բռնագրօս յարդարանքի  
մէջ: Մէկ երկու նման փորձեր, եւ ա-  
նիկա պիտի կրնայ ազատել իր յօրինու-  
մը այս քերթներէն: Կը հաւատամ, քէ  
մէկ կամ երկու արարնոց պատկերներ  
յարմարագոյն գետինն են՝ տոմարքի  
գգայարանէ գորկ, բայց սուր հեզմու-  
թեամբ քրքռուն իր գգայնութիւնը  
յայտնաբերելու: Ըրած է ատիկա Թիկա-  
տեցին յաջողութեամբ: Յակոբ Մնձու-  
րին կուգայ արեւստի աւելի ընդարձակ  
հանգանակներէ ետքը: Անգամ մը որ  
չէ գոհացիւ իր քերթութիւնները, իր ա-  
ռաւելութիւնները պիտի կրնան լիովին  
արդարացնել իրենց գիրքնէ:

Գ. Ուրիշ Թատերադիրներ. Ասոցմէ  
դուրս, Փարիզ ու «Հայրենիք»ի մէջ  
դարձեալ քանի մը խաղերու նախաշու-  
մըն եմ ըրած: Կ. Մեհեանի եւ Լիւյ-  
Նագարեանցի խաղերը հոգեբանական  
մշակումի փորձեր են, որոնց մէջ բա-  
նաստեղծութիւնը քիչ մը շատ կը մի-  
ջամտէ, խեղդելու աստիճան անձերու  
դիմագծերը իր մշուշին մէջ: Կը կար-  
դացիւն իրենց երաժշտական արձակի  
շնորհիւ: Թատրոն չեն անշուշտ, քանի  
որ Թատրոնը պայմանագրող հիմնական

նկարագիրը — գործողութիւնն է. շար-  
ժում — կը պակսի ամենց:

Այս ամենէն ետքը, Թատրոնի մօտա-  
ւոր ապագայովը զբաղիլ միամտութիւն  
պիտի ըլլար իմ կողմէ. ամենէն դժու-  
րըն է ան գրելու սեռերէն, եւ մեր ժո-  
ղովուրդը բոլորովին անտրամադիր՝ ա-  
տանկ ինքնին դատապարտած սեռ մը  
կորուստէ փրկելու: Մարգարէութիւնը  
անիմաստ է, բայց լաւատեսութիւնն ալ  
ծիծաղելի, երբ 8-10 փորձերու փաստը  
մէջտեղն է: Մեր դերասանները (պետք  
է վերջապէս յիշել ատոնք, քանի որ  
մեծագոյն բաժինը իրենցն է Թատրոնի  
այս սպառումին մէջ) կարելի ըրին,  
որպէս զի մեր բանիմաց, արեւստը ճա-  
շակելու ընդունակ դասակարգը պաղի  
ընդմիջտ հայեցի բեմէն, չկրնալով հան-  
դուրծել մեր ուսմանքիսմը, որ միառե-  
ծան կիշխէ Ամերիկայէն մինչեւ Եգիպ-  
տոս: Թո՛ղ բարով վայելեն իրենց  
«Բին»երը, «Ուրիշ Ակոստա»ները, յի-  
շելու համար միայն քանի մը համարա-  
ւոր օրինակներ: Տասը տարի ետք,  
իրենց կեղծ ծամերն իսկ փոխադրող  
մարդու պիտի չհանդիպինք այլեւս բե-  
մի վրա: Գուցէ կը սխալիմ, մոռնալով  
բարեկեցականի հանդիսանքները, վար-  
դանանց ներսած հոսկիտութիւնները...

Գահիրէ. Դրէ առաւ. Բ. ԹԱՇՆԱՆ

### ՍԱՅԵԱԹ ՆՈՎԱՅԻ ԱՆՏԻՊ ՏԱՂԵՐ

«Գրական Թերթ»-ի 30 յունիս, № 17-  
ում հրատարակւած են Սայեաթ Նովայի  
երկու անտիպ տաղերը: Մէկը՝ «Խա-  
բար գրեցայ բլբուլի մօտ»՝ տրամադրել  
է Գ. Ասատուրը, միւսը՝ «Ես՛ր, քո  
կարօտդ»՝ Գ. Թարվերդեանը:

Առաջինի մասին Ասատուրը ասում է,  
թէ այդ տաղի մի փոփոխակը ինքը,  
առնելով Սայեաթ Նովայի օրգի 0 հանի  
Դաւթարից, հրատարակել է 1903 թ.  
«Ազգ. Հանդէս»-ի 10րդ զրբում, բայց

«Ներկայ վարիանսը բոլորովին նոր է եւ  
չատ է տարբերուում առաջինից»: Տաղը  
յայտնաբերուած է Գէորգ Ախվերդեանի  
թղթերում, որոնք գտնուում են Հայաս-  
տանի Թանգարանում եւ զբաւած է վրա-  
ցերէն տառերով:

Երկրորդ տաղը Գ. Թարվերդեանը լը-  
սել ու զրէ է առել 1908 թ. մարտին:  
Ասել է հաւելարացի 85 տարեկան Աննա  
Մուրադեանը, «որ դիտէր բաղձաթիւ  
երգեր, հեքիաթներ, առակներ եւ այլն:

Իւր ասելով՝ Հատերի հետ նաեւ Սայեաթ  
Նովայի երգերը նա սովորել է ջահել  
ժամանակ իւր քեռի տիբացու «Գեւուր-

քից», որը դիտէր ճիւղնուր ածել եւ  
խաղ կանչել»:

Ա. ԽԱՅԱՐ ԳՆԱՅ  
Խաբար գրեցայ բլբուլի մօտ. «Վարբըն  
քո գայուն մընում է.  
ձըլսկընիբըն բացբացրիլ է, վըրէք շուր  
գայուն մընում է.  
Առաւուտան գանգակի պէս քաղցր ձէն  
տալուն մընում է»:  
Բլբուլն ասաւ. «Ձիմ կարա գայ, պուն-  
պունէն լալուն մընում է»:

Վարբըն ասաւ. «Իմ բլբուլին ալ պուն-  
պունէն ո՛րնց կու խափէ.  
Քանի վաղ է, դարիք բլբուլ, դուն քո  
բաղի նամփէն չափէ:  
Հագար գուգէ դայրաք անէ, Սիպուս  
Դիւր կուրըն կապէ.  
Էլի վիբընում մէյդանըն Ռոստոմի Զա-  
լուն մընում է»:

Բ. ԵԱՐ, ՔՈ ԿԱՐՕՏԳ  
Ես՛ր, քո կարօտդ քաշում իմ անմահա-  
կան քրի նման,  
Ռա՛հմ արա, դուռդ իմ էկի, օջախի ու  
փիրի նման,  
Սերդ սիրտս կէս է արիլ քանկարդարի  
քրի նման,  
Էշխիդ ալաւ ինձ վառից քարեկական  
երի նման:

ԲԼԲՈՒԼԻ ՄՕԴ  
Վարբըն ասաւ. «Խային բլբուլ, նալալ  
գայ քո էքթիբարին.  
Անցկացաւ ապրիլ, մայիսըն, մէկ օր չը  
հարցըրիք եարին»:  
Չերուդ մուրագին հասիլ էր, տիս՝ ինչ  
արաւ քաւար դ՛արին.  
Փահրադը իրան սըպանից, Շիրին խան-  
ջալուն մընում է:

Հագրեմէն մէկը չին ասի, քեգուգ աշ-  
խարքը դիփ գովին.  
Դարունքին ծաղկնիբով հուտ կուտաս  
ամարայ հովին.  
Հենչանք ըլի դուն սաղ ըլիս, քուրըն  
տանէ Սայեաթ Նովին.  
Շահարագի լալի նըման Շահըն վրէք  
գայուն մընում է:

Վոնց որ կարօտ մի ուխտաւոր դուռդ է  
էկիլ Սայեաթ Նովէն,  
Անց է կացի ամէն չարկապ, ամէն ար-  
կիլ Սայեաթ Նովէն.  
Թէ որ կուրցնիս, էլ չիս գտնի ճարից  
մէկ իլ Սայեաթ Նովէն,  
Նա մէ՛կ հատ էր աշխար էկաւ, քանց  
մի դարիք հուրի նման:

### ՄԻ ՔԱՆԻ ՃՇՏՈՒՄՆԵՐ

(Յ. Զարեանի «Սայեաթ Նովայ»ի առթիւ)

Համակերպի «Վէմ» հանդէսի մէջ լոյս  
տեսաւ պ. Յովհաննէս Զարեանի շնոր-  
հալի յօդւածը Սայեաթ Նովայի մասին,  
որի ինչ-ինչ կէտերի առթիւ կուգէի ա-

նել մի քանի բռնցիկ դատողութիւններ:  
Ա. Հանդէսի Ա. հատ. էջ 37 ասւած  
է. «Յամեմայն դէպս, նշանաւոր բանաս-  
տեղծ Հափըզի օրերից արդէն սովորա-



կան է, որ բանաստեղծներն իրենց քնարական ոտանավորները վերջացնում էին իրենց անուն, ընդհանրապես, ծածուկ անուն յիշատակութեամբ: Պարսիկ բանաստեղծներից այս սովորութիւնն անցաւ եւ աշուղներին» եւայլն:

1) Այդ սովորութիւնը սկսում է ոչ թէ Հաֆէզից, որ ապրում էր 1300-1380 թ.թ., այլ պարսից գրականութեան հենց սկզբի շրջանից. այսպէս, մի օրինակ բերեմք մոյնիսկ ոչ աւագ բանաստեղծներից, այլ Դաղիդիից, Ֆեր-դավիի մեծամուն մախրադից, որ ապրում էր հաւանաբար Սամանիդ Նուհիէրն Մանսուրի ժամանակ (976-997): Նա իր հռչակաւոր դազալի մէջ, որտեղ ի միջի այլոց երևան է գալիս նրա զբաղաւորականութիւնը, գնում է իր բանաստեղծական անունը (Դաղիդի):\*) ինչպէս ընթերցողը կը տեսնի այդ դազալի ստորեւ բերած մեր քարգմանութիւնից:

ՂԱԶԱԼ ԴԱԳԻԴԻ

Սի'րտիմ, ահա գցեց ամպը գարնային Մայիսի խալաքը երկրի ուսերին.  
Աշխարհն այնպէս է մեղմացել, որ  
դաշտում  
Վազրը խաղ է բռնել հետը սարայծին:  
Գետինն արիւնդաձէր դիպակ է կարծես,  
Օդը մուշկ է դարձել՝ բեհեզը հագին.  
Ասես անապատում գինով ու մուշկով  
Պատէր ես քելադրում սիրածդ էակին:  
Կուտքը\*\*) դեմքը գմայլիչ յակիմը է  
կտրել  
Մեհեհանի հանդերձի գոյն ունի գինին.  
Աշխարհը պննել է ինչպէս սիրամարգ,  
Մի կողմը խորդուբորդ, ողորկ է միւս-  
դին:  
Վարդից վարդաջրի բուրմունք է ծո-  
քում,

\*) Նրա իսկական անունը ենթադրւում է Աբու Մանսուր Մոհամմադ Էբնէ Մոհամմադ Էբնէ Ահմադ:

\*\*) Սիրունի:

Ասես վարդի բոյրը խառնած է վարդին:  
Դաղիդին ընտրել է լույ չորս յատկու-  
թիւն  
Լաւ ու վատից, որ կայ երկրի երեսին.  
Յակիմը շրքումն, ապաչանգի\*\*) հեծե-  
ծանք  
Զարդոշտի\*\*\*) կրօնն ու կաս կարմիր  
գինին:

2) Յիշեալ ոտանավորները ոչ թէ «գնարական ոտանավորներ» էին առհասարակ, այլ նրանց մի տեսակը՝ այսպէս կոչւած դազալներ, որոնց մի նմոյշը բնագրի տաղաչափութեամբ բերած է վերեւ: Այդ դազալները, ինչպէս կարելի է տեսնել վերոյիշեալ նմոյշից, որոշ ձեւ ունին եւ նւիրած են սիրային ապրումների, կամ միատիպական բովանդակութիւն ունին: Դազալ արաբերէն բառ է, որ մեր գրականութեան մէջ գործ է ածւում «գազել» ձեւով՝ ռուսական աղաւաղած արտասանութեամբ: Այս ոտանավորների առաջին եւ երկրորդ տաղերը յանգաւորած են, երրորդն ազատ է, չորրորդը մոյնայանգ աւ-ի եւ բ-ի հետ. մոյնայանգ են եւ 6-րդ, 8-րդ եւ 10-րդը եւայլն մինչեւ վերջ. իսկ 5-րդը, 7-րդը, 9-րդը եւայլն ազատ են:

3) Դասիդէ կոչւած այս դազալները վերջանում էին ոչ թէ «իրենց անուն, ընդհանրապէս ծածուկ անուն» այլ զբաղական կեղծանունի յիշատակութեամբ: Այդ կեղծ անունը կոչւում էր քախալ-լուս:

\*\*) Վաղեմի երաժշտական դործիւքների մի տեսակն էր՝ ծուռ գլխով:

\*\*\*) Զարդոշտ - Զրադաշտ, Զարատուշթրա:

համեմատի սերունդները, որոնք մեզմոտ բուրբական արտասանութեամբ յորջորջում են սէշիդներ: Այստեղից եւ Սալեաթ Նովայի ժառանգների ազգանունը՝ Սէշիդով: Ինչ վերաբերում է Նովային, այդպիսի բառ չկայ ոչ պարսկերէն եւ ոչ արաբերէն լեզուներում: Կայ պարսկերէն երկու բառ նով «նոր, երիտասարդ» - նշանակութեամբ եւ նովա, որ նշանակում է ձայն, հնչիւն, երգ: Այս բառերից առաջինը չի կարող վերջն « ընդունել. ուրեմն «նովա» չի կարող դառնալ, իսկ երկրորդը ռուսական ռով թափի բառի ազդեցութեամբ տակ հողի վրա՝ Նովա-ի է փոխել (պարսկերէնում Նովա անհասկանալի է: Այսպիսով Սալեաթ Նովայի հիշտ ձեւն է Սեշիդ Նովա կամ աւելի հիշտ՝ պարսկական էզաֆէով, այսինքն ածականը գոյականին շաղկապող է մասնիկով (որ ընկել է հայերէնում)՝ Seyyed-Nava, որ նշանակում է իշխան երգերի կամ տաղասացութեան վարպետ, ինչպէս ինտուիցիայով հիշտ կռահել են Յովհ. Թումանյան եւ Վալ. Բրիւսով:

Գ. Սալեաթ Նովայի հօր կոչումը. «Մահտեսի» բառը այսպէս կոչւած ժողովրդական ստուգաբանութեամբ առաջացել է արաբ եւ պարսկական մողաղ-դասի բառից՝ moqaddasi որտեղ Գ. յետմային խուլ հնչիւն է, ինչպէս վերացերէն ծղալի (չոր) բառի մէջ (նոյնը եւ daqiqi բառում): Moqaddas արաբերէն նշանակում է սրբազան. իսկ թէյտ օլ մօզաղդաս beit ol moqaddas այսինքն սրբազան տուն, կամ սրբազան տաճար կոչւում է Երուսաղէմը: Իսկ ինչպէս յայտնի է, պարսկերէնը / (i) մասնիկ աւելացնելով սրբավայրերի անունների վրա՝ նշանակում են բացի այդ վայրերի բնակիչներից նաեւ այն մարդկանց, որոնք ուխտ են գնացել այդ

վայրերը. այսպէս Մահադ (Մեշեդ) քաղաքի անունով մշախադի (մեշեդի) անունում են ոչ միայն մեշեդի բնակիչներին, այլ եւ այն բալոթին, որոնք այցելել են ուրբերոյ էմամ Ալի Բէն Մուսա առ Ռէզայի դամբարանին Մաշհադում. այսպէս եւ քաղաքային (kərbala-yi), կամ ինչպէս մեզմոտ աղաւաղած թուրքերէն յորջորջումով արտասանում են՝ Բալթայի, կոչումին այն ուխտաւորներին, որոնք այցելել են էմամ Հոսեյնի անունին Քարթալայում: Նոյնիսկ հաջք բառին (hazj որ նշանակում է ուխտաւոր), պարսկերէնը հաջի ձեւն են տւել, նշանակել ցանկանալով մուսուլմանական մեծ սրբավայրերի՝ Մեկկայի եւ Մեդինայի ուխտաւորներին:

Այս ձեւով կազմւել է եւ մողաղդասի բառը արաբական անունից եւ պարսկական ածանցից, որ նշանակում է Երուսաղէմի ուխտաւոր. այդ նշանակութիւնը պահել է եւ մեր աղաւաղած մահտեսի բառը: Այդ պատճառով սակայն նախնական ձեւով շնորհել է եւ եկեղեցիներում (որպէս Երուսաղէմի նմանող վայրերում) ծառայութիւններ անող մոզալիներին, որոնց տիպը անմահացրել է Խ. Աբովեանը իր «Վերք Հայաստանի»-ում:

Մնում է լուծել այն խնդիրը, թէ Սալեաթ Նովայի հայրը մահտեսի էր իսկական մտով, թէ՞ մղղսի, այսինքն եկեղեցու ստորին պաշտօնեայ: Ոչ մի հարկադրանք չկայ վերջինը ենթադրելու, եթէ ի նկատի ունենանք, որ նա Հայէպցի էր, ասել է ամենայն հեշտութեամբ Երուսաղէմ այցելած մի անձնավորութիւն եւ ուրեմն իսկական մահտեսի, մանաւանդ որ որդին հօրը այդ իսկ պատճառով է շնորհում:

Ռ. ԱՐԲԱՆՍԵԱՆ





# ԳԻՐՔ ԵՒ ՄԱՄՈՒԼ

## ՄԵՐ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐԸ

Յունիս ամսից սկսած «Հայրենիք» ամսագիրը տա-  
ՀԱՅՐԵՆԻՔ լիս է մի յաւելած «Գի-  
ւան Հ.Յ.Դաշնակցութեան»  
անունով, որ պիտի լոյս  
տեսնէ նաեւ առանձին հատորով: Այդ  
յաւելածումը հրատարակելու են կենտ-  
րոնական եւ կենտրոնական կոմիտէներ  
դիւաններէ մէջ եղած նիւթերը: Խմբա-  
գրութիւնը հետեւեալ ձեւով է բնորո-  
շում իր նոր ձեռնարկի նպատակը:

«Իւրան Հ.Յ.Դաշնակցութեան» ձեռ-  
նարկի նպատակն է, առարկայական հը-  
նարաւոր անկազմակալութեամբ, հուս  
նիւթ մատակարարել հայ պատմագրու-  
թեան՝ համազօր, որ Հ.Յ.Դաշնակցու-  
թեան կատարած պատմական դերը երե-  
ւան համեմատ լաւագոյն միջոցը փաստե-  
րու եւ քիւրու հրատարակութիւնն է:  
Պատմաբան – ուսումնասիրողներուն կը  
մնայ տրած նիւթերու հիման վրա  
պատկերացնել դարաշրջանի դէպքերն  
ու ոգին, այսինքն՝ նշմարիտ պատմու-  
թիւնը:

Ամսագրի առաջին երեք համարներում  
լոյս են տեսել Շերամ Ղազարեանի յու-  
շերը «Կարմոյ Առաջին Դէպքի» մասին,  
Ստեփան Ստեփանեանի (Բալագան) յու-  
շերն «Կուկունեան Խմբի Արշաւանքի»  
մասին եւ Կուկունեան խմբի ամբաստա-  
նագրի մէկ մասը – երեքն էլ քանգար-  
ծէ՛ք վաւերագիր հայ յեղափոխական  
շարժման առաջին շրջանը պատկերացը-  
նելու համար:

«Հայրենիք»-ի այս ձեռնարկը օգտա-  
կար եւ վաղուց արդէն անհրաժեշտ  
դարձած գործ է: Մաղքեմք, որ լինի  
տեսակաւ:

Նոր լոյս տեսաւ Տրդ տար-  
ւայ յունար – յունիս՝ 5-Յրդ  
ԱՆԱՀԻՏ միացեալ քիւր: Ուրեմն, եր-  
կամեան ի վերջոյ յանգել է  
վեցամսեայի: Ընթերցողնե-  
րին ուղղած ազդի մէջ խմբագիրը գան-  
գատում է, քէ՛ «բաժանորդներու կէսէն  
աւելին, նոյն իսկ այժմ, երբ 5-6 քիւր  
լոյս կը տեսնէ, դեռ չեն վնարած իրենց  
հինգերորդ տարւան բաժնեգինը, եւ  
կան բաւական քուով, որ նոյն իսկ չոր-  
րորդ տարւան բաժնեգինը չեն վնարած  
տակաւին»: Այս պայմաններում, իհարկէ,  
դժուար է հանդէսի կանոնաւոր հրա-  
տարակումը:

«Անահիտ»-ի ներկայ տետրակը բաղ-  
կացած է 120 էջից, որի ուղիղ կէսը գը-  
րաւել է ինքը խմբագիրը, մնացած կէ-  
սը գիշել է ուրիշ 19 անձերի: Խմբագիր  
Ա. Զօպանեանի գրածներէց արժէքաւոր  
է «Յովհաննէս Սազրեղեանի» կենսագրա-  
կանը: Հեղինակը գտել է հետաքրքրա-  
կան նիւթեր պատկերացնելու համար  
այդ ինքնատիպ եւ աչքառու անձնաւո-  
րութեան դէմքը: Յօդուածը զարդարւած  
է մէկէ աւելի նոյնպէս հետաքրքրական  
նկարներով եւ նամակների վերաբո-  
ղւորութիւններով: Յատկապէս յիշենք  
Պետրոս Ադամեանի գեղեցիկ լուսանկա-  
րը՝ դերասանի ձեռագիր մակագրու-  
թեամբ: Ա. Զօպանեանի միւս գրութիւն-  
ները՝ «Քրոնիկ», «Տպաւորութիւններ  
ու յիշատակներ Խորհրդ. Հայաստանէն»  
(շար.) ջրալի եւ անհամ բաներ են:  
Զօպանեանի օտար «Քուրիստի» աչքով  
դիտւած Հայաստանը շատ հեռու է Հա-  
յաստանի իրական պատկերից: Յօդու-  
ածում պատահող աչք ծակող փաստական

սխալներն էլ հաստատում են, որ Ա.  
Զօպանեանը սաւառակի պատուհանից  
է դիտել Հայաստանը:

Միւս նիւթերի մէջ առանձնապէս աչ-  
քի նշանոյթ բան չկայ. գրական բաժինը  
կազմած է սովորական, ոչ շատ տաք,  
ոչ շատ պաղ ուսումնասիրութիւններից՝ եւ ար-  
ձակներէց: Ուսումնասիրութիւնների  
բաժնում նոյնպէս նկատելի բան չկայ:  
Դրական մասից արձանագրենք Ֆիրդու-  
սիի «Երգիծական ընդդէմ Սուլթան  
Մահմադի»-ի քարգումանութիւնը պարս-  
կերէն բնագրից, որ կատարել է Մ.Յ.  
Թիքեաւեանը: Պ. Թիքեաւեանը, որ  
համով-հոտով ուսումնասիրութիւններ է  
անում պարսից հին մշակոյթի բնագա-  
ւառից, խոստովում է տալ նաեւ Ֆիր-  
դուսիի կեանքն ու գործը եւ քարգում-  
անել «Շահնամը»-ի որոշ էջերը:

Շատ հարուստ չէ Ա. Զօպանեանի «մը-  
տածման եւ արեւտի» հանդէսի այս  
տետրակը, որ կոչւած է գլխաւորապէս  
խմբագիր – գրագէտի անձին ծառայե-  
լու:

«Սիօն»-ի վերջին, 6րդ համա-  
րում հրատարակւած է մի ընդար-  
Սիօն ձակ քղթակցութիւն էջմիածնից,  
որ աւելի շուտ պաշտօնական վա-  
ւերագրի տպաւորութիւն է քող-  
նում եւ որ էջմիածնի եւ լուսաւորչա-  
կան եկեղեցու ճակատագրով հետաքր-  
քրուողի համար ծայր աստիճանի ու-  
շագրաւ տեղեկութիւններ է պարունա-  
կում: Անսահման մռայլ գոյներով է  
ներկայացւած էջմիածնի եւ Խորհրդ.  
Միութեան սահմաններում գտնուող քե-  
մերի վիճակը: 17-18րդ դարերում, խա-  
նական իշխանութեան տակ անգամ այդ-  
պիսի վիճակ գոյութիւն չի ունեցել:  
Անցեալները մի ամբողջական քերք գը-  
րում էր, քէ՛ երբեք հայոց եկեղեցին  
այնքան լաւ պայմաններում չի գտնւել,  
որքան այժմ՝ խորհրդային իշխանու-  
թեան ներքոյ: Գերագոյն Խորհրդի ար-  
ձանագրութիւնների հիման վրա կազ-  
մուծ էջմիածնական այս քղթակցու-

թիւնը հաստատում է, որ երբեք հայոց  
եկեղեցին այնքան վատ պայմաններում  
չի գտնւել, որքան այժմ՝ խորհրդային  
իշխանութեան ներքոյ: էջմիածնի ամ-  
բողջ ունեցածը գրաւած է, մշակու-  
թային ո՛չ մի հիմնարկութիւն չունի.  
հասոյթի աղբիւրից զուրկ է եւ ապ-  
րում է միայն արտասահմանից ստացւած  
աղբութեամբ: Աւելի խեղճ է քեմերի  
դրութիւնը: Պետութեան մէջ եկեղեցին  
միայն հանդուրժում է:

էջմիածնի վիճակը պատկերացնելու  
համար քաղենք այդ ուշագրաւ քղթակ-  
ցութիւնից մի քանի կտորներ: էջմիած-  
նից գրում են. «Մի մեծ հոգս ծանրա-  
ցած է վեհ. Հայրապետի եւ Գերագոյն  
Խորհրդի անդամների վերա, որ դարա-  
ւոր տաճարի շէնքի պահպանութեան եւ  
եւ բարեկարգութեան խնդիրն է. տարա-  
բախտաբար, արդէն քանի տարի է կա-  
րում են մեր երկու արեւելեան խորան-  
ները եւ խոնավութիւնն հետզհետէ անց-  
նում է պատերին. բացի ներքին բարե-  
կարգութիւնից՝ կտորն ամբողջապէս  
կարօտ է նորոգութեան: Տեղական եւ  
սովորական միջոցներով ոչ մի հնարա-  
ւորութիւն չունինք այդ գործը կատա-  
րելու, առանց արտասահմանի հայու-  
թեան յատուկ օգնութեան»:

էջմիածնի յետին աղբատութեան մէջ  
է:

«Որո՞ք են եկամտի աղբիւրները:  
Տանարը իր մոմավաճառութեամբ եւ  
պատահական փոքրիկ նւերներով հազիւ  
կարողանում է ծածկել իր ծախսերը՝  
մոմի, մաքրութեան, սպասարկների եւ  
երգիչների համար. իսկ Միութեան քե-  
մերից շատ քիչ, գրեթէ ոչինչ օգնու-  
թիւն է գալիս, որովհետեւ քեմական  
եկեղեցիներն ու համայնքները իրենք  
դժուարութեամբ կառավարւելու վիճա-  
կի մէջ են. դեռ առաջնորդներից ոմանց  
նպաստ է ուղարկում Մայր Աթոռից:  
Մեր դրամական եկամուտը ջրաղացների  
տղումով արձան էր, որ այս անգամ տա-  
րին շատ պակասել է, մինչեւ իսկ ոչ







կարն տեղեկութիւններ հորհրդային Միութեան եւ Հայաստանի վարչական-ֆազական վիճակի մասին:

Այս գրածը, գծախառնարար, ունի մի հիմնական բերութիւն. նա պարունակում է բազմաթիւ աչք ծակող փաստական սխալներ: Մէկը, որ կարգացել է Ա. Մանդելշտամի գիրքը, անշուշտ, կը նկատէ այդ սխալները, որոնք, ի հարկէ, չեն կարող չզգել ամբողջ գործի արժէքը:

Առաջ բերեմք մի քանի նմոշներ.

Հենց սկզբում ասած է, որ Հայաստանի խորհրդայնացումը տեղի է ունեցել 1920 թ. *հոյեմբ.* 29-ին, այն ինչ Հայաստանը խորհրդային յայտարարեց 1920 թ. *դեկտ.* 2-ին: Հայ բոլշեւիկներն են, որ աշխատում են ցոյց տալ, թէ Հայաստանի խորհրդայնացումը արդիւնք է նոյեմբ. 29-ի բանաւոր-գիւղացիական յեղափոխութեան: Մենք չենք կարող ընդունել այդ շինծու պատմութիւնը. Հայաստանի խորհրդայնացումն օրը դեկտ. 2 է, երբ ստորագրուեց համաձայնութիւն Հայաստանի կառավարութեան եւ Մոսկուայի ներկայացուցչի միջեւ:

Ասած է, թէ՛ երբ 1918 թ. նոյեմբ. 11-ին ստորագրուեց զինադադարը, Հայաստանի Հանրապետութիւնը ունէր 27, 000 *բառ.* զինամետր տարածութիւն: Ճիշտ չէ. այդ ժամանակ Հայաստանը ունէր հազիւ 11-12,000 *բառ.* զինամետր հող: Ճիշտ չէ, թէ Բրեստ-Լիտովսկի դաշնագրով Սուրմալուն անցաւ քիւր-ֆերին. անցան միայն Բաթում-Արտաս-հան-Կարսի շրջանները:

Ասած է, թէ Բաթումի դաշնագիրը ստորագրուեց 1918 թ. յունիս 5-ին, այն ինչ ստորագրել է յունիս 4-ին:

Հայաստանի Հանրապետութեան իրական մանչումը ներկայացւած է 1920 թ. *մայիս* 10-ին, երբ հաշտութեան պայմանները հաղորդեցին քիւրֆերին. ինչ յետոյ, Հայաստանի անկախութեան վերջնական մանչումն վայրկեան հա-

մարում է Սեւրի դաշնագրի ստորագրութիւնը, 1920 թ. օգոստ. 10-ին: Ակներեւ հակասութիւն:

Ներկայ Հայաստանը, խորհրդային իշխանութեան տակ, ներկայացւում է *Բրեստ-Լիտովսկի դաշնագրի սահմաններում*: Ճիշտ չէ. ըստ Բրեստ-Լիտովսկի դաշնագրին, ինչպէս տեսնւմ, Սուրմալուն մնում էր Հայաստանին. այնտեղ խօսք չկար եւ Շարուր-Նախի-ջեւանի մասին, մինչդեռ ներկայ Հայաստանի հարաւային սահմանները որոշւած են *Կարսի դաշնագրով*:

Լուրջ սխալներ են սպրդել նաեւ հորհրդ. Միութեան եւ ներկայ Հայաստանի վարչական կազմի մասին խօսելիս: Խորհրդային Միութիւնը կառավարում է ոչ թէ *Սորհրդային Ռուսաստանի* 1922թ. փետր. 12 սահմանադրութեամբ, այլ *Սորհրդ. Միութեան* սահմանադրութեամբ, որ մշակւած է 1923 թ. յուլիս 6-ին եւ վերջնականապէս հաստատւած 1924 թ. յունիս 31-ին: Խորհրդային համագումարը այժմ ոչ թէ *տարին մէկ* նստաշրջան է ունենում, այլ՝ *երկու տարին*:

Այսօրվայ սխալները չեն սպառում, բայց նրանք բաւական են ցոյց տալու համար, որ «Դիւանագիտական Բառարանի»-ի պատկանելի էջերում Հայաստանը ներկայացւած է բոլորովին անբաւարար: Նման գործերը յաճախ չեն հրատարակւում. անհրաժեշտ էր օգտուել ստեղծւած առիթից Հայաստանը եւ հայկական հարցը ֆազական բարձր գարգացում, դիրք եւ ազդեցութիւն ունեցող հասարակութեան աւելի կատարելապէս ներկայացնելու համար: Բառարան տրւած սխալ նիւթը յետոյ ուղղելը շատ դժուար կը լինի. ապացոյց՝ Լառուսի փոքր բառարանը, որ քանի տասնեակ տարի է հայը ներկայացւած է մի շարաքաղութիւն դերերէն ճիշտով:

Ս. Վ.

## ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Այս համարով լրանում է «ՎԷՄ»-ի առաջին տարեշրջանը: Այդ առթիւ անհրաժեշտ ենք նկատում կատարել մի փոքրիկ համարատուրքիւն. ի՞նչ յոյսերով մանապարհ ընկանք եւ ի՞նչ արդիւնքի հասանք:

Այս գործին ձեռնարկելիս, մեր առաջին խմբագրական յօդւածում, ասում էինք, թէ՛ «ՎԷՄ»-ը ծնունդ է կեանքի իրական պահանջի: Արդ՝ որքա՞ն միշտ դուրս եկաւ մեր ենթագրութիւնը. իրօք «ՎԷՄ»-ը ծնունդ էր կեանքի իրական պահանջի:

Այս հարցին աւելի լաւ է պատասխանեմք թւերով. առ 1 սեպտ. 1934 թ. «ՎԷՄ»-ի բաժանորդների քանակն էր. - Ֆրանսա՝ 165, Սիւրիա՝ 98, Պարսկաստան՝ 82, Հիւս. Ամերիկա՝ 62, Ռումանիա՝ 50, Հար. Ամերիկա՝ 31, Բուլգարիա՝ 26, Եգիպտոս՝ 26, Իրաք՝ 20, Կիպրոս՝ 18, Յունաստան՝ 18, Պաղեստին՝ 10, Սուդան՝ 6, Հաբէշտան՝ 6, Հնդկաստան՝ 2, Կուբա՝ 2, Զուիգերիա՝ 1, Լեհաստան՝ 1, Անգլիա՝ 1, Գերմանիա՝ 1, Անդրյորդանան՝ 1, Կոնգո՝ 1, - ընդամենը՝ 631 բաժանորդ:

Այս 631-ի վրա պէտք է աւելացնել նաեւ 90 հատավաճառ: Ասել է՝ առ 1 սեպտեմբեր «ՎԷՄ»-ի ընդհանուր սպառումն էր՝ 721, մէջը, բնականաբար, չհաշւելով մամուլին եւ աշխատակիցներին ուղարկւած համարները: Ի՞նչ է ցոյց տալիս այս թիւը. իրական պահանջի հետեւանք էր «ՎԷՄ»-ի ծնունդը, թէ ոչ - թող ընթերցողը ինքը դատէ:

Նոյն բանը բնորոշում են եւ հետեւեալ տւեալները. -

«ՎԷՄ»-ի վեց համարներին աշխատակցել են՝ Ա.Արեղեան, Ռ.Արքահամեան, պրոֆ. Ն.Ադունց, Աջեան, Ն.Բադալեան, Հ.Բալուեան, Ռ.Բերքերեան, Ա.Գիւլիսանդանեան, Դրօ, Գ.Եղիկեան, Յ.Զարեան, Բ.Թաշեան, Յ.Թադէոսեան, Յ.Իրազեկ, Ա.Խոնդկարեան, Զօր. Գ.Ղորղանեան, Վ.Մինայտրեան, Զ.Միրզայեան, Լ.Նաիրցի, Շ.Նարդունի, Մ.Պարսամեան, Հ.Պերպերեան, Ա.Զամալեան, Սամսոն, Յ.Ճ.Սիրունի, Վ.Փափագեան, Յ.Քիւրտեան եւ ուրիշներ: Այս անձներից զատ, ուրիշ շատեր եւս խոստացել են աշխատակցել եւ, յոյս ունենք, հետգհետէ նիւթ կունենան «ՎԷՄ»-ի հետագայ համարներում:

Բացի այդ, խմբագրութեան տրամադրութեան տակ կան բազմա-



քիւ նամակներ, որոնք անվերապահ համակրանք են յայտնում «ՎԷՄ»-ին:

Վերջապէս, հրապարակի վրա են մամուլի արտայայտութիւնները: Հակառակ մի կարգ քերթերի դիտումնաւոր լուրքեան, արտասահմանի հայ մամուլը, ընդհանրապէս, ջերմ համակրանքով ողջունեց «ՎԷՄ»-ի երեւումը եւ հետագային էլ քաջալերական խօսքերով խրախուսեց նրան:

Այն էլ ասեմք փակագծի մէջ, որ հայ մամուլը առհասարակ քիչ է գրադուում հայերէն հրատարակութիւններով: Ոչ մի քերթ չկայ, որ ունենար հայ գրականութեան ներքաշ մնայուն բաժին, ուր քննադատէին կամ գոնէ արձանագրէին հայ մտքի եւ արեւստի արդիւնները: Հայ մամուլը, ինչպէս եւ հայ մտաւորականութիւնը, դժբախտաբար, քիչ է հետաքրքրում հայերէն հրատարակութիւններով: Սա հին, բայց միշտ նոր ցաւ է, որ արձանագրեմք եւ անցնեմք:

Գալով բովանդակութեան՝ նրա գնահատութիւնն, ի հարկէ, մեզ չի պատկանում: Մենք ջանացինք «ՎԷՄ»-ը դարձնել համեմատաբար լայն շրջանների սեփականութիւն՝ մնալով միշտ գիտութեան սահմաններում: Ապագայում էլ մտադիր ենք գնալու նոյն ուղիով:

«ՎԷՄ»-ի յաջորդ տարւան համար, բացի արդէն խոստացած եւ շարունակելի աշխատութիւններից, պատրաստ կան հետեւեալ նիւթերը. —

Հայ — Հայկական բանակցութիւնները — Հ.Հ.Կառավարութեան եւ Ազգ. Պատիրակութեան 1919 թ. բանակցութեանց արձանագրութիւնները:

«Վանի վերջին օրերը» — Հմ. Մանուկեանի յուշատետրը 1917 թ. դէպքերի մասին:

«Ատրպատականի Յեղափոխական Դէպքերը» — Արսէն խան Մի-ֆայէլեանի օրագրութիւնը:

«Աղթամարի Կռիւլը» — Վահ. Փափագեան:

Միս. Թուրաքեանի յուշերը Տրապիզոնի յեղափոխական շարժումների մասին:

Դոկտ. Կ. Փաշայեանի ինքնակենսագրութիւնը:

Մելքոն Խան եւ Պարսկաստանի ազատագրական շարժումը. — Յ. Զարեան:

«Դօրպատը որպէս հայ մշակութի հնոց» — Ա. Արեղեան:

«Հայ եւ թիւրք Աշուղական Գրականութիւնը» — Շ. Նարդունի:

«Լէօն իբրեւ պատմագիր» — Դոկտ. Ա. Գասպարեան:

«Լ. Աթաբէգեանը իբրեւ բանաստեղծ» — Ստ. Փոշարեան:

«Արամը» — Ա. Աստուածատրեան:

«Անդրանիկը Զանգեզուրում» — Յ. Ստեփանեան:

Բացի այդ, «ՎԷՄ»-ի համար պատրաստում են. —

«Մեծ ճանապարհի վրա», Սամսոն — Սալմաստի շրջանի յեղափոխական գործերն ու գործիչները:

«Դէպքերը Տարոն — Տուրուբերանում 1914-15 թ.» — Վահան Փափագեան:

«Յուշեր Բաթումի խորհրդածողովի մասին» — գօր. Գ. Ղարղանեան:

«Արարատեան Դաշտը Անկախութեան Նախօրեակին» — Ա. Աստուածատրեան:

«Մահաւան եւ Կեանքի միջեւ» — Վ. Մինայտրեանի յուշերը 1915 թ. տարագրութեան մասին:

«Հնդկահայոց Անցեալից» — Յ. Իրազեկ:

«Զօր. Հարրօրդի առաքելութիւնը դէպի Հայաստան»:

«Հայկական հարցը Ամերիկեան Մերակոյտի առջեւ»:

«Գ. Սունդուկեանց» — Յ. Զարեան:

«Հանդիպումներ Վահ. Տէրեանի հետ» — Ա. Խոնդկարեան:

«Մատթէոս Զարիֆեան», — Հր. Բալուեան:

«Հայ Քաղաքական Կուսակցութիւններ»:

Անցնելով նիւթական կողմին՝ անհրաժեշտ ենք համարում յիշեցրնել մեր առաջին համարի խմբագրականի վերջին խօսքերը. — «Մենք չենք փաշտում ասելու, որ «ՎԷՄ»-ի նիւթական ապահովութիւնը ամբողջապէս կախած է ընթերցող հասարակութեան ցոյց տալիք հետաքրքրութեան, համակրանքի եւ աջակցութեան աստիճանից: «ՎԷՄ»-ը զուտ գաղափարական ձեռնարկ է. նրա քիկունքում անհատ կամ կազմակերպւած յեմարաններ չկան»:

Նոյնը չենք փաշտում կրկնելու եւ այսօր: «ՎԷՄ»-ը մի տարի ապրեց բացառապէս բաժանորդագրութիւնից ստացւած դրամով, առանց դիմելու որեւէ մէկի օգնութեան: Նոյն ձեւով պէտք է լինի եւ այսուհետեւ: Հետեւաբար, եթէ ընթերցողները ուզում են, որ «ՎԷՄ»-ը ոչ միայն ապրի, այլեւ զարգանայ, քիչ ու ջանք չպէտք է խնայեն նրա տարածման համար:

Առաջին տարին մեզ համար եղաւ մի տեսակ փորձի շրջան, որ ցոյց տուեց, թէ մեր սկզբնական ծրագիրը «ՎԷՄ»-ի համարները կազմելու 7-10 պրակից, այսինքն՝ 112-160 էջից՝ բաւարար չէ: Նիւթերի առատութիւնը մի կողմից, ընթերցողների պահանջը միւս՝ անհրաժեշտ են դարձնում առ նւագն 10 պրակ կամ 160 էջ, ինչ որ եւ իրականացրինք անցեալ տարւայ ընթացքին: Սակայն, բաժնեգիրը որոշւած էր 7-10 եւ ոչ թէ 10 մամուլի հաշւով: Ուրիշ խօսքով, մենք



տիմն Խոստացածից աւելի: Այսուհետեւ եւս նոյն ծաւալը պահելու եւ, ի հարկին, նաեւ աւելացնելու համար հարկաւոր է քեթեւ փոփոխութիւն մտցնել բաժանորդագրութեան պայմաններին մէջ:

Մենք այդ անում ենք առանց մեծ վարանումի, վստահ՝ քէ բաժնեգնի փոքրիկ յաւելումը ոչ մի անդրադարձում չունենալով ընթերցողի նիւթական վիճակի վրա՝ զգալապէս պիտի դիւրացնէ «ՎԷՄ»-ի հրատարակութեան գործը: «ՎԷՄ»-ի նոր տարւայ բաժնեգինը նշանակում է. —

Հիւս. եւ Հար. Ամերիկա, Բրիտանական Կայսրութիւն, Եգիպտոս, Պաղեստին եւ Իտալիա, տարեկան՝ 70 ֆրանկ

Ռումանիա, Բուլղարիա, Յունաստան,

Սիրիա եւ Պարսկաստան՝ տարեկան՝ 50 ֆրանկ  
Ֆրանսա եւ այլ երկիրներ , , 60 ֆրանկ

Յաւելումը այնքա՛ն աննշան է, որ, համոզւած ենք, պատմառչափի դառնայ բաժանորդների քւի պակասելուն: Ընթերցողներից եւ բարեկամներից սպասում ենք, որ ջանք չեն խնայի «ՎԷՄ»-ի տարածման համար: Մեր ուզածը մեծ բան չէ. վերջին հաշւով սոսկ տպարանի եւ փոստի ծախս: Գործի մտաւոր եւ բարոյական մասը եկող տարի էլ տարւելու է խմբագրութեան եւ աշխատակիցների գոհարերութեամբ: Այս է հայ կեանքի դաժան հրամայականը, դրժբախտաբար: «ՎԷՄ»-ը ոչ առաջինն է, ոչ էլ վերջինը, անտարակոյս: ԽՄԲ.

## ՍՏԱՑԻԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Մալխաս. «Զարթոնք», վեպ, հատոր Ա-Ե. հրատ. «Արարատ Հրատարակչական ընկերութեան, Պոստոն, 1934:

Հրայր Ոստան «Երեք երգ» (արձակ ֆերբւած), Պէյրութ, 1934:

«Հայրենիք», ամսագիր, № 10-11:

«Բաղձալէպ», № 7-8:

«Հանդէս Ամսօրեայ», № 5-6:

«Սիւն», № 7, 8, 9:

«Անահիտ», № 5-6 (յուն. — յունիս):

«Երկունք», № 3-4:

«Խորհրդային Արեւստ», № 7, յուլ.:

«Գրական Թերթ», № 18, 20:

"Prométhée" Organe de défense nationale des Peuple du Caucase. de l'Ukraine et du Turkestan. Edition Spécial, № 92, juillet, 1934, Paris.

"The London Mercury", Edited by

Sir John Squire. August

— Մէջը տպւած է Տիկ. Պերմուտու մէկ պատմաօքը՝

"Shelved", B. Barseghian.

Prof. N. Adontz, L'age et l'Origine de l'Empereur Basil I (867-886). Extrait de „Bysantion,, tom VIII. fasc. 2 (1933) et tome IX, I (1934), Bruxelles.

"Notes Armeno Byzantines", ibid. La Portée Historique de l'Oraison Funébre" de Basile I Par son fils Leon VI le Sage", ibid.

"Les legendes de Maurice et de Constantin V, empereurs de Byzance", Extrait de l'Annuaire de l'Institut de Philologie et d'Histoire Orientale, t. II (1933-34) Bruxelles.

## Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք ԱՄՍԱԳԻՐ

Տարեկան 5 դոլար  
Վեցամսեայ 3 ,,  
ՀԱՅՐԵՆԻՔ ԱՄՍԱԳԻՐ ԵՒ ՕՐԱԹԵՐԹ  
ՄԻԱՍԻՆ

Տարեկան 10 դոլար  
Վեցամսեայ 5 ,,  
Հասցէ՝  
13-15 Shawmut st.

BOSTON MASS (U.S.A.)

## Յ Ո Ւ Ս Ա Բ Ե Ր ՕՐԱԹԵՐԹ

Եգիպտոս, տարեկան, 150 եգ. դի.  
,, Վեցամսեայ, 80 ,,  
Արտասահման, տարեկան, 40 շիլինգ  
,, Վեցամսեայ 20 ,,  
Հասցէ՝

"Houssaper", B. P. 868

Le CAIRE (EGYPTE)

## Ն Ո Ր Օ Ր ՕՐԱԹԵՐԹ

Յունաստան, տարեկան, 420 տր.  
,, Վեցամսեայ 210 ,,  
Եւրոպա, տարեկան, 135 ֆր.  
,, Վեցամսեայ 80 ,,  
Ամերիկա, տարեկան, 8-00 դոլար  
,, Վեցամսեայ, 4-50 ,,

Հասցէ՝

„NorOr", 20-A, Rue Vouli,

ATHÈNES (GRÈCE)

## Ա Ս Պ Ա Ր Է Ջ

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

Ամերիկա, տարեկան, 1-50 դոլար  
Արտասահման 2-00 ,,  
Հասցէ՝

"ASBAREZ" P. O. Box 865

Fresno, Calif., U. S. A.

## Ա Ր Ա Ջ

ԵՒՕՐԵԱՅ ԹԵՐԹ

Տարեկան 500 լէշ  
Հասցէ՝

"ARAZ" 14 Str. Pictar Luchian  
Bucarest (Roumanie)

## Ա Ջ Դ Ա Կ ՕՐԱԹԵՐԹ

Սիրիա՝ տարեկան 550 ս. դ.  
Սիրիա՝ Վեցամսեայ 300 ս. դ.  
Արտասահման՝ տարեկան 7 դոլար  
Արտասահման՝ Վեցամսեայ 4 դոլար  
Հասցէ՝

"Aztag". B. P. 587 Beyrouth  
(Liban)

## Հ Ո Ր Ի Ջ Ո Ն ՕՐԱԹԵՐԹ

Ներքին՝ տարեկան 300 տր.  
Ներքին՝ Վեցամսեայ 150 տր.  
Ներքին՝ Եւրոպայ 80 տր.  
Արտասահման՝ տարեկան 150 ֆր.  
Արտասահման՝ Վեցամսեայ 80 ֆր.  
Հասցէ՝

2, Rue Franguini. Salonique  
(Grece)

## Ա Ջ Ա Տ Խ Օ Ս Ք ՕՐԱԹԵՐԹ

Բուլղարիա՝ տարեկան 550 լեւ.  
Բուլղարիա՝ Վեցամսեայ 300 լեւ.  
Ամերիկա՝ տարեկան 6 դի.  
Ուրիշ երկիրներ՝ տարեկան 150 ֆր.  
Հասցէ՝

45, Bld. Dondoukoff, Sofia  
(Bulgarie)

## Ա Ր Մ Ե Ն Ի Ա

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

Արտասահման, տարեկան, 3 դոլար  
Արժանքին, տարեկան, 6 ֆեւո  
,, Վեցամսեայ, 3-50 ,,

Հասցէ՝

"ARMENIA" Canning 1087,  
Buenas-Aires, (Argentine)

## Ա Լ Ի Ք

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

Տարեկան 48 լիալ  
Վեցամսեայ 24 ,,  
Արտասահման 80 ֆրանկ  
Հասցէ՝

"ALIK" 22, Ala-ed-Dovleh,  
Tehran, (Perse)



# “V E M,”

REVUE BIMESTRIELLE ARMÉNIENNE

Directeur : S. VRATZIAN

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

—\*—

ՎԱՀԱՆ ՄԻՆԱՍՈՐԵԱՆ.— Փոքորիկից առաջ	1
Յ. ԻՐԱԶԵԿ.— Եւս մի հին քատերգութիւն	21
ՅՈՎՀԱՆՆԷՍ ԶԱԻՐԵԱՆ.— Սայեաք Նովա	38
ԶՕՐ. Գ. ՂՈՐՂԱՆԵԱՆ.— Հայաստանի Հանրապետութիւնը եւ Պետութիւնները	54
ԱՐՇԱՄ ԽՈՆԴԱՐԵԱՆ.— Օպորիցիան Հանր. Հայաստանում	73
ՍԱՄՍՈՆ.— Հայաստանի Անդրանիկ Դեսպանը Պարսկաստանում	96
ՊՐՈՑ. Զ. ԱԻԱԼՈՎ.— Բաքուի Խորհրդաժողովը	104
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՐԶԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ	113
ՆՈՐ ԹՈՒՂԹԵՐ.— Կովկասեան Համադաշնակցութեան Ուխտը	124
ԿԵԱՆՔ ԵՒ ՄՇԱԿՈՅԹ.— Հայ քատերական գրականութիւնը, Բ. Թաշեան.— Սայեաք Նովայի անտիպ տաղերը.— Մի քանի ճշտումներ, Ռ. Աբրահամեան	127
ԳԻՐԻՅ ԵՒ ՄԱՍՈՒԼ.— «Հայրենիք», «Անահիտ», «Սիւն»	134
ԳՐԱԽՕՍԱԿԱՆ.— Dictionaire Diplomatique, Ս. Վ.	137
ԽՐԱՍԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ.—	139
ՅԱԻԵԼԻԱԾ.— Վախրամ Եպ. Մանկունի, «Գեորգ Դ. եւ իր ժամանակը»	81-96

## ՆՈՐ ՏԱՐԻԱՅ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Ամերիկա, Բրիտ. Կայսրութիւն, Եգիպտոս, Իտալիա՝ տարեկան 70 ֆրանկ  
 Փրանսա եւ մնացեալ երկիրները, տարեկան՝ 60 ֆրանկ  
 Ռուսաստան, Բուլղարիա, Յունաստան Սիրիա, եւ Պարսկաստան՝ ,, 50 ֆրանկ  
 Հասցէ՝ Գամակների, դրամի, յօդածների եւ ուրիշ ամէն տեսակ առաքումների համար.—

S. VRATZIAN — 13, Rue des Platanes, Cité Jardins de Plessis-Robinson (S.)

Gérant : V. Hampartzoumian

Imp. ARTISTIQUE, 42. Rue de la Jonquiére, PARIS (17\*)

անդիտակցարար դիպեալ են ի վերայ նորա զհող եւ դարինս յորոնն զնա աշուր, եւ հաղիւ յաջողեցան դտանել ի յաջորդ աւուր՝ զրկեալ ի կենաց :\*)

Եղեն եւ ալ կորուստք անձանց ոչ սակաւուց, մանաւանդ ի Պալք-Բազարի ի Թաղն յունաց, առ ստորոտով Հիւսարի, զի ի բարձրաւանդակէ անկեալ ահագին ժայռ առնոյր ընդ իւրեւ զգործարան մետաքսի, յորում աշխատէին կանայք եւ օրիորդք առաւել քան զերեսուն ոգիս ընդ գործաւոր արանց, եւ ի գեհնէ կաթսայի մետաքսագործարանի հրկիզեալ եւ բոցավառեալ շինուածոյ՝ այրէր կենդանոյն զյունաղդի մնացեալսն ընդ փլատակս, որոց աղաղակք եւ հողեւար կոծք հասանէին յերկինս, լային եւ աղաղակէին ի հառաչանս եւ յաղեխարշ ողբս որք տեսանէին կամ լսէին զսոսկալի աղէտս եւ զմահ դառն, որպէս պատմէին, ջանային հասանել յօգնութիւնս զոհից, ոչ ոք յաջողէր, մանաւանդ թէ ոչ համարձակէր ոք մերձեցալ ի նոսա, տեսեալ զայլ ապառաժ մեծագոյն՝ պատառեալ ի բարձրաւանդակէ՝ սպառնայր անկանել ի վայր, մինչեւ լափեաց հուրն զշինուածն եւ զզոհս եւ սպառեցան աղաղակք : Կին ոմն աղատեցաւ ի նոցանէ, որ յաջողեալ էր ի պատուհանէ սենեկի պահարանի մետաքսաթելից արկանել զանձն ի փողոց՝ մինչ այրէր շինուածն, եւ ալ կին ոմն աղատեցաւ առթիւ իւրիք կանխեալ գոլով երթալ ի տուն իւր յառաջ քան զպատահել աղետիցդ :

Սակաւաթիւ եղեն զոհք Հայոց համեմատեալ ընդ Թուրքս եւ

ԵԱՆՕԹ. Վ. Ե. Մ.—Օմնիկ Մահնուպեան գայր ի վարժարան ընդ Յարութիւն անուն մեծ եղբոր իւրոյ առ ի ընտանեմալ, եւ նստէր մերձ փուլգեալ որմոյ ընդ եղբորն : Եւ զի տախտակեայ բաժանմունք էին շար ընդ շար յերկայնութեան վարժարանի, բարձրութեամբ կէս-կէս կանգնոյ, որպէսզի աշակերտք նստեալ ի գետնոյ անձնիւր «միմտէր»աւ կրքնեցեն, դժուարացուցանէին գիտնուտ աշակերտաց մերձ եղիւոց փուլգեալ որմոյ : Օմնիկ գառաջինն փախուցեալ էր, եւ յերկրորդում նուագի քիկնոց տախտակ վերջին շարի դժուարացուցեալ էին զփախուստն եւ անկեալ ընդ փուլտակօք ի վերջին ծայրի կից գանգակատան : Մեք մընայաք յոտին ի վերակացութիւն, եւ դարձեալ դժուարութեամբ իմն փախեալ անցեալ ընդ փուլտակս եւ ընդ մեծ դուռն : Նստարանք դպրոցականք էին ի դասարանս եւեք եւ շինեալ ի վերջին ժամանակս : Իսկ ի վարժարան ի դպրոցի օրիորդաց եւ ծաղկոցի ոչ էին նստարանք դպրոցականք, եւ աշակերտք եւ աշակերտուհիք նստէին ի գետնոյ եւ սակաւ ունեմք ի «դախտ»ս որ ի ներքս շուրջ գոպոցօք կից որմոց՝ լայնութեամբ իրրեւ կանգուն մի : Նորաշին երկու սենեակք էին իրրեւ դասարան շինեալ ի վարդերես աղայէ Միսաքեան յաւուրս Առաջնորդութեան եւ ընդ առաջարկութեան Գեորգայ :



ընդ Յոյնս, զբաղումս հանկալ եւ աղատեալ ի ներքոյ փլատակաց խարխուլ տանց փոքունց եւ այլ շինուածոց: Նշանաւոր հաստատունք կամ չէնքն են որ անկան կործանեցան խալառ յերկրորդ ցնցման ընդ այլոց, Մզկիթն Դաւուլլու Մանասթըր (երբեմն լեալ վանք յունական) ի Հիսաբի եւ Մեծ մզկիթն ի Քայաղանի, բաց ի բաղանեաց եւ ի խանից (քարվանսարայ):

Յետ աւուրց ինչ, թէպէտ ոչ էր փարատեալ խալառ ահ եւ տաղնապ բնակչաց, սկսան վերադառնալ ի բնակարանս, պարապել յանձընիւր գործս եւ ի զբաղումս ի տան, ի շուկայի եւ ի գործարանս: Եւ այսպէս լրացան աւուրք քառասուն:

Եւ ահա՝ զմիով ժամաւ առաջին պահողիչերոյ՝ որ ունէր լուսանալ յ30ն Մարտի՝ մինչ բաղումք վերադարձեալ ի շուկայից եւ ի գործարանաց հանդէսին ի տունս իւրեանց յետ ընթրեաց՝ բացառութեամբ սակաւուց ոմանց, տիրեաց համայն բնակչաց քաղաքին ի նորոյ ահ, սարսափ եւ տաղնապ մեծ: Մեղմ էր առաջին հարուած երկրաշարժի, եւ հազիւ է անց վայրկեան ինչ, կրկնեցաւ սաստկագոյնըս, դղրդեաց եւ դողացոյց զերկիր՝ ի հարաւոյ ի հիւսիս, տեւեալ առաւել քան զտասն երկվայրկեան: Զոյգ ընդ շարժից լսելի լինէին ստորերկրեայ դղրդումներ եւ որոտումներ, գողցես հեծէին եւ մոնչէին երկին եւ երկիր: Թուէր այնպէս իմն, զի պատերազմ ահեղ եւ ահագնագոյ թնդանութք դղրդէին զանդունդս երկրի, հոտ գարշարոյր տարածեալ ի սկզբան ցնցմանց, որ յաճախէին, թէպէտ թուլացեալ տակաւ առ տակաւ:

Անդ էր ի նորոյ տեսանել զգառնագոյն տեսարանս աղետայի եւ սրտաճմրկի:

Այր իւրաքանչիւր ճողոպրեալ զանձն փախչէր արտաքս ի տանց, յօթեանաց եւ ի ծածկոցաց, եւ հաւաքէին եւ ջանային պատսպարել ի բացօթեայ, մանաւանդ ի պարտէզս: Մեղմ անձրեւ սրսկէր յերկնից, եւ աղաղակք, ողբք եւ կոծք մարդկան դղրդէին զերկինս, այր եւ կին եւ ազգ իւրաքանչիւր կարգայր զՏէր Աստուած իւր, յողւոց հանէր եւ լայր դառնապէս: Զի՞նչ ասել եւ զմանկանց, որոց աղիւղորմ հեծեծանք ընդ սարսափի միացեալ՝ յաւելուին պարզել գողցես զօրն վերջին դատաստանի:

Եւ զի տակաւին էր զձմեռնային եղանակ, եւ կրակարանք (մանկալ եւ քոմիք, վառարան-գոպա), էին ի տունս, կործանեալ նաեւ բազում տանց յոչ սակաւ տեղիս երեւէին հրդեհք, մանաւանդ առաւել ծանր եւ մեծատարած ի Քայաղան շուկայի, եւ ի բազում թեւս ճիւղաւորեալ հրոյ՝ կանգնեալ իրրեւ զհրեղէն սիւնս ի կոչմանս կող-

մանս՝ յաւելոյր եւ առթէր Պրուսացւոց զյուսահատութիւն կրկնակի:

Ի տեղիս տեղիս պատառեալ էր երկիր եւ բացեալ զխրամս խորս. փլատակք լցեալ էին զփողոցս եւ դժուարացուցեալ զերթեւեկութիւնըս. կամուրջն Սեթպաշույ խալառ կործանեալ, եւ վերին կամար եւ խանութք Ըրկամըր կամրջոյ խոնարհեալ, վասն որոյ անհնարին լիւնէր անցանել մանաւանդ Հայոց յայսկուսէ ձորոյն Կէօֆ տէրէի յանկոյս, եւ հրդեհն մեծ ի շուկայի էր յայնկոյս ի ձախակողմն ձորոյ: Ի միոյ կողմանէ՝ յաճախութիւն ցնցմանց եւ ստորերկրեայ որոտաձայն չփմանց, եւ ի միւսմէ՝ աղաղակք եւ սարսափք բնակչաց, ողբք եւ կոծք, շառաչիւնք հրդեհից եւ փլուզմանց պաշարեալ էին զհամայն բնակիչս ի սարսուռ եւ ի յուսահատութիւն, ամենայն ոք յողիս ապաստան լեալ՝ գողցես ի սկզբան ոչ համարձակէր ոք հեռանալ ի տեղւոյն իւրմէ, մանաւանդ կանայք եւ մանկունք ճիչ բարձեալ՝ ոչ թողուին արանց եւ սիրելեաց իւրեանց երթալ եւ հեռանալ այլուր, մինչ հրկիզութիւն շուկայի սպառնայր համօրէն ամենայն խանութից բազմաճիւղ շուկայի ընդ համայն քաղաքին, եւ այս աղէտ առաւել մաշէր գողցես զվերջին շունչ արհեստաւորաց եւ խանութպանից (ընդ որս եւ հօր խմոյ, որոյ էր սրճարան ի Քայաղանի հանդէպ կործանեալ համանուն մեծի մզկիթի ի կողմն արեւմտեան, որ եւ այրեցաւ ի նմին գիշերի:)

Սակայն ետեալ վառէին սիրաք խանութպանաց եւ արհեստաւորաց, եւ յետ կէս գիշերոյ գողցես խելայեղեալ եւ զանդիտեալ ի վրտանդից ցնցմանց եւ փլատակաց, անցեալ ընդ ձորն զիմեցին բազումք ի կողմանս հրդեհից, մանաւանդ ի շուկայ, եւ սկսան ոգի ի բռին ջանալ շիջուցանել զհուրն օգնութեամբ եւ ջանիւք բազմաթիւ պանտուխտ Հայոց բնակելոց ի խանս, եւ ի միւսմէ կողմանէ հանել եւ աղատել ի փլատակաց զանձինս՝ որ մնային կենդանի, աղաղակէին եւ աղաչէին փրկել զինքեանս ի կիզելոյ եւ ի մահուանէ: Էր որ ի տեղիս տեղիս ինքնին դադարէր հուրն՝ ոչ գտեալ զայն ինչ առ ի բոցաւառել, կամ հանդիպեալ մեծամեծ որմոց քարուկրեայ բաղանեաց եւ կիսաւեր խանից:

Ընդ արշալոյսն եւ ի ծագել արեղական, յորժամ հնար էր աչօք բացօք տեսանել զձանապարհ եւ զամենայն ինչ, յաճախեցին բազմաթիւ մարդիկ ի հրդեհավայրս, բազմացան օգնութիւնք, թափեցին զյուսահատ ճիւղս, եւ հազիւ ուրեմն յաջողեցան շիջուցանել զհուրն բազմակուլ եւ բազմաւեր յետ տանեւութիւն ժամեայ չարունակութեանց եւ աւերածութեանց: Սպառեալ էին ոգիք, պարտասեալ եւ չարաչար խոնջեալ ներկուռ բազուկք հաստատունք, բայց եւ այնպէս առ ոչինչ համարել զտառապանսն, ընդ որովք հեծէին եւ հիւծէին,



հետեւեցան ի նորոյ հետադարձել զաւերակս, հանել զկիսաւեր անձի-  
նըս եւ յաճախ զգիւղական աշխատեցաւ՝ կամ ջախջախեալս եւ  
կամ կիսայրեացս, զբանականս եւ զանբանս միանգամայն, կանգնել  
զվրանս, կամ կազմել զվրանաձեւ ծածկոցս յապահով վայրս բացո-  
թեայս եւ ի սարտէզս, ամփոփել զընտանիս ի նոսա. էին զի տունք  
4-6-8 կառավարէին ի միում վրանի յանձուկ դիրս: Սակաւ ոմանք  
էին որ համարձակեցան եւ բնակեցան ի տունս իւրեանց:

Եօթնեակս ինչ ոչ դադարէր ժափն — շարժն, եւ ոչ ողբք աղիւ-  
ղորմք դադարէին ընդ կորուստ սիրելեացն:

Անկան կործանեցան յայսմ նուազի ստուար մասն մեծամեծ օթե-  
ւանաց (խան), զլուսք միմարէից, մզկիթք եւ բաղանիք բազումք,  
կամարք եւ դմբէթք ոմանք հռչակաւոր Մզկիթին մեծի Ուլուքումի  
կոչեցելոյ, տունք եւ խանութք բազումք՝ բաց ի հրկիզելոց:

Բղխեցին յոմանս տեղիս աղբիւրք, ոմանք ցամաքեցան:

Ի նորոյ բղխեաց եւ առաւել առատօրէն հանքաշերմուկն Բիւ-  
ֆիւրքիւ անուանեալ երկու բաղանեաց (արանց եւ կանանց), որ ցա-  
մաքեալ էր յառաջին երկրաշարժի որ ի փետրվար ամսեան:

Պատառուածք ասեղատեսք բացեալ էին ի դաշտի անգամ: Ոմանք  
ծառք մեծամեծք եւ հնաւուրցք տապալեալ էին:

Թողցուք պատմել զանցս բանտի: Եւ եթէ ոչ ի գիշերի պատա-  
հէր, ժափն, կրկնապատիկ եւ եռապատիկ լինելոց էին կորուստք  
անձանց:

Արդ՝ ի լուր այսոցիկ աղետիցս երկրաշարժի՝ որպէս տեղական  
կառավարութիւն եւ յանուանէ կուսակալ փաշայն փութայր հոգայր  
զկարեւորաց, նոյնպէս Կեդրոնական կառավարութիւն Օսմանեան  
ըստ հրամանի բարեխնամ կայսեր օգոստ. Սուլթան Մէճիտի ոչ յա-  
պաղեաց հասնել օգնութիւն հարուածելոց և վտանգելոց իբրեւ գթա-  
ռատ հայր հասարակաց: Ընդ փոյթ առաքեաց զվրանս, զդրամս եւ  
զգեղօրայս ընդ այլոց պիտոյից, ետ բաշխել կարօտելոց, ամենայն  
աղբաց առանց խորութեանց եւ զանցառութեանց, եւ ջան կալաւ  
մխիթարել զպրուսացիս: Յատկացոյց զերկուս չոգենաւս առ ի փո-  
խադրել ձրիաբար ի Կ. Պօլիս՝ որք երկնչէին եւ փութային ի փա-  
խուստ, որպէս եւ բազումք մեկնեցան ի շրջակայս, ի Պանտրմա, ի  
Կ. Պօլիս եւ այլն:

Իսկ Գէորգ Եպսոն. որ չուեալ էր յանցելումն ամի եւ մնայր ի  
Կ. Պօլիս, լուեալ զաղէտս զայնոսիկ՝ փութաց ի խորհրդակցութիւն  
ընդ Պատրիարքի եւ ընդ գլխաւոր ամիրայից, եւ յՅն Ապրիլի ձեռ-  
նարկեաց ի մեծ շուկայի խնդրել եւ հաւաքել զնպաստս ի պէտս եւ

յօգնութիւն Հայոց Պրուսայու՝ ընդ աղբեցիկ եւ բարեջան օժանդա-  
կութեամբ ձանիկ ամիրայի փափազեան, որ էր կառավարիչ կամ  
պետ (սարաֆլար քեահեսար) դրամատեսարցն սարաֆ անուանելոց:

Եւ ի 19ն Ապրիլի առաքեաց ի Պրուսա գլխուն հազար դանեկան  
(50,000) ի ձեռն Կարապետ Եպս.ի Սեբաստացւոյ Պատրիարքական  
փոխանորդի եւ Պետրոս վարդապետի Տէր-Ստեփաննոսեան ի մխի-  
թարել զՀայս եւ բաշխել աղքատաց եւ որոց կամեցին ելանել ի քա-  
ղաքէ եւ գաղթել ի Կ. Պօլիս եւ այլուր:

Ապաքէն բազմօք լքեալ թուլացեալ էին սիրտք եւ բազուկք բը-  
նակչաց Պրուսայու, եւ բազումք ոչ գիտէին զինչ առնել, մանաւանդ  
թէ ապրելոց էին: Յորս Հայք առաւել կալան զմխիթարութիւն հո-  
գեւոր քարոզչութեամբք եւ խրախուսանօք Կարապետ Եպիսկոպոսի  
եւ Պետրոս վարդապետի, մանաւանդ հայրական բարեխնամ հոգա-  
ծութեամբք Գէորգ Եպս.ի Առաջնորդի իւրեանց: Արդիւնաւորեցին  
զբարեբար աղբեցութիւնս եւ զքաջալերութիւնս: Պատուիրակքք ի  
ձեռն հաւատարիմ եւ փորձառու անձանց բաշխեցին կարօտելոց զնը-  
պաստ, ետուն կանգնել զհիւղակս եւ զխցիկս ի պէտս աղքատաց ի  
բացօթեայ, վերանորոգել ամբարտայ զբնակս ոմանց՝ որք կամէին բը-  
նակել ի նոսա, ետուն զծախս ճանապարհի որոց կամէին գաղթել  
այլուր, որպէս եւ Գէորգ Եպս. անձամբ մխիթարէր զգաղթեալսն ի Կ.  
Պօլիս, գտանէր նոցա զբնակարանս կամ զսենեակս ի բնակութիւն,  
հասուցանէր նոցա զնպաստս հանգանակեալ ի բարեգարդից:

Յայսպիսոյն աղետալի վիճակի յաճախէին ի Պրուսա տարածայ-  
նութիւնք ստապատիրք եւ յաւելուին զնոր սարսափս եւ զյուսահա-  
տութիւնս բնակչաց, իբր զի իսպառ կործանեցի Պրուսա ըստ գու-  
շակելոց գիտնականացն երկրաբանից, որպէս եւ յաւուր միում ըստ  
պատուիրանի քաղաքական իշխանութեան ի ձեռն մունետիկաց ելին  
բազումք վաղ քաջ ընդ առաւօտս ի բացօթեայս ի շրջակայս քաղա-  
քին, ի Պէոյիւք եւ ի Բիւլիւք Թէֆէրիմս (զբոսաւայրք), ի Պէոյիւք-  
Մեգարիւք, ի Չամլիմս (Գերեզմանատուն Հայոց), ի Բուրտ-Օղլու  
Մեգարիւք, յԸնթալար, ի Պատմիլի, յԱքքերլար, յԱնեմլիք եւայլն,  
եւ իբրեւ զՅոնան սպասեցաք տեսանել զկործանումն քաղաքի. իսկ  
ընդ երէկս համոզեալ ընդ տարապարտութիւնս գուշակութեանց՝ յա-  
ռաջին պահու գիշերոյ վերադարձաք յիւրաքանչիւր բնակարանս՝ բա-  
զումք՝ ի վրան եւ ի հիւղակս:

Ասացուք ի փակագծի: Ոչ խղճէին եւ փոքրաթիւ հակառակորդ  
յաւելուլ գտարածայնութիւնս առ ի գրգռել զՀայս ընդ դէմ Գէորգայ  
եւ պատուիրակացն նպաստաբերից, — իբր զի կամին փոխադրել ի



Կ. Պօլիս զամենայն զսպասս եւ զանօթս եկեղեցւոյ, զարծաթեղէնս, զզարդս եւայլն, եւ այսպէս մերկացուցանել զՀայոց Պրուսայոս: Գուցէ կարծէին մեծարժէք լինել ամենատեսակ ներքին պարագայից եկեղեցւոյ, որք հազիւ լինէին ի գումարի իբր 1500-2000 ոսկեաց:

Իսկ զյետ միոյ ամսոյ նուազէր ժաժն տակաւ առ տակաւ, ոմանք վերադառնային ի բնակարանս, սակայն բազումք մնային ի վրանս եւ ի հիւղակս տախտակեայս ցվերջ ամսուան, զինի որոյ ոչ ոք կալաւ զբնակութիւն ի բացօթեայս, մանաւանդ մօտալուտ ձմեռնային եղանակ յարուցանէր զգոռաւորութիւնս բազումս:

Սակաւք ոմանք ոչ երբեք մեկնեցան ի տանց իւրեանց, եւ ոչ ի ժամու աղետալի եւ վտանգաւոր ցնցմանց: Ի շարս նոցա զտանէր մի ոմն ի դրացեաց մերոց, Գրիգոր աղայ Մաւիեան ապակեգործ հանդերձ ընտանեօք:

Նպաստաբեր Պատուիրակք եկեալք ի Կ. Պօլսոյ մեկնեցան ի Պրուսայէ եւ հասին ի մայրաքաղաք ի 27ն Ապրիլի, կացեալ ի Պրուսա իբր եօթնեակ մի: Կատարեցին եւ զխնդրմն յեկեղեցւոյ զերիս գիշերս:

### ԳԼՈՒԽ ԻԴ.

ՅԱՂԱԳՍ ԶԱՆՈՐԴՈՒԹԵԱՆՅ ԵՒ ԽԱՆԳԱՐՄԱՆ ԱՅԳԵԱՑ,

ՇԵՐԱՄԱՏԱԾՈՒԹԵԱՆ, ԵՒ ՈՄԱՆՑ ՀՐԴԵՀԻՅ

Գողցես ոչ բաւէին ի թշուառութիւն եւ ի յուսահատութիւն Պրուսացւոց անցք պատերազմականք, տաղնապք եւ աղէտք երկրաշարժից, փութացին եւ յաճախեցին մի զինի միոյ եւ այլ աղէտք եւ փորձութիւնք դառնազինք՝ մինչեւ իսպառ յողիս ապաստան առնել զամենեսին, մանաւանդ զՀայոց, եւ տառապեցուցանել ի ծայրագոյն անձկութիւնս եւ ի կարօտութիւնս:

Յամաց հետէ տարածէին հիւանդութիւնք եւ խանդարմունք յորթատունկս այգեաց, մանաւանդ ի Տօպու եւ ի Միսի եւ ի մերձաւորագոյն այգիս քաղաքի, որք սակաւաքանակ էին համեմատեալ ընդ վերին այգեաց հոչակաւորաց, որոց խաղողք քաղցրահամ, զօրաւոր եւ հոտաւէտ էին, եւ գինիք պատուականք եւ տեւականք հակառակ ջրարբի մերձաւորագոյն այգեաց քաղաքի: Ոչ սակաւ էին Հայոց այգիք ի Տօպու, ի Միսի, ի Չէքիրկէլէր եւ ի քաղաքի, ոմանք աշխատէին այգեգործութեամբ միայն, պարապեալ յաւէտ ի գինեւիւճառութիւն, յողիվաճառութիւն եւ ի քաղցրաւէնիս, որպէս եւ բազումք ունէին զայգիս առ ի պէտս տանց եւ եթ:

Լուեալ եւ ուսեալ ի գաղղիացւոց, նշանակաւոր այգեգործք ոմանք սկսան դարմանել զնորածիլ ողկոյզս խաղողոյ՝ յածեալ զծծմբափոշիս ի խաղողային աղոխս, առանց յաջողելոյ ստանալ զսպահով արդիւնս ի խանդարեալ յորթատնկոց, եւ առանց գէթ հաւասարապէս փոխարինելոյ զծախսն. մերթ պատահէր՝ զի անձրեւք ապարդիւն ջնջէին զփոշիս ծծմբոյ, որ եւ յաւելոյր զգոռաւորութիւն ծանր եւ զտարապարտ ծախս: Այսպէս ուրեմն քիչլիւմէն, որպէս անուանէին ի թուրք լեզու կխանդարմունս որթատնկոց, պատճառէր զվրնաս մեծ Պրուսացւոց, մինչեւ յուսահատել բազմաց՝ բարձի թողի առնել եւ զայգիս: Եղեն եւ Հայք ոմանք՝ որք իսպառ կործանեցան յերեսաց ձախորդութեանց այգեաց՝ անկեալ ընդ ծանր պարտութեւ, եւ առ վշտի եւ յուսահատութեան եղեն կաթուածահարք, որպէս Մեղրոն աղա Կէօյնիւպէօյիւքեան, ազգական մեր ի կողմանէ մօր, եւ այլք:

Սկսան հիւանդութիւնք եւ աւերմունք եւ ի շերամատածութեան, յորում զբաղէին Հայք առաւել քան զՕսմանցիս եւ զԵոյնս:

Երեւէր հիւանդութիւն ինչ յորդահունտս շերամի, եւ եթէ հիւանդանային եւ ոչնչանային որդք յառաջին շրջանի, յանժամ առթէին զվնաս սակաւս, մինչ ի վերջին, իմա ի չորրորդ եւ ի հինգերորդ շրջանին պատճառէին զկորուստ մեծաքանակ ծախուց աւելորդաց եւ զյուսահատութիւն աշխատաւորաց:

Աստի եւ անդի խնդրէին եւ զնէին զառողջ որդահունտս յարտաբուստ, ի հեռաւորաց, ի կողմանց Բարձր Հայոց, ի Ռուսիոյ, ի Պարսկաստանէ, ի Ճաբոնէ եւ յայլոց վայրաց, դարձեալ ոչ յաջողէին՝ բացառութեամբ սակաւուց ոմանց: Վարեալ Պրուսացւոց ըստ նահապետական կարգի հնոյ՝ ոչ իմանային զպատճառս եթէ առ ի՞նչ յաջողէր ոմանց, եւ այլոց բազմաց պատճառէր զկրկնակի ձախորդութիւնս՝ մինչ որդահունտք էին ի միոյ տեսակէ եւ ի տեղւոյ. գուցէ եւ հունտաբերք խառնէին մերթ մերթ զխարդախութիւնս եւ զնենդութիւնս, սակայն յաճախ երեւէին՝ զի խանդարէին եւ շերամատածութիւնք հունտաբերից եւ հունտալաճառից: Ձեւ էր հաստատեալ Բաքէօքեանն դրութիւն, եւ այսպէս ծանրանային աղէտք եւ ձախորդութիւնք շերամատածութեան, եւ ոչնչացուցանէին զկաւորեւոր եւ զմեծարժէք աղբիւր եւ զհասարակեանց շերամի, յորմէ վնասէին յաւէտ Հայք ի Պրուսա եւ ի շրջակայ գաւառսն:

Վասն որոյ բազումք սկսան քակել զթթենիս, տնկել զստղատու ծառս, կամ փոխարկել զպարտէզս յարտս եւ ի բանջարանոցս, եւ կամ բարձի թողի առնել: Իսկ արհեստք ոչ բաւէին ի պէտս նոցա, են զիմէին ոմանք ի գաղթականութիւն առ ի հայթայթել զապրուս-



տրս իւրեանց :

Եղին եւ հրկիզութիւնք, որք դարձեալ եւ միշտ հարածէին առաւել զՀայս, որպէս տեսցին ի ստորեւ :

Զմետասաներորդ ժամու ընդ երէկս ի 20ն Յունիսի 1854 թուականի Փրկչի, յորում աւուր էր կիր. եւ բարիկենդան պահոց Ս. Լուսաւորչի, եւ հրդեհ ի տանէ Սարգսի Պէնտէրլեան յանկոյս եւ յեզերս ձորոյն՝ դէմ յանդիման ս. եկեղեցւոյ եւ դպրոցաց Հայոց, եւ այրեցան տունք իբր վաթսուն եւ հինգ, յիսուն տունն լեալ Հայոց պատուաւորաց : (Սպասուհի տանն արկեալ էր զհուր առ ի ծածկել զգողութիւնս իւր) :

Եւ զի աւուրք շերամատածութեան էին, լի էին ի տունս բաղմաց դիւրավառ նիւթք եւ խիւք, հողմէր ի հարաւոյ, միանային ընդ ձախորդութեանցդ առժամեայ պակասութիւնք ջրոյ եւ անձկութիւնք փողոցաց ընդ անփոփոցութեանց, սպառնայր հուրն ընդարձակել զաւերսն՝ ի չորս թեւս բաժանեալ գոլով : Արձակէին հրայրեաց բեւեռք եւ կարմրացեալ մասունք փայտից եւ անկանէին ի վերայ հանդիպակաց եկեղեցւոյ, դպրոցաց եւ տանց Հայոց, ընդ դէմ որոյ տնօրինեցան խիստ հսկողութիւնք եւ պաշտպանութիւնք ի տանեաց եւ ի փողոցաց՝ պատրաստութեամբք ջրոյ եւ այլոց, եւ արգելեն զնոր հրկիզութիւնս յայսկոյս — յաջակողմն ձորոյ :

Էր ժամ վեց ի գիշերի՝ յորժամ շիջաւ հուրն ոգեսպառ ջանիւք բնակչաց եւ ջրհանկրաց : Յորս ոչ սակաւ էին աշխատակցութիւնք կառավարական պաշտօնէից :

Դարձեալ յաւուրս Քառասնորդական Պահուց ի 1861 թուականի հրդեհեցան պատուաւոր շուկայն Հայոց որ ի Տէմիր-Գաքու, եւ զի էր քարուկիր կամարակապ, որպէս եւ մեծ շուկայն Ուզուն-Չարշը ունէր զերկաթաթեղեայ կամարս ձգեալ ի վերայ հանդիպակաց խանութից զճանապարհացն, ծուխ հրոյ թանձրացեալ էր ի շուկայի եւ ոչ ոք համարձակէր մտանել ի ներքս ընդ կամարս. միանգամայն ի յետսկողմանս, էին խիտ առ խիտ եւ կից միմեանց խանութք եւ մթերանոցք, որք յաւելուին զգողութիւնս ընդ դէմ հրդեհաշիջական ջանից եւ գործողութեանց : Վասն որոյ բազումք ի Հայոց ոչ կարացին ազատել զապրանքս եւ զգոյս իւրեանց, զգրամս պատրաստիս, եւ զհաշուատետրս, եւ արք առաւել քան զերեսուն ի Հայոց ճոթավաճառաց եւ կերպասավաճառաց մերկացան յամենայնէ, սակաւուց ոմանց յաջողեցան դատարկել զխանութսն՝ փոխադրեալ զապրանսն յապահով մթերանոցս քարուկրեայս եւ յօթեւանս (խան) : Իսկ բազմաց հնարաւոր եղև հազիւ ազատել զմասն ինչ ի վաճառացն :

Այրեցաւ արտաքին մասն Տէմիր-Գաքույի համայն Ուզուն-չարշը,

Գազէղէր, մի մասն Գավաֆլարի. — խանութք առաւել քան զերկերիւր եւ զյիսուն : Սակաւք ոմանք յօտարաց ենթարկեցան ծանր հարուածոց հրոյդ, մինչ Հայք կրեցին նաեւ յայս նուազի զդառնութիւն եւ զմեծագոյն մասն աղետից հրկիզութեան :

Թողումք յիշել զպակասելն առեւտրական միջոցոց, զսնանկութիւնս ոմանց մետաքսագործարանապետաց եւ զկորուստս մեծագու մար դրամոց, զփոփոխութիւնս յարաբերութեանց եւ ճանապարհաց, զմրցմունս հրոպատոց ընդ դէմ ներքին գործուածոց եւ վաճառաց, եւ զնուազելն սպառմանց արդեանց ներքին արհեստից եւ այլոց եւ այլոց :

### ԳԼՈՒԽ ԻԵ.

#### ՅԱՂԱԳՍ ՎԵՐԱԴԱՐՁԻ ԳԵՈՐԳ ԵՊՍԻ Ի ՊՐՈՒՍԱ.

Գէորդ Եպս. ընտրեալ յանդամ կեդրոնական Հոգեւոր ժողովոյ Հայոց Կ. Պօլսոյ՝ յորում վերընտրեցաւ ի սեպտեմբերի 1855ի, ոչ մնայր ազատ ի զբաղմանց, եւ հետեւէր ընդ նախանձախնդիր անդամակցացն եկեղեցականաց եւ ընդ Գերագոյն ժողովոյ ի հաստատել զկանոնս բարեկարգութեան ի պէտս վիճակաց եւ այլոց : Թէ որպիսի կանոնք էին եւ յո՞ր պէտս հաստատեալ, կամէաք արդեօք հետադատել եւ առնուլ յուշադրութիւն՝ եթէ տեսանէաք զգործադրութիւն նոցա եւ զարդիւնաւորութիւն :

Սակայն պարզ է խոստովանել, զի ժամանակակից կարօտութիւնք եւ պէտք, մանաւանդ ընդարձակութիւն յարաբերութեանց ընդ լուսաւորեալս ազգս Եւրոպայի, չարժէին տակաւ զազգային վարիչս ընդ բանիրուն անձանց զարգացելոց յԵւրոպա եւ յարտաքին գիտութիւնս դժել զբարեկարգ ուղղութիւն նոր եւ զվարչութիւն սահմանադրական, յորպիսիս գնային երբեմն առխարխալի, մերթ ոչ գիտէին զոր գործէին, եւ յաճախ վիճէին ընդ միմեանս եւ մրցէին ընդ դէմ միմեանց :

Ապա ուրեմն ժամանակակից նորոգ հոսանաց յառաջադիմութեան էին արդիւնք եւ նախանձախնդիր կանոնադրութիւնք Հոգեւոր ժողովոյ, բայց ոչ բաւէին ի գոհացումն չարժմանց՝ մինչեւ հաստատեցաւ Ազգ. Սահմանադրութիւն թերի իմն եւ անփորձ կանոնիւք եւ ուղղութեամբ՝ հետեւեալ Ամերիկեան եւ Անգղիական վարչութեանց սահմանադրականաց :

Մինչ պարապէր այսպէս Գէորդ Եպս յանդամակցութեան Հոգ. ժողովոյ, Հայք Պրուսայու զգացին մեծապէս զկարօտութիւն ներկայութեան Առաջնորդի իւրեանց, մանաւանդ ցանկային վայելել



զհոգեւոր մխիթարութիւնս ի թեթեւութիւն աշնանեաց աղետից եւ վշտաց՝ որովք հեծէին: Վասն որոյ յուզէին զխնդիրս, յաճախակի գրութեամբք եւ հանրաթղթովք թախանձէին զԱզգ. Վարչութիւն Կ. Պօլսոյ եւ զԳէորդ Նալս. զԱռաջնորդ իւրեանց, որպէսզի վերադարձցի ի Պրոսպ:

Պատրիարք-Արքեպիսկոպոս եւ հոգեւոր ժողովականք կարծէին սիրաշահել զՊրոսպացիս՝ առաջարկեալ Գէորդ Նալսի՝ զի վերստանձնեալ եւ զԱռաջնորդութիւն Պրոսպոյ՝ փոխանորդաւ կառավարեացէ զվիճակ Պրոսպոյ, եւ ինքն կացցէ մնացէ յանդամակցական սլաշտօնի իւրում աստ ի Կ. Պօլսոյ: Պրոսպացիք շարունակէին անընդ-հատ զթախանձանս իւրեանց եթէ հանրադրութեամբք եւ եթէ հաւ-ւիրակօք, եւ արտասուախառն սլաղատանօք աղաչէին զԳէորդ Նալս: Գիտէր նա, զի վտանգ իմն նոր սպառնայր Հայոց Պրոսպոյ, այս է յուզումն ծանր ընդ դէմ նուազաթիւ հակառակորդաց եւ շարժումն կրօնափոխական, զոր հետեւէին արդիւնաւորել նորեկ անձինք ոմանք Ներսիսացիք եղեալ ի դիմակ բժշկական արուեստ եւ խմորէին զմիա-միտս ի լուծերականութեան:

Վասն որոյ փութացաւ Գէորդ Նալս ապացուցանել ի նորոյ յանձին իւրում զարժանաւորութիւն եւ զյատկութիւնս Քաջ Հովնաթի, խոնարհեցաւ ի խնդիրս Պրոսպացւոց, եւ ետես զպատրաստութիւնս ուղւոյ:

Պատրաստ մնային հրաւիրակք ի Պրոսպոյ, քահանայք եւ իշխանք, ընդ որս մեկնեցաւ աստի ի Կ. Պօլսոյ յ8ն Նոյեմբերի (1855) եւ էջ ի Կէմբլէյէկն: Յետ դարմանելոյ անդ զանակնկալ՝ այլ զթեթեւ տկարութիւն անձին իւրոյ, ըստ սովորական կարգի եւ ուղեկցութեամբ ստուարաթիւ ժողովրդեան եմուտ ի Պրոսպ: Ի կազմելն զթափոր եւ զհանդէս եկեղեցական մերձ եկեղեցւոյ, քաղցրանուագ երգեցողութիւնք, կարօտալիւ շարժումնք եւ ոգեւորութիւնք ժողովրդեան շարժեցին զԳէորդ Նալս. յարտասուս, եւ լայր հեղձամաղձուկ, լացին եւ Հայք հեկեկանօք, որով տեսարան բերկրառիթ՝ միանգամայն սրտաճմլիկ պարզեցաւ առաջի աչաց:

Յետ աղօթից հեղձամաղձուկ ձայնիւ խօսեցաւ ժողովրդեան զմխիթարական բանս համառօտս, օրհնեաց զնոսս եւ ել յԱռաջնորդարան՝ տուեալ զԱջ իւր խոռոնեւրամ եւ կարօտակէզ ժողովրդեան ըստ ջերմեռանդ փափաքանաց նոցա:

Զերիս գիշերս արարեալ զՀսկումն յեկեղեցւոյ առթիւ երկրաշարժի, ի 13ն ամսոյն յաւուր կիրակէի մատոյց ինքն Տ. Գէորդ Նալս. զյատուկ ս. պատարագ մեծահանդէս, խօսեցաւ զխրատական

քարոզ սրտաշարժ եւ ոգեւորեաց զժողովուրդ, որ լցեալ էր բերկրառիթ իմն ուրախութեամբ, եւ յուսայր ներկայութեամբ Առաջնորդի իւրեանց ազատել այլեւս ի փորձանաց եւ յաղետից, գտանել զյաջողութիւնս հանդերձ հոգեւոր մխիթարութեամբք: Յետ աւարտման ս. պատարագի արար անդաստան փառաւոր իմն թափօրիւ ի չորեսին կողմունս եկեղեցւոյ: Եւ յետ այնորիկ արդարեւ դադարեցաւ ժամն, որ մերթ երեւէր: Սկսաւ ժողովուրդ յաճախել ի ս. եկեղեցի խոռոն բաղմութեամբ: Եւ փութով վերաչինել զկիսակործան մասն որմոյ ս. Պօղոսեան վարժատան, փոխադրեաց զաշակերտս դպրոցաց ի Հիմն. Առաջնորդարան (գտանելոյ իբր ի յետսակողմն եկեղեցւոյ եւ առնթեր եւ ի ստորեւ նորոյ Առաջնորդարանի կառուցեալ ի Յարութիւն Նալսէ) ի վարժարան եւ ի ծաղկոց, որք փակեալ մնային առթիւ երկրաշարժից, եւ մանկունք պարապէին յուսմունս ի Հին Առաջնորդարանի շինելոյ ի Քարաքօղեանէ: Ոչ դադարեցաւ դպրոցն օրիորդական՝ գտանելով յապահով եւ յանվտանգ շինուածի, որ զրեաթէ էր կից հնոյ Առաջնորդարանի ի հիւսիսակողմն:

Ըստ այսմ խնամ կալաւ Գէորդ Նալս եւ ետ վերանորոգել զվնասեալ կալուածս ազգայինս, հետեւեցաւ պայծառութեան եկեղեցւոյ, բարեկարգութեանց ըստ այլ եւ այլ գործոց՝ խնդրոց եւ ժողովոց:

Խոհեմութեամբ իմն եւ քարոզութեամբք դադարեցոյց զյուզմունս կրօնափոխականս, եւ խաղաղութիւն նախանձելի թագաւորէր ի Հայս Պրոսպոյ, թէպէտ նախանձելի ոչ էին անձկութիւնք նոցա ըստ այլ խնդրոց կենցաղականաց:

Պապանձեցոյց զհիւպատոսն Անգղիական զպ. Սանտիսըն Անգլիացի, որ յանիրաւի սլաշտպանէր եւ խրախուսէր զոմանս հայս մուրեալս հանդերձ հակառակութեամբ: Յաւուր միում եկն պ. Սանտիսըն առ Գէորդ Նալս ի վանս (որպէս անուանեն Պրոսպացիք զԱռաջնորդարան) առ ի պահանջել պատժել զմանկունս հայոց՝ զոր քարկոծէին զոմն հաւատուրաց զձիւնիչեան ի տոհմէ Աղաւնի Ստեփաննոս Արքեպիս, (երբեմն սարկաւագ) ի Քարաղան թաղի՝ նախատեալ եւ անուամբս չարգաւակ: Եւ զի եկեալ էր այրն այն անպատկառ իմն եղանակաւ, ագուցեալ զերկայն կոչիկս ուղեւորականս յոտս եւ կալեալ զմտրակ ի ձեռին, անմիջապէս արտաքսեաց Գէորդ Նալս զնա ի ներկայութենէ իւրմէ, ասելով, զի «նախ ուսջի՛ր զքաղաքավարութիւն եւ զպարտս քո, եւ ապա եկ առ իս»: Որպիսւոյ պատուոյ արժանացաւ նա մի անգամ եւ ի Սարիմ-փաշայէ երբեմն մեծ եպարքոսէ:



## ԳԼՈՒԽ ԻԶ.

ՅԱՂԱԳՍ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԳԵՈՐԳ ԵՊՍԻ Ի ՊԱՏՐԻԱՐԺ

ԵՒ ԳԱԼՍՏԵԱՆ Ի Կ. ՊՕԼԻՍ

Ս. Յակոբոս Արքեպս Պատրիարք տեսեալ զանձեռնհասութիւն իւր եւ զգթուարութիւնս արտաքինս ընդ դէմ պաշտօնավարութեան իւրոյ, մանաւանդ զպահանջս նորս եւ զյառաջագիծական շարժմունս երիտասարդաց նորահասից, գրեաց զհրաժարական իւր եւ առաքեաց Բ. Դոռն ըստ սովորական կարգի յօգոստոս ամսեան 1858՝ յետ փորձելոյ սիրաշահել զգլխաւորս Ազգի եւ զերիտասարդս Տեղապա-  
հաւ, որում կարգեցաւ Դաւիթ Եպս. Միաբան Ս. Երուսաղէմի, որ եւ տեսեաց ամիսս ինչ:

Զայսու միջոցաւ հաստատեալ էր Տ. Մատթէոս Արքեպիսկոպոս երբեմն Պատրիարք ի Կաթողիկոս ամենայն Հայոց՝ յետ վախճանի Տ. Ներսիսի Ս. Կաթողիկոսի որ ի 13ն փետրւարի 1857ամի:

Արդ հարկ ի վերայ կայր ընտրել զնոր պատրիարք, որոյ վասն եկեալ էր պաշտօնաթուղթ կարեւոր ի Բ. Դրանէ:

Վասն որոյ յ՛ն Հոկտեմբերի հաւաքեալ Ազգային ժողովոյ հա-  
մաձայն յայնժամեան սովորութեան եւ կարգի, ընտրէ զԳէորգ Եպս. Պրուսայու ի Պատրիարք Հայոց Կ. Պօլսոյ, եւ կազմեալ զհանրագիր - տեղեկագիր (Մագալաթա) ներկայացուցանէ Բ. Դրան առ ի մա-  
տուցանել ի հաստատութիւն Վեհ. Սուլթանի:

Յետ աւուրց ինչ պատրաստեալ Ազգային Վարչութեան զհրաւի-  
րակս եւ զկարեւոր պաշտօնաթուղթս, առաքէ առ նորընտիր Պատ-  
րիարք Տ. Գէորգ Եպս. ի Պրուսա, որք հասին անդր ի 21ն Հոկտեմ-  
բերի:

Ոչ էր սահման տրտմութեան Հայոց Պրուսայու եւ համայն վի-  
ճակայնոցն, որք ոչ կամէին զրկել ի մերձաւոր խնամոց եւ ի հո-  
գածութեանց Առաջնորդի իւրեանց, որում մեծ պէտս ունէին: Այլ  
հարկ էր աւիմայ խոնարհիլ առաջի կամաց Տեառն եւ ընտրութեան  
Ազգային ժողովոյ:

Փութային կուսակալ, աւագանի, Առաջնորդք, Մետրապօլիտ  
յունաց, Քահանայապետ Հրէից, Հիւպատոսք եւ գլխաւորք օսման-  
ցոց եւ օտար ազգաց գալ ի շնորհաւորել զընտրութիւն Տ. Գէորգ  
Արքեպսի ի պատրիարք, որ եւ փոխանակէր նոցա զշնորհակալու-  
թիւն փոխադարձ այցելութեամբք եւ սիրալիլ յարաբերութեամբք:

Միանգամայն տնօրինէր զկարեւորագոյն գործս առաջնորդակա-  
նըս եւ վիճակայինս, տայր պատուէրս եւ զհրահանգս քահանայից

եւ անդամոց ազգային վարչութեան, առնէր զյանձնարարութիւնս,  
եւ տեսանէր զպատրաստութիւնս ուղեոյ:

Ի բնարան առեալ զայս բան Փրկչի՝ «Եղիցին կամք քո», խօսե-  
ցաւ զսրտառուչ մնայք բարեաւ ի ս. Եկեղեցւոյ: Լայր ինքն, լային  
եւ ժողովուրդ հեկեկանօք:

Ի 26ն Հոկտեմբեր ամսոյ յետ տալոց զհրաժեշտն վերջին առ  
կուսակալ (Խիւտայէնտիկեար նահանգի) կազմեցաւ թափօր եկեղե-  
ցական եւ ուղեւորական, եւ Տ. Գէորգ Արքեպս. նստեալ ի ձի (զոր  
առաքեալ էր վսեմ. կուսակալ ի պատիւ նորին սրբազնութեան) եւ  
յուզի ընդ հրաւիրակս եւ ուղեկցութեամբ նշանաւոր անձանց մերոց  
եւ օտարաց՝ կազմեալ զփառաւոր թափօր, քաղցրաձայն երգովք  
զպրաց եւ մանկանց յառաջացաւ մինչեւ զկամուրջն նորաշէն ի Սէք-  
Պաշի:

Ոստիկանք զժուարանային կառավարել զխուռներամ բազմութիւն  
երկսեռ ժողովրդեան, որք հոսէին յաչաց զյորդ արտասուս, զորս  
խաչակնքեալ օրհնէր նորընտիր պատրիարք՝ հեղձամաղձուկ լեալ  
եւ ինքն:

Յետ արձակելոյ զստուար մասն ուղեկցաց ի Տէմիրքաշ հասեալ  
յԱքընլար, օրհնեաց Տ. Գէորգ Արքեպս. ի նորոյ զբազմութիւն  
Հայոց եւ արձակեաց վերադառնալ ի Պրուսա: Իսկ յետ Թաւրոյ անդ  
զհանգիստ սակաւուք, շարունակեաց զճանապարհն ուղեկցութեամբ  
ոմանց քահանայից եւ երեւելեաց քաղաքի եւ ընդ երէկս հասեալ ի  
Կէմէիցիկ, եմուտ ի չողենաւ:

Ի յաջորդ աւուր ժամանեցաւ ի Կ. Պօլիս: Խոսովեալ էր ծով,  
որոյ վասն յամեցաւ եւ ընդ երէկս յաջողեցաւ հասանել եւ մտանել  
ի նաւահանգիստ:

Դիմեցին ի չողենաւ եւ ներկայացան նորընտիր Ս. Պատրիարքի  
խորին մեծարանօք փոխանորդ պատրիարքական, անձինք կարեւորք  
եւ նշանաւորք որք փութացեալ էին եւ սպասէին, որպէս եւ ժողո-  
վուրդ բազում յոյժ մնար եւ սպասէր առ ծովեղբրքն ի Պահմէ-Գա-  
բու եւ ի կամրջի:

Ելեալ ի չողենաւ եւ հասեալ ի Գում-Գաբու, ուր կազմ եւ  
պատրաստ սպասէր սովորական թափօր մեծահանդէս ի փողոցի Պատ-  
րիարքարանի ընդ խուռներամ բազմութեան ժողովրդեան, սկսան  
երգել զպիւրք զերդ նոր եւ սրտաշարժ ի պատիւ նորին սրբազնու-  
թեան: Եւ այսպէս մտեալ յաւագ եկեղեցի, յետ աղօթից խօսեցաւ  
զհամառօտ բանս առ ժողովուրդ ըստ պատշաճի, եւ օրհնեաց զժո-



ղովուրդ: Էր ժամ մի յառաջի պահու գիշերոյ եւ ճրագունք լուցեալ, եւ ի Պատրիարքարան, ուր սպասէին ոմն ներկայացուցիչ եկեղեցական ի դիմաց վեհ. Կաթողիկոսի, անձինք նշանաւորք, եկեղեցականք եւ աշխարհականք, ամիրայք, եւ արտաքին պաշտօնեայք, եւ ընկալաւ զշնորհաւորութիւնս նոցա հանդերձ այլովք:

Ի 29ն ամսոյ զնաց ի Բ. Դուռն հանդիսիւ մեծաւ՝ ըստ սովորական կարգի, եւ ետ զայցելութիւնս պաշտօնականս առ Մեծ Եպարքոս, առ պաշտօնեայս Արտաքին եւ Ներքին Գործոց, եւ վերադարձաւ ի Պատրիարքարան: Հաստատէր այս կարգ ըստ մասնեայ զըստանձնումն Պատր. պաշտօնի համաձայն հնոյ կարգի:

Փութացաւ տալ եւ ինքն զփոխադարձ այցելութիւնս սկսեալ նորընտիր Վեհ. Կաթողիկոսէ, որ մնայր ի Միջագեղջ, ի Յակոբոս Արքեպիսկոպոսէ ի նախորդէ իւրմէ, որոյ վասն էանց յիւսկիւտար: Եւ ի գեշերի դայ թուղթն հրաւիրանաց առ ի ներկայանալ Վեհ. Սուլթան Մէճիտ կայսեր ի յաջորդ աւուր: Իսկ փոխանորդն պատրիարքական Իզնատիոս վրդ. (ապա Եպս. եւ Պատրիարք) Սամաթիացի դանդաղի առ ի հասուցանել զթուղթ առ Գէորգ Արքեպս. — Պատրիարք յիւսկիւտար, իսկապէս ոչ գիտեցեալ զպարունակութիւն՝ կարծելով սովորական ինչ թուղթ լինել պաշտօնական, եւ այսպէս յետաձգի պաշտօնական ներկայացումն, որոյ վասն զայրացաւ յոյժ նորին սրբաղնութիւն եւ արձակեալ զիզնատիոս վրդպ. ի փոխանորդութենէ՝ կարգելով ի տեղի նորա զԳէորգ վրդպ. Բարեղոցի: Միանգամայն փութացաւ հաղորդել որոց եւ զոր ինչ հարկ էր, եւ Կայսրն բարեսիրտ հաճեցաւ յատկացուցանել ի նորոյ զօր ընդունելութեան ի կայսերական սլաւտ ի 11 նոյեմբեր ամսոյ:

Ուստի ի սմին աւուր ել եւ զնաց հանդիսիւ մեծաւ ի պալատն կայսերական ի Տօլմա-Պահնէ,\*) եւ ներկայացաւ Վեհ. Կայսեր Թուրքիոյ — բարեհամբաւ եւ բարեսիրտ Սուլթան Մէճիտի, որ ընկալաւ զՏ. Գէորգ Արքեպս. զպատրիարք սիրով մեծաւ եւ մեծարանօք, եւ տեսակցեցաւ իրր քսան վայրկեան, հարցեալ զողջունէ եւ զվիճակէ հայոց, եւ խոստացեալ շարունակել զհայրական խնամս իւր բարեգութս: Որում փոխանակեաց եւ Գէորգ Արքեպս զշնորհակալութիւն երախտապարտ հանդերձ պատշաճ պատասխանօք եւ բարեմաղթութեամբք, եւ մեկնեցաւ ի պալատէ անտի: Հասեալ ի Գում-Գաբու ի

ԾԱՆՕԹ. Վ. Ե. Մ. — Զարդիս պարտ է նորընտիր պատրիարքի նախ ներկայանալ Կայսեր, եւ ապա երթալ ի Բ. Դուռ: Երեւի խանգարումն ինչ, եւ դժուարացաւ ստուգել զպատման:

վայրն սովորական, եմուտ յուսկ եկեղեցի եկեղեցական հանդիսիւ, յետ աղօթից օրհնեաց զԺողովուրդ Հայոց, հաղորդեաց զբարեւն կայսերական, արար զբարեմաղթութիւնս, եւ ել ի Պատրիարքարան, յորում էին տակաւին բնակութիւնք եւ պաշտօնատուն պատրիարքաց:

### ԳԼՈՒԽ ԻԷ.

ՅԱՂԱԳՍ ԶԱՆԻՑ ԵՒ ԶԵՆԱՐԿՈՒԹԵԱՆՑ

ԳԵՈՐԳ ԱՐՔԵՊՍ. — ՊԱՏՐԻԱՐՔԻ.

Ոչ էր անսիրտ Տ. Գէորգ Արքեպս. ի գործս եւ ի պարտաւորութիւնս պատրիարքական ընդ իրաւասութեանցն եւ ի վարչութեան պատրիարքարանի, եւ ոչ պէտք ունէր սպասելոյ զԺամանակ ինչ ի դիտել զընթացս գործոց, Ժողովականաց, պաշտօնէից եւ այլոց, եւ այնպէս ձեռնարկել ի պաշտօնավարութիւն:

Յետ գրելոյ եւ տարածելոյ զառաջին շրջաբերական — կոնդակ պատրիարքական առաքեալ եկեղեցեաց եւ վիճակաց՝ ամփոփելով ի նմին եւ զպատուէրս եւ զխրատս կարեւորս, խնդրեաց յանդամոց Հոգեւոր եւ աշխարհական Ժողովոց, եւ Գերագոյն Ժողովոյ՝ անխափան դալ ի պաշտօնավարութիւնս իւրեանց եւ կարգադրել ընդ փոյթ զգործս աղգայինս. պատուիրեաց խստիւ պաշտօնէից պատրիարքարանի եւ գիւնատան կանխել ի գլուխս պաշտօնավարութեանց եւ հաւատարմութեամբ վճարել զանձնիւր պաշտօն. հրամայեաց եւ քարոզչաց եւ քահանայից եկեղեցեաց Մայրաքաղաքի խնամ առնել եւ հսկել ի բարեկարգութիւն եւ ի պաշտօնութիւն եկեղեցեաց եւ դպրոցաց, ի պաշտպանութիւն օրինաց եւ կանոնաց, յանխափան կատարումն եւ ի փառաւորութիւն ժամերգութեանց եւ արարողութեանց, արթուն կալ ի հոգեւոր մխիթարութիւն եւ ի պէտք Ժողովրդեան, որպէս եւ ինք Գէորգ Արքեպս. անակնկալ իմն այցելութեամբք հսկէր ի վերայ նոցա:

Խախտեաց զքմահաճոյ միջամտութիւնս եւ զտնօրէնութիւնս ոմանց անձանց վարժելոյ ի գործս Պատրիարքարանի եւ դաւառացւոց, եւ կարգադրեաց, զի ի ներկայութիւն Ժողովոյ քննեալ որոշեցին ամենայն խնդիրք եւ գործք, յուրջ իմն խորհրդակցութեամբք, եւ ինքն գործադրեցէ, թէեւ զանմիջական զխնդիրս եւ զգործս ընթացիկս ինքնին փութայր տնօրինել: Ըստ այսմ խափանեցան աղբիւրք անձնական շահուց ոմանց անձանց վարժելոց յաւուրս թոյլատու պատրիարքութեան նախորդի իւրոյ:

Խորհրդակցեալ ընդ կարեւոր անձանց, տնօրինեաց զայս: Անդամք վարչութեան, հոգեւոր եւ աշխարհական Ժողովոյ, ի քննելն



եւ յորոշել զայս եւ զայն դործ եւ զխնդիր, վիճէին յաճախ ոչ զիտակցաբար, եւ անդամ իւրաքանչիւր տարածայնէր ի ժողովրդեան զքմահաճոյ տեղեկութիւնս գայթակղեցուցիչս հակառակ կարծեաց եւ բանից՝ զորս արտայայտէին ի ժողովս: Եւ այսպէս նենգամտութեամբ իմն արկանէին զմեղադրութիւնս ի վերայ պատրիարքաց, առ ի դրդուել զժողովուրդ, համաձայն մտադրութեանցն եւ խարդաւանութեանցն: Կարգադրեաց սա, զի փոխանակ համառօտ արձանադրութեան որոշման խնդրոց, արձանադրեացին բանք եւ զխողովութիւնք անձնիւր անդամոյ: Եւ առ այս կաղմեաց զգիւան նոր, եւ Սերորէ վրդաւ. Արարատեան ընդ բժշկապետ Ստեփան պէյի (ապա փաշայ) Արսլանեան սկսան արձանադրել զբանս եւ զկարծիս անձնիւր անդամոյ Գերազոյն ժողովոյ, եւ ի յաջորդ ժողովի ներկայացուցանել ի վաւերացումն ժողովոյ նախ քան զձեռնարկել յօրակարգ խնդիրս: Եւ յետ այսորիկ բազումք սկսան լուռ եւ եթ կալ ի ժողովս՝ զգուշացեալ ի խօսելոյ, մինչ Գէորգ Արքեպս. յորդորէր յայտնել զկարծիսն համարձակաբար եւ մի՛ երկնչել յարձանադրութեանց:

Տնօրէնութիւն այսպիսի եւ խտուրթիւն աչալուրջ ի նորոյ յաւել եւ զգեղճութիւնս ոմանց անձանց ոչ բարեմտաց:

Արդեւ զյաճախութիւն անձա՛հ եւ անպէտ տեղեկադրութեանց (քաֆրիք) եւ խնդրադրութեանց առ պետութիւն, եւ ուշ եղ կանոնաւոր եւ ամփոփ խմբադրութեանց եւ այն ազգօգուտ խնդրոց կարեւորաց եւ եթ: Միանգամայն հետեւէր ինքնին եւ արդիւնաւորէր զփութաջան կատարումն խնդրոց ի Բ. Դրան, մինչ յամաց հետէ բարձի թողք առնէր Օսմ. կառավարութիւն զմեծադոյն մասն դրութեանց Պատրիարքարանի՝ տեսեալ զանպատեհ գրութեանս եւ զմիջամրտութիւնս օտարոտիս: Սակայն եւ այս տայր առիթ զգեղճութեանց ոմանց անձանց:

Հաստատեաց զսիրալիր եւ զազդեցիկ յարարերութիւնս ընդ Օսմանեան նախարարաց, մանաւանդ ընդ պաշտօնէից արտաքին եւ ներքին գործոց, ընդ մեծ եպարքոսի (Ալի եւ Ֆուադ փաշայից), ընդ զեսպանս օտար պետութեանց եւրոպականաց եւ ընդ այլոց կարեւորագոյն անձանց:

Եւ այսպէս բարձրացոյց զազդեցութիւն եւ զպատիւ պատրիարքութեան եւ պատրիարքարանի:

Առանց ակն տալոյ տկարամտաց եւ նենգամտաց, յատկացոյց զյատուկ կառս եւ զերիվարս ի պէտս իւր, մինչ համարէին զայս նշան փառասիրութեան՝ առանց ըմբռնելոյ զպէտս եւ զպատիւ պատրիարքի որ յարտաքին յարարերութիւնս: Մանաւանդ ինքն հոգար զծախուց:

Բաժանորդ կարելի է գրել հետեւեալ տեղերը.

Ֆրանսա՝ Լ. Գեւորեան, 17, Rue Damesme, Paris.

Ն. Կալոսեան, 49, Rue Nationale, Marseille.

Յունաստան՝ «Նոր Օր», 20-A, Rue Vouli, Athènes.

Կիպրոս՝ Յ. Մահտեսեան, Arasta St. No. 1, Nicosia.

Բուլղարիա՝ Յ. Տէվէճեան, 82, Bld. Hristo Botev, Sofia.

Ռումանիա՝ Ե. Սարգսեան,

Typ. "Astoria", 14, Str. Pictor Lichian, Bucarest.

Եգիպտոս՝ Գ. Միթիարեան, խմբագր. «Յուսարեր»-ի,

B. P. 868, Le Caire.

Եթովպիա՝ Յ. Գ. Պուրաւիան, Hirna.

Պաղեստին, Վահան Կէտիկեան, Haret-el-Nasara. Jerusalem.

Սիրիա՝ Յ. Սիմոնի, B. P. 208, Alep.

„ Զ. Ապաճեան, B. P. 870, Beyrouth.

„ Ս. Պոյաճեան, B. P. 321, Damas.

Իրաք՝ Մ. Սօսեան, South Gate Badaveen, 29-1, Bagdad.

Պարսկաստան՝ Խ. Մելքումեան, Թաւրիզ:

„ Յ. Մուրադեան (Խուզիստանի ընդհ. գործակալ),  
Արագան, P. O. Box 22.

„ Վ. Յովհաննիսեան, Թեհրան,

Teint. "Havar", Khiabane Nadery, Tehéran.

Հիւս. Ամերիկայի ընդհ. գործակալ՝ Յ. Կորոյեան,

H. Gopioian, 359 W. 28th St. New York, N. Y., (U. S. A.).

Հարաւ. Ամերիկա՝ «Արմենիա», Canning 1087, Buenos-Aires.

«Յ Ա Ռ Ա Զ»


ՕՐԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Խմբագիր՝ ՇԱԽԱՐՇ ՄԻՍԱԲԵԱՆ

ԲԱԺԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ	Տարեկան	Վեցամսեայ	Եռամսեայ
Ֆրանսա եւ Գաղութներ	140 ֆրանք	70 ֆրանք	35 ֆրանք
Սնդիկա, Եգիպտոս, Զիլեբիլի, Խալիս	250 ֆրանք	130 ֆրանք	
Ռուսի Երկիրներ	200 ֆրանք	100 ֆրանք	
Ամերիկա	200 ֆրանք	100 ֆրանք	

ՀԱՍՏԷ. — 17, Rue Damesme, Paris XIII





---

Imp. ARTISTIQUE, — 42, Rue de la Jonquière, PARIS (17<sup>e</sup>)